

ՃՈՆ ՊԻՎԻՐ



ԿՈՏՐԵԼ

ԵՐԿԶՈՏՈՒԹԻՒՆԸ

ԻՆՉՊԵՍ «ՈՉ» ԸՄԵԼ՝ ԱՌԱՆՑ ՄԵՂԻ ՉԳԱՅՈՒՄԻՆ  
ԻՆՉՊԵՍ ԿԱՏԱՐ ԸԼԼԱՆ՝ ԱՌԱՆՑ ՄԱՐԴՈՑ ՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Սիրելի ընկեր,

Ես կը հաւատամ, որ ձեր ձեռքին մէջ գտնուող գիրքի ուղերձը մարգարեական օծութիւն ունի՝ ժամանակակից եկեղեցիին մեծագոյն կարիքներէն մէկուն պատասխանելու համար: Այս գիրքի լոյս տեսնելէն ետք շատերը վկայած են, որ այն օգնած է իրենց ազատութիւն, հաւատք եւ համբերութիւն ստանալու: Ես ինքս արթնութիւն վերապրեցայ իմ հոգիին մէջ, երբ Աստուած յայտնեց ինծի այս ճշմարտութիւնները: Այս գիրքի խօսքերը Աստուծմէ ոգեշնչուած են՝ Անոր հետ աւելի մտերիմ ընթացք ունենալու համար:

Տերը դրաւ իմ սրտին մէջ, որ այս ուղերձով բաժնեկցիմ ձեզի հետ, ինչպէս նաեւ աշխարհով մէկ գտնուող այլ հոգեւոր առաջնորդներու հետ: Ընդունեցէ՛ք այս գիրքը որպէս անձնական նուէր՝ ի սշան իմ սիրոյ եւ աջակցութեան: Ես կը հաւատամ, որ այն կը զօրացնէ ձեզի եւ ձեզի վստահուած մարդոց՝ ձեր նպատակին, իշխանութեան եւ աստուածային կոչումին համար: Ես նոյնպէս տեղադրած եմ այս գիրքը մեր **MessengerX.com** կայքին մէջ՝ անվճար ներբեռնելու համար: Դուք կրնաք ազատօրէն ներբեռնել եւ տարածել այս ուղերձը ձեր եկեղեցիին մէջ:

Սիրելի ընկեր,

Այս ուղերձն ընդմիշտ փոխած է իմ կեանքն ու ծառայութիւնը: Ես կ'աղօթեմ, որ դուք նոյնպէս խոր փոփոխութիւն ապրիք, երբ ընթերցեք այն ուղերձը, որն Աստուած կը յղէ ձեզի այս գիրքի էջերուն մէջ: Ուրախ կ'ըլլամ՝ այս ուղերձին ազդեցութեան մասին գիտնալով ինչպէս ձեր, այնպէս ալ ձեր ծառայութեան մէջ գտնուող մարդոց կեանքին մէջ:

Ձեր եղբայրը Զրիստոսիս մէջ,



Ճոն Բիվեր  
JohnBevere@gmail.com



ՃՈՆ ՊԻՎԻՐ

ԿՈՏՐԵԼ

ԵՐԿԶՈՏՈՒԹԻՒՆԸ

**Breaking Intimidation** by John Bevere, Western Armenian

© 2021 Messenger International

MessengerInternational.org

Originally published in English as Breaking Intimidation

Additional resources in Western Armenian by John and Lisa Bevere are available for free download and video streaming at: **MessengerX.com** and on the **MessengerX App**.

To contact the author: JohnBevere@ymail.com

This book is a gift from Messenger International and is

NOT FOR SALE

«Կոտրել երկչոտութիւնը», Ճոն Պիվիր, Արեւմտահայերէն

© 2021 Messenger International

MessengerInternational.org

Սկզբնապէս հրատարակուած է անգլերէն լեզուով, «Breaking Intimidation» վերնագիրով

Յաւելեալ նիւթեր Արեւմտահայերէնով հասանելի են անվճար ներբեռնման եւ հոսքային հեռարձակման համար **MessengerX.com** կայքին մէջ եւ **MessengerX** յաւելումին մէջ:

Հեղինակին հետ կապ հաստատելու համար՝ JohnBevere@ymail.com

Այս գիրքը նուրբ է «Messenger International» ծառայութեան կողմէն եւ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱՅ ՉԷ



App Store-ը Apple Inc.-ի պարանշանիչն է, որ արձանագրուած է ԱՄՆ-ի եւ այլ երկիրներու մէջ:

Google Play-ը եւ Google Play-ի պատկերանիշը Google LLC- ի պարանշանիչներն են:

ՃՈՆ ՊԻՎԻՐ

ԿՈՏՐԵԼ  
ԵՐԿԶՈՏՈՒԹԻՒՆԸ

ԻՆՉՊԵՍ «ՈՉ» ԸՍԵԼ՝ ԱՌԱՆՑ ՍԵՂՔԻ ԶԳԱՑՈՒՄԻՆ  
ԻՆՉՊԵՍ ՎՍԱՐ ԸԼԼԱԼ՝ ԱՌԱՆՑ ՍԱՐԴՈՑ ԶԱԲԱՆՈՒԹԵԱՆ

## Հեղինակի խօսք

---

Երբ կը գրէի այս գիրքը, Աստուած մարգարէական խօսք տուաւ ինծի ըսելով.

«Կան շատ մարդիկ, որոնք իրենց կ'անուանեն վերջին օրերու Իմ հզօր բանակի հաւատացեալներ, բայց կապուած են վախով: Անոնք Աստուծոյ եւ մարդոց առջեւ մաքուր սիրտ ունին, բայց եւ այնպէս Գեղէօնին պէս գերի բռնուած են մարդկային վախէն (Դատ. 6-8): Պարգեւները, որոնք Ես դրած եմ անոնց մէջ, հանգած են:

Ես կ'օծեմ այս գիրքի ուղերձը, որպէսզի անոնցմէ շատերը ազատագրուին: Այդ մարդիկ ոտքի կը կենան եւ առանց վախի կը հնազանդին Ինծի: Անոնք կ'ըլլան քաջ պատերազմողներ եւ իրենց Աստուծոյ զօրութեամբ ծնունդ կու տան մեծ յաղթանակներու»:

Յտուաջարան . . . . .	vii
Ներածություն . . . . .	ix

**Մաս I**

**Հաստատուի քու հոգետոր դիրքին մէջ**

1. Քալէ քեզի տրուած իշխանութեամբ . . . . .	1
2. Հոգետոր դիրք եւ իշխանութին . . . . .	13
3. Երկու ծայրայեղութին . . . . .	25
4. Տրուած պարգեւներ . . . . .	37

**Մաս II**

**Բացայայտել երկչոտութինը**

5. Հանգած պարգեւներ . . . . .	53
6. Երկչոտութենէն կաթուածահար եղած . . . . .	67
7. Երկչոտութեան հոգին . . . . .	81

**Մաս III**

**Կոտրել երկչոտութինը**

8. Բորբոքէ պարգեւը . . . . .	97
9. Երկչոտութեան արմատը . . . . .	113
10. Ցանկութինը բաւական չէ . . . . .	129
11. Աստուծոյ երկիր, թէ՛ մարդու վախ . . . . .	149
12. Գործել, թէ՛ արձագանգել . . . . .	169
13. Զգաստութեան հոգին . . . . .	183
14. Զգտիր առաջ . . . . .	199
Վերջաբան . . . . .	217





Արդէն շատ տարիներ է, որ կը ճանչնամ Ճոն Պիվիրին՝ որպէս երիտասարդ ծառայող եւ թանկագին ընկեր: Ատիկա ինծի համար մեծ պատիւ է: Ես իմ ողջ սրտով կը հաւատամ, որ Աստուած անոր բարձրացուցած է յաղթանակի, հաւատքի եւ յոյսի ուղերձ բերելու այս սերունդին:

Ճոն Պիվիրը «Կոտրել երկչոտութիւնը» գիրքով Քրիստոսի մարմինին կը բերէ ուղերձ մը, որն արդիական է եւ որուն կարիքը շատ է: Մենք կարիք ունինք օգտագործելու այն պարգեւները, որոնք Աստուած տուած է մեզի՝ աշխարհին հասնելու համար: Բայց ատոր փոխարէն մեզմէ շատերը կը նահանջեն Քրիստոսի մէջ ունեցած մեր իշխանութեան վրայ աննկատ եւ նկատելի յարձակումներէն:

Սատանան ամէն ձեւով պայմաններ կը ստեղծէ եւ կ'օգտագործէ մարդոց՝ հանգեցնելու Աստուծոյ մէջ ունեցած քու պարգեւը: Աստուծոյ Խօսքին մէջ կան շատ հաւատացեալներու օրինակներ, որոնք վախի մէջ եղած են, բայց, կոտրելով այն, հասած են յաղթանակի: Նշենք քանի մը հոգի. Յեսու, Գեղէօն, Նէեմիա եւ Դաւիթ: Աստուածաշունչը կ'ըսէ.

*«Բոլոր քու դէմ շինուած գործիքները պիտի ջաջողին»*

*– Եսայիա 54.17*

Այս գիրքի եւ Սուրբ Հոգիի զօրութեան միջոցով իւրաքանչիւր հաւատացեալ կրնայ ճեղքել վախը եւ յաղթել: Թող Աստուած այս սերունդին մէջ բարձրացնէ պատերազմողներու այնպիսի բանակ մը, որ երբեք չի նահանջեր:

*– Զօէ Մէյսըն*

*«Սովորական թշնամի», «Հեռացուր այն ամէնը, ինչ որ կը փորձէ քեզ կանգնեցնել» եւ «Խոստումի խօսքեր» գիրքերու հեղինակ:*

Շատ քրիստոնեաներ կը պատերազմին վախի դեմ, շատերն ալ աւելի շատ կը կռուին վախի հետեւանքներու դէմ, մինչդեռ պէտք է պայքարին ատոր ակունքին դէմ: Պատկերացուցէք թանկարժէք կահաւորանքով շքեղ տուն մը, որ սակայն տանիք չունի: Յորդառատ անձրեւ կու գայ եւ կ'ողողէ ամբողջ տունը: Գրեթէ ամէն ինչ կ'աւերի: Երկար ժամանակ կը պահանջուի աղտոտ ու ոչ պիտանի դարձած կահոյքէն ազատելու, հագուստները եւ յատակը մաքրելու համար: Յետոյ տանտէրը ջանասիրաբար պէտք է աշխատի, որպէսզի նորէն ձեռք ձգէ այն ամէնը, ինչ որ փճացած է:

Մէկ գործը դեռ չաւարտած, փոթորիկը կ'աւերէ նորոգածը: Յուսախաբուած ան նորէն կը սկսի վերականգնման ձանձրալի եւ վիատեցնող աշխատանքը: Կարճատեւ դադարէն ետք անձրեւը կրկին կը կործանէ ամէն բան, եւ հերթական անձրեւի հետեւանքները վերականգնելէն յոգնած մարդը կը սպառէ իր ուժն ու կարողութիւնը: Յուսալքուած ան կը դադրի պայքարելէ եւ կը համակերպի իրավիճակին՝ հաւատալով իր ճակատագրին:

Անշուշտ, ասիկա անհեթեթութիւն է: Հաւանաբար դուն կը մտածես. «Ինչո՞ւ ան չէր ամրացներ տանիքը, ատորմով ան ոչինչ կը կորսնցնէր: Ի՞նչ յիմար մարդ է»: Բայց եւ այնպէս, այս տեսարանը կը բնորոշէ շատ շատերուն, որոնք կը պայքարին վախի դէմ:

Անոնք վախի զօրութիւնը կոտորելու փոխարէն կը ջանան շտկել ստոր հետեւանքները՝ հիասթափութիւնը, շփոթուածութիւնը, յուսահատութիւնը...

Ոմանք ալ կը պայքարին վախի դէմ՝ դիմելով հոգեբաններուն, որպէսզի սորվին, թէ ինչպէս վարուին իրենց վախին հետ: Միւսներն իրենց կեանքը կը յանձնեն երկչոտութեան ստրկութեանը՝ վախնալով ազատութեան յոյս ունենալէ: Այս երկուքն ալ նման են առանց տանիքի թրջուած կահոյքով բնակարանին մէջ ապրելուն: Ոմանք ալ կը մեկուսանան: Յուսահատած անոնք ընդհանրապէս կը լքեն իրենց հեղեղուած տունը:

Այս գիրքի ուղերձը ձեզի պիտի չսորվեցնէ պայքարիլ, այլ այն պիտի բացայայտէ բոլոր վախերէն եւ երկչոտութենէն ազատելու Աստուծոյ ճանապարհը, որմէ յետոյ դուք կրնաք իրականացնել Աստուծոյ կոչումը ձեր կեանքին մէջ:

Ես շատ ժամեր անցուցած եմ համակարգիչին առջեւ այս գիրքին վրայ աշխատելու ընթացքին եւ խնդրած եմ Տիրոջ առաջնորդութիւնը: Առտու մը, երբ կ'աշխատէի գիրքին վրայ, իմ սենեակին մէջ զգացի Տիրոջ ներկայութիւնը:

Ոտքի կեցայ համակարգիչին քովէն եւ սկսայ քալել ու աղօթել: Երբ կ'աղօթէի, Տիրոջ մարգարէական Հոգին իջաւ իմ վրայ, եւ այս խօսքերը դուրս ելան. «Որդիս, կան շատերը, որոնք իրենց կ'անուանեն վերջին օրերու Իմ հզօր բանակի հաւատացեալներ, բայց կապուած են վախով: Անոնք Աստուծոյ եւ մարդոց առջեւ մաքուր սիրտ ունին, բայց եւ այնպէս Գեղէօնի պէս բռնուած են մարդկային վախէն (Դատ. 6-8): Պարգեւները, որոնք Ես դրած եմ անոնց մէջ, հանգած են: Ես կ'օծեմ այս գիրքի ուղերձը, որպէսզի անոնցմէ շատերը ազատագրուին: Այդ մարդիկ ոտքի կը կենան եւ առանց վախի կը հնազանդին Ինձի: Անոնք կ'ըլլան քաջ պատերազմողներ եւ իրենց Աստուծոյ զօրութեամբ ծնունդ կու տան մեծ յաղթանակներու»:

Ասիկա ընդամէնը Աստուածաբանական ուսուցում մը չէ: Տարիներ շարունակ ես բռնուած էի վախով: Ամենամեծ

## Ներածութիւն

խոչընդոտը, որուն ես կը հանդիպէի, այն էր, որ չէի գիտեր իմ խնդիրներու ակունքը: Աստուած բացայայտեց այդ չար թշնամիին: Ատկէ յետոյ Աստուած օգտագործեց այս ուղերձը՝ որջ աշխարհի մէջ գտնուող քրիստոնեաներուն ազատագրելու համար:

Աագ մը այսպէս արտայայտուեցաւ՝ բացականչելով. «Այս ուղերձը Ամերիկայի մէջ պէտք է ըլլայ իւրաքանչիւր հովիւի ձեռքը»: Այս պատգամը միայն հովիւներու համար չէ, այլ եկեղեցւոյ իւրաքանչիւր անդամի: Ես չեմ հաւատար, թէ պատահականութիւն է, որ այս գիրքը քու ձեռքերուն մէջ է: Երբ դուն ազատագրուիս, կը խնդրեմ, փոխանցէ այս ուղերձը անոնց, որոնք ունին ասոր կարիքը: Երբ դուն փոխանցես այն, ուղերձը քու մէջ աւելի կը զօրանայ:

Ես կը քաջալերեմ քեզի, որ աղօթքի մէջ միանաս ինծի, երբ սկսիս կարդալ այս գիրքը: Կը խնդրեմ, բաց քու սիրտը եւ խօսի՛ր այս բառերը Աստուծոյ ներկայութեան մէջ.

*«Հայր, իմ Տէր Յիսուս Քրիստոսի անունով ես կը խնդրեմ Սուրբ Հոգիէն, որ յայտնէ Քու խօսքը ինծի, երբ կարդամ այս գիրքը: Կը խնդրեմ բացայայտէ եւ հեռացուր իմ կեանքէն ամէն տեսակի անվստահութիւն, որպէսզի վախի արմատը չորնայ: Թող ես աւելի մօտենամ Քեզի եւ համարձակ վկայեմ իմ Տէր Յիսուս Քրիստոսին»:*



ՀԱՍՏԱՏՈՒԻՐ ՔՈՒ  
ՀՈԳԵԻՈՐ ԴԻՐՔԻՆ ՄԷՋ

**Քալէ Աստուծո՞մէ քեզի տրուած  
իշխանութեամբ, այլապէս ինչ որ  
մէկը կը վերցնէ այն եւ  
կ'օգտագործէ քու դէմ:**



# ՔԱԼԷ՝ ՔԵՂԻ ՏՐՈՒԱԾ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԲ

Ծառայելով Տիրոջը՝ ես անլի ու անլի կը հասկնամ, որ Աստուած կ'օգտագործէ իրավիճակներն ու մարդոց մեզ նախապատրաստելու համար, որպէսզի մեր կեանքին մէջ իրականանայ Իր կոչումը:

1983-ին ես ձգեցի իմ քարիերան (աշխատանքային գործունէութիւնը)՝ ճարտարագէտի պաշտօնը, որպէսզի շատ մեծ եկեղեցի մը մտնէի օգնութեան ծառայութեան մէջ: Իմ դիրքին մէջ ես կը ծառայէի հովիւին, անոր կնոջը, բոլոր հիւր-ծառայողներուն: Կ'օգնէի երկրորդական խնդիրներ լուծելու գործին մէջ, որպէսզի անոնք ընէին այն գործերը, որոնց համար Աստուած կանչած է անոնց: Չորս տարի յետոյ Աստուած ինծի հանեց այդ ծառայութենէն, որպէսզի ըլլայի ուրիշ մեծ եկեղեցոյ մը երիտասարդներու հովիւ:

Երբ եկաւ մեկնելու պահը, մարդ մը, որ ինծի հետ նոյն ծառայութեան մէջ էր, կնոջս ըսաւ, թէ Աստուած իրեն խօսք տուած է ինծի համար: Անկէ յետոյ մինչեւ օրս այդ խօսքը որպէս զգուշացում անընդհատ կը հնչէ իմ ականջներուն մէջ՝ պաշտպանելով ինծի իր իմաստութեամբ եւ զօրութեամբ: Ինչպէս Աստուծոյ որեւէ ճշմարիտ խօսք, այն եւս դարձաւ ղեկ մը իմ սրտի համար եւ անորոշութենէն ինծի պահելու հիմք:

Այդ մարդը զգուշացուցած էր կնոջս՝ ըսելով. «Եթէ ճոնը չքալէ Աստուծոյ՝ իրեն տրուած իշխանութեամբ, ինչ որ մէկն այն պիտի վերցնէ անորմէ եւ պիտի օգտագործէ իրեն դէմ»: Այս խօսքն ունեցաւ անմիջական ազդեցութիւն: Ես ընդունեցի այն որպէս Աստուծոյ իմաստութիւն, բայց լիարժէք պատկերացում չունէի, թէ ինչպէս պէտք է կիրառելի այն: Այդ գիտութիւնը պիտի գար յաջորդ քանի մը տարիներուն ընթացքին:

## **Կեանք փոխող փորձառութիւն**

1990-ի սկիզբը Տէրը հաստատեց, որ Իր կոչումն իմ կեանքին մէջ այդ ժամանակ ճամբորդելն ու ծառայելն էր: Երբ ես կարճ ժամանակով ճամբայ ինկայ, անկէ ետք ունեցայ կեանք փոխող փորձառութիւն, որուն միջոցով ես վերջապէս հասկցայ Աստուծոյ հաստատած խօսքերը, որոնք ինծի ըսած էին տարիներ առաջ:

Մենք սկսած էինք ծառայութիւններ անցընել եկեղեցւոյ մը մէջ: Ծառայութիւնները ծրագրած էինք սկսիլ Չորեքշաբթի երեկոյեան եւ աւարտել Կիրակի օրը: Աստուծոյ Հոգին կը շարժէր շատ զօրաւոր ձեւով, եւ կ'ըլլային հզօր ազատագրումներ, բժշկութիւններ եւ փրկութիւններ: Ամէն երեկոյ ծառայութիւններու ժամանակ Աստուծոյ ներկայութիւնն աւելի ու աւելի ցայտուն կը դառնար:

Առաջին շաբթուան ընթացքին կին մը, որ ներգրաւուած էր «Նիւ էյճ» շարժումին մէջ, փառաւոր ձեւով ազատագրուեցաւ: Եւ ասիկա փոփոխութեան խթան դարձաւ, որ սկիզբ դրաւ մեծ արթնութեան: Մէկ շաբթուան ընթացքին մեզի միացան այդ

### *Քալէ քեզի տրուած իշխանութեամբ*

վայրէն իննսուն մղոն հեռաւորութեան վրայ ապրող մարդիկ:

Հովին ըսաւ. «Մենք չենք կրնար դադրեցնել այս ծառայութիւնները: Աստուած անլին ունի մեզի համար պահած»: Ես համաձայնեցայ, եւ մենք ունեցանք եւս քսանմէկ ծառայութիւն: Աստուծոյ Խօսքը կը հոսէր արագավազ վտակի նման, եւ Հոգիի պարգեւները կը դրսեւորուէին իւրաքննաչիւր ծառայութեան ժամանակ:

Ծառայութիւններու երկրորդ շաբթուան ընթացքին, երեկոյ մը, երբ ես կը քարոզէի, դարձայ ու նայեցայ երաժիշտներուն եւ երգիչներուն (բեմի վրայ շուրջ քսանհինգ մարդ կար): Այնուհետեւ ես յայտարարեցի. «Այս բեմին վրայ մեղք կայ: Եթէ դուն չապաշխարես, Աստուած կը բացայայտէ այն»:

Երբ ականջիս հասան իմ այդ խօսքերը, մտածեցի. «Ա՛յ քեզ բան, ուրկէ եկան ատոնք»: Որոշ ժամանակ քարոզելէ ետք նոր հասկցայ, որ կ'ըլլայ ժամանակ, երբ Աստուծոյ օծութիւնը քու վրայ այնպիսի ուժով կ'իջնէ, որ դուն կրնաս հոչակել խօսքեր, որոնք քու ֆիզիքական ականջները կը լսեն ըսելէն ետք: Ասիկա մարգարէական քարոզ է, երբ մենք կը խօսինք Աստուածային ներշնչումով:

Միտքս հարցումներ սկսաւ հարցնել իմ ըսածի վերաբերեալ, բայց ես արագ հեռացուցի այդ մտքերը, որովհետեւ գիտէի՝ այն, ինչ որ ըսի, Աստուծմէ էր: Ես նախօրօք չէի ծրագրաւորած ասիկա: Քարոզելու օծութիւնը կը ծանրանար իմ վրայ:

Ծառայութիւններու ժամանակ երթալով կ'աճէր մարդոց բազմութիւնը: Երրորդ շաբթուան ընթացքին նորէն, երբ կը քարոզէի, դարձայ ու մատս ուղղեցի բեմին վրայ կեցողներուն եւ Սուրբ Հոգիին ներշնչումով համարձակ յայտարարեցի. «Այս բեմին վրայ մեղք կայ: Եթէ դուն չապաշխարես, Աստուած կը բացայայտէ այն, եւ դուն կը հեռացուիս»: Ես զգացի իշխանութեան եւ վստահութեան աճ: Այս անգամ իմ մէջ հարցումներ չյառաջացան, որովհետեւ գիտէի, որ Աստուած Իր տունէն մեղքը սրբելու գործընթացի մէջ է:

## Դատէ դուն քեզի, որ չդատուիս

Եթէ մեղքը գաղտագողի կը մտնէ մեր կեանքի մէջ, Սուրբ Հոգին կը յանդիմանէ եւ կ'ուսուցանէ մեզի, բայց եթէ չլսենք, աստիճանաբար կը դառնանք պաղ ու անտարբեր: Ասիկա կը շարունակուի այնքան ժամանակ, մինչեւ մեր սրտերուն մէջ զգայուն չդառնանք Անոր նկատմամբ:

Մեզի կամ մեր շուրջ գտնուողներուն հասնելու եւ պաշտպանելու փոխարէն, Աստուած կ'ուղարկէ ինչ որ մէկուն՝ բացայայտելու սխալը: Աստուած ասիկա չ'ըներ մեզի շփոթեցնելու նպատակով, այլ՝ զգուշացնելու եւ պաշտպանելու:

Եթէ մենք շարունակենք մերժել լսելը, դատաստանը կու գայ. «Որովհետեւ եթէ մեր անձերը դատէինք, չէինք դատապարտուեր: Բայց դատուելով Տիրոջմէն, կը խրատուինք, որ աշխարհին հետ չդատապարտուինք» (Ա. Կորնթ. 11.31,32):

Աստուած մեղքը կը հանդուրժէ որոշակի ժամանակ, որպէսզի այդ մեղքէն ապաշխարելու ժամանակ տայ՝ պաշտպանելով մեզի Իր պատիժէն: Նոյնիսկ Իր խրատելի պատիժին մէջ Աստուած կը ցանկայ, որ մենք չդատապարտուինք աշխարհին հետ: Անառակ որդին սթափեցաւ, երբ խոզանոցն էր: Աւելի լաւ է դուն ինքնուրոյն սթափիս «խոզանոցին մէջ», քան շարունակես մնալ մեղքիդ մէջ ու օր մը լսես Տիրոջ ձայնը, որը կ'ըսէ. «...Ինձմէ մէկ կողմ գացէք, ով անօրէնութիւն գործողներ» (Մատթ. 7.23):

Եթէ մենք չենք ապաշխարեր, կը տառապինք, չնայած որ ատիկա չէ Աստուծոյ ցանկութիւնը մեզի համար: Վկայակոչելով ասոր մասին՝ Պողոսը կ'ըսէ. «Անոր համար ալ ձեր մէջ շատ հիւանդներ եւ ցաւագարներ կան, եւ շատերն ալ ննջած են (մեռած են)» (Ա. Կորնթ. 11.30): Մեղքը, վերջ ի վերջոյ, կը յանգեցնէ հոգեւոր եւ ֆիզիքական մահուան: Ես կը զգայի, որ Տէրը կը խրատէ բեմին վրայ գտնուող ինչ որ մէկու մը՝ փորձելով այդ մարդուն բերել ապաշխարութեան, բայց ես չէի գիտեր, թէ որուն կը յանդիմանէր մեղքի համար:

## Անկատ յարձակում վախի կողմէն

Յաջորդ երեկոյ, երբ հովիւին հետ անոր գրասենեակին մէջ կը պատրաստուէինք ծառայութեան, աւագներէն մէկը ներս մտաւ եւ տեղեկացուց, որ փառաբանութեան ծառայողները մոայլ են ու բացասական տրամադրուածութիւն ունին: Հովիւը մտածեց, որ անոնք թերեւս պարզապէս յոգնած են ամէնօրեայ ծառայութիւններէն եւ ըսաւ. «Ուղղակի ըսէ անոնց, որ դուրս ելլեն ու փառաբանեն Աստուծոյ եւ մէկ կողմ դնեն իրենց զգացումները»:

Ես նայեցայ աւագին եւ ըսի. «Մէկ վայրկեան, ինչ որ բան այնպէս չէ»:

Աւագը պատասխանեց. «Լաւ, անոնք կը կարծեն, որ դուք չափազանց խիստ էք, եւ եթէ բան մը ունիք ըսելու, պէտք է առանձին դիմէք անոնց եւ ոչ հրապարակայնօրէն»:

Չնայած որ ես այդ ժամանակ ոչինչ գիտէի, բայց պահը վճռորոշ էր: Աստուծմէ ինծի տրուած ծառայելու եւ պաշտպանելու իմ իշխանութեանը մարտահրաւեր նետուած էր: Թշնամիին հաճելի չէր թուեր այն, ինչ որ տեղի կ'ունենար այդ հաւաքոյթներուն, եւ կը ցանկար կեցնել այն:

Ես ընտրութիւն մը ունէի, չնայած որ այդ ժամանակ ատիկա չէի գիտակցեր: Ես կրնայի ենթարկուիլ վախին ու ետ քաշուիլ այն ամէնէն, ինչ ըսած էի փառաբանութեան ծառայողներուն՝ կորսնցնելով իշխանութեան իմ դիրքը, կամ ալ կրնայի մնալ իմ իշխանութեան մէջ, կոտրել անոնց վախի զօրութիւնը՝ մնալով հաստատուն Աստուծոյ ըսածին մէջ:

Անմիջապէս մտածեցի. «Ճոն, ինչո՞ւ շփոթեցուցիր այդ մարդոց: Ինչո՞ւ չբարոզեցիր քու պատգամը առանց դառնալու եւ մատնացոյց ընելու: Հիմա եկեղեցւոյ ժողովուրդը զբաղած է պարզաբանումներով, թէ բեմին վրայ գտնուողներէն ո՞վ մեղքի մէջ է: Իսկ եթէ ոչ մէկն ալ չըլլայ: Կամ եթէ նոյնիսկ մեղք կայ, ի՞նչ կ'ըլլայ, եթէ չբացայայտուի: Ժողովուրդը կը դառնայ կասկածամիտ, իսկ մաքուրները կը տուժեն: Եկեղեցին դժուարութիւններ կ'ունենայ:

Արդեօք ես չեմ քանդած այս եկեղեցւոյ մէջ ձեւաւորուած բարի աւանդոյթները: Եթէ՝ այո, այն ինծի վատ համբաւ կը բերէ, իսկ ես հազիւ նոր սկսած եմ ճամբորդել»:

Անընդհատ այս մտքերու գրոհի մէջ էի: Իմ վախերը սկսած էին կեդրոնանալ մէկ մտքի վրայ. «Ի՞նչ կը պատահի հետոս»:

Ահա թէ երկչոտութիւնն ինչպէս պիտի փոխէ քու կեդրոնացումը: Պատճառն այն է, որ երկչոտութեան արմատը վախն է, եւ վախը պատճառ կը դառնայ, որ մարդիկ կեդրոնանան իրենց վրայ: Կատարեալ սէրը դուրս կը նետէ վախը, որովհետեւ սէրը կը կեդրոնացնէ Աստուծոյ եւ ուրիշներու վրայ ու կը մերժէ ինքն իրեն (Ա. Յովհ. 4.18):

Հովիւր ոչինչ ըսաւ: Երեքով ձեռք-ձեռքի տուինք եւ աղօթեցինք, որ Աստուծոյ կամքը կատարուի այդ հաւաքոյթին ժամանակ: Ծառայութիւնը սկսաւ այնպէս, ինչպէս որ անցնող երեք շաբաթներու ընթացքին էր: Փառաբանութեան եւ երկրպագութեան ընթացքին ես նկատեցի, որ Տիրոջ Խօսքը չի լեցուիր սրտիս մէջ: Ոչ մէկ առաջնորդութիւն կը զգայի, բայց կը մտածէի, որ Աստուած հաւատարիմ է: Ես գիտէի, թէ ինչ պիտի ըսէի, եւ ատիկա պիտի ըլլար իր ժամանակին, երբ բարձրանայի բեմ:

Փառաբանութիւնն ու երկրպագութիւնը ամարտեցաւ, եւ երբ հովիւր յայտարարութիւնները կ'ըսէր, իմ սրտին մէջ ոչինչ կը լսէի: Մտածեցի՝ կը բարձրանամ բեմ, եւ Աստուած կ'առաջնորդէ ինծի, երբ կենամ հոն:

Ես միակը չեմ, որ նշումներ կ'ընէ քարոզի պատրաստուելու ժամանակ: Սովորաբար ես կ'ուսումնասիրեմ, կ'աղօթեմ եւ յետոյ կը խօսիմ իմ սրտէն՝ ներշնչուելով Աստուծմէ: Անհանգստութիւնս երթալով կը մեծնար, քանի որ ժամանակը կ'անցնէր, եւ ես գիտէի, որ ոչինչ կ'ունենամ ըսելու, եթէ Աստուած ինծի չառաջնորդէ:

Յետոյ հովիւր ներկայացուց ինծի: Առջեւ եկայ, եւ քանի որ առաջնորդութիւն չունէի, ըսի. «Եկէք աղօթենք»: Երբ

### *Քալէ քեզի տրուած իշխանութեամբ*

կ'աղօթէինք, կը զգայի, որ առաջնորդութիւն չկայ: Ես աղօթեցի քանի մը վայրկեան: Իրավիճակն անելի կը վատանար, քանի որ իմ աղօթքները իրենց մէջ կեանք չունէին: Բառերն ընդամէնը դուրս կ'ելլէին բերանէս եւ կ'իյնաին ոտքերուս տակ: Կը մտածէի. «Ինչ պիտի ընեմ»: Որոշեցի ուղերձ մը տալ Սաղմոսներէն, որ նախկինին քարոզած էի:

Երբ սկսայ քարոզել, ոչ մէկ կեանք զգացի, ոչ մէկ օծութիւն կար ուղերձին մէջ: Ես կը ջանայի կեդրոնացնել մտքերս: Կը թուէր, թէ Աստուած ներկայ չէր: Կը մտածէի. «Ինչո՞ւ աստիկա ըսի, ուրկէ վերցուցած եմ ասիկա»: Ինծի կ'առաջնորդէր շփոթածութիւնը եւ ոչ թէ Սուրբ Հոգին: Ես կը շարունակէի ես ինծի սփոփել, որ Աստուած կ'առաջնորդէ եւ կը փրկէ ինծի խառնաշփոթութենէն: Բայց եւ այնպէս իրավիճակն անելի կը վատանար: Վերջապէս աւարտեցի քարոզը եւ ծառայութիւնը: Ատիկա տեսց երեսունհինգ վայրկեան:

Շփոթած ետ վերադարձայ այն տեղը, ուր կեցած էի: Դիմեցի Աստուծոյ. «Աստուած իմ, Դուն ինչո՞ւ չառաջնորդեցիր: Մինչեւ այսօր անցուցած բոլոր ծառայութիւնները հիանալի եւ զօրաւոր էին, մինչդեռ այս ծառայութիւնն իր մէջ կեանք չունէր: Եթէ ես ըլլայի այս մարդոց տեղը, այլեւս ծառայութեան չէի գար: Անկեղծ ըլլալու համար՝ ես չեմ ուզեր նահանջել»: Այդ գիշեր, երբ անկողին մտայ, կը թուէր, թէ պարկ մը աւազ կ'լլած եմ:

Յաջորդ առաւօտեան արթնցայ եւ զգացի, որ այդ պարկ մը աւազը վերածուած է ցեխի շաղախի, այնքան ծանրացած կը զգայի անձս, որ չէի ուզեր ելլել անկողինէն: Ուրախութիւնը հեռացած էր ինձմէ: Ես դուրս ելայ աղօթելու: Նորէն հարցուցի Աստուծոյ. «Ինչո՞ւ Դուն չես առաջնորդեր»:

Ոչ մէկ արձագանգ:

- Ես մեղանչամ՞ եմ: Վշտացուցամ՞ եմ Քեզի...

Դարձեալ լռութիւն: Մէկ ժամ աղօթեցի: Ամէն մէկ վայրկեան պայքար էր:

Փառաբանութեան ձայներիզ մը միացուցի եւ սկսայ երգել, կը մտածէի, որ Աստուած ծանրութեան հոգիի դէմ պիտի տայ փառաբանութեան հանդերձը: Կէս ժամ երգեցի իր մէջ կեանք չունեցող երգը: Աւելի յուսահատեցայ, «Ես ինչ ըրած եմ: Ինչո՞ւ Դուսն ինձի չես պատասխաներ»:

Ճաշէն ետք գացի մօտակայ դաշտը: Կը մտածէի, որ կը կապեմ սատանային: Բաւական է:

Բայց միայն ես ինձի կապուած կը զգայի: Երեք ժամ դուրսը կ'աղօթէի, ձայնս կորսնցնելու աստիճան կը պոռայի սատանային վրայ: Արդէն տուն երթալու ժամանակն էր. պէտք է պատրաստուէի յաջորդ ծառայութեանը: Ես սփոփեցի ինքս ինձի. «Այսպիսի դիմադրութենէ ետք այս երեկոյ Աստուած զօրաւոր ձեւով կը գործէ: Ճո՞ն, պարզապէս քալէ հաւատքով»:

Այդ երեկոյ մենք փառաբանեցինք, երկրպագեցինք, յայտարարութիւններ ու զոհաբերութիւն եղան, իսկ իմ մէջ նոյն վատ նախազգացումն էր, որ ունեցած էի նախորդ ծառայութեան ժամանակ: Կրկին մտածեցի, որ Աստուած կը գործէ իմ միջոցով, երբ բարձրանամ բեմ: Ինձի ներկայացուցին եւ նորէն... ոչինչ: Ես աղօթեցի առաջնորդութեան համար, բայց լռութիւն էր...

Սկսայ քարոզել ուրիշ քարոզ մը, որ նախկինին քարոզած էի, եւ ինկայ շփոթուածութեան մէջ. ո՛չ մէկ կեանք, ո՛չ մէկ առաջնորդութիւն եւ ոչ ալ օծութիւն: Այս շփոթուածութենէն հինգ վայրկեան ետք ըսի, «Ժողովուրդ, մենք պէտք ունինք աղօթելու: Ինչ որ բան մը ճիշդ չէ»: Բոլորը ոտքի կեցան, եւ մենք սկսանք եռանդուն աղօթել:

## **Բացայայտուած երկչոտութիւն**

Աւելի քան քսանչորս ժամ ետք յանկարծակի, ես առաջին անգամ լսեցի Աստուծոյ ձայնը: Ան ըսաւ. «Ճո՞ն, դուսն վախցած ես այն մարդոցմէ, որոնք բեմի վրայ են՝ քու ետեւը: Դուսն դուրս ելած ես իշխանութեան քու դիրքէն, եւ քու մէջ եղած Աստուծոյ պարզելը հանգած է»:



### *Քալէ քեզի տրուած իշխանութեամբ*

Այս պարզ յանդիմանութենէն լոյս մը վառեցաւ եւ ողողեց իմ հոգին: Մինչ մարդիկ կ'աղօթէին, յաջորդ հինգ վայրկեանի ընթացքին Աստուծոյ Հոգին ինծի տարաւ Աստուածաշունչին մէջէն՝ ցոյց տալով բազմաթիւ դէպքեր, երբ տղամարդիկ ու կանայք վախցած էին, եւ թէ ինչպէս ատիկա պատճառ դարձած էր անոնց մէջ Աստուծոյ պարգեւի մարելուն: Ես տեսայ, թէ ինչպէս անոնք կը զիջէին իրենց իշխանութիւնը եւ կը կորսնցէին իրենց արդիւնաւետութիւնը Հոգիին մէջ: Այնուհետեւ Ան տարաւ ինծի անցնող քանի մը տարիներուն մէջէն եւ ցոյց տուաւ, թէ ինչպէս ես ալ նոյնը ըրած եմ:

Անմիջապէս աղօթքի միջոցով սկսայ կոտորել վախի զօրութիւնը իմ մէջէն: Այսպիսի աղօթքի մը օրինակը կայ գիրքի վերջաբանին մէջ: Յաջորդ եօթանասունհինգ վայրկեաններուն ընթացքին կրակի մէջ գտնուող մարդու պէս ես քարոզեցի Աստուածաշունչի այն խօսքերը, որոնք Աստուած կու տար ինծի: Երբ աւարտեցի, ժողովուրդի երկու երրորդն առջեւ եկաւ՝ վախէ ազատագրուելու: Ատիկա արթնութեան ամենամեծ ծառայութիւնն էր:

Մէկ շաբաթ չանցած՝ Աստուած սկսաւ բացայայտել բեմին վրայ եղող մեղքը: Պարզուեցաւ, որ պէյսկիթառահարը ծառայութիւններէն յետոյ միշտ կ'երթար գինովնալու: Կ'աւելցնեմ նաեւ, որ փառաբանողներէն մէկը կը շնանար եկեղեցիէն երիտասարդ աղջկայ մը հետ: Այդ երկուքն ալ հեռացուեցան ծառայութիւններէն: Պէյսկիթառահարը ձգեց եկեղեցին, բայց փառաբանողն ապաշխարեց եւ վերականգնեց Տիրոջ հետ իր ընթացքը:

Կարճ ժամանակ յետոյ փառաբանութեան եւ երկրպագութեան աագն ու ես քանի մը հոգի եկեղեցիին ներսը պառակտում յառաջացուցին: Եկեղեցւոյ մէկ չորրորդը հեռացաւ անոնց հետ: Ինչպէս յստակացաւ, փառաբանութեան եւ երկրպագութեան աագը շնութեան մէջ էր, եւ, մէկ տարի չանցած, ան բաժնուեցաւ ամուսինէն: Վերջերս իմացայ, որ հիմա ալ ուրիշ տղամարդու մը հետ կ'ապրի: Պառակտման պատճառ դարձած ընտանիքներէն

միայն մէկ զոյգն է, որ տակաւին չէ բաժնուած:

Ասոնք այն մարդիկն էին, որոնք կը դժգոհէին, թէ ես չափազանց խիստ էի իրենց նկատմամբ: Աստուած անոնց կը նախազգուշացնէր: Որքան լաւ կ'ըլլար, եթէ անոնք այդ նախազգուշացումն ընդունէին իրենց սրտերուն մէջ:

Ես երկու անգամ վերադարձած եմ այդ եկեղեցի եւ ւաւելի շատ միաբանութիւն ու զօրութիւն տեսած եմ հոն, քան նախկինին: Հովիւր կը բացատրէր. «Աստուած կը սրբէր մեր եկեղեցին, եւ ատիկա մեզի ւաւելի ուժեղ դարձուց: Մեր փառաբանութիւնն ու երկրպագութիւնը երբեք այսքան ազատ չեն եղած»: Ան նաեւ ըսաւ, որ յառաջացած տարածայնութիւններն ու դժգոհութիւնները երկար չեն տեսած եւ արագ լուծուած են: Փառք Աստուծոյ:

Այն ինչ որ Աստուած ըսաւ այդ կարճ՝ հինգ վայրկեանոց աղօթքի մէջ, ծառայութեան ընթացքին աճեցաւ՝ վերածուելով քարոզի մը, որուն մասին դուն կարդացիր: Ան տուած է ինծի այս ուղերձը, որ քարոզեմ ողջ աշխարհի տարածքին: Որպէս հետեանք՝ ես տեսած եմ անթիւ տղամարդոց ու կիներու, որոնք ազատած են վախի գերութենէն:

## **Ուղերձ բոլորին համար**

Չնայած այս ուղերձը տրուեցաւ ինծի ծառայութեան մէջ յառաջացած խնդիրի ժամանակ, մի կարծեր, թէ այն դաս է միայն անոնց համար, որոնք կը կենան ամպիոնին քով: Անթիւ քրիստոնեաներ կը պայքարին վախի դէմ: Յաճախ անոնք, որոնք վախցած են, չեն պատկերացներ, թէ ինչի դէմ կը կռուին: Ինչպէս սատանային շատ հնարքները, վախը եւս քողարկուած ու աննկատ է: Մենք կը զգանք ատոր հետեանքները՝ ընկճուածութիւն, շփոթութիւն, հաւատքի պակաս՝ առանց գիտնալու ատոր արմատը: Եթէ ես հասկնայի, որ վախցած եմ, այդքան չէի պայքարեր այդ եկեղեցիին մէջ: Բայց շնորհակալ եմ Աստուծոյ այն դասին, պատգամին համար, որ տուաւ ինծի:

Յուսախաբութեան մէջ մեզմէ շատերը կը կռուին վախի

### *Քալէ քեզի տրուած իշխանութեամբ*

ձգած հետեւանքներուն կամ պտուղներուն հետ աւելի շատ, քան նոյնինքն իր՝ վախի՛ն կամ ատոր արմատին հետ: Հետեւաբար մենք կրնանք ունենալ ժամանակաւոր սփոփանք, բայց մեր պայքարը չի վերջանար ատորմով: Դուն կրնաս ծառի բոլոր պտուղները փրցնել, բայց քանի դեռ անոր արմատները առողջ են, պտուղները նորէն կ'աճին: Այս պտոյտը կրնայ յուսահատեցնել, քանի որ կը զգանք, որ չենք կրնար մեզի ազատել այդ խոչընդոտներէն: Մենք կը կորսնցնենք յոյսը եւ բնակութիւն կը հաստատենք տեղ մը, որ շատ հեռու է այն տեղէն, որուն մէջ մեզի Աստուած կանչած է:

Այս գիրքի ճշմարտութիւնները կ'օգնեն քեզի ոչ միայն ճանչնալու վախը, այլեւ կը զինեն քեզի անհրաժեշտ գիտութեամբ, որուն միջոցով կը կոտորես վախի լուծը քու կեանքին մէջ: Իմ աղօթքն է, որ մինչ դուն կը կարդաս եւ կը քալես այս ճշմարտութիւններով, ազատագրուիս՝ իրականացնելու համար քու կոչումը որպէս Տէր Յիսուս Քրիստոսի ծառայ: Հնարաւոր է, հիմա դուն ամէն ինչ կ'ընես, որպէսզի ընդդիմանաս քու կեանքը գլխաւորող վախին: Յաճախ, երբ մեր կեանքին մէջ մեզ ճնշող ինչ որ բան մը կը տեսնենք, շուտափոյթ լուծում կը փնտռենք, բայց սովորաբար այդ շուտափոյթ լուծումը սուղ պիտի արժէ. այն մնայուն չէ: Ես կը ցանկամ, որ մեծ ուշադրութիւն դարձնես եւ այս ուղերձը հասկնաս այնպէս, ինչպէս որ այն բացուած է ինծի: Յաջորդ երեք գլուխներուն մէջ ես կը խօսիմ այն վճռորոշ հիմքերուն մասին, որոնց վրայ ամրապնդուելով՝ կը սկսինք գիտակցիլ մեր ունեցած հոգեւոր դիրքն ու իշխանութիւնը:

**Սափանան ջանք կ'ընէ ներդրու մեզի մեր  
դիրքէն, որպէսզի արորմով վերստանայ այն  
իշխանութիւնը, որ Յիսուսն  
իրմէ վերցուց:**

## ՀՈԳԵՒՈՐ ԴԻՐՔ ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

**Ե**կուր քննենք այն խօսքը, որ տրուեցաւ ինձի. «Եթէ դուն չքալես Աստուծմէ քեզի տրուած իշխանութեամբ, ինչ որ մէկն այն կը վերցնէ քեզմէ եւ կ'օգտագործէ քու դէմ»:

Նախ եւ առաջ, շատ կարեւոր է հասկնալ, որ հոգիին մէջ կայ բնակատեղ կամ դիրք, որուն մէջ մենք կը գտնուինք որպէս Քրիստոսի մէջ եղող հաւատացեալներ: Այս դիրքէն կու գայ իշխանութիւնը եւ յատկապէս այս իշխանութիւնը կը ցանկայ թշնամին: Եթէ ան կարենայ այնպէս մը ընել, որ մենք զիջինք Աստուծմէ տրուած իշխանութիւնը, ան կը վերցնէ այն եւ կ'օգտագործէ մեր դէմ: Ասիկա միայն մեր վրայ չ'ազդեր, այլ նաեւ անոնց, որոնց մասին մենք հոգ կը տանինք:

Կան բազմաթիւ սուրբգրային խօսքեր, որոնք կը վերաբերին հոգիին մէջ ունեցած մեր իշխանութեան դիրքին: Թոյլ տուր քանի մը օրինակներ բերել.

*«Բարձրեալի ծածկոցին տակ բնակողը Ամենակարողի շուքին տակ կը հանգստանայ» (Սաղմ. 91.1):*

*«Եւ ինձի հանեց լայնարձակ տեղ եւ ինձի փրկեց, որովհետեւ հաւնեցաւ ինձի» (Սաղմ. 18.19): «Իմ ուրբը կանգնած է ուղղութիւնով, եւ կ'օրհնեմ Տիրոջը ժողովուրդներուն մէջ» (Սաղմ. 26.12):*

Հաւատացեալները պարզապէս հոգիին մէջ տեղ կը գրաւեն: Քեզի, որպէս հաւատացեալ, յանձնարարուած է ոչ միայն ճանչնալ այդ տեղը, այլ նաեւ գործել ասոր մէջ: Եթէ դուն չես գիտեր դիրքդ, չես կրնար պատշաճ ձեւով գործել Քրիստոսի մարմինին մէջ:

Այս դիրքը եւ դիրքի իշխանութիւնը կրնաս կորսնցնել կամ կրնան գողնալ: Աստուածաշնչեան վառ օրինակ է Յուդա Իսկարիովտացին: Յիսուսի Երկինք համբարձումէն ետք աշակերտները հաւաքուեցան աղօթելու: Այդ ժամանակ Պետրոսը բացատրեց, թէ ինչ պատահած էր Յուդային հետ.

*«Որովհետեւ Սաղմոսներու գիրքին մէջ գրուած է, թէ անոր բնակութիւնը աւերակ պիտի ըլլայ, եւ անոր մէջ բնակող պիտի չըլլայ, եւ անոր պաշտօնը ուրիշն առնէ» (Գործք 1.20):*

Անօրէնութեան պատճառով Յուդան ընդմիշտ կորսնցուց հոգիին մէջ իր տեղը (Գործք 1.16,17): Ասիկա այն հիմնական ձեւն է, որուն միջոցով թշնամին մարդոց դուրս կը հանէ իրենց հոգեւոր իշխանութենէն: Ահա թէ ինչպէս այն պատճառ դարձաւ, որ Ադամն ու Եւան իյնան իրենց դիրքէն, հետեւաբար սատանան ծուղակը նետեց անոնց՝ իր տիրակալութեան տակ առնելով Ադամին եւ Եւային, եւ այն ամէնը, ինչին վրայ անոնք կ'իշխէին:

Ադամն ու Եւան ունէին իշխանութեան ամենաբարձր դիրքը երկրի վրայ: Ամէն մէկ կենդանի արարած եւ բնութեան մէջ եղող ամէն ինչ անոնց իշխանութեան տակ էր: Աստուած ըսած էր. «... Որ իշխեն ծովուն ձուկերուն եւ երկինքի թռչուններուն, եւ

### *Հոգետոր դիրք եւ իշխանութիւն*

անասուններուն, եւ բոլոր երկրի վրայ, եւ երկրի վրայ սողացող բոլոր սողուններուն վրայ» (Ծննդոց 1.26): Երկրի վրայ՝ հոգետոր եւ ֆիզիքական ոլորտներուն մէջ, մարդուն տրուած իշխանութենէն բարձր ոչինչ կար, միայն Աստուած Ինքն էր բարձր:

Երբ Ադամն իր իշխանութեան դիրքին մէջն էր, ոչ մէկ հիւանդութիւն, երկրաշարժ, սով կամ աղքատութիւն կար: Այս երկրի վրայ Երկինքի տիրակալութիւնն էր, քանի որ Ադամը կ'ընթանար Աստուծոյ հետ մտերիմ փոխյարաբերութեան մէջ եւ կը կառավարէր Աստուծմէ լիազօրուած իշխանութեամբ ու զօրութեամբ: Բայց Ադամի մեղքին պատճառով անոր իշխանութեան տակ գտնուող ամէն ինչի վրայ առաջ եկաւ մահուան անէծքը: Մեղքին միջոցով ան հոգիի մէջ եղող իր տեղը զիջեցաւ Աստուծոյ թշնամիին:

Աստուածաշունչը կը վկայէ ասոր մասին, երբ սատանան կը պարծենար անապատին մէջ՝ Յիսուսի փորձութեան ժամանակ: Սատանան Յիսուսին տարաւ բարձր լեռան վրայ, որպէսզի ցոյց տայ աշխարհի բոլոր թագաւորութիւնները, եւ ըսաւ.

*«Այս բոլոր իշխանութիւնն ու անոնց փառքը Քեզի պիտի տամ, որ ինձի տրուած է, եւ որո՞ւ որ ուզեմ, կու տամ այն» (Ղուկ. 4.6):*

Աստուած իշխանութիւնը Ադամին վստահած էր, իսկ Ադամն այն, իր արարքին հետեւանքով, տուաւ սատանային: Ադամն իր դիրքէն բացի շատ բան կորսնցուց: Ամէնը, ինչ որ Աստուած դրած էր Ադամին հոգատարութեան ներքոյ, ապականեցաւ: Այն ամէնը, ինչ որ ներդաշնակութեան մէջ էր, աստիճանաբար անկում ապրեցաւ:

Բերեմ կենդանիներուն օրինակը. Աստուծոյ եւ Ադամի տիրակալութեան տակ գտնուող այգիի առիւծները չէին ուտեր միւս կենդանիներուն (Եսայիա 65.25): Օձերը թունաւոր խայթոցներ չունէին (Եսայիա 65.25): Գառնուկները չէին վախնար գայլերէն, միւսներն ալ չէին վախնար, որ որս կը դառնան (Եսայիա 65.25):

Մինչդեռ, անկումէն անմիջապէս ետք մենք կը տեսնենք, որ անմեղ կենդանի կը զոհաբերուի՝ ծածկելու համար մարդու մերկութիւնը (Ծննդոց 3.21): Աւելի ուշ մենք կը տեսնենք, որ թշնամութիւնն ու վախը տեղ կը գրաւեն մարդուն եւ կենդանիներու յարաբերութեան միջեւ, որոնց ան ժամանակ մը կը կառավարէր (Ծննդոց 9.2):

Յաջորդ ոլորտը, որուն վրայ անկումը իր ազդեցութիւնը ձգեց, երկիրն էր: Հողն անիծուած դարձաւ: Մարդուն ծառայելու փոխարէն, այն գործեց մարդուն դէմ, քանի որ մարդը տքնաջան պիտի աշխատէր՝ պտուղներ ստանալու համար, որուն միջոցով ժամանակին անհոգ ապահովուած էր (Ծննդոց 3.17-19): Հռովմայեցիս 8.20-ն կ'ըսէ մեզի. «Անոր համար, որ ստեղծուածները հնազանդեցան ունայնութեան, ոչ թէ կամքով, այլ անոր համար, որ հնազանդեցուց այն յոյսով»:

Երկրի վրայ ոչ մէկ բան՝ ըլլայ ատիկա ֆիզիքական, թէ հոգեւոր, չկրցաւ խուսափիլ անհնազանդութեան հետեւանքներէն: Ոճիրը, մահը, հիւանդութիւնները, դժուարութիւնները, երկրաշարժերը, սովը, ձանձրոյթը եւ շատ բաներ մուտք գործեցին երկիր: Աստուածային կարգուկանոնի եւ իշխանութեան կորուստ տեղի ունեցաւ: Ադամի առաջնեկը սորվեցուց ատել, նախանձիլ եւ սպաննել: Թշնամին վերցուց Աստուծմէ տրուած պաշտպանութեան ու ապահովութեան իշխանութիւնը եւ այն ուղղեց ողջ արարչագործութեան դէմ՝ օգտագործելով այն կործանման ու մահուան համար:

## Վերականգնուած իշխանութիւն

Մարդը զիջած էր իր դիրքն ու իշխանութիւնը, հետեաբար միայն մարդը կրնար այն վերականգնել: Հազարաւոր տարիներ ետք Յիսուսը ծնաւ: Անոր մայրը Աստուծոյ ժողովուրդէն դուրս ելած դուստր մըն էր: Յիսուսին Հայրը Աստուծոյ Սուրբ Հոգին էր: Ան կէս մարդ էւ կէս Աստուած չէր: Ան էմմանուէլն էր՝ «Աստուած՝ յայտնուած մարդու մէջ» (Մատթ. 1.23): Փաստը, որ Ան մարդ էր, Անոր օրինական իրաւունք տուաւ ետ ստանալու



## Հոգեւոր դիրք եւ իշխանութիւն

այն ամէնը, ինչ որ կորսուած էր: Քանի որ Յիսուան Աստուծոյ Որդին էր, Ան ազատ էր մարդու վրայ ձեռք բերած թշնամիին տիրակալութենէն: Յիսուսը յայտնեց Աստուծոյ կամքը ամէն ինչի մէջ, ինչ որ ըսաւ ու ըրաւ: Մեղքերը կը ներուէին, քանի որ Անոր ներկայութեան մէջ մեղքը ոչ մէկ իշխանութիւն ունէր: Տկարութիւններն ու հիւանդութիւնները կը խոնարհէին Անոր իշխանութեան եւ զօրութեան առջեւ (Ղուկ. 5.20-24): Բնութիւնն ինքն ալ կ'ենթարկուէր Անոր հրամանին: Յիսուսը կը քալէր այն իշխանութեամբ, որմէ Ադամը հրաժարած էր: Յիսուսը հնազանդութեան եւ զոհաբերութեան միջոցով վերականգնեց Աստուծմէ տրուած իշխանութիւնը, որ կորսնցուցած էր Ադամը, հետեւաբար նաեւ մեր փոխյարաբերութիւնը Աստուծոյ հետ:

Մինչեւ Հօր քով վերադառնալը՝ Յիսուսը յայտարարեց. «...Ամէն իշխանութիւն Ինծի տրուեցաւ Երկինքի ու Երկրի մէջ: Ուրեմն գացէք բոլոր ազգերը աշակերտեցէ՛ք՝ անոնց մկրտելով Հօր եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով՝ անոնց սորվեցնելով, որ ամէն ինչ, որ ձեզի պատուիրեցի՝ պահեն, եւ ահա Ես ձեզի հետ եմ ամէն օր մինչեւ աշխարհի վերջը» (Մատթ. 28.18-20):

Հասկնալի է, որ Յիսուսը նորէն ձեռք ձգեց եւ այն, ինչ որ Ադամը կորսնցուց եւ դեռ աւելին: Սատանան եւ Ադամը իշխանութիւն ունէին միայն երկրի վրայ, բայց Յիսուսի տիրակալութիւնը կը ներառէ ոչ միայն երկիրը, այլ նաեւ Երկինքը: Յիսուսը բարձրացաւ սատանայի իշխանութենէն ալ վեր: Իր դիրքն ու իշխանութիւնը յայտնելէն ետք Յիսուսը մեզի ըսաւ. «Ուրեմն՝ գացէ՛ք»:

Ինչհո՞ւ Յիսուան Իր իշխանութիւնը կը կապէր մեր կոչումին հետ: Պատասխանը մենք կը գտնենք Պօղոս առաքեալի գրուածքներուն մէջ:

## Իշխանութեան դիրքերը

Պողոսը կ'աղօթէր, որպէսզի մենք իմանանք, «...ինչ է Անոր զօրութեան գերազանց մեծութիւնը Անոր մէջ, որ հաւատացինք... որ Քրիստոսին մէջ գործադրեց՝ Անոր մեռելներու մէջէն

յարուցանելով եւ Իր աջ կողմը նստեցուց երկնաւորներուն մէջ» (Եփես. 1.19,20) (անգլերէնին մէջ՝ երկնաւոր տեղերուն մէջ): Ուշադիր եղիր, որ «երկնաւոր տեղերը» եզակիով չէ: Պօղոսը պարզ կ'ըսէ՝ «տեղեր»: Ասոր հիմքը կը գտնենք քանի մը խօսք յետոյ, երբ կը կարդանք. «Եւ դուք, որ մեռած էիք յանցանքներու եւ մեղքերու մէջ. Ինքը ձեզի կենդանացուց... Անոր հետ մեզի յարութիւն տուաւ եւ Անոր հետ երկնաւորներուն մէջ նստեցուց՝ Քրիստոս Յիսուսին մէջ» (Եփես. 2.2,6) (անգլերէնին մէջ՝ «երկնաւոր տեղերուն մէջ»): Ասոնք այն տեղերն են, ուր Անոր փրկագնուած զաւակները կը բնակին:

Հիմա՝ հարցում մը. «Ո՞ր են այս բնակութեան տեղերը, եւ ինչ դիրք կը գրաւեն ասոնք»: Պատասախանը Եփեսացիներու 1.21-ին մէջ է. «Ամէն իշխանութենէ եւ պետութենէ եւ զօրութենէ եւ տէրութենէ վեր, եւ ամէն անունէն վեր, որ կ'անուանուի, ոչ միայն այս աշխարհի, այլեւ այն հանդերձեալին մէջ»:

Փրկագնուած մարդուն, որ ծածկուած է Քրիստոսի մէջ, այժմ Հոգիի մէջ դիրք մը տրուած է, որ շատ բարձր է սատանային դիրքէն: Յիսուսը յստակ ձեւով յայտարարեց. «Ահա իշխանութիւնը տուի ձեզի՝ կոխելու օձերուն եւ կարիճներուն վրայ եւ թշնամիի բոլոր զօրութեան վրայ, եւ ձեզի ոչինչ պիտի վնասէ» (Ղուկ. 10.19):

Այժմ մեզի համար հասկնալի է պատուիրանը, որ կ'ըսէ «Ուրեմն՝ գացէք»: Յիսուսը կը գիտակցէր, թէ ինչ իշխանութիւն կը վստահէր հաւատացողներուն: Մեր վերստին ծնիլը մեզի իրաւունք կու տայ դիրք ունենալու այս երկնաւոր տեղերուն մէջ՝ թշնամիին իշխանութենէն եւ զօրութենէն շատ ակելի բարձր:

Այնպէս, ինչպէս որ սատանան վարուեցաւ Ադամին հետ Եդէմի պարտէզին մէջ, այսօր ալ ջանք չի խնայեր մեզի դուրս բերելու հոգիի մէջ ունեցած դիրքէն, որպէսզի նորէն ձեռք բերէ այն իշխանութիւնը, որ Յիսուսը ետ վերցուցած էր անորմէ: Երբ սատանան կարենայ գողնալ իշխանութիւնը կամ այնպէս մը ընել, որ անհատները յանձնեն իրենց իշխանութեան դիրքը, նորէն կը ստանայ գործելու իշխանութիւն: Պօղոսը շատ հասկնալի ձեւով կ'ըսէ. «Եւ տեղ չտաք

աստանային» (Եփես. 4.27): Մենք՝ հաւատացեալներս, պէտք չէ զիջինք հոգիի մէջ մեր ունեցած դիրքը:

## Ծառայողական դիրք Արքայութեան մէջ

Մենք պէտք է հասկնանք, որ Աստուծոյ Արքայութիւնը նոյն *Թագաւորութիւնն* է: Թագաւորութիւնները կը հիմնուին ծառայողական դիրքերու եւ իշխանութեան վրայ: Երկինքի տիրապետութիւնը բացառութիւն չէ: Կայ աւելի բարձր, աւելի ազդեցիկ դիրք եւ իշխանութիւն:

Պարտէզին մէջ սաստանան չէր ինկած փիղի կամ նոյնիսկ աղիւծի մը ետեւէն: Ան կը հասկնար, թէ ինչ է իշխանութիւնը եւ ինկած էր Աստուծոյ մարդուն ետեւէն: Ան գիտէր, որ եթէ հասնի մարդուն, աստորմով տիրակալ կը դառնայ այն ամէն ինչին վրայ, ինչ որ մարդը կը կառավարէր կամ կը պահպանէր:

Ատոր համար ալ, երբ սաստանան կ'իյնայ եկեղեցւոյ ետեւէն, անոր հիմնական թիրախը աագներն են:

Վերջերս մեծ եկեղեցւոյ մը հովիւ որոշեց բաժնուիլ կնոջմէն: Այդ քայլին համար Աստուածաշնչեան ոչ մէկ հիմք կար, եւ ատիկա կործանարար եղաւ անոր կնոջ եւ երեխաներուն համար: Երբ աագները անոր հարցուցին շարժառիթը, հովիւը պատասխանեց, որ եթէ ատիկա անոնց հաճելի չի թուիր, կրնան հեռանալ:

Ան քմահաճօրէն կը մեղանչէր՝ խախտելով Աստուծոյ պատուիրանը, եւ ամենուրեք իր համայնքին մէջ կ'արձակէ ամուսնալուծութեան եւ խաբուածութեան (հիասթափութեան) հոգին: Աւելի ուշ այդ եկեղեցւոյ մէջ շատցան ամուսնալուծութեան դէպքերը, կ'ամուսնալուծուէին նոյնիսկ աագները: Շատերն ալ սկսան վհատիլ: Շփոթուած անոնք կ'երթային եկեղեցիէ եկեղեցի՝ հետաքրքրուելով, թէ որուն կրնան վստահիլ: Երբ սաստանան կը հարուածէ *փան պահապանին* եւ դուրս կը նետէ անոր իր դիրքէն, պահապանի խնամքին տակ գտնուողները եւս կը դառնան խոցելի: Ես տեսած եմ, թէ ինչպէս ծնողները իրենց քմահաճոյքով կը խախտեն Աստուծոյ պատուիրանները: Որոշ ժամանակ յետոյ

անոնց երեխաները կը հետեւին ծնողներու օրինակին: Դուն թերեւս աստիկա անէծք անուանես, բայց ինչո՞ւ աստիկա կը պատահի: Մեղքի միջոցով ծնողները կը զիջին հոգիի մէջ ունեցած իշխանութեան իրենց դիրքը՝ երեխաներուն դարձնելով թշնամիէն դիւրին խոցելի:

## **Տալով հնարաւորութիւն Տիրոջ թշնամիներուն**

Այս սկզբունքը կը լուսաբանուի Դաւիթի կեանքի օրինակով (Բ. Թագ. 8-18): Թագաւորութիւնը զօրաւոր եւ ապահով էր Դաւիթի առաջնորդութեան տակ: Աստուած օրհնած էր անոր քանի մը որդիներով ու դուստրերով: Յետոյ Դաւիթն ինքնակամ առաւ այն, ինչ որ Աստուած չէր տուած իրեն. Դաւիթը շնացաւ Բերսաբէին հետ: Բերսաբէն յղացաւ: Իրավիճակն ալ անելի բարդացաւ, քանի որ այդ կնոջ ամուսինը հեռու էր՝ պատերազմի դաշտին մէջ կը կռուէր Դաւիթի թագաւորութեան համար:

Դաւիթը մարդիկ ուղարկեց անոր ամուսինին՝ Ուրիայի ետեւէն, յոյս ունենալով համոզել անոր, որ կնոջ քով գայ: Ատորմով համոզիչ կը դառնար, որ Ուրիան էր երեխային հայրը: Ուրիան, հաւատարիմ ըլլալով Դաւիթին եւ անոր թագաւորութեանը, որոշեց հրաժարիլ իր կնոջ հետ անկողինին մէջ քնանալէն այն ժամանակ, երբ իրեն հետ կռուող զինուորները մարտի դաշտն էին: Դաւիթին՝ իր մեղքը ծածկելու այդ ծրագիրը չգործեց: Ան գիտէր, որ որոշ ժամանակ յետոյ Ուրիան պիտի գիտնար, որ կինը յղի է: Բոլորը պիտի գիտնային, որ երեխային հայրը Դաւիթն էր:

Ատոր համար ալ Դաւիթը ծրագրեց Ուրիայի սպանութիւնը՝ անոր նորէն ուղարկելով մարտի դաշտ: Ուրիային դրին կռուի թէժ գօտիին մէջ: Երբ թշնամին շրջապատեց անոր, Ուրիային հետ կռուողները ձգեցին անոր, այդպիսի հրաման ունէին: Ուրիան ինկաւ թշնամիին ձեռքով: Դաւիթին շնութիւնը դրդեց անոր խորամանկութեան, ստախոսութեան եւ մարդասպանութեան:

Շուտով Նաթան մարգարէն եկաւ Դաւիթին քով բացայայտելու այս մեղքը: Դաւիթը խոստովանեցաւ. «Մեղանշած եմ Տիրոջ դէմ»:

### *Հոգեւոր դիրք եւ իշխանութիւն*

Յետոյ Նաթանն ըսաւ Դաւիթին. «Տէրն ալ ներեց քու մեղքը, չես մեռնիր» (Բ. Թագ. 12.13):

Դաւիթը ապաշխարեց եւ ներում ստացաւ: Աստուած ազատեց անոր իր անօրէնութենէն (Եսայիա 43.25,26): Բայց Նաթանը զգուշացուց Դաւիթին. «Որովհետեւ Տիրոջ թշնամիներուն առիթ տուիր...» (Բ. Թագ. 12.14):

Դաւիթը ներում ստացաւ, բայց իր կեանքն ու ընտանիքը Աստուծոյ թշնամիներուն համար դիրքին խոցելի դարձուց, խոցելի ոչ միայն ֆիզիքական թշնամիներու, այլեւ հոգեւորներու համար: Անոր ընտանիքն ու Իսրայէլ ժողովուրդը մեծ տառապանքներ կրեցին:

Դաւիթի առաջնեկը՝ Բերսաբէէն ծնած երեխան, մահացաւ: Դաւիթին աագ որդին՝ Ամնոնը, որ գահի ժառանգորդ էր, բռնաբարեց իր քրոջը՝ Թամարին: Դաւիթի որդին եւ Թամարին եղբայր Աբիսողոմը վրէժով լեցուեցաւ ու սպաննեց իր եղբայր Ամնոնին: Աբիսողոմը Իսրայէլի մարդոցմէ շատերուն սրտերը ուղղեց Դաւիթին դէմ եւ տիրացաւ անոր գահին: Ան պղծեց իր հօր հարճերուն եւ Իսրայէլի մարդոց դուրս ուղարկեց փնտռելու եւ սպաննելու Դաւիթին: Դաւադրութիւնը ձախողեցաւ, իսկ Աբիսողոմն սպաննուեցաւ:

Դաւիթի որդիներէն երեքը մահացան, որովհետեւ իր մեղքի պատճառով ան բացած էր իր ընտանիքի պաշտպանութեան դռները Աստուծոյ թշնամիներուն առջեւ:

Ես տեսածեմ ծառայողներու երեխաներ, որոնք թմրամոլութեան մէջ են, թշնամաբար տրամադրուած են եկեղեցոյ նկատմամբ, բռնուած են կիրքի եւ համասեռամոլութեան հոգիով, որովհետեւ անոնց ծնողները անօրէնութեան միջոցով զիջած են հոգիի մէջ իրենց դիրքերը: Մենք կարիք ունինք լրջօրէն վերաբերուելու Աստուածաշունչին, երբ ան կ'ըսէ. «Շատ վարդապետներ մի՛ ըլլաք, եղբայրներ, գիտնալով, որ մեծ դատաստան պիտի ընդունիք» (Յակոբ. 3.1): Վարդապետներու (հովիւներու) աւելի խիստ ձեւով դատուելու պատճառն այն է, որ անոնց անհնազանդութիւնն աւելի

մեծ ազդեցություն պիտի ձգէ: Անոնք ոչ միայն իրենց կը վսասեն, այլեւ բոլոր անոնց, որոնք անոնց խնամակալութեան տակ են: Աստուած կը ներէ անոնց, ինչպէս որ ներեց Դաւիթին: Բայց եւ այնպէս անոնք կը հնձեն այն, ինչ որ ցանած են. թշնամիին *տեղ* տրուած է:

Ես կը հասկնամ, որ ասոնք ծանր խօսքեր են: Կը դիմեմ ձեզի ամենայն խոնարհութեամբ եւ այս խօսքերը կը գրեմ երկիւղով ու դողով: Մենք շատ-շատ ողբերգութիւններ տեսած ենք, մասնաւորապէս՝ ծառայութիւններու մէջ: Մենք պէտք չէ դատապարտենք: Մենք կարիք ունինք ներելու եւ հասնելու անոնց, որոնք ձախողած են: Եթէ անոնք ապաշխարեն, Աստուած կը ներէ անոնց: Բայց ես կը գրեմ այս խօսքերը որպէս ուսուցում եւ նախազգուշացում անոնց, որոնց թշնամին թիրախ կը դարձնէ: Մենք բոլորս պէտք է քալենք խոնարհութեան եւ վերականգնման մէջ:

Ունիմ չորս որդի եւ եկած եմ այն հասկացողութեան, որ մեծ ահով պատասխանատուութիւն ու պարտաւորութիւն ունիմ անոնց կեանքերուն համար: Անոնք Աստուծոյն են, իսկ ես ուղղակի տնտեսավար դրուած եմ անոնց վրայ: Ես երբեք չեմ ցանկար տեսնել անոնց կեանքն ամայացած, քանի որ ինքս սատանային տեղ չեմ տուած:

Երբ ես օգնութեան ծառայութեան մէջ էի, կը հետեւէի որոշ կարեւոր բաներու, որպէսզի անոնց, որոնց կը ծառայէի, կարենան իրենց կեանքին մէջ ամբողջութեամբ իրականացնել Աստուծոյ կոչումը: Ես կը հետեւէի մաքրութեան, անոնց երեխաներուն կը բերէի դպրոցէն, կը լուսայի անոնց ինքնաշարժները եւայլն: Օր մը Աստուած ինչ որ բան մը խօսեցաւ ինձի, եւ ատիկա օգնեց, որ ես լուրջ վերաբերիմ ծառայութեանը. «Որդիս, եթէ դուն անկարգութիւն ընես այս դիրքիդ մէջ, դիւրին կ'ըլլայ ուղղուիլը, քանի որ գործ ունիս ֆիզիքական բաներու հետ: Բայց երբ ես դնեմ քեզի ծառայութեան դիրքի մէջ, դուն գործ կ'ունենաս մարդոց հետ, իսկ կեանքերու հետ գործ ունենալը բախտախաղ չէ»:

## **Յանձնած իշխանութիւն**

Այս գլուխին նպատակն է, որ պատկերացում կազմես հոգեւոր դիրքի եւ իշխանութեան մասին: Մենք քանի մը մարդոց օրինակները տեսանք, որոնք իրենց իշխանութիւնը կորսնցուցած էին կամ յանձնած էին Աստուծոյ թշնամիին: Սատանան շատ ակնյայտօրէն կը փորձէ գողնալ քու իշխանութիւնը՝ մեղքը կեանքիդ մէջ բերելու միջոցով: Եթէ դուն վճռականօրէն որոշած ես ծառայել Աստուծոյ քու ողջ սրտով, ան նաեւ կը փորձէ քեզի հարուածելով դուրս նետել Քրիստոսի մէջ ունեցած քու դիրքէն՝ վախի միջոցով:

Երկչոտութիւնը կոտրելու առաջին քայլն այն է, որ քու սեփական սրտին մէջ դրն ջախջախես խանգարող բաները: Յաջորդ գլուխին մէջ ես կը նկարագրեմ՝ ինչպէս ատիկա ընել:

**Յայտնութիւնն արժէք չունի առանց  
իմաստութեան եւ արորմով ապրող  
բնաւորութեան:**



## ԵՐԿՈՒ ԾԱՅՐԱՅԵՂՈՒԹԻՒՆ

Աստուծոյ Հոգին քանի մը ակնթարթի մէջ կրնայ յայտնութեան մեծ բաժին լեցնել հոգիիդ մէջ, բայց այդ յայտնութիւնն արժէք չունի առանց իմաստութեան եւ ատորմով ապրող բնատրութեան: Երբ Սուրբ Հոգին առաջնորդեց ինձի Աստուածաշունչի խօսքերուն միջոցով, որոնք վախի դէմ պայքարելու մասին էին, Ան ցոյց տուաւ երկու ծայրայեղութիւն, որոնք հաւատացեալի կեանքը դուրս կը բերեն հաւասարակշռութենէն: Առաջին ծայրայեղութիւնը զօրութեան ետեւէն երթալն է, երկրորդը՝ կեղծ խոնարհութիւնը: Ամբողջական հաւասարակշռութիւնը կը գտնենք Տիմոթէոսի կեանքին մէջ, որն աւելի շատ կը մշակէր Աստուածապաշտ բնատրութիւն, քան կեղծ խոնարհութիւն, եւ զօրութեան ետեւէն երթալու փոխարէն աւելի շատ կը բորբոքէր իր մէջ եղող պարգեւը:

## Մաքուր սիրտ

Պողոս առաքեալն առաջին անգամ Տիմոթէոսին հանդիպեցաւ Լիւստրիայի մէջ: Ան երիտասարդ մըն էր, որուն մայրը քրիստոնեայ հրեայ էր, իսկ հայրը՝ յոյն:

Պողոսը կը ցանկար, որ Տիմոթէոսն ուղեկցի իրեն եւ Շիղային՝ որպէս իրենց ճանապարհորդութեան օգնական: Տիմոթէոսը պէտք է հոգար Պողոսին կարիքները (Գործք 19.21):

Որոշ ժամանակ յետոյ Տիմոթէոսի հաւատարմութիւնը, որպէս ծառայող, ի յայտ եկաւ: Տիմոթէոսը բարձրացաւ եւ անոր վստահեցան որպէս Աւետարանի ծառայող, այնուհետեւ ան հովուեց Եփեսոսի եկեղեցին: Պողոսը Տիմոթէոսին գրած իր երկրորդ նամակին մէջ կ'ըսէ.

*«Միտքս բերելով այն անկեղծ հաւատքը, որ քու մէջդ է. առաջ քու Լատոդիա մեծ մօրդ եւ քու Ենիկէ մօրդ մէջ բնակեցաւ, համոզուած եմ, որ քու մէջդ ալ է: Այդ պատճառով միտքդ կը բերեմ, որ արծարծես Աստուծոյ այն շնորհքը, որ քու մէջդ է՝ իմ ձեռքերը քու վրայ դնելով» (Բ. Տիմոթ.1.5,6):*

Ուշադրութիւն դարձուր, որ Պողոսը կը յիշատակէ այն փաստը, որ Տիմոթէոսի հաւատքն անկեղծ էր: Այս երիտասարդին սիրտը մաքուր էր: Ան կեղծաւոր չէր: Մէկ այլ նամակի մէջ Պողոսը գովեստի խօսքեր կ'ըսէ. «Բայց յոյս ունիմ Տէր Յիսուսին մէջ, որ Տիմոթէոսին շուտով ուղարկեմ ձեր քով... Վասնզի մէկը չունիմ միասիրտ, որ մտերմաբար հոգ ընէ ձեզի համար: Վասնզի ամէնքն իրենց բաները կը փնտռեն եւ ոչ թէ Յիսուս Քրիստոսինը: Բայց դուք գիտէք անոր ընտիր ըլլալը, որ ինչպէս որդի մը իր հօրը՝ այնպէս ինձի հետ ծառայեց Աւետարանին» (Փիլիպ. 2.19-22):

Հասկնալի է, որ Տիմոթէոսի բնատրութեան հարցը չէր քննարկուեր: Որպէս քրիստոնեաներ՝ բնատրութիւնը պէտք է մեր առաջնահերթութիւնն ու ձգտումը ըլլայ: Այն ինչ որ կը փնտռէ մեր

## *Երկու ծայրայեղություն*

Հայրը, զորութիւնը չէ, այլ բնաւորութիւնը: Տխուր փաստ է, որ եկեղեցւոյ մէջ շատերն ինկած են Հոգիի զորութեան եւ օծութեան ետեւէն, մինչդեռ կը խուսափին Աստուածապաշտ բնաւորութիւնը փնտռելէ:

Կորնթացիներու առաջին թուղթի 14.1-ը մեզի կը սորվեցնէ. «Սիրոյ ետեւէն գացէք եւ հոգեւոր պարգեւներուն նախանձաւոր եղէք...»: Սակայն մենք աղաւաղած ենք այդ պատուիրանը: Մենք կը փնտռենք պարգեւները եւ օծութիւնը, իսկ սիրոյ պտուղը ուղղակի կը ցանկանք մեր կեանքին մէջ: Աստուած սէր է, եւ մինչեւ մենք չքալենք սիրոյ մէջ, ձեռք չենք բերեր Աստուծոյ բնոյթը:

## **Ծայրայեղութիւններէն մէկն այն է, երբ զօրութեանն աւելի կը ձգտիս, քան բնաւորութեանը**

Որոշ քրիստոնեաներ կը կտրեն-կ'անցնին մեծ հեռաւորութիւններ՝ հարիւրաւոր մղոններ, որպէսզի երթան հրաշքի, մարգարեական կամ օծուած ծառայութեան, բայց անոնք չեն կամենար իրենց սրտերէն մէկդի ձգել բարկութիւնը, չներելը կամ դառնութիւնը: Ասիկա կը վկայէ, որ անոնց շեշտադրումն աւելի զօրութեան վրայ է, քան բնաւորութեան:

Այս ծառայութիւններուն մէջ եղող հոգեւոր դրսեւորումները կրնան Աստուծմէ ըլլալ, բայց մենք պարտաւոր ենք գործ ունենալ նաեւ մեր ներսի մարդուն հետ: Ներսի հետ գործ ունենալու անյօժարութիւնը դուռ բացած է: Չնայած որ եկեղեցին այս ժամանակներուն մէջ վերստին վերելք կ'ապրի, մեղքը պէտք է հեռացնել: Հրաշալի է, որ մարդիկ ծարաւ են Աստուծոյ զօրութեան, բայց եկէք չանտեսենք սրտի մաքրութիւնը:

Մենք շատ-շատ ծառայողներու տեսած ենք, որոնք ինկած են: Բայց անոնք չեն ինկած, երբ ըրած են անբարոյականութեան առաջին քայլերը: Ո՛չ, անոնք սկսած են աւելի շուտ իյնալ: Անկումը սկսած է այն օրուրնէ, երբ ծառայութեան մէջ յաջողութիւնը համարած են աւելի կարեւոր, քան Աստուծոյ հետ մտերիմ

փոխարարությունը: Մենք ասիկա միայն ծառայողներու մէջ չենք տեսած, այլ նաեւ անոնց համայնքներու ներսը:

Յիսուան ըսաւ. «Երանի անոնց, որ սրտով մաքուր են, որ անոնք կը տեսնեն Աստուծոյ» (Մատթ. 5.8): Ան չըսաւ. «Երանի անոնց, որոնք յաջողակ ծառայութիւն կ'ունենան»: Ան ըսաւ, որ առանց մաքուր սրտի դուք չէք տեսներ Աստուծոյ: Անշուշտ, Յիսուան է միայն այն Միակը, Որ կրնայ մեզի մաքուր սիրտ տալ: Ատիկա ինչ որ բան չէ, որ մենք կրնանք շահիլ: Այն է անգին է, է Ըրի: Անգին է, քանի որ պահանջեց Աստուծոյ Որդիին մահը, եւ Ըրի է, քանի որ առանց վճարումի կը տրուի բոլոր անոնց, որոնք կը փնտռեն Յիսուսին:

Սովորաբար ես կ'աղօթէի. «Աստուած իմ, օգտագործէ ինծի կորսուածներուն հասնելու, բազմութիւններուն բժշկելու եւ մարդկային հոժ զանգուածներուն ազատագրելու համար»: Ես այսպէս կ'աղօթէի շարունակ, եւ ատիկա էր Աստուծոյ փնտռելու իմ չափը: Իմ բարձրագոյն նպատակը յաջողակ ծառայող ըլլալն էր:

Օր մըն ալ Յիսուսը ցոյց տուաւ ինծի, որ այն, ինչին վրայ ես շեշտը կը դնեմ, սխալ է: Անոր ըսածը ցնցեց ինծի. «Ճոն, Յուդան դեւեր կը հանէր, կը բժշկէր հիւանդներուն եւ կը քարոզէր Աւետարանը: Ան ձգեց իր գործը՝ Իմ աշակերտը դառնալու համար, բայց ո՞ր է ան այսօր»: Ասիկա մէկ թոն աղիւսի պէս ըսես գլխուս ինկաւ: Ան շարունակեց. «Քրիստոնէութեան բարձրագոյն կոչումին նպատակը Աստուծոյ զօրութիւնը կամ ծառայութիւնը չէ, այլ Ինծի ճանչնալն է» (տես Փիլիպ. 3.10.15): Աւելի ուշ, երբ իմ կինը կ'աղօթէր, որպէսզի Աստուած օգտագործէ անոր այդ նոյն ցուցակին համաձայն, Յիսուսը կը հարցնէ անոր. «Լիզամ, դուն բնաւ օգտագործում՞ ես ընկերոջդ կողմէն»:

- Այո՛, կը պատասխանէ ան:

Ինչպէ՞ս քեզի կը զգայիր:

Ան կը պատասխանէ. «Ես խաբուած կը զգայի»:

Յիսուսը կը շարունակէ. «Լիզամ, Ես չեմ օգտագործեր մարդոց:

## *Երկու ծայրայեղություն*

Ես կ'օծեմ, կը բժշկեմ, կը ձեւափոխեմ, կը համապատասխանեցնեմ անոնց Իմ պատկերին, բայց Ես չեմ օգտագործեր անոնց»:

Ինչպէս կը բնորոշես այն կնոջը, որուն միակ ձգտումը իր ամուսինին համար երեխաներ ունենալն է: Ան ամուսինին կը մօտենայ միայն այն ժամանակ, երբ որոշէ ժառանգ ունենալ: Այդպիսի կինը ոչ մէկ հետաքրքրութիւն կ'ունենայ իր ամուսինին անձնապէս ճանչնալու համար:

Ես գիտեմ, որ ատիկա յիմարութիւն է: Մինչդեռ որքան կը տարբերի ասիկա Աստուծոյ ուղղուած մեր այն աղաղակէն, թէ կ'օգտագործէ մեզ՝ մարդոց փրկելու համար, երբ մենք անձնապէս չենք վայլեր Անոր հետ փոխյարաբերութիւնն ու ընկերութիւնը: Երբ մենք կը հաղորդակցինք Աստուծոյ հետ, կ'իրականանայ Անոր այս մտադրութիւնը. «Բայց իրենց Աստուծոյն ճանչցողներու ժողովուրդը պիտի զօրանայ եւ գործէ» (Դանիէլ 11.32): Պօղոսին միակ ձգտումը Անոր ճանչնալն էր (Փիլիպ. 3.8-10): Մովսէսը կ'ըսէր. «Ինձի իմացուր Քու ճանապարհները, որ ճանչնամ Քեզի» (Ելից 33.13): Դաւիթը կ'աղաղակէր. «Մէկ բան կը խնդրեմ Տիրոջմէն. եւ այն շատ կը փափաքէի, որ Տիրոջ տունը բնակիմ իմ կեանքի բոլոր օրերը, որ Տիրոջ գեղեցիկ փառքը տեսնեմ եւ Անոր տաճարը զննելով մտիկ ընեմ» (Սաղմ. 27.4): Եւ նորէն, «...հոգիս ծարաւ է Քեզի համար, մարմինս Քեզի կը ցանկայ» (Սաղմ. 63.1):

Աստուածաշունչի այն տղամարդիկ եւ կանայք, որոնք ամէն ինչէն առաւել կը ցանկային Աստուծոյ ճանչնալ, քան որեւէ այլ բան, հաւատարիմ մնացին Անոր՝ աւարտելով այն ընթացքը, որ Աստուած դրած էր անոնց առջեւ: Անոնք սորվեցան ամբողջական զօրութեան գաղտնիքը: Լրջօրէն փնտռելով Անոր՝ այդ մարդիկ ճանչցան Աստուծոյ սրտի խորութիւնը:

Որոշ մարդիկ իրենց հոգեւոր հասունութեան չափը կը գնահատեն մարգարէանալու կամ ալ պարգեւներու մէջ հոսելու իրենց կարողութեամբ: Բայց յիշէ, պարգեւները կը տրուին, ատոնք չեն վաստկիր: Էշ մը խօսեցաւ եւ տեսաւ՝ մտնելով հոգիի բնագաւառ: Աքաղաղ մը կանչեց երեք անգամ եւ յանդիմանեց

Պետրոսին: Արդե՞ծ այս ամէնը այդ կենդանիներուն հոգեւոր դարձուց:

Յիսուսն ըսաւ, որ շատերը Անոր Տէր կը կոչեն եւ կ'ակնկալեն մտնել Աստուծոյ Արքայութիւնը, բայց կը մերժուին: Անոնք հրաշքներ կ'ընեն, դուեր կը քշեն ու կը մարգարէական հր անունով: Բայց Ան կը պատասխանէ. «Ինձմէ մէկ կողմ գացէք, ով անօրէնութիւն գործողներ» (Մատթ. 7.23):

Օծուած ըլլալը չի նշանակեր հաւանութիւն ստանալ Անորմէ: Սաւուղը մարգարէացաւ այն բանէն ետք, երբ Աստուած արդէն մերժած էր անոր (Ա. Թագ. 19.23,24): Կայիափան մարգարէացաւ այն ժամանակ, երբ իր միակ նպատակը Աստուծոյ Որդիին սպաննելն էր (Յովի. 11.49-51): Մենք պէտք է ունենանք Աստուծոյ սիրտը, որպէսզի կարենանք հնազանդիլ Անոր կամքին: Առանց ատոր մենք պարզապէս կը քալենք Անոր օծութեան շուքին տակ՝ տառապելով օրինապահութենէն կամ ցանկասիրութենէն: Բաղասամը մարգարէացաւ, եւ անոր մարգարէութիւնները ճիշդ էին, այդուհանդերձ, ան մահացաւ գուշակի մահով (սուրով սպաննուեցաւ, երբ Իսրայէլը կը նուաճէր խոստացուած երկիրը):

Պօղոսը Տիմոթէոսի արժանիքները կը չափէր անոր սրտի մաքրութեամբ եւ հաւատարիմ ծառայութեամբ: Մենք եւս պէտք է այս չափանիշը դնենք մեր առջեւ եւ թոյլ տանք Սուրբ Հոգիին, որ ճշգրտօրէն կշռէ մեզ: Այս չափազանց կարեւոր նախադրեալը չի կրնար շատ շեշտադրուիլ, երբ մենք կը մտնենք երկչոտութեան հոգիին հետ պայքարի մէջ: Առանց այս բանը նշելու, այս ուղերձի մէջ եղած ճշմարտութիւնը քեզի չ'ազատեր եւ, հնարաւոր է, քեզի աւելի վնաս պատճառէ, քան բարիք, միայն խօսքերը չեն, որ կը կրեն ազատելու զօրութիւնը, այլ անոնց ետեւը եղող հոգին եւ էութիւնը:

Ասիկա բացատրելու համար վերյիշենք այն, ինչ որ զգուշացուց Պետրոսը. «Ինչպէս մեր սիրելի եղբայր Պօղոսն ալ Աստուծմէ իրեն տրուած իմաստութեան պէս գրեց ձեզի: Ինչպէս ամէն թուրթբրուն մէջ ալ կը խօսի այս բաներուն համար, որոնց մէջ քանի մը դժուարիմաց բաներ կան, որ անուսներն ու անհաստատները

### Երկու ծայրայեղություն

անոնց կը ծռին, ինչպէս միւս գիրքերն ալ՝ իրենց անձերու կորստեան համար» (Բ. Պետր. 3.15,16):

Շատ կարելոր է, որ մենք ձգտինք Աստուծոյ հետ ճիշդ փոխյարաբերութիւն ունենալուն, քան Անոր զօրութեամբ շարժելու բանաձեւին: Ասիկա լուսաբանելու համար քննենք Պօղոսի՝ Տիմոթէոսին ուղղած երկրորդ թուղթի նախաբանը: Տիմոթէոսին սրտի մաքրութիւնը հաստատելէն ետք Պօղոսը գրած է. «Այդ պատճառով միտքդ կը բերեմ, որ արծարծես (անզլերէնին մէջ՝ «բորբոքես») Աստուծոյ այն շնորհքը...» (Բ. Տիմոթ. 1.6): Այսպէս Պօղոսը կ'ուսուցանէ Տիմոթէոսին, որ անոր կեանքին մէջ Աստուծոյ պարգեւն արձակելը անվաւեր կը համարուէր, եթէ Տիմոթէոսի հաւատքը անկեղծ չըլլար: Այժմ եկնոր շարունակենք:

Միւս ծայրայեղութիւնը կեղծ խոնարհութիւնն է

*«Միտքս բերելով այն անկեղծ հաւատքը, որ քու մէջդ է. առաջ քու Լատոդիա մեծ մօրդ եւ քու Եւնիկէ մօրդ մէջ բնակեցաւ, համոզուած եմ, որ քու մէջդ է ալ: Այդ պատճառով միտքդ կը բերեմ, որ արծարծես Աստուծոյ այն շնորհքը, որ քու մէջդ է՝ իմ ձեռքերը քու վրայ դնելով» (Բ. Տիմոթ. 1.5,6):*

«Այդ պատճառով միտքդ կը բերեմ»: Տիմոթէոսին ուղղած իր առաջին նամակին մէջ Պօղոսը կոչ կ'ընէ. «Անհոգ մի՛ ըլլար մէջդ եղած այն շնորհքին համար, որ քեզի տրուեցաւ մարգարէութիւնով՝ երէցութեան ձեռնադրութեամբ» (Ա. Տիմոթ. 4.14): Պօղոսը Տիմոթէոսին կը շեշտէ Աստուծոյ պարգեւը չարհամարհելու կարելորութիւնը՝ գրելով ատոր մասին երկրորդ անգամ, եւ կը դարձնէ այն առաջնային բաներէն մէկը, որ կը յիշատակուի նամակին մէջ:

Որպէսզի պարզորոշ գիտակցինք, թէ ինչ կը նշանակէ չարհամարհել «պարգեւը», եկուր նայինք քանի մը հականիշներու: Արհամարհելու հակառակն է՝ կատարելը, իրագործելը, յաջողութեան հասնիլը, ուշադիր ըլլալը, հոգ տանիլը, ամբողջացնելը,

որոշում կայացնելը, ուշադրության արժանի համարելը, աւարտին հասցնելը:

Բոլոր այս բառերը իշխանութեան եւ գործողութեան բառեր են: Այս բառերէն շատերը եւ բայական, եւ գոյականական գործածութիւն ունին: Ատոնք դրական եւ վճռական բառեր են: Հետագային Աստուծոյ խօսքը անլի լաւ հասկնալու համար եկուր ուսումնասիրենք, թէ ինչ կը նշանակէ «արհամարհել» բառը: Արհամարհել կը նշանակէ՝ խախտել, հեռացնել, անտեսել, ուշադրութիւն չդարձնել, թերագնահատել, վերէն նայիլ, արժեզրկել, մատներու արանքով նայիլ:

Այս բոլորը բացասական բառեր են, որոնք ցոյց կու տան գործելու վճռականութեան եւ իշխանութեան պակաս: Վտանգաւոր եւ ծանր բան է արհամարհել այն ամէնը, ինչ որ վստահուած է քեզի: Մենք վստահ կը կրենք, երբ կ'արհամարհենք:

Զօրութիւնը հետապնդելու ծայրայեղութեան հակառակ կողմը վերոյիշեալ կեղծ խոնարհութեան վիճակին մէջ ապրիլն է: Մարդիկ, որոնք կ'ապրին այսպիսի վիճակով, կ'ընդունին Աստուծոյ բնաւորութեան նմանելու կարեւորութիւնը, բայց միայն այդքանը. այդտեղ կանգ կ'առնեն: Անոնք երբեք չեն համարձակիր իրենց կեանքին մէջ արձակել Աստուծոյ պարգեւները, որովհետեւ կը վախնան: Անոնք կը խուսափին ցանկացած պայքարէն՝ համարելով, որ ատիկա սիրոյ կամ քրիստոնեայի բնաւորութեան պակաս է:

Ես այս մարդոց կ'անուանեմ «խաղաղապահներ»: Առաջին հայեացքէն խաղաղապահ ըլլալը գրաւիչ կը թուի, բայց Յիսուսը երբեք չըսաւ. «Երանի խաղաղապահներուն»: Ընդհակառակը, Ան ըսաւ. «Երանի խաղաղութիւն ընողներուն, որ անոնք Աստուծոյ որդիներ կը կոչուին» (Մատթ. 5:9): Խաղաղապահը կը խուսափի հակամարտութենէն, ինչ արժէք ալ այն ունենայ: Ան կ'երթայ որեւէ ուղիով, միայն թէ պահպանէ անվտանգութեան կեղծ զգացումը, որ սխալմամբ խաղաղութիւն կը համարէ :

Խաղաղութիւն ընողը համառօրէն կը դիմակայէ անկախ



## Երկու ծայրայեղություն

անորմէ, թէ ասիկա ինչ կ'արժէ իրեն համար, որովհետեւ ան չի մտահոգուիր իր անձին համար: Փոխարէնը անոր գործելու շարժառիթը Աստուծոյ եւ ճշմարտութեան համար ունեցած իր սէրն է: Միայն այս հանգամանքներուն մէջ կրնայ բարգաւաճիլ ճշմարիտ խաղաղութիւնը:

Աստուծոյ Արքայութեան մէջ խաղաղութիւն կայ (Հռովմ. 14.17): Բայց եւ այնպէս այս խաղաղութիւնը չի գար հակամարտութեան բացակայութենէն: Քանի որ Յիսուսը մատնանշեց, «...Երկինքի Արքայութիւնն ուժով կ'առնուի, եւ ուժովները կը յափշտակեն այն» (Մատթ. 11.12): Աստուծոյ Թագաւորութեան առաջընթացը կ'ուղեկցի ուժեղ հակամարտութեամբ:

Յաճախ մենք կը մտածենք. «Ես կը տեսնեմ խնդիրը, եւ այն կը հեռանայ»: Բայց մենք կարիք ունինք արթննալու եւ հասկնալու, որ այն, ինչին դէմ, որ մենք չենք պայքարիր, չի փոխուիր: Ահա թէ ինչու Յուդան կը համոզէ սուրբերուն.

*«Սիրելիներ, որովհետեւ ամէն ջանք ըրի, որ գրեմ ձեզի մեր հասարակաց փրկութեան համար, հարկ եղաւ ինձի, որ գրեմ ձեզի եւ յորդորեմ, որ մրցիք սուրբերուն մէկ անգամուան ասանդուած հաւատարմութիւնը» (անգլերէնին մէջ՝ «լրջօրէն պայքարիք հաւատարմութիւնը») (Յուդա 3):*

Ուշադիր եղիր, որ ան կ'ըսէր «պայքարիլ լրջօրէն», այլ ոչ թէ յուսալ լաւագոյնի համար: «Պայքարիլ» կը նշանակէ «կռուիլ» կամ «ճակատամարտ վարել»: Քրիստոնէութիւնը դիւրին ապրելաճ չէ:

Քանի որ մենք կ'երթանք Աստուծոյ ետեւէն, գոյութիւն ունի հակամարտութիւն եւ դիմադրութիւն թէ՛ ֆիզիքական, թէ՛ հոգեւոր ոլորտներուն մէջ:

Պօղոսը կը զօրացնէր Տիմոթէոսին՝ ըսելով. «Իսկ դուն նեղութիւնները կրէ ինչպէս Քրիստոս Յիսուսի բարի զինուոր: Ոչ մէկ զինուորութիւն ընող այս աշխարհի գործերով չի զբաղիր...» (Բ. Տիմոթ. 2.3,4):

Այս պատերազմին մէջ մենք զբաղած ենք զինուորութեամբ, ուստի պարտաւոր ենք ունենալ զինուորի կեցուածք: Մենք չենք պարտուիր չարէն, բայց մենք ատոր կը յաղթենք բարիի օգնութեամբ՝ Աստուծոյ շնորհքով (Հռովմ. 12.21):

Պօղոսի նամակները Տիմոթէոսի զինուորական ընթացքի հրահանգներն էին, երբ ան հովիւ էր Եփեսոսի մէջ: Տիմոթէոսին մարտահրաւերներ նետուած էին: Կար կեղծ ուսմունք մը, որ պէտք է բացայայտուէր, կային վիճաբանութիւններ եւ տարակարծութիւններ, որոնք պէտք է դադրէին, պէտք է աւագներ բարձրանային, որպէսզի ատորմով կարենար ձեւաւորուիլ ուժեղ ու հասուն եկեղեցի: Եւ ասոնք ընդամենը նուազագոյնն էին ակնյայտ պարտաւորութիւններէն, որոնց հետ ան պէտք է գործ ունենար:

Եւ համոզուած եմ, որ շատ առիթներ կային հակամարտութեան համար: Համոզուած եմ, որ մեղադրանք ու զրպարտութիւններ կը շարտուէին Տիմոթէոսին դէմ անոնց կողմէն, որոնք եկեղեցւոյ մէջ էին, որոնք տհաս եւ ամբարիշտ էին: Բացի այս ամէնէն, ան պէտք է յաղթահարէր մէկ այլ խոչընդոտ՝ տարիքը: Տիմոթէոսը երիտասարդ տղամարդ էր եկեղեցւոյ մը մէջ, ուր շատերը մեծահասակ էին: Ասիկա արդէն բաւական էր, որ երկչոտութեան դուռ բացուէր:

Բայց այս ամէնուն մէջ Պօղոսը կ'ուսուցանէր Տիմոթէոսին, որ ուժեղ մնայ՝ չմոռնալով, թէ ինչ փոխանցուած է իրեն: Պօղոսը մշտապէս կը յիշեցնէր Տիմոթէոսին կենալ Աստուծմէ իրեն տրուած իշխանութեան մէջ: Հաւանաբար Տիմոթէոսը մէկ անգամ բացթողում ըրած էր, ատոր համար ալ Պօղոսը կը սորվեցնէր.

*«Այս բաները պատուիրէ եւ սորվեցուր» (Ա. Տիմոթ. 4.11):*

*«Եւ այս բաները պատուիրէ, որ անարապ ըլլան» (Ա. Տիմոթ. 5.7):*

*«Արդ դուն՝ իմ որդեակ, զօրացիր այն շնորհքով, որ Քրիստոս Յիսուսին մէջ է» (Բ. Տիմոթ. 2.1):*

### *Երկու ծայրայեղություն*

Թերեւս Տիմոթէոսը նման էր այսօրուան մարդոցմէ շատերուն, որոնք կը սիրեն Աստուծոյ, բայց կը խուսափին հակամարտութենէն: Հակամարտութենէն վախնալը քեզի դիրութեամբ կը դարձնէ երկչոտութեան զոհ:

Եթէ դուն ճանչցար այս վախի ինքնութիւնը, ուրեմն այս պատգամը ուղարկուած է քեզի քաջութիւն եւ ազատութիւն բերելու: Աստուած կը ցանկայ քեզի ազատագրել, որպէսզի ընես եւ ըլլաս այն ամէնը, ինչ որ Ան կը պահանջէ քեզմէ: Երբ դուն երկչոտ ես, ոչ մէկ ուրախութիւն կայ, իսկ առանց ուրախութեան չկայ զօրութիւն: Այնտեղ, ուր վախ կայ, չկայ խաղաղութիւն: Բայց երբ կոտրես այն, ինչ որ քեզ բռնած է, որպէսզի ետ տանի, կը գտնես ուրախութիւն եւ խաղաղութիւն՝ առատութեամբ:

**Ինչպէս ասիկա կիրառելի  
կը դառնայ ինձի համար:**

## ՏՐՈՒԱԾ ՊԱՐԳԵՒՆԵՐ

Նախորդ գլուխին մէջ խօսեցանք երկչոտութեան եւ եկեղեցիին մէջ աւագներուն վրայ ատոր ազդեցութեան մասին: Բայց շատ հնարաւոր է, որ ձեզմէ շատերը այս գիրքը կարդալու ժամանակ ամբողջութեամբ ծառայութեան մէջ չեն: Դուն թերեւս հարցնես՝ ինչպէ՞ս ասիկա կիրառելի կը դառնայ ինձի համար:

Աստուած հոգիի մէջ տեղ կամ դիրք կու տայ իւրաքանչիւր հաւատացեալի: Յիշեցէք, Պօղոսը կը բացատրէր, որ Աստուած, «...մեզի յարութիւն տուաւ, եւ Անոր հետ երկնաւորներուն մէջ նստեցուց՝ Քրիստոս Յիսուսին մէջ» (Եփես. 2.6): Ասիկա է այն տեղը, ուր կը բնակին Աստուծոյ փրկագնումը զաւակները: Այդ դիրքը. «Ամէն իշխանութենէն եւ պետութենէն եւ զօրութենէն եւ տէրութենէն վեր է եւ ամէն անունէ վեր, որ կ'անուանուի, ոչ միայն այս աշխարհին մէջ, այլեւ այն հանդերձեալին մէջ: Եւ ամէն բան հնազանդեցուց Անոր ոտքերու տակ եւ Անոր գլուխ դրաւ

Եկեղեցիին՝ բոլոր բաներու վրայ: Որ է Անոր մարմինը, այն լրումը, որ ամէնն ամէնի մէջ կը լրացնէ» (Եփես. 1.21– 23):

Եկեղեցին Քրիստոսի մարմինն է: Ինչպէս որ մեր ֆիզիքական մարմինները բաղկացած են շատ մասերէ, որոնք տարբեր են իրենց գործառոյթներով եւ կարողութեամբ, այնպէս ալ Քրիստոսի մարմինի անդամները կը գործեն տարբեր կոչումներով ու պարգեւներով: Աստուած կ'որոշէ անոնց նպատակն ու գործելակերպը: Ամէն մէկն ալ կարեւոր է, եւ ոչ մէկն ալ անկախ է միւսներէն:

Պօղոսը յայտարարեց, որ բոլոր դիւային հոգիները դրուած են Քրիստոսի ոտքերու տակ: Ասիկա հասկնալիօրէն կը լուսաբանէ, որ ոչ մէկ դէւ կրնայ իշխանութիւն գործադրել հաւատացեալի վրայ: Եթէ դուն Քրիստոսի մարմինի ոտքն ես, դեւերը մինչեւ հիմա քու ոտքերու տակ են: Յիսուան ըսաւ. «Ահա իշխանութիւնը տուի ձեզի՝ կոխելու օձերու եւ կարիճներու վրայ եւ թշնամիի բոլոր զօրութեան վրայ, եւ ձեզի ոչինչ կը վնասէ» (Ղուկ. 10.19): Այնուամենայնիւ, եթէ մենք չենք գործեր կամ քալեր Աստուծմէ մեզի տրուած իշխանութեամբ, ինչ որ մէկը կը վերցնէ այն մեզմէ եւ կ'օգտագործէ մեր դէմ: Թշնամին ինկած է հոգիի մէջ մեր ունեցած դիրքի ետեւէն:

## **Գործել տրուած պարգեւներով**

Եկուր շարունակենք Տիմոթէոսին ուղղած Պօղոսի նամակի մեր ուսումնասիրութիւնը:

*«Այդ պարճառով միտքդ կը բերեմ, որ արծարծես (անգլերէնին մէջ՝ «բորբորքես») Աստուծոյ այն շնորհքը, որ քու մէջ է՝ իմ ձեռքերը քու վրայ դնելով» (Բ. Տիմոթ. 1.6):*

Յունարէնին մէջ «պարգեւ» բառը «խարիզմա» բառն է: Սթրոնկի համաբարբառը այս բառը կը սահմանէ որպէս «հոգեւոր նուիրատուութիւն»: Մէկ այլ սահմանում, որ վերամշակուած է Ուայնի բառարանէն, այսպիսին է. «Շնորհքի պար-

## Տրուած պարգեւներ

գեւ, որ նուիրուած է հաւատացեալներուն՝ Սուրբ Հոգիի գործունէութեամբ»: Այսպիսով «*խարիզմա*» բառը կը նկարագրէ այն հոգեւոր կարողութիւնները, որոնցմով Աստուած կ'օժտէ հաւատացեալներուն:

Հոգիի Թագաւորութեան մէջ ոչ մէկ բան կ'իրագործուի առանց այս *խարիզմայի* կամ Աստուծոյ գերբնական կարողութեան: Մենք պէտք չէ քարոզենք, երգենք, մարգարէանանք, առաջնորդենք կամ նոյնիսկ ծառայենք առանց ասոր: Չկայ կեանք առանց այս շնորհքի: Կեանքէն զուրկ կրօնը ծնած է, երբ մարդը փորձած է իր սեփական ճանապարհով, իր սեփական կարողութեամբ ծառայել Աստուծոյ: Երբ մենք կը ծառայենք ուրիշներուն առանց Աստուծոյ պարգեւներուն, ի զուր կ'աշխատինք: Ուշադրութիւն դարձուր, որ այս պարգեւն արդէն բնական էր Տիմոթէոսին ներսը: Երբ Տէրը կը տնկէ Իր պարգեւը, այն չի գար ու երթար, այլ կը մնայ ներսը, «որովհետեւ Աստուծոյ շնորհքը (*խարիզմա*) եւ կոչումը զղջալ չունի» (Հռովմ. 11.29): Այս պարգեւը կամ զօրութիւնը անհրաժեշտ կարողութիւններ են՝ իրագործելու համար այն կոչումը, որ Աստուած նախատեսած է իւրաքանչիւրիս համար: Այս պարգեւներով գործելը պէտք է ըլլայ բնական եւ յարմարաւէտ մեզի համար: Ինչպէս որ մեր մարմինի անդամներու գործառոյթներն ու գործողութիւնները չեն փոխուիր կամ գար ու երթար, այնպէս ալ Աստուծմէ տրուած պարգեւները:

Պօղոսը գրեց հռովմէացի հաւատացեալներուն. «Որովհետեւ շատ կը ցանկամ ձեզի տեսնել, որ հոգեւոր շնորհք մը (*խարիզմա*) հաղորդեմ ձեզի՝ ձեր հաստատուելու համար» (Հռովմ. 1.11): Եկեղեցին չի հաստատուիր առանց այս պարգեւներուն, հոգեւոր սպառազինութիւնը հնարաւորութիւն կու տայ Աստուծոյ գաւակներուն իրականացնելու Անոր կամքը: Ուշադրութեամբ կարդա՛ հետեւեալ խօսքը.

*«Ամէն մէկդ ինչպէս որ շնորհք (*խարիզմա*) ընդունած է, այն իրար մատակարարեցէք, ինչպէս Աստուծոյ կերպ-կերպ շնորհաց լաւ տնտեսներ» (Ա. Պետր. 4.10):*

Այս խօսքին մէջ մենք կը քննարկենք երեք թեմա.

1. Իւրաքանչիւր ոք կը ստանայ պարգեւ.
2. Պարգեւը մերը չէ, մենք պարգապէս ասոր տնտեսներն ենք.
3. Պարգեւը Աստուծոյ բազմատեսակ շնորհքի մէկ մասն է:

### **1. Իւրաքանչիւր ոք պարգեւ կը ստանայ**

Ուշադրութիւն դարձնիր, որ խօսքը կ'ըսէ. «Ամէն մէկդ ինչպէս որ շնորհք ընդունած է այն իրար մատակարարեցէք» (անգլերէնով՝ «Քանի որ իւրաքանչիւր ոք ստացած է պարգեւ, իրար ծառայեցէք ասորմով»): Պետրոսը չըսաւ՝ «քանի որ քանի մը ընտրեալներ ստացած են պարգեւներ»: Ոչ, եթէ դուն վերստին ծնած ես եւ Հոգիով լեցուած, դուն ստացած ես Աստուծոյ պարգեւը՝ Անոր մարմինին մէջ գործելու համար: Այս մարմինի մէջ ոչ մէկ հաշմանդամ կամ անօգտակար անդամ կայ:

Պօղոսը Եփեսացիներու 4.7-ին մէջ կ'ըսէ. «Բայց մեր՝ ամէն մէկուս տրուած է շնորհքը Քրիստոսի պարգեւի չափի պէս»: Եւ նորէն՝ Կորնթացիներու առաջին թուղթի 7.7-ին մէջ կ'ըսէ. «Որովհետեւ կը կամենամ, որ ամէն մարդ ինծի պէս ըլլայ, բայց ամէն մարդ իր յատուկ շնորհքն (պարգեւը) ունի Աստուծմէ, մէկն այսպէս, եւ միւսն այնպէս»:

Եթէ մենք չենք գիտեր ասոր մասին, մենք անկարող կամ անպէտք կը մնանք ցանկացած ծառայութեան համար: Այդպիսով մեր կոչումը կը դառնայ չիրագործուած: Ինչպէս որ երեխաները կը սորվին օգտագործել իրենց մարմինի անդամները, այնպէս ալ մենք պէտք է զարգացնենք եւ վարժեցնենք այս պարգեւները, որոնք Աստուծոյ մարմինին ծառայելու համար են:

Անոր մարմինի ոչ մէկ անդամ կը գործէ այս գերբնական կարողութենէն դուրս:



## **2. Պարգեւը մերը չէ, մենք պարգապէս ատոր տնտեսներն ենք**

Ուրեմն քանի որ մենք սեփականատէր չենք, այս պարգեւը չի կրնար արհամարհուած ըլլալ կամ ալ օգտագործուիլ անձնական նպատակով: Ատիկա մերը չէ, որպէսզի ընենք այն, ինչ որ կը ցանկանք: Ատիկա տրուած է, որ մենք կարենանք ծառայել ուրիշներուն: Մենք պատասխանատու ենք ատոր մասին հոգ տանելու համար:

Վերիշէնք քանքարներու առակը: Տէրը իր ծառաներուն քանքարներ բաժնեց, մէկուն հինգ քանքար տուաւ, միւսին՝ երկու, եւ երրորդին՝ մէկ: Իւրաքանչիւրին իր կարողութեան չափ (Մատթ. 25.15): Յետոյ ան գնաց ճանապարհորդութեան: Առաջին երկու մարդիկ իրենց քանքարները իմաստութեամբ օգտագործեցին՝ բազմացուցին, մինչդեռ երրորդ մարդը իր քանքարը թաղեց:

Երբ տէրը վերադարձաւ, առաջին երկուքը հաշի տուին, թէ ինչ ըրած էին այն քանքարներուն հետ, որոնք վստահուած էին անոնց: Տէրը գովեց անոնցմէ իւրաքանչիւրին. «Ապրի՛ս, բարի եւ հաւատարիմ ծառայ»:

Յետոյ եկաւ երրորդը հաշի տալու: Տիրոջ վախէն ան պահած էր իր քանքարը, որովհետեւ հասկցած էր, որ իր տէրը չափազանց պահանջկոտ է: Այսպիսով, այս ծառան իր արհամարհանքի, եսասիրութեան եւ անփութութեան մէջ իրեն արդարացած կը զգար: Ան ըսաւ իր տիրոջը. «Տես, ահա քեզի այն, ինչ որ քուկդ է»:

Երբ տէրը տեսաւ, թէ ինչպէս ծառան արհամարհած էր այն, ինչ որ յանձնարարուած էր իրեն, որպէսզի հոգ տանի, անոր անուանեց «չար եւ ծոյլ»:

Անոր մէկ քանքարը վերցուեցաւ եւ տրուեցաւ այն մարդուն, ով կրկնապատկած էր իրեն վստահուածը: Յետոյ այդ անպիտան ծառան դուրս նետուեցաւ:

Մենք հաշի պիտի տանք մեզի վստահուած պարգեւներուն համար, ինչպէս որ բոլոր տնտեսները հաշի կու տան իրենց

տնտեսվարության համար: «Պարզե» բառին համար մէկ այլ բառ ալ կայ՝ «կարողութիւն» բառը: Այն կը սահմանուի որպէս «ընդունակութիւն, հնարաւորութիւն, ձիրք կամ զօրութիւն»: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ «տաղանդ»: Այս առակը Աստուծմէ մեզի վստահուած կարողութիւնը կամ տաղանդը աճեցնելու եւ զարգացնելու կարելիութեան վառ օրինակ է:

Պօղոսին վստահուած էր սորվեցնելու եւ առաքեալ ըլլալու ծառայութիւնը: Ան ըսաւ. «Որուն ես սպասաւոր եղայ՝ Աստուծոյ շնորհքի պարգեւին պէս, որ տրուեցաւ ինծի՝ Անոր զօրութեան ներգործելու պէս»: Ուշադրութիւն դարձուր այն կարելիութեանը, որ Պօղոսը կու տայ պարգեւին հաւատարիմ ըլլալուն.

*«Որովհետեւ, եթէ Աւետարանը քարոզեմ, ափիկա ինծի պարծանք չէ, որովհետեւ ափիկա հարկ դրուած է իմ վրայ, եւ վայ է ինծի, եթէ Աւետարանը չքարոզեմ: Որովհետեւ, եթէ յօժար կամքով ընեմ այս, վարձք ունիմ, իսկ եթէ ակամայ՝ տնտեսութիւնը յանձնուած է ինծի» (Ա. Կորնթ. 9.16,17):*

Պօղոսը կ'ըսէ՝ վայ է ինծի: «Վայ»-ը շատ խիստ բառ է: Յիսուան այս բառը կ'օգտագործէր, երբ կը զգուշացներ որոշ մարդոց եւ քաղաքներուն սպասուող դատաստանին մասին: Ան «վայ» ըսաւ Քորազինին եւ Բեթսայիդային, քաղաքներ, որոնք շատոնց գոյութիւն չունին (Մատթ. 11.21,22): Ան «վայ» ըսաւ դպիրներուն եւ փարիսեցիներուն (Մատթ. 23) ու Յուդային (Մատթ. 26.24):

«Վայ» բառն կ'օգտագործէ Յուդան՝ նկարագրելու համար եկեղեցւոյ չար մարդոց դատաստանը: Յայտնութեան գիրքին մէջ այն կ'օգտագործուի յիշատակելու համար Աստուծոյ դատաստանի տակ գտնուող երկրի բնակիչներուն (Յայտն. 8.13): Օգտագործելով «վայ» բառը՝ Պօղոսը ցոյց կու տայ Աստուծոյ պարգեւի նկատմամբ հաւատարիմ պատասխանատուութեան ակնածանքը:

Երբ քրիստոնէան չի գործեր իր պարգեւին եւ կոչումին համաձայն, կը վերադառնայ իր հին կեանքին, ինչպէս որ մկանը

## Տրուած պարգեւներ

կը թուլնայ չաշխատելէն: Անգործ հաւատացեալը կը մեկուսացնէ ինքն իրեն՝ դառնալով դիւրին խոցելի թշնամիին համար:

Երբ կ'ուսումնասիրէի Աստուծոյ հզօր տղամարդոց ու կանանց կեանքերը, ինծի համար պարզեցի, որ ինկած են անոնք, որոնք դարձած են ծոյլ կամ անտարբեր իրենց կոչումին մէջ: Հաւանաբար անոնք կը շարունակէին ծառայել, բայց բնական ճանապարհով առաջ կ'երթային՝ հիմնուելով ծառայութեան մէջ գտնուելու տարիներուն վրայ: Անոնք սկսած էին Աստուծոյ պարզեւը օգտագործել իրենց սեփական շահի, այլ ոչ թէ ուրիշներուն պաշտպանելու եւ ծառայելու համար:

Դաւիթ թագաւորը ինկաւ մեղքի մէջ այն ժամանակ, երբ պարտաւոր էր մարտի դաշտին մէջ ըլլալ:

*«Եւ եղաւ հեղեւեալ փարին, որ թագաւորները պատերազմի ելլելու ժամանակ, Դաւիթը Յովաբին եւ անոր հեղ իր ծառաներուն եւ բոլոր Իսրայէլիս ուղարկեց, որոնք Ամմոնացիներուն կոտորեցին, եւ Ռաբբան պաշարեցին, բայց Դաւիթը մնացած էր Երուսաղէմի մէջ» (Բ. Թագ.11.1):*

Դաւիթը թագաւոր էր: Աստուած անոր դարձուցած էր թագաւոր, որպէսզի հովուէր ու պաշտպանէր Իսրայէլի ժողովուրդին: Անոր համար պատերազմը կռուելու ժամանակ էր, այլ ոչ թէ տունը՝ Երուսաղէմի մէջ նստելու եւ միայն անցեալի յաղթանակներու պարգեւներով բաւարարուելու ժամանակ: Դաւիթը կը հանգստանար. կ'ապրէր իր վաղեմի աշխատանքներէն քաղած օգուտներով: Ձանձրոյթէն ան պատշգամբէն կը զմայլէր իր կալուածքով եւ այդ ժամանակ տեսաւ Բերսաբէին լոգնալու ժամանակ: Շարունակութիւնը պատմութեան մէջ է:

Պէտք է նշել, որ մենք հոս արձակուրդի մէջ ըլլալու համար չենք: Նոյնիսկ մեր կեանքը մեր սեփականութիւնը չէ, քանի որ այն գնուած եւ ետ տրուած է մեզի տնտեսվարութեան համար: Մենք պանդուխտներ ենք եւ ոչ թէ մշտական բնակիչներ: Որքան

շատ մարդիկ կը գործեն այնպէս, կարծես այս կեանքը իրենց վերջնական նպատակակէտն է:

Յիսուան ըսաւ. «Իմ կերակուրն այն է, որ Ինձի ուղարկողին կամքը ընեմ եւ Անոր գործը կատարեմ» (Յովհ. 4.34): Ասիկա նաեւ պէտք է ըլլայ մեր կերակուրը: Յիսուսը գիտէր, թէ ինչ անհրաժեշտ էր Իր ուժը պահպանելու համար: Մեր ուժը կ'աճի եւ ֆիզիքական, եւ հոգեւոր սնունդի հաշուին: Եթէ մենք կը դադրինք Անոր կամքը կատարելէ մեր անձնական շահին համար, կը դառնանք յոգնեցուցիչ եւ կը կորսնցնենք ուժը: Ասիկա նման է այն բանին, որ մենք հրաժարած ենք ֆիզիքական կերակուրէն: Կորսնցնելով ուժը՝ մենք դիւրութեամբ կը հոսինք այս աշխարհի հետ եւ ոչ թէ անոր դէմ. կը դառնանք ինքնակամ, եսակեդրոն, ինքնագէտ եւ մենք մեզի ծառայող:

Մենք շատ մեծ պատասխանատուութիւն ունինք: Մենք պէտք չէ ըլլանք միայն եկեղեցի գացող, մեր կեանքին մէջ ոչինչ կիրառող եւ Աստուծոյ Խօսքով «գիրցած» մարդիկ: Աստուած կը զգուշացնէ Եզեկիէլ 34.20-ին մէջ. «Ատոր համար այսպէս կ'ըսէ Տէր Եհովան անոնց. «Ահա ես Ինքս պիտի դատեմ պարարտ ոչխարին եւ նիհար ոչխարին մէջ»»:

Որո՞նք են պարարտ (գեր) ոչխարները: Ատոնք այն հաւատացեալներն են, որոնք Աստուծոյ բարի բաներով իրենք իրենց կը ծառայեն՝ արհամարհելով ուրիշներուն: Տես, թէ ինչպէս Աստուած կը նկարագրէ գեր ոչխարներուն.

*«Ասիկա քիչ է ձեզի համար, որ դուք լաւ արօպի մէջ կ'արածէք, որ ձեր արօպի մնացորդը ձեր ուրքերով կը կոխկուրէք եւ մաքուր ջուրը կը խմէք, մնացածը ձեր ուրքերով կը պղտորէք: Որովհետեւ դուք ձեր կողքով կը հրէք եւ ձեր եղջիրներով կը զարնէք ամէն տկարներուն, մինչեւ որ անոնց ցիրուցան ըրիք դուրսը: Բայց ես պիտի փրկեմ Իմ ոչխարներուն, եւ անոնք այլեւս պիտի չյափշտակուին, եւ պիտի դապեմ ոչխարի եւ ոչխարի մէջ» (Եզեկիէլ 34.18, 21,22):*

### Տրուած պարգեւներ

Աստուծոյ պարգեւները մեր աւելցուկի համար չեն: Աստուած մեզի պիտի ստուգէ Իր բարութեամբ: Մենք պէտք է օգտագործենք մեր կեանքին մէջ գոյութիւն ունեցող Աստուծոյ կարողութիւնը ծառայելու համար անոնց, որոնք թոյլ են, երիտասարդ, անկարող, որպէսզի ատորմով մարմինը ամբողջական ըլլայ:

Միայլ մի՛ հասկնաք: Լաւ է մեր աշխատանքի պտուղով ուրախանալը: Աստուած մեզի կու տայ եւ հանգիստ, եւ թարմութիւն: Բայց երբ մեր բոլոր մտքերը կը պտըտին միայն մեր անձին շուրջ, մենք կը դառնանք գեր եւ անհոգ: Միայն մեզի ծառայող պարգեւներն ու տաղանդները չեն բազմանար:

Քու մարմինի իւրաքանչիւր անդամ պատասխանատու է միւս անդամներուն համար: Եթէ ոտքերդ հրաժարին շարժելէ, ապա քու ամբողջ մարմինը կը տառապի: Եթէ քու թոքերն ու սիրտը որոշէն կենալ, քու միւս անդամները կը կործանին: Եթէ սատանան կարենայ այնպէս ընել, որ մենք կեդրոնանանք մեր վրայ՝ ուրիշներուն ծառայելու փոխարէն, ատկէ կը տուժէ ամբողջ մարմինը:

### 3. Պարգեւը Աստուծոյ բազմատեսակ շնորհքի մէկ մասն է

Բանալին «բազմատեսակ» կամ «շատ ծալքեր ունեցող» բառերն են: Պետրոսը պարգեւները կը բաժնէ երկու գլխաւոր մասերու: Առաջինը ուղերձի կամ խօսելու պարգեւն է, երկրորդը՝ ծառայելու պարգեւը. «Եթէ մէկը կը խօսի, թող ինչպէս Աստուծոյ հրամաններ խօսի, եթէ մէկը կը մատակարարէ, թող ըլլայ ինչպէս այն զօրութենէն, որ Աստուած կը շնորհէ, որ ամէն բանի մէջ Աստուած փառաւորուի Յիսուս Քրիստոսի ձեռքով...» (Ա. Պետր. 4.11):

Պօղոսը հետագային կը բաժնէ այս երկու դասերը: Հռովմայեցիս գիրքին մէջ Պօղոսը կ'ըսէ.

*«Որովհետեւ ինչպէս մէկ մարմինի մէջ շար անդամներ ունինք, եւ այն ամէն անդամները միեւնոյն գործը չունին: Այնպէս ալ շարերս մէկ մարմին ենք Քրիստոսին մէջ, բայց ամէն մէկը իրարու անդամ ենք:*

*Միայն թե՛ զանազան պարզեւներ ունինք այն շնորհքի պէս, որ մեզի տրուած է, թե՛ մարգարէութիւն՝ հաւատքի չափով մարգարէանանք, թե՛ պաշտօն՝ պաշտօնին մէջ ըլլանք, թե՛ մէկը սորվեցնող է՝ վարդապետութեան մէջ ըլլայ: Թէ՛ մխիթարող է՝ մխիթարութեան մէջ, բաշխողը՝ զուարթութիւնով, վերակացու դրուածը՝ ջանքով, ողորմողը՝ յօժարութիւնով» (Հոովմ. 12.4-8):*

Խօսելու դասին մէջ մենք կը գտնենք մարգարէութիւնը, ուսուցումը, յորդորելը եւ առաջնորդելը, ծառայութեան դասին մէջ՝ ծառայելը, տալն ու ողորմութիւնը:

Թոյլ տուր ինծի բացատրել այս կէտը: Դուսն չես կրնար ըլլալ խօսողի կամ աւագի դիրքին մէջ, մինչեւ չցուցաբերես քու հաւատարմութիւնը որեւէ ծառայութեան մէջ: Կան շատերը, որոնք կը ցանկան առաջնորդել եւ քարոզել, մինչդեռ չեն խոնարհեցներ իրենց կեանքը ծառայելու համար: Նշանակութիւն չունի, թե՛ որքան տաղանդաւոր են անոնք, ծառայութիւնը ձախողած կ'ըլլայ են անոնց, են անոնց խնամակալութեան տակ գտնուողներուն համար: Եթէ անոնց բնատրութիւնը չի զարգանար ծառայելու միջոցով, իրենց աւագութեան դիրքը կ'օգտագործեն մարդոց իշխելու համար:

Ես երկու ծայրայեղութիւն տեսած եմ, որոնք հասկացողութեան պակասի հետեւանք են: Առաջինը կապուած է անոնց հետ, որոնք աւելի մեծ կարծիք ունին իրենց մասին, քան իրականութեան մէջ կան: Կարծելով, որ խօսելու պարգեւը միակն է, անոնք կը կարծեն, որ ատիկա ծառայութեան գագաթնակէտն է եւ չեն հաւատար, որ գոյութիւն ունի Աստուծոյ ծառայելու այլ ճանապարհ:

Ասիկա ճիշդ չէ. «...որովհետեւ մարմինն ալ մէկ անդամ չէ, այլ շատ... Եթէ բոլոր մարմինն աչք ըլլար, ո՞ր էր լսելիքը, եւ եթէ բոլոր մարմինը լսելիք ըլլար, ո՞ր էր հոտոտելիքը» (Ա. Կորնթ. 12.14,17): Անոնք բոլորը կը ցանկան բերան ըլլալ: Իրաքանջիւր անդամ կարելոր է: Առանց օգնութեան ծառայութեան, խօսելու ծառայութիւնը սահմանափակ է: Մարդիկ աւելի շատ կը փորձեն

## Տրուած պարգեւներ

շարժիլ այն պարգեւով, որ իրենք *կ'ուզեն*, քան անորմով, որ իրենք *ունին*։

Միս ծայրայեղութեան մէջ անոնք են, որոնք կը հաւատան, որ ծառայութիւնը կը սահմանափակուի քարոզիչներով եւ ծառայողական աշխատակազմով։ Այս մտածելակերպը Քրիստոսի մարմինը անկարող կը դարձնէ լիարժէք գործելու համար։ Պօղոսը կը բացատրէ. «Այլ մանաւանդ մարմինի այն անդամները, որ կ'երեւին, թէ տկարագոյնն են, աւելի հարկաւոր են։ Մարմինին այն անդամները, որոնք յաւետ անպատիւ կը կարծենք, անոնց աւելի պատիւ կու տանք, եւ մեր անվայելուչ անդամներն աւելի վայելչութիւն ունին» (Ա. Կորնթ. 12.22,23)։

Ասիկա կը բարձրացնէ աննկատ անդամներու կարեւորութիւնը։ Աստուած նոյնիսկ աւելի վճռական կը դարձնէ ծածկուած անդամներու կարեւորութիւնը, քան թէ երեւցողներունը։ Դուն առանց ծայնի կրնաս ապրիլ, բայց ոչ առանց լեարդի կամ սրտի, առանց ատոնց հնարաւոր չէ քալել կամ զրուցել։

Գործք առաքելոց գիրքը ցոյց կու տայ պարգեւներու նկատմամբ այն վերաբերմունքը, որ կար վաղ եկեղեցիին մէջ։ Առաջին քրիստոնեաները հասկցած էին, որ ծառայութեան մէջ աւելի շատ բաներ կան, քան քարոզը, բժշկութիւնը, ազատագրումն ու մարգարէութիւնը։ Նոյն գիրքի 6-րդ գլուխը կը յիշատակէ, որ որոշ որբեայրիներ արհամարհուած էին Երուսաղէմի եկեղեցիին մէջ։ Անոնք կերակուրելու եւ ամէնօրեայ այլ կարիքներու հարցին մէջ օգնութեան կարիք ունէին։

Երբ ասիկա արժանացաւ աւագներու ուշադրութեանը, անոնք պատասխանեցին. «Հիմա, եղբայրներ, ձեզմէ եօթ վկայուած մարդիկ ընտրեցէք՝ Սուրբ Հոգիով եւ իմաստութիւնով լեցուած, որոնց այս պիտոյքի վրայ դնենք» (Գործք 6.3)։

Անոնք գտան մարդոց, որոնք ունէին այս յատկութիւնները եւ բերին առաքեալներուն առջեւ։ «Անոնց կեցուցին առաքեալներուն առջեւ եւ աղօթք ընելով ձեռք դրին անոնց վրայ։ Եւ Աստուծոյ խօսքը կ'աճէր, եւ աշակերտներուն թիւը խիստ կը շատնար Երուսաղէմի մէջ» (Գործք 6.6,7)։

Ինչ տեղի ունեցաւ, երբ առաքեալներն իրենց ձեռքերը դրին

անոնց վրայ: Ծառայութեան պարգեւը տրուեցաւ, եւ հետեւանքը եղաւ այն, որ Աստուծոյ Խօսքը տարածուեցաւ, իսկ աշակերտները կը շատնային: Այս մարդիկ կը գործէին այն պարգեւով, որ տրուած էր իրենց: Ինչպիսի ապշեցուցիչ փաստ: Այն մարդիկ, որոնք կը ծառայէին այրիներուն, պատճառ դարձան, որպէսզի Աստուծոյ Խօսքը տարածուի եւ աշակերտները գերբնական ձեւով շատնան:

Ես հաւատացած եմ, որ հիմնական պատճառներէն մէկը, թէ ինչու մեր եկեղեցիները չեն աճիր ու շատնար, այն է, որ ոչ բոլոր մարդիկ (համայնքները եւ աւագները) կը շարժին իրենց պարգեւներով: Գործք առաքելոց գիրքը նոյնիսկ ցոյց կու տայ, որ երբ աւագը կը գործէ պարգեւներով, ատիկա սահմանափակ թիւով մարդոց փրկութեան կը բերէ, բայց երբ ամբողջ եկեղեցին ներգրաւուած է պարգեւներու մէջ, հետեւանքները շատ ակտիւ հզօր կ'ըլլան:

Պէնտէկոստէի օրէն ճիշդ մէկ օր յետոյ, երբ Պետրոսը քարոզեց, «այն օրը երեք հազարի չափ հոգի ակեւցան» (Գործք 2.41, տես նաեւ Խօսք 47): Նոյնիսկ երբ Պետրոսը կը քալէր Երուսաղէմի փողոցներով բժշկութեան օծութեան տակ, «առաւել ես կը շատնային Տիրոջ հաւատացեալները, եւ եղաւ բազմութիւն մը մարդոց եւ կանանց» (Գործք 5.14):

Իսկ երբ հաւատացեալները սկսան սորվեցնել ամէն օր՝ իւրաքանչիւր տունի մէջ (Գործք 5.42), անկէ ետք եկեղեցին սկսաւ «շատնալ» (Գործք 6.1): Յաջորդ աստիճանը հաւատացեալներուն համար ծառայելն էր, որ սկսաւ այրիներու ծառայութեամբ: Այդ քայլէն յետոյ եկեղեցին «խիստ շատցաւ» (Գործք 6.7):

Փաստօրէն այսօր հովիւները կը խնդրեն կամաւորներու համար: Որքան տխուր է: Գործք առաքելոց գիրքին մէջ դուրս չես տեսներ, որ առաջնորդները կամաւորներ փնտռեն: Անոնք այնքան լրջօրէն կը մօտենային այս ծառայութեան պաշտօններուն, որ սեղաններուն ծառայելու համար կը փնտռէին այնպիսի մարդոց, որոնց որակը հիմնուած էր բնաւորութեան, այլ՝ ոչ տաղանդի վրայ: Անկէ ետք նոր անոնք կը նշանակուէին: Այն, ինչին որ անոնք կարեւորութիւն կու տային, այսօր մենք աննշան կը համարենք:



## Հաւատարիմ ըլլալու պատասխանատուութիւն

Ինչ տեղի կ'ունենար, եթէ բոլոր հաւատացեալները գործէին իրենց դիրքերուն մէջ: Ինչպիսի հզօր բաներ կը տեսնէինք այդ ժամանակ: Արթնութիւնը քարոզիչներուն համար չէ, այլ ամբողջ մարմինի, երբ ամէն անձ մը կը զբաղեցնէ իր դիրքը:

Յիշէ՛ք, պարգեւը կարողութիւն է, որ Աստուած տուած է մեզի: Մենք պատասխանատու չենք այն բանին համար, որ մեզի վստահուած չէ: Ոտքը պատասխանատու չէ տեսողութեան համար: Նոյնիսկ Աստուծոյ կամքը կրնայ իրագործուիլ միայն Հոգիին թոյլտուութեամբ: «Ոչ թէ մենք մեզմէ բաւական ենք բան մը խորհելու ինչպէս մեզմէ, այլ մեր բաւական ըլլալը Աստուծմէ է» (Բ. Կորնթ. 3.5):

Յատկապէս այս պարգեւներուն միաբան գործունէութիւնը սատանան կը ցանկայ կեցնել: Անոր կը յաջողի ատիկա, եթէ կարենայ խանգարել մեր աճը: Սատանան գիտէ, որ չի կրնար կեցնել Աստուծոյ, որպէսզի Ան չտայ այս պարգեւները: Ատոր համար ալ թշնամին ինկած է մեր ազատութեան ետեւէն, որպէսզի չօգտագործենք պարգեւները: Երկչոտութիւնը հիմնական միջոցն է, որուն միջոցով ան կը խանգարէ հաւատացեալներու աճումին:



**ԲԱՅԱՅԱՅՏԵԼ  
ԵՐԿՉՈՏՈՒԹԻՒՆԸ**

**Ինչո՞ւ մեզմէ շատերն  
այդքան անարդիւնաւէր են:**

## ՀԱՆԳԱԾ ՊԱՐԳԵԻՆԵՐ

Մենք հաստատեցինք, որ իւրաքանչիւր հաւատացեալ ունի իշխանութեան դիրք, որ կու գայ Աստուծմէ տրուած տաղանդներու կամ պարգեւներու հետ, եւ ան կը գտնուի Քրիստոս Յիսուսի մէջ՝ բոլոր դիւակաւ իշխանութիւններէն վեր: Այդ պարագային ինչո՞ւ մեզմէ շատերը այդքան անարդիւնաւէտ են: Ատոր պատասխանելու համար եկրոր նորէն կարդանք, թէ ինչ կը յիշեցնէ Պողոսը Տիմոթէոսին.

*«Այդ պարճառով միտքդ կը բերեմ, որ արծարծես Աստուծոյ այն շնորհքը, որ քու մէջ է՝ իմ ձեռքերը քու վրայ դնելով» (Բ. Տիմոթ. 1.6):*

Յունարէնին մէջ «արծարծել, բորբոքել» բառը «անազոփոտօ» բառն է, որ կը նշանակէ «բոցավառել նորէն կամ պահպանել ամբողջ կրակը» (Ուայնի բառարան): Եթէ Պողոսը կը քաջալերէ այս երիտասարդին բորբոքել կամ բոցավառել պարգեւը (*խարիզման*), կը նշանակէ այն կրնայ հանգիլ (մարիլ): Պարգեւը ինքնա-

բերաբար չի գործեր: Կրակի նման այն պէտք է բոցավառել, բորբոքել եւ պահպանել:

Կան մաքուր սիրտ եւ ճիշդ ձգտումներ ունեցող մարդիկ, որոնք կը հաւատան, որ եթէ Աստուած կ'ուզէ, որ ինչ որ բան մը տեղի ունենայ, այն ուղղակի տեղի կ'ունենայ: Բայց ասիկա ճիշդ չէ: Էտմընտ Պուրքը 1795 թուականին գրած է. «Միակ բանը, որ անհրաժեշտ է չարի յաղթանակին համար, այն է, երբ բարի մարդիկ ոչինչ կ'ընեն»: Տիմոթէոսը սրտով մաքուր էր: Կը յիշէս, թէ որքան Պօղոսը կը գովէր անոր բնաւորութիւնը: «Բայց յոյս ունիմ Տէր Յիսուսին մէջ, որ Տիմոթէոսին շուտով ուղարկեմ ձեր քով, որ սիրտս ալ հանգստանայ, երբ որ ձեր վիճակը գիտնամ: Վասնզի մէկը չունիմ միասիրտ, որ մտերմաբար հոգ տանի ձեզի համար: Վասնզի ամէնքը իրենց բաները կը փնտռեն եւ ոչ թէ Յիսուս Քրիստոսինը: Բայց դուք գիտէք անոր ընտիր ըլլալը, որ ինչպէս որդի մը իր հօրը՝ այնպէս ինծի հետ ծառայեց Աւետարանին» (Փիլիպ. 2.19-22): Մինչդեռ Պօղոսը երկու անգամ անոր կը զգուշացնէ չարհամարիէլ Աստուծոյ պարգեւը, որպէսզի այն հանգած չմնայ: Այսպիսով, կայ երկու հարցում, որոնց մենք պէտք ունինք պատասխանելու, երբ պարգեւը կը հանգի, եւ ինչպէ՞ս մենք այն կը բորբոքենք: Երկրորդ հարցումին ես կը պատասխանեմ յաջորդ գլուխներէն մէկուն մէջ, բայց հիմա եկրոր անդրադառնանք առաջինին:

Ինչը պատճառ կը դառնայ, որ Աստուծոյ պարգեւը գտնուի հանգած վիճակի մէջ:

Պատասխանը հետեւեալ խօսքին մէջ է.

*«Այդ պատճառով միտքդ կը բերեմ, որ արծարծես Աստուծոյ այն շնորհքը, որ քու մէջ է՝ իմ ձեռքերը քու վրայ դնելով: Որովհետեւ Աստուած չքուաւ մեզի երկչորութեան հոգի, այլ զօրութեան եւ սիրոյ եւ զգաստութեան» (Բ. Տիմոթ. 1.6,7):*

Ուրիշ ձեւով ըսելու համար՝ Պօղոսը Տիմոթէոսին կ'ըսէ. «Աստուծմէ քեզի տրուած պարգեւը հանգած է երկչորութեան պատճառով»: Առանց իմաստը փոխելու ես կրնամ ըսել. «Տիմոթէոս,

## Հանգած պարզեւներ

Աստուծմէ քու մէջ դրուած պարզելը վախկոտութեան պատճառով հանգած կը մնայ»: Երկչոտ հաւատացեալները կը կորսնցնեն հոգիի մէջ ունեցած իրենց իշխանութիւնը, հետեւաբար անոնց պարզելը՝ իրենց մէջ եղած Աստուծոյ կարողութիւնը, կը դառնայ ոչ աշխոյժ եւ կը հանգի: Չնայած որ այն նուէր է, սակայն գործողութեան մէջ չէ:

Երբ Միշիկընի այն աւագն ինծի ըսաւ, որ փառաբանութեան եւ երկրպագութեան աւագները կը կարծէին, որ ես չափազանց շատ կը ճնշեմ իրենց, ես սկսայ վախնալ: Անսպասելիօրէն Աստուծոյ պարզելը սկսաւ չգործել, եւ օծութեան տակ ես չքարոզեցի այնպէս, ինչպէս անցեալ տասընուֆ ծառայութիւններուն:

Ակնյայտ էր, որ Աստուծոյ կեանքը գացած էր: Սկսած էր խառնաշփոթութիւնը, եւ կորսնցուցած էի իմ վճռականութիւնը, չէի ցանկար հակառակիլ մարդոց: Ինչո՞ւ: Որովհետեւ ես վախցած էի եւ, հետեւաբար, կ'արգելափակէի Աստուծմէ ինծի տրուած իշխանութիւնը:

## Երկչոտութեան բացատրութիւնը

Այժմ եկնոր նայինք *«Երկչոտութիւն»* բառի բացատրութիւնը: *«Օքսֆորդի անգլերէն բառարան»*-ը *«Երկչոտութիւն»*-ը կը բացատրէ որպէս՝

1. դառնալ ամչկոտ,
2. ներշնչուիլ վախով,
3. սարսափիլ, ահաբեկուիլ:

*«Մերրիամ-Ուեպթըրի Ակադեմիական բառարան»*-ը (10-րդ հրատ.) *«Երկչոտութիւն»* բառը կը բացատրէ որպէս՝ *սպառնալիքի միջոցով վհապեցնել, սրիպել կամ ճնշել:*

*«Օքսֆորդի անգլերէն բառարան»*-ը *«Երկչոտութիւն»* բառը կը բացատրէ որպէս՝

1. վախցնելու կամ սարսափեցնելու գործողութիւն,
2. երկչոտ ըլլալու փաստ կամ իրավիճակ,

3. բռնութեան եւ սպառնալիքի միջոցով զսպել եւ ստիպել որեւէ գործողութիւն չընել:

Երկչտութեան խնդիրն է ստիպել քեզի, որպէսզի չգործես եւ վիատեցնելով կամ սպառնալիքով մղել քեզի հպատակութեան: Երկչտութիւնը կ'ուզէ ընկճել քեզի վախի եւ ստորացուած ըլլալու զգացումով: Եթէ ինչ որ ժամանակ քեզի հնազանդեցուցած են, գիտակցաբար կամ չգիտակցուած, դուն դարձած ես վախցնողի ծառան:

Դուն երկար ժամանակ ազատ չես եղած Աստուծոյ կամքը կատարելու համար, այլ դատապարտուած եղած ես կատարելու քեզի վախով ստրկացնողի ցանկութիւնները:

Հետեւաբար Աստուծոյ պարգեւը՝ քու մէջ Անոր հոգետոր կարողութիւնը, դարձած է չգործող: Ատորմով քու իշխանութիւնը վերցուած է քեզմէ եւ կ'օգտագործուի եւ քու, եւ քու ազդեցութեան ոլորտին մէջ գտնուողներուն դէմ:

Երկչտութեան ակունքը վախն է, որուն արմատն ալ մեր հակառակորդին՝ սատանային մէջ է: Անիկա է վախին եւ երկչտութեան ծնունդ տուողը: (Ծննդոց 3.1-10, յատկապէս՝ 10-րդ խօսքը) սատանան կը յարձակի մեր վրայ մտքերու, երեւակայութիւններու կամ տեսիլքներու միջոցով, կամ ալ հանգամանքներն ու իր ազդեցութեան տակ գտնուողներուն կ'օգտագործէ մեզի սարսափեցնելու համար: Մէկ խօսքով՝ սատանան ունի մէկ նպատակ՝ վերահսկել եւ սահմանափակել մեզի:

## Եղիան վախցան

Եղիա մարգարէն կը գործէր ցնցող զօրութեամբ: Ան յամառօրէն կանգնեցաւ չար թագաւորին առջեւ, որ Աստուծոյ երկիւղը չունէր, եւ յայտարարեց. «Այս տարիներուն ցօղ եւ անձրեւ պիտի չըլլայ առանց իմ խօսքի» (Գ. Թագ. 17.1):

Ան չէր վախնար այդ անաստուած թագաւորէն:

Եղիան հետագայ քանի մը տարիներն անցուց հրաշքներու մէջ



### Հանգած պարզեւներ

ապրելով: Սկիզբը անոր կը կերակրէին ագռաւները, յետոյ անոր պահեց որբեայրի մը, որուն ուտելիքն ու իւղը երբեք չվերջացան, չնայած որ շուրջ բոլորը երաշտ ու սով էր: Այս որբեայրիի որդին յանկարծակի մահացաւ, եւ Աստուած լսեց Եղիային աղօթքը՝ յարութիւն տալով տղուն մեռելներէն: Եղիան զօրաւոր ծառայութեամբ մարդ մըն էր:

Երկար ժամանակ յետոյ ան նորէն կեցաւ թագաւորին առջեւ: Թագաւորը մեղադրեց Եղիային երաշտի պատճառած տառապանքին ու զրկանքներուն համար եւ անոր դիմաւորեց այս խօսքերով. «Ասիկա դո՛ւն ես, ո՛վ Իսրայէլի խանգարող» (Գ. Թագ. 18.17):

Եղիան համարձակ պատասխանեց. «Ես չեմ խանգարած Իսրայէլին, այլ դուն եւ քու հօր տունը, որ ձգելով Տիրոջ պատուէրները, կ'երթաս Բահաղներու ետեւէն» (Գ. Թագ. 18.18): Յետոյ ան հրամայեց թագաւորին հաւաքել Բահաղի եւ Աստարովթի 850 մարգարէներուն եւ տանիլ անոնց Կարմեղոս լերան վրայ՝ Իսրայէլի ամբողջ ազգին հետ մէկտեղ:

Հակամարտութեան այդ օրը ողջ Իսրայէլը հաւաքուեցաւ տեսնելու, թէ ով էր ճշմարիտ Աստուածը: Եղիան համարձակ կոչ ըրաւ Բահաղի եւ Աստարովթի մարգարէներուն զոհ մատուցելու իրենց աստուածներուն, մինչեւ այն ժամանակ ան ալ Տիրոջը զոհ պիտի մատուցէր: «...Եւ պիտի ըլլայ՝ այն աստուածը, որ կրակով պատասխան կու տայ, Ա՛ն է Աստուածը» (Գ. Թագ. 18.24), յայտարարեց Եղիան:

Տէր Աստուած պատասխանեց կրակով, եւ Իսրայէլի ժողովուրդը երեսի վրայ ինկաւ եւ դարձաւ Աստուծոյ: Այնուհետեւ Եղիային հրամանով անոնք սպաննեցին բոլոր 850 կեղծ մարգարէներուն:

Այնուհետեւ Եղիան հռչակեց, որ անձրեւ պիտի ըլլայ՝ ջերմեռանդ աղօթելով եւ կանչելով Աստուծոյ, երբ անձրեւի ոչ մէկ նշան կար: Վայրկեաններ յետոյ Երկինքը սեւցաւ, եւ յորդառատ անձրեւ տեղաց: Երբ Աքաաբը փախաւ իր պալատը, Աստուծոյ ձեռքը եկաւ Եղիային վրայ, եւ ան առաջ անցաւ Աքաաբի կառքէն:

Ատիկա Եղիայի կեանքէն ընդամենը մէկ օր էր: Ժողովուրդը

դարձի եկաւ, չար մարդիկ սպաննուեցան, երկարատեւ երաշտը աւարտեցաւ: Եղիան կրնար յստակ լսել Աստուծոյ ձայնը, գործել ատոր համաձայն եւ մեծ հրաշքներ տեսնել:

## Հալածուած՝ թագաւորի կնոջ կողմէն

Բայց ճիշդ այդ նոյն օրը Աքաաբի կինը՝ Յեզաբելը, լսեց, թէ ինչ պատահած էր իր մարգարէներուն, եւ Եղիային պատգամ ուղարկեց. «Աստուածները այսպէս ընեն եւ ասորմէ ալ արելին ընեն, եթէ որ էգուց այս ժամանակին քու անձը անոնցմէ մէկուն անձին տեղ չդնեն» (Գ. Թագ. 19.2): Յեզաբելը շատ զայրացած էր Եղիային վրայ, քանի որ անոնք իր մարգարէներն էին, որոնք կը քարոզէին իր պատգամը:

Հիմա նայիր Եղիայի արձագանգին.

*«Եւ այս բանը տեսնելով՝ ուրջի ելաւ գնաց իր անձը ազատելու համար եւ հասաւ Յուդայի Բերսաբէէն ու իր պատանին ձգեց հոն: Բայց ինքը մէկ օրուան ճանապարհ գնաց անապատին մէջ եւ եկաւ գիհիի մը տակ նստաւ եւ սրտանց ուզեց, որ մեռնի եւ ըսաւ. «Արդէն բաւական է, ով Տէր, առ իմ հոգին, որովհետեւ ես իմ հայրերէն լաւ չեմ»» (Գ. Թագ. 19.3,4):*

Այդ նոյն օրը Եղիան մեծ պայքարի մէջ էր. ան կը փախչէր իր կեանքէն: Եղիան այնքան սարսափած էր եւ յուսահատած Յեզաբելէն, որ կը ցանկար մեռնիլ: Յեզաբելի նպատակն էր վախցնելով խանգարել Եղիային իրականացնելու Աստուծոյ նպատակը: Յեզաբելը կը ցանկար ազգին վրայէն հեռացնել Եղիայի ազդեցութիւնը: Ան կը ցանկար կործանել եւ ճանապարհէն հեռացնել Եղիային: Չնայած որ Յեզաբելը չէր կրնար սպաննել անոր, կը շարունակէր նպատակին հասնիլ Եղիային վախցնելու միջոցով, որպէսզի ան փախչէր ու ցանկար մեռնիլ: Իր տգիտութեան պատճառով Եղիան կը համագործակցէր անոր ծրագրին հետ: Եթէ Եղիան կարենար արելի պարզ տեսնել ատիկա, երբեք չէր փախչէր:

## Երկչոտութեան ակտանիշները

Շփոթուածութիւնը, յուսալքուածութիւնը եւ յուսախաբութիւնը կապուած են երկչոտութեան հոգիի հետ: Ատոր նպատակն է ստիպել քեզի, որ կորսնցնես հեռանկարդ: Այդ պարագային ամէն ինչ անյաղթահարելի, դժուար կամ նոյնիսկ անհնար կը թուի: Աւելի կը զօրանայ երկչոտութիւնը, ավելի կը մեծնայ վիատութիւնն ու յուսահատութիւնը: Եթէ անմիջապէս չլուծես երկչոտութեան հարցերը, այն պատճառ կը դառնայ, որպէսզի դուն ընես բաներ, որոնք երբեք չէիր ըներ, եթէ չըլլայիր վախի ազդեցութեան տակ: Ճիշդ ասիկա է երկչոտութեան նպատակը:

Երբ ես կը քննեմ երկչոտութեան հոգիի՝ իմ վրայ յարձակում կատարելու դէպքերը, կը զգամ այն, ինչ որ Եղիան կը զգար: Հասկնալու փոխարէն, թէ ինչպէս կը գործէր երկչոտութիւնը, ես կը նստէի պանդոկի իմ սենեակը ու կը պայքարէի վիատուածութեան եւ յուսահատութեան դէմ: Ինծի համար հետաքրքրական էր, ըրածներու մէջ ինչ բարի բան կար, իմ եմ ես»: Այս մտքերը ես երբեմն կ'ունենայի նոյնիսկ առաւօտեան հզոր ծառայութենէն յետոյ:

Կար ժամանակ մը, երբ ես ողջ օրուան ընթացքին բացարձակապէս ոչինչ կրնայի ընել: Չէի կրնար ազատիլ ծանրութենէն: Ես կ'աղօթէի, եւ ինծի կը թուէր, որ Աստուծոյ ներկայութիւնը չկար: Ճիշդ Եղիայի պէս կեդրոնացած էի իմ վրայ, միայն ու միայն իմ վրայ:

Ես ինծի անարդիւնաւէտ կը զգայի, կը կարծէի, որ իմ ծառայութիւնը արժէք չունի: Ահա թէ ինչու Եղիան կ'ըսէր. «Արդէն բաւական է, որ Տէր, իմ հոգին առ, որովհետեւ ես իմ հայրերէն լաւ չեմ» (Գ. Թագ. 19.4):

Այդ յուսահատեցնող օրուան վերջաւորութեան Աստուած ցոյց տուաւ ինծի, թէ ինչպէս Եղիան սարսափած էր Յեզաբէլէն: Վերջապէս հասկցայ, որ իմ վարքագիծը ճիշդ այնպիսին էր, ինչպիսին կը ցանկար երկչոտութեան, վիատութեան հոգին: Այդ հոգին կը ցանկանար ինծի ետ պահել այն բանէն, որ Աստուած ուղարկած էր ինծի ընելու: Այդ եկեղեցոյ մէջ կային մարդիկ, որոնց

ցանկութեան համաձայն չէին ապաշխարութեան եւ սրբութեան այն ուղերձները, որոնք Աստուծմէ բերած էի:

Անմիջապէս սկսայ փնտռել այդ ախտանիշներու արմատը, որոնց դէմ կը պայքարէի: Ատիկա երկչոտութեան հոգին էր: Ես խիզախօրէն ճեղքեցի ճնշուածութեան դիմադրութիւնը եւ զգացի, որ ազատ եմ շփոթուածութենէն եւ վիատութենէն: Այդ երեկոյ մենք զօրաւոր հաւաքոյթ ունեցանք: Հետագային ես կը բացատրեմ՝ ինչպէս հակառակիլ վախկոտութեան հոգիին: Բայց հիմա եկրոր նորէն նայինք Եղիայի կեանքին՝ տեսնելու համար, թէ ինչպէս կարելի է ճանչնալ այդ հոգիին:

## Ինչ կ'ընես հոս

Եղիան դուրս ելած էր իր ունեցած իշխանութենէն այն ժամանակ, երբ չէր համարձակեր հակառակիլ Յեզբէլէն եկող վախին: Որպէս հետեւանք՝ ազգին համար անոր ծառայութեան պարզելը ճշուեցաւ, եւ Եղիան կ'երթար ուղղութեամբ մը, որ Աստուծոյ ցանկութիւնը չէր: Ան կարծես բոլորովին ուրիշ մարդ ըլլար, որովհետեւ կը փախչէր հակամարտութենէն, մինչդեռ նախկինին հակամարտող էր: Ան կ'երթար հակառակ ուղղութեամբ, ձգած էր իր ծառային եւ քառասուն օր ու գիշեր մեկուսացած էր Քորեբ լեռան վրայ: Առաջին բանը, որ ան լսեց Աստուծմէ, երբ մտաւ քարայր, հետեւեալն էր. «Ինչ ունիս հոս, Եղիա» (Գ. Թագ. 19.9):

Կրնաս պատկերացնել: Եղիան յուսալքուած էր մահուան աստիճան, հիւժած էր քառասուն օր փախչելէն եւ ընկճուած վիճակի մէջ էր: Իսկ Աստուած կը հարցնէ. «Ինչ ունիս հոս»: Աստուած ասորմով կ'ըսէր. «Ինչո՞ւ փախած ես քու դիրքէն եւ պահուլտած ես հոս»:

Թերեւս դուն մտածես. «Լա՛ն, չէ՞ որ Աստուած ուղարկեց իր հրեշտակին, որ Եղիային երկու նկանակ տար, որպէսզի ան կարենար վազել քառասուն օր ու գիշեր: Այդ պարագային ինչո՞ւ Աստուած կը հարցնէր. «Ինչ կ'ընես հոս»»:

Աստուած գիտէր, որ Եղիան որոշած էր փախչիլ: Երբ մարդն իր սրտին մէջ կ'որոշէ ինչ որ բան մը ընել, յաճախ Աստուած թոյլ

## Հանգած պարզեւներ

կու տայ անոր ընել ատիկա, նոյնիսկ եթէ ատիկա Իր կատարեալ կամքը չէ:

Աստուած նոյն ձեւով վարուեցաւ Բաղասամին հետ, երբ Մովսէսի թագաւոր Բաղակը խնդրած էր անոր գալ եւ անիծել Իսրայէլին: Տէրը Բաղասամին ըսաւ, որ չերթայ: Բայց Բաղասամը ետ եկաւ ու երկրորդ անգամ հարցուց Աստուծոյ, եւ կը թուի, թէ Աստուած փոփոխուող սիրտ ունէր: Ան Բաղասամին ըսաւ, որ երթայ:

Յաջորդ առաւօտեան Բաղասամը թամբեց իր էշը, որպէսզի երթայ, եւ Աստուածաշունչը կ'ըսէ. «Եւ երթալու համար Աստուծոյ բարկութիւնը բորբոքեցաւ» (Թուոց 22.22): Աստուծոյ հրեշտակ մը եկած էր անոր սպաննելու:

Ինչո՞ւ Աստուած անոր ըսաւ, որ գնա՛, իսկ յետոյ բարկացաւ, երբ Բաղասամը գնաց: Աստուած թոյլ տուաւ Բաղասամին երթալ, որովհետեւ գիտէր անոր սիրտը: Աստուած գիտէր, որ Բաղասամը աւելի շատ կը ցանկար Բաղակի առաջարկած պատին ու դրամը, քան թէ Աստուծոյ հնազանդիլը: Երբ մարդը իր սրտին մէջ յստակ կ'որոշէ ինչ որ բան մը ընել, Աստուած չի կեցնէր անոր, եթէ նոյնիսկ ատիկա Աստուծոյ կատարեալ կամքը չէ:

Նոյնը Եղիային հետ կը կատարուէր: Աստուած կը ցանկար, որ ան վերադառնայ ու պայքարի Յեզաբէլին դէմ, ինչպէս որ պայքարեցաւ Բահադի մարգարէներուն հետ: Ատիկա պիտի ամբողջացնէր այն, ինչ որ սկսած էր Կարմեղոս լերան վրայ: Բայց Եղիան չէր ուզեր դէմ առ դէմ հանդիպիլ Յեզաբէլին: Ան կ'ուզէր դուրս ելլել այն ճնշումէն, որուն տակ կը գտնուէր: Ատոր համար ալ Աստուած հրեշտակ ուղարկեց, որպէսզի անոր անհրաժեշտ կերակուրը տայ իր ճամբորդութեան համար: Աստուած կը սպասէր եւ կը լուծէր Եղիային մէջ եղած երկչոտութեան հարցերը, հազիւ որ ան հասնէր Քորեբ լեռը:

## Ան, որ այդ ամէնուն ետեւն է

Այն գործը, որ Աստուած սկսած էր Եղիային միջոցով, ամբողջութեամբ չէր կատարուէր, մինչեւ որ ան չհակառակէր Յեզաբէլին: Յեզաբէլը Իսրայէլի խնդիրներու հիմնական արմատն

էր: Աստուածաշունչը կ'ըսէ. «Բնաւ չէ եղած Աքաաբին պէս մէկը, որ ինքնիրեն ծախած ըլլար Տիրոջ աչքին առջեւ չարութիւն ընելու համար, որ անոր մոլորեցուց իր Յեզաբէլ կինը» (Գ. Թագ. 21.25):

Տէրը պիտի ըլլար Եղիային հետ, ինչպէս որ անոր հետ էր Կարմեղոս լեռան վրայ, ուստի ան պետք չէ փախչեր: Բայց Եղիան վախցած էր Յեզաբէլէն եւ դուրս ելած էր իր ունեցած իշխանութենէն: Առաջադրանքն ասարտելու պարգեւը հանգած էր:

Հիմա տես, թէ Աստուած ինչ կ'ըսէ Եղիային այն բանէն ետք, երբ երկու անգամ հարցուցած էր, թէ ինչու ան հոն էր:

*«Եւ Տէրն ըսաւ անոր. «Ետ դարձիր, գնա՛ քու ճանապարհով անապատով Դամասկոս, եւ երբ որ գաս, Ազայէլին ասորիներուն վրայ թագաւոր օժէ: Եւ Նամեսսիի որդի Յէուին ալ թագաւոր օժէ Իսրայէլի վրայ, եւ Աբէլմաուլացի Սափապի որդի Եղիսէին ալ մարգարէ օժէ քու տեղը: Եւ կ'ըլլայ, որ Ազայէլի սուրէն ազապտողին Յէուն կը մեռնէ, եւ Յէուին սուրէն ազապտողին Եղիսէն կը մեռնէ»» (Գ. Թագ. 19.15-17):*

Ուշադրութիւն դարձնելով, Աստուած Եղիային ըսաւ, որ Եղիսէն իր տեղը մարգարէ օժէ, իսկ Յէուին թագաւոր օժէ Իսրայէլի վրայ: Աստուած ունէր երկու ուրիշ մարդիկ, որոնք չէին փախչեր Յեզաբէլէն: Անոնք կը կատարէին Եղիային պարտականութիւնները:

Եղիայի գործը սկսած էր շեղիլ իր նպատակէն այն պահէն, երբ ան փախաւ Յեզաբէլի վախէն: Յիշէ՛, որ Յեզաբէլը Իսրայէլի մէջ տարածուած չարիքի ազդեցութեան դրդապատճառն էր: Եթէ առաջնորդի մը սխալ ազդեցութեանը չեն դիմադրեր եւ չեն կեցներ, ապա որոշ ժամանակ յետոյ անոր ազդեցութեան տակ գտնուող մարդիկ նոյնպէս կը լեցուին չարութեամբ:

Յիսուսը սորվեցուց այս սկզբունքը. «Ոչ ոք կրնայ զօրաւորի մը տունը մտնելով անոր կարասիքը յափշտակել, եթէ առաջ այն զօրաւորին չկապէ եւ ապա անոր տունը յափշտակէ» (Մարկ. 3.27):

## Հանգած պարզեւներ

Զօրաւոր մարդն աւագն է, տունը անոր ոլորտն է կամ ազդեցութեան տարածքը, անոր ունեցածը, անոր ազդեցութեան պտուղը կամ արդիւնքը: Այժմ, յենելով այս բացատրութեան վրայ, նորէն կարդա՛ այն, ինչ որ Յիսուսը ըսաւ.

*«Ոչ որ կրնայ մտնել աւագի մը տարածքը եւ կողոպտել անոր ազդեցութեան արդիւնքները, մինչեւ որ նախ՝ չկանգնեցնէ աւագին: Ապա ան կը կողոպտէ աւագին տարածքը» (Մարկ. 3.27 (հեղինակի մեկնաբանութիւնը)):*

Թերեւս դուն ըսես՝ բայց չէ՞ որ առաջնորդը Աքաաբն էր, իսկ Եղիան անոնցմէ չէր վախնար: Եւ այո, եւ ոչ: Աքաաբը ծնած էր աւագի կոչումով, բայց ան իր իշխանութիւնը զիջած էր իր կնոջը: Հետեաբար հոգիի բնագաւառին մէջ Յեզաբելը «զօրաւոր մարդ» էր եւ Իսրայէլ ժողովուրդին կը պահէր կռակաշտութեան մէջ: Ան Բահաղի պաշտամունքի հրահրողն էր: Յեզաբելին ազդեցութեան պատճառով էր, որ Իսրայէլ ժողովուրդը, բացառութեամբ Աստուծոյ եօթը հազար հաւատարիմներէն, հեռացաւ միակ ճշմարիտ Աստուծոյ պաշտամունքէն: Յեզաբելի ազդեցութիւնը մնաց, քանի որ ուղղակի դիմադրութեան չհանդիպեցաւ:

Ես այս երեւոյթին շատ հանդիպած եմ: Կան մարդիկ, որոնք հովիւի կամ աւագի կոչում ունին, մինչդեռ կ'ենթարկուին ուրիշներու նենգափոխութեան եւ վախին, յատկապէս այն մարդոց, որոնք անոնց աւելի մօտիկ են՝ իրենց կիներուն, գործընկերներուն, խորհուրդի անդամներուն, սարկաւագներուն, օգնականներուն եւ այսպէս շարունակ: Այդ մարդիկ ալ անտեսանելի կը գործեն՝ բեմի տետէն կառավարելով աւագին:

Ասիկա նաեւ կը պատահի ընտանիքներուն մէջ: Ծնողները վախցած են իրենց երեխաներէն, ամուսինները վախցած են իրենց կիներէն: Այդպիսի ամուսիններ իրենց ընտանիքներուն մէջ գլուխ չեն: Աւագին համար կարեւոր է իրեն շրջապատողներուն հետ խորհրդակցիլը, թէ իր ընտանիքին եւ թէ ծառայութեան մէջ:

Բայց անելի կարեւոր է, որ աւագը մնայ իր ունեցած իշխանութեան մէջ. ատորմով ան պիտի կարենայ ծառայել ու պահպանել եւ ընտանիքը, եւ ծառայութիւնը՝ օգտագործելով Աստուծմէ իրեն տրուած պարգեւը:

Եթէ դուն շարունակես կարգալ Եղիայի պատմութիւնը, պիտի տեսնես, թէ ինչ պատահեցաւ այն բանէն ետք, երբ Եղիան փախաւ իր կեանքը փրկելու համար: Եղիային սկսած գործը աստիճանաբար կ'արժեզրկուէր: Աքաաբը կը շարունակէր իր չարութեամբ ճնշել ժողովուրդին: Յեզաբէլի ազդեցութիւնը կը մեծնար իր ամուսինին եւ թագաւորութեան վրայ: Բահաղի պաշտամունքը վերականգնուեցաւ, չնայած, որ Եղիան պայքարեցաւ Բահաղի մարգարէներուն դէմ եւ ամբողջ ազգին վկայեց Աստուծոյ զօրութիւնը:

Երբ Եղիան փախաւ Յեզաբէլէն, ատորմով իրեն հետ տարաւ նաեւ Իսրայէլի ժողովուրդի խիզախութիւնը: Աքաաբը մահացաւ, բայց անոր երկու որդիները, որոնք թագաւորեցին անորմէ ետք, շարունակեցին ազգը առաջնորդել մոլորութեան եւ անելի խոր կռապաշտութեան մէջ (Գ. Թագ. 22.51, Դ. Թագ. 9):

## **Երկու մարդ, որոնք չյանձնեցին իրենց ունեցած իշխանութիւնը**

Եղիան կը փախչէր այլասերուածութեան եւ կռապաշտութեան բոլոր ակունքներէն: Այդ պատճառով ալ Տէրը պատուիրեց անոր օծել երկու մարդ, որոնք գործ կ'ունենային այդ չար կնոջ հետ: Անոնցմէ մէկը Յէլուն էր, որ սպաննեց Յեզաբէլին (Դ. Թագ. 9.30-37): Երբ Յեզաբէլը փորձեց իր հսկողութեան տակ պահել Յէլուն, վերջինս հրաժարեցաւ անոր վախի ազդեցութեան տակ մտնելէ: Յեզաբէլը մէկ անգամէն դիմադրութեան արժանացաւ եւ կործանուեցաւ, անոր ազդեցութիւնը նոյնպէս ինկաւ (Դ. Թագ. 10):

Յէլուն եւ անոր մարդիկը անելի ուշ սպաննեցին Աքաաբի բոլոր եօթանասուն որդիներուն: Ան կանչեց ու մէկտեղ հաւաքեց Բահաղի բոլոր երկրպագողներուն եւ կոտորեց անոնց: Յէլուն մտաւ Բահաղի տաճար եւ այրեց «սուրբ» առարկաները: Անոր



### Հանգած պարզեւներ

մարդիկ կոտրեցին Բահադի արծանը եւ քանդեցին տաճարը՝ վերածելով այն աղբատեղի: Հիմա տես, թէ Աստուածաշունչն ինչ կ'ըսէ Յէուին մասին. «Եւ Յէուն Բահադին բնաջինջ ըրաւ Իսրայէլէն» (Դ. Թագ. 10.28):

Աստուած պարզ ըսաւ Եղիային. «Յէուի սուրէն ազատողին Եղիսէն կը մեռցնէ» (Գ. Թագ. 19.17): Հիմա երկուքն ալ կը պահանջուէր ամբողջացնել այն, ինչի համար սկիզբը Եղիան ուղարկուած էր: Երբ Աստուած Եղիային ըսաւ, որ Եղիսէին օծէ «մարգարէ քու տեղը», պատճառն այն էր, որ Եղիան երկչոտութեան պատճառով յանձնած էր իշխանութեան իր դիրքը, իսկ Յէուն եւ Եղիսէն Աստուծմէ իրենց տրուած իշխանութիւնը չզիջեցան Աքաաբի տունէն ռել մէկուն, հետեւաբար Աստուծոյ պարգեւը հանգած չէր, եւ ազգը ազատագրուեցաւ Բահադի պաշտամունքէն:

Երբ մենք կը վախնանք, ատորմով կը յանձնենք իշխանութեան մեր դիրքը: Հետեւաբար Աստուծոյ՝ ծառայելու եւ պաշտպանելու համար մեզի տրուած պարգեւը կը սկսի հանգիլ, եւ մենք անգիտակցաբար կը կենանք՝ պատճառ դառնալով, որ հետագային ալ վախի մէջ պահեն մեզի:

Հին կտակարանին մէջ շատ պատմութիւններ կան, թէ ինչպէս Աստուծոյ մարդիկ նահանջած են, երբ զիջած են ճնշումներու ժամանակ: Ինչպէս Պօղոսը կը գրէր. «Եւ այն ամէնն օրինակի համար անոնց կը հանդիպէր, բայց մեզի խրատի համար գրուեցաւ, որոնց դարերու վերջը հասաւ» (Ա. Կորնթ. 10.11): Եւ նորէն՝ հռովմայեցիներուն ուղղած նամակին. «Անոր համար ինչ որ գրուեցաւ, մեր սորվելու համար գրուեցաւ» (Հռովմ. 15.4): Ես Հին եւ Նոր կտակարանէն շատ պատմութիւններ կը մէջբերեմ այս գիրքին մէջ, քանի որ մենք չենք կրնար ամբողջովին հասկնալ Նոր կտակարանէն եղած մէջբերումները առանց Հին կտակարանի օրինակներուն: Յաջորդ գլուխին մէջ կը տեսնենք, թէ ինչպէս երկչոտութիւնը կը խոչընդոտէ Աստուծոյ գործին ոչ միայն աւագի կեանքին մէջ, այլեւ այն մարդոց, որոնց ան կը ծառայէ:



# MessengerX

*Ձեր յաւելուածը՝ ամենօրեայ աշակերտութեան համար*



## Բոլորովին անվճար

Պարզապէս ներբեռնեցէ՛ք ձեր շարժական գործիքին վրայ և օգտագործեցէ՛ք: Կամ օգտագործեցէ՛ք ուեյ-տարբերակը հետևեալ հասցեով:



**MessengerX.com**

**110+ լեզուներ, որոնց թիւը կ'աւելնայ**



Ակնթարթօրէն դիտեցէ՛ք թարգմանուած սիւլթեր աւելի քան 110 լեզուներով:

Եւ մենք շարունակ կ'աւելցնենք նոր թարգմանուած սիւլթեր:

## Դիտեցե՛ք: Կարդացե՛ք: Լսեցե՛ք:

Չեստագօտեցե՛ք նիւթերու ընդարձակ դարանը, որ կ'ընդգրկէ դասընթացքներ, ելեկտրոնային գիրքեր, օտեօ գիրքեր, կարճամեթրաժ ֆիլմեր և անելին, որոնք կրնաք դիտել, կարդալ և լսել:



### Աւելի շատ հնարաւորութիւններ, որոնք ձեզի հաճելի է

- Պարզ և դիւրին գործիքներ, որոնք կ'օգնեն ձեզի բաժնեկցելու այս նիւթերով:
- «Chromecast» և «AirPlay»՝ ձեր սիրելի սմարթ հեռաւեպիներով դիտելու համար:
- Պահպանեցե՛ք ձեր յառաջադիմութիւնը ձեր բոլոր գործիքներուն վրայ: Պահպանեցե՛ք ձեր նախընտրելի նիւթերը ձեր գրադարանին մէջ՝ արագ մուտքի համար:
- Ներբեռնեցե՛ք նիւթերը ձեր գործիքին վրայ՝ անցանց դիտելու համար:
- Խելացի որոնում և գտում՝ գտնելու համար ճիշդ այն, ինչ կը փնտռեք:




## Աճ ամենակարևոր բնագավառներուն մէջ

Հետազօտեցէ՛ք այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ընտանիքը, առողջ փոխյարաբերութիւնները, ձեր կեանքի նպատակը, ազատութիւնը պոռնոկրաֆիայէն, ձեր հաւատքը կառուցելը, Աստուծոյ ձայնը լսելը, ձեր գործը ղեկավարելը և անլին:

## Ձեր աճի ուղին

MessengerX-ի նպատակն է օգնել ձեզի, որ ընէք յաջորդ քայլը ձեր կեանքին մէջ: Մենք ստեղծած ենք աշակերտական ուղի՝ ազդեցիկ գործիքներով, որոնք պիտի օգնեն ձեզի մնալու այդ ուղիին վրայ:



- 1 Ներբեռնեցէ՛ք **MessengerX** յաւելուածը «Apple Store»-էն և «Google Play»-էն:
- 2 Ստեղծեցէ՛ք հաշիւ և օգտուեցէ՛ք յաւելուածէն ձեր լեզուով:
- 3 Փնտռեցէ՛ք, կարդացէ՛ք, դիտեցէ՛ք, լսեցէ՛ք և ներբեռնեցէ՛ք ձեր նախընտրելի սիւլթերը և կիսուեցէ՛ք ասոնցսով:


## Դարձէ՛ք աշակերտ և աշակերտեցէ՛ք

**MessengerX**-ի մաս, դուք կ'օգնէք մեզի տրամադրելու այս թարգմանուած սիւլթերը աշխարհով մէկ գտնուող մարդոց:

*Որովհետև իւրաքանչիւրն արժանի է գիտնալու:*



# MessengerX



**MessengerX.com**

**Ինչէն, որ կը վախնայ մարդը, ապոր ալ աւելի  
կը պատուէ, քան Աստուծոյ**

## ԵՐԿՉՈՏՈՒԹԵՆԷՆ ԿԱԹՈՒԱԾԱՀԱՐ ԵՂԱԾ

**Ե**րկչոտութիւնը մեզ անդամալոյծ կը դարձնէ հոգիի բնագաւառին մէջ: Այն պատճառ կը դառնայ, որ մենք փոխզիջման երթանք մեր գիտցած ճիշդ բանին, հետեւաբար՝ մենք, այլ հանգամանքներու ազդեցութեան տակ, թոյլ կու տանք կամ կը հանդուրժենք այն, ինչ որ մեզ հաստատակամ չի պահեր:

Այս երեւոյթին օրինակ մըն է Հեղիի եւ անոր որդիներու պատմութիւնը: Մինչեւ Իսրայէլը կը դառնար միապետութիւն, այն կը կառավարուէր դատաւորներու կողմէն, որոնց Աստուած կը բարձրացնէր ազգի պատմութեան ճգնաժամային ժամանակներուն մէջ:

Համաձայն Աստուածաշունչի Տէյքի տարբերակի՝ Հեղին Իսրայէլի տասնհինգերորդ դատաւորն էր: Ան ոչ միայն դատաւոր

էր, այլեւ եօթներորդ քահանայապետը: Հեղին Իսրայէլի մէջ դատավարութիւն ըրաւ քառասուն տարի: Անոր երկու որդիները՝ Ոփնին եւ Փենէիէսը եւս քահանաներ էին: Հիմա եկրոր տեսնենք, թէ ինչպիսին էր Իսրայէլի հոգեւոր մթնոլորտը Հեղիի առաջնորդութեան տարիներուն.

*«Եւ այն օրերը Տիրոջ խօսքը հազուադէպ էր՝ յայտնի տեսիլք չկար» (Ա. Թագ. 3.1):*

Հոս յիշատակուած «Տիրոջ խօսքը» գրուած Սուրբ գիրքը չէր, քանի որ իսրայէլցիներն ունէին Թորան: Այս խօսքին մէջ նկատի կ'առնուի Աստուծմէ ներշնչուած յայտնութիւնը, որ Աստուծոյ ճանապարհներուն եւ ծրագիրներուն մէջ է: Եւ կը մնար միայն հեռաւոր յիշողութիւն մը, թէ Աստուած ինչպէս բացայայտ կը խօսէր Իր ժողովուրդին հետ: Գիրքի հեղինակը այդ պահուն լռակեաց էր: Աստուծոյ ձայնը հազուադէպ կը լսուէր:

Ուրեմն, ինչո՞ւ Աստուած այդքան կը լռէր: Պատասխանը մենք կը գտնենք Թագաւորաց առաջին գիրքի 2-րդ գլուխին մէջ.

*«Եւ Հեղին շար ծերացած էր եւ կը լսէր այն ամէնն, ինչ որ անոր որդիները կ'ընէին բոլոր Իսրայէլին, ինչպէս անոնք ժողովքի խորանի առջեւ խումբերով հաւաքուած կանանց հետ կը քնանային» (Ա. Թագ. 2.22):*

Հեղիի որդիներ՝ Ոփնին եւ Փենէիէսը այլասերուած էին: Անոնք ոչ միայն պոռնկութիւն կ'ընէին Իսրայէլի կանանց հետ, այլեւ այնքան համարձակ էին, որ պոռնկութիւն կ'ընէին նաեւ այն կանանց հետ, որոնք կու գային խորանին մէջ ծառայելու, ուր Աստուծոյ ներկայութիւնը կը բնակէր: Ո՞ր էր Աստուծոյ նկատմամբ անոնց երկիւղը: Անոնց անբարոյականութիւնը չէր սահմանափակուեր միայն սեռական բռնութեամբ: Հեղիի որդիները նաեւ ստիպելով մարդոց կը վերցնէին զոհի համար բերած միսը: Այս գործողութիւնը հակառակ էր օրէնքին, եւ այն կը կողոպտէր երկրպագողներուն ու Տիրոջը, քանի որ միսը կը



### *Երկչորությունն կաթուածահար եղած*

պատկանէր անոնց: Ատիկա պատճառ դարձաւ, որ Իսրայէլի ժողովուրդը արհամարհէ Տիրոջ նուիրուած զոհաբերութիւնը: Ունին եւ Փենէիէսը գայթակղութեան քարեր էին Իսրայէլի ժողովուրդին համար: Անոնց վարքագիծը պատճառ դարձաւ, որ ժողովուրդը զայրանայ Աստուծոյ բաներու վրայ:

Հեղին գիտէր, թէ ինչ կ'ընէին իր որդիները, սակայն չէր հեռացներ անոնց, այլ կ'ուղղէր թոյլ յանդիմանութեամբ. «Ինչո՞ւ համար կ'ընէք այսպիսի բաներ, որովհետեւ ես այս բոլոր ժողովուրդին բերանէն ձեզի համար չար խօսքեր կը լսեմ: Չէ, որդիքս, որովհետեւ լաւ չէ այն լուրը, որ ես կը լսեմ ձեր մասին, դուք Տիրոջ ժողովուրդին կը մոլորեցնէք» (Ա. Թագ. 2.23,24): Անոր որդիներն աւելին արժանի էին, քան այս պարզ ուղղումը: Ունին եւ Փենէիէսը պէտք էր հեռացուէին իրենց քահանայական դիրքէն, իսկ խորանէն՝ ընդհանրապէս, քանի որ անոնք չունէին ապաշխարող սիրտ:

Աստուծոյ մարգարէ մը եկաւ Հեղիին քով եւ ըսաւ. «Ինչո՞ւ կ'անարգէք Իմ զոհերն ու ընծաները, որ ես պատուիրեցի Իմ տան համար, եւ քու որդիներուն Ինձմէ՛ աւելի կը պատուես... որովհետեւ ես ինձի փառաւորողներուն կը փառաւորեմ, եւ Ինձի արհամարհողները կ'անարգուին» (Ա. Թագ. 2.29,30):

«Փառաւորել», «պատուել» կը նշանակէ «յարգել, մեծարել, ակնածանք ունենալ»: Երբ Հեղին հրաժարեցաւ դիմակայելէ եւ խստութեամբ իր որդիներուն խրատելէ, ատորմով ցոյց տուաւ, որ որդիներուն աւելի կը յարգէր, քան Աստուծոյն: Հասկնալով կամ առանց հասկնալու այս ամէնը՝ ան կը հպատակուի իրեն վախցնողներուն: Եթէ Հեղին վախցած չըլլար, ան իր որդիներուն հետ ուրիշ ձեւով պիտի վարուէր:

Աւելի ուշ Աստուած կը խօսի Հեղիի մասին Սամուէլին հետ. «Եւ իրեն իմացուցած եմ, որ անոր տունը պիտի դատեմ յաւիտեան, որ գիտեմ այն անօրէնութիւնը, որ անոր որդիները իրենց վրայ անէ՞ծք կը բերեն, եւ ան ջանդիմանեց անոնց» (Ա. Թագ. 3.13):

Տիրոջ խօսքը հազուադէպ էր, եւ չարութիւնը կը թագաւորէր

անմնացորդ, որովհետեւ դատաւորն ու քահանայապետը կը վախճանային իրենց որդիներէն: Հեղին կորսնցուցած էր իշխանութեան իր դիրքը, եւ արդարութեամբ դատելու եւ Իսրայէլին ծառայելու անոր կարողութիւնը հեռացած էր: Աստուծոյ նպատակը ձախողած էր: Իսրայէլի թշնամիները կը զօրանային բոլոր կողմերէն միաժամանակ, ներսը կը թագաւորէր կաշառակերութիւնը: Երբ աւագները կը ձգեն իրենց իշխանութիւնը, անոնց խնամակալութեան տակ գտնուողները կը տառապին:

## **Ծանօթ է այս իրավիճակը**

Դժբախտութիւն է, բայց շատ հայեր վախցած են իրենց սեփական երեխաներէն: Երբ երիտասարդներու հովիւ էի, քովս կու գային քրիստոնեայ ընտանիքներ, որոնք յուսահատ օգնութիւն կը խնդրէին: Ես կը տեսնէի պատանիներ, որոնք կ'արհամարհէին իրենց ծնողներուն, անոնց հետ կը խօսէին առանց յարգանքի: Կը թուէր, թէ ծնողները կը զայրացնէին անոնց: Ես կ'ուղղէի երիտասարդներուն նոյնիսկ իրենց ծնողներուն աչքին առջեւ, որովհետեւ վերջիններս շփոթած էին եւ կը վախճանային անոնց ուղղելէ: Անոնց տուններուն մէջ քառս էր, կը թագաւորէր անկարգութիւնն ու խառնաշփոթութիւնը: Ծնողներն իրենց իշխանութիւնը զիջած էին իրենց երեխաներուն: Անոնց ընտանիքներուն մէջ կարգուկանոն հաստատելու եւ Աստուածապաշտ երեխաներ մեծցնելու Աստուծոյ պարգեւն ու զօրութիւնը հանգած էր:

Այս խնդիրը միայն մեր ընտանիքներուն մէջ չէ, այն ակնյայտ է նաեւ մեր եկեղեցիներուն մէջ: Գտնուած եմ հարիւրաւոր եկեղեցիներու մէջ: Ես տագնապած եմ եւ պէտք է խոստովանիմ, որ շատ աւագներ վախցած են իրենց սեփական ժողովուրդէն: Անոնց եկեղեցիներուն մէջ մթնոլորտը չի տարբերիր Հեղիի իշխանութեան տակ գտնուող Իսրայէլի մթնոլորտէն. Աստուծոյ ձայնը հազուադէպ է:

### *Երկչորությունն է կաթնածախար եղած*

Այս աագները յանձնած են իշխանութեան իրենց դիրքը, եւ Աստուծոյ զօրութիւնը հանգած է: Հովիւները կը քարոզեն ծառայութիւններու ժամանակ, կայ փառաբանութիւն եւ երկրպագութիւն, բայց Աստուծոյ ներկայութիւնը քիչ է, կամ ալ չկայ:

Ծառայողը զգուշօրէն կը պատրաստէ իր ուղերձը, որպէսզի չվիրաւորէ եւ չհակառակի անոնց, որոնք անհնազանդութեան մէջ են, կամ ալ ան կը պողայ եւ զայրացած կը խօսի յուսախաբութենէն, կը խփէ ոչխարներուն, որպէսզի ծածկէ իր երկչորութիւնը: Բայց այս ամէնուն մէջ ոչ մէկ հոգեւոր կեանք կայ, կամ ալ շատ աննկատ է:

Այդպիսի իրավիճակներուն մէջ հազուադէպ է Աստուծոյ ներկայութեան Աստուածաշնչեան նկարագրութիւնը: Կեանքի բռնկումներ կ'ըլլան, բայց Աստուծոյ ներկայութիւնը լիակատար չէ, իսկ Անոր խօսքն ազատ չէ՝ կենդանի ջուրերու աղբիւրի պէս հոսելու համար:

## **Եկեղեցի, որ կենդանի դիակ էր**

1990 թուականին ես կը ծառայէի «Ամբողջ աւետարանի» եկեղեցւոյ մը մէջ: Հոն մարդիկ կը կարծէին, որ իրենք կենդանի են եւ կը շարժին Աստուծոյ հետ: Կիրակի առաւօտեան, երբ ես կը քարոզէի, զգացի, որ իմ խօսքերը կարծես ետ կը շարտուէին դէմքիս: Ըսես դիմացս աղիւսէ պատ ըլլար: Մթնոլորտը ապստամբութեամբ լեցուն էր:

Ես ոչինչ կը հասկնայի: Հովիւն ու անոր կինը շատ հաճելի մարդիկ էին: Անոնց որդին կ'առաջնորդէր փառաբանութիւնն ու երկրպագութիւնը եւ սիրուած էր: Ես շփոթած էի: Ծառայութենէն յետոյ գացի անոնց հետ ճաշելու:

Հովիւը ըսաւ. «Ճճն, ես հարցում մը ունիմ: Իմ եկեղեցիին մէջ զոյգ մը կայ, որ կը պատրաստուի ամուսնալուծուելու: Անոնք երկուքն ալ կը շարունակեն գալ ծառայութիւններուն եւ կը նստին իրարմէ շատ հեռու: Ամուսինը, որ մեր կարգուկանոնի աագն է, իմ եկեղեցիին մէջ հանդիպած է երիտասարդ կնոջ մը եւ ինկած

է անոր ետեւէն, որ սիրաշահի: Այդ կինը տեղափոխուած է իրեն քով եւ հիմա անոնք միասին կ'ապրին: Ես ինչ ընեմ»:

Ես չէի հաւատար ականջներուս, արդեօք այդ հարցին մէջ ան իմ խորհուրդի կարիքն ունէր: Զարմացած հարցուցի. «Դուն նկատի ունիս, որ անոր տակաւին չե՞ս հեռացուցած եկեղեցիէն»:

«Ո՛չ, – պատասխանեց ան, – բայց խնդրածեմ, որ կարգուկանոնի աւագ չըլլայ»:

Մտտ մէկ ժամ խօսեցայ հովիւին ու անոր կնոջ հետ: Ես անոնց պատմեցի, թէ ինչպէս Պօղոսը կը գործէր Կորնթոսի եկեղեցւոյ աւագներուն հետ: Հոն մարդ մը կ'ապրէր անբարոյականութեան մէջ: Պօղոսը կը յանդիմանէր անոնց. «Եւ դուք հպարտացած էք եւ աւելի սուգ չէք բռներ, որ ձեր միջէն վերցուի ան, որ այն բանը գործեց» (Ա. Կորնթ. 5.2): Պօղոսը կ'ըսէր, որ այդ մարդը պիտի հեռացուի եկեղեցիէն, եւ կը բացատրէր, թէ ինչու. «Ձեր պարծանքը լաւ չէ. չէք գիտէր, որ փոքր խմորը բոլոր զանգուածը կը խմորեցնէ» (Ա. Կորնթ. 5.6): Թթխմորը կը գործէ խմորին մէջ՝ պատճառադառնալով, որ ամբողջ հացը բարձրանալու կարողութիւն ձեռք բերէ: Մեր եկեղեցիներուն մէջ Պօղոսը անզուսպ, անամօթ, քմահաճ մեղքը կը համեմատէ հացի թթխմորին հետ:

Ես զգուշացուցի հովիւին. «Դուն թոյլ տուած ես, որ մեղքը անզուսպ ձեռով տարածուի ամբողջ եկեղեցիին մէջ: Աստուած քեզմէ հաշիւ պիտի պահանջէ այն հետեւանքին համար, որ պիտի ըլլայ միւս ոչխարներուն հետ: Հովիւր ոչ միայն կը կերակրէ ոչխարներուն, այլեւ կը պաշտպանէ անոնց: Դուն միայն կը կերակրես անոնց, բայց կը վախնաս պաշտպանելու, քանի որ դուն չես սիրեր հակառակիլ: Երկուքն ալ կարելոր են: Դուն պէտք է վճռականօրէն եւ սիրոյ ճանապարհով դիմակայես այդ մարդուն, իսկ եթէ ան անմիջապէս չապաշխարէ, հեռացուր եկեղեցիէն»: Եթէ մենք չկերակրենք ոչխարներուն, անոնք սովամահ կ'ըլլան, բայց եթէ չապաշտպանենք անոնց, կը կործանին:

Հովիւն ու անոր կինը գունատեցան: Կինն ըսաւ. «Ես չեմ գիտեր, այլեւս կը ցանկամ ըլլալ ծառայութեան մէջ, թէ ոչ, բայց,

*Երկչորությունն է կաթուածահար եղած*

այն ամէնը, ինչ որ կը ցանկամ ընել, մարդոց սիրելն է»:

Ես պատասխանեցի. «Եթէ դուն չես պաշտպաներ այդ մարդոց, ատիկա ճշմարիտ սէր չէ, այլ յարմարուող սէր է»:

Անոնք խոստովանեցան, որ վախցած էին իրենց եկեղեցւոյ որոշ անդամներէն: Ամուսիններն անկեղծացան եւ ինծի պատմեցին այլ խնդիրներու մասին: Փառաբանութեան եւ երկրպագութեան խումբին մէջ երաժիշտներէն ոմանք անարգալից վերաբերմունք կը ցուցաբերէին: Ես ալ խոստովանեցայ, որ ծառայութեան ընթացքին ինծի ինչ որ բան մը կը խանգարէր, եւ հիմա ես գիտէի, թէ ինչու:

Երեկոյեան քարոզի ժամանակ մարդ մը կը խանգարէր ինծի քարոզելու ժամանակ, որպէսզի լեզուներով ուղերձ տար: Ես խնդրեցի անոր կենալ՝ բացատրելով, որ Աստուած Ինքն Իրեն չի խանգարեր: Այդ մարդը հասկցաւ եւ դադարեցաւ խօսելէ, բայց երբ ան կեցաւ, կիթառահարը ցատկեց տեղէն, պոռաց վրաս եւ ըսաւ. «Ես ոչ մէկ պարագային կը վախնամ դէմ կենալու ինչ որ մէկու մը քարոզին, որ Սուրբ Հոգիին թոյլ չի տար շարժիլ: Ես դուրս կ'ելլեմ հոսկէ»: Ան վերցուց իր կնոջը եւ պոռաց պէյսկիթառահարի վրայ՝ հրամայելով հետեւիլ իրեն: Պէյսկիթառահարը, անոր կինը եւ մէկ ուրիշ մը կատղեցան: Մթնոլորտը լեցուած էր տագնապով, մարդիկ շփոթած էին:

Ես անմիջապէս խնդրեցի Սուրբ Հոգիին օգնութիւնը: Ան ըսաւ. «Սորվեցնոր անոնց իշխանութեան մասին»: Երբ ես քարոզեցի, Աստուծոյ խաղաղութիւնն իջաւ մարդոց վրայ եւ Աստուածային կարգուկանոն հաստատուեցաւ:

Երբ աւարտեցի, Տէրը պատուիրեց ինծի. «Ըսէ՛ այն մարդուն, որ կեցաւ, որ տայ լեզուներով ուղերձը ու մեկնաբանէ»:

Քիչ մը վարանելով ես դիմեցի այդ մարդուն.

- Պարոն, եթէ Դուք ի վիճակի էք, ես կը հաւատամ, Աստուած կ'ուզէ, որ Դուք այդ ուղերձը հիմա տաք»:

Ան տուաւ լեզուներով ուղերձը ինչպէս նաեւ մեկնաբանեց այն:

Այդ մարդը սկսաւ խօսիլ. «Այսպէս կ'ըսէ Տէրը, Ես տեսած եմ մեղքի բազմութիւնը այս եկեղեցիին մէջ: Ես իմ ծառային մեղքերուն միայն մէկ մասը ցոյց տուած եմ: Ուշադրութիւն դարձուցէք անոր խօսքերուն, քանի որ ատոնք Իմ խօսքերն են»:

Ես սկսայ լալ այդ եկեղեցւոյ թոյլ տուած մեղքին եւ ապստամբութեան համար: Մեղքը արագ կը տարածուէր, քանի որ աագները վախցած էին քանի մը հոգիէն, որոնց համար Աստուած կ'ուզէր, որ հոգ տանէին:

Շատ ուրախացայ, երբ յետոյ լսեցի, որ հովիւր դէմ կեցած է այն տղամարդուն եւ երիտասարդ կնոջը, որոնք միասին կ'ապրէին: Անոնք երկուքն ալ ապաշխարած էին եւ անմիջապէս իրարմէ բաժնուելու որոշում կայացուցած էին:

## **Հովիւ մը վախցած էր իր աշխատակազմէն**

Անգամ մը ես կը ծառայէի ուրիշ եկեղեցւոյ մը մէջ, ուր հաւաքոյթները սկսած էին կիրակի առաւօտեան եւ նախատեսուած էր շարունակել մինչեւ չորեքշաբթի երեկոյ: Մենք ունեցանք հիանալի հաւաքոյթներ, ապաշխարութեան, բժշկութեան եւ ազատագրման դէպքեր: Եկեղեցին ֆինանսական ճեղքում ունեցաւ: Եկեղեցի յաճախողները կը շատնային: Բայց երեքշաբթի երեկոյեան, մինչեւ ծառայութիւնը սկսիլը, հովիւր սկսաւ լալ:

Ինչ պատահած է,- հարցուցի ես:

Ճո՛ն, ես քեզի չեմ նախանձիր: Ես ուղղակի չեմ հասկնար, թէ ինչու ես Աստուծոյ շարժը բնաւ չեմ տեսած: Ես լեցուած եմ Սուրբ Հոգիով, բայց դեռ Հոգիի պարգեւներէն ոչ մէկը գործած է իմ ծառայութիւններուն: Ոչ մէկը բժշկուած է կամ ազատագրուած է, եւ ամէն բան այնքան դժուար կը թուի:

Ես սկսայ հարցումներ հարցնել: Պարզուեցաւ, որ հովիւի աշխատակազմին մէջ երկու զոյգ կայ, որոնք Սուրբ Հոգիով անլի կանուխ մկրտուած էին, քան ան, եւ անոնք հովիւին կ'ըսէին, թէ ինչ ընէր եւ ինչպէս առաջնորդէր եկեղեցին: Ես բացատրեցի. «Դուն պէտք է ետ դառնաս Աստուծմէ քեզի տրուած իշխանութեան եւ ըսես

### *Երկչորութենէն կաթուածահար եղած*

անոնց, որ դուն ես հովիւր եւ ոչ թէ անոնք»: Յաջորդօրը ան խօսեցաւ այդ գոյգերուն հետ: Անոնք վրդովուեցան եւ վերջնականապէս լքեցին եկեղեցին: Հաւաքոյթները երկարաձգուեցան, եւ վերջին ծառայութեան ժամանակ խումբ մը մարդիկ առջեւ եկան աղօթելու, բայց Տէրն ըսաւ ինծի. «Դուն պէտք չէ աղօթես այս մարդոց համար, հովիւր պէտք է ատիկա ընէ»:

Ես նայեցայ հովիւին եւ անոր վրայ տեսայ Աստուծոյ զօրութիւնը: «Հովիւ, - ըսի ես, Աստուած կ'ըսէ, որ դուն պէտք է աղօթես այս մարդոց համար»:

Ան սկսաւ վազել այդ մարդոց մէջէն: Հովիւը պարզապէս կը դաչէր անոնց, եւ մարդիկ կ'իյնային Աստուծոյ զօրութենէն: Ոմանք կ'իյնային հովիւին դաչելէն առաջ: Աստուծոյ զօրութիւնն այնքան զօրաւոր էր:

Աղջիկ մը, որ դիւահար էր, փառաւոր ձեռով ազատագրուեցաւ: Քանի մը վայրկեան ետք այդ խումբի բոլոր մարդիկ ինկած էին գետին. Սուրբ Հոգին կը ծառայէր անոնց: Հովիւը դարձաւ, հայեացք մը նետեց ինծի եւ կոնակին վրայ գետին ինկաւ: Ստիպուած ծառայութիւնը անոր կիներ փակեց: Կէս ժամ ետք երկու մարդ օգնեցին հովիւին բարձրանալու: Այդ եկեղեցին նման քան տակաւին չէր տեսած:

Աստուծոյ զօրութիւնը հովիւին մէջ չէր գործեր երկչորութեան պատճառով: Ատոր հետեւանքն այն էր, որ Աստուծոյ զօրութիւնն ու ներկայութիւնը հազուադէպ էր անոր եկեղեցիին մէջ: Երկչորութեան այս զօրութիւնը կոտրելէն վերջ Աստուծոյ պարգեւը ազատ արձակուեցաւ:

## **Նոյն պատմութիւնը, բայց այլ բեմագրութեամբ (սենարիոյով)**

Ես համոզուած եմ, որ քանի մը եկեղեցիներուն մէջ այս սկզբունքը ճիշդ է այնքան, որքան անհատներու կեանքին մէջ:

Ես կը ծառայէի արտասահմանեան եկեղեցոյ մը մէջ, ուր նոյնպէս հովիւներն ու աւագները կը գործէին երկչորութեան

դէմ պայքարելով: Ողջ շաբթուան ընթացքին ես քարոզեցի՝ քաջալերելով անոնց զօրաւոր մնալ հոգիին մէջ եւ գործադրել Աստուծոյ մէջ ունեցած իրենց բարձր կոչումը: Իմ մեկնելէն չորս ամիս ետք եկեղեցւոյ անդամներու թիւը եռապատկուեցաւ: Անոնք տեղափոխուեցան իրենց չորս հարիւր տեղէ բաղկացած շէնքէն եւ գացին լսարան մը, որ ունէր երկու հազար նստատեղ: Երբ ես աւելի ուշ այդ երկիրը վերադարձայ, հովիւն ինձի ըսաւ, որ ինքն ու իր եկեղեցին փոխուած են այն պահէն, երբ կոտրած են երկչոտութիւնը:

Ես երեք օրով հրափրուած էի ծառայելու Աթլանթայի մէջ: Վերջին օրը կը քարոզէի երկչոտութեան զօրութիւնը կոտրելու մասին: Հովիւը փառաւոր ձեւով ազատագրուեցաւ իր ժողովուրդէն ունեցած երկչոտութենէն: Ան ըսաւ. «Դուք պէտք է նորէն գաք եւ մէկ շաբաթ մնաք»:

Երեք շաբաթ յետոյ ես վերադարձայ, եւ մենք ունեցանք ինը ծառայութիւն: Աստուծոյ զօրութիւնն ու ներկայութիւնը այնքան ուժեղ էր, որ ոմանք կը մնային մինչեւ կէսգիշեր: Գիշերուան կիսուն մարդիկ կը հեռաձայնէին հովիւին տունը եւ կը հարցնէին, թէ ինչ ընեն, որովհետեւ ոմանք դեռ կը զգային Աստուծոյ զօրութեան եւ ներկայութեան հպումը: Անոնք երբեք չէին տեսած Աստուծոյ շարժը այդքան զօրաւոր ձեւով:

Ատկէ յետոյ ինը ամիս շարունակ, իւրաքանչիւր շաբթուան վերջաւորութեան եկեղեցին կ'ունենար արթնութեան հզօր ծառայութիւններ: Հովիւը կը հեռաձայնէր ինձի ու կը պատմէր, թէ որքան զօրաւոր էին ծառայութիւններն իր եկեղեցիին մէջ եւ թէ ինչպիսի հզօր բաներ տեղի կ'ունենային եկեղեցւոյ անդամներու կեանքին մէջ: Ան կ'ըսէր, որ հաւաքոյթներէն ոչ մէկը միաին պէս էր: Անոնց եկեղեցին աճած էր չորս հարիւրէն եւ հասած էր եօթը հարիւրի: Ան ինձի պատմեց, որ այն երեկոն, երբ ես կը քարոզէի երկչոտութիւնը կոտրելու մասին, շրջադարձային էր իր կեանքին եւ ծառայութեան համար:

Ես ուրիշ «Կենդանի հաւատքի» եկեղեցիի մը մէջ էի:



### *Երկչորությունն է կաթուածահար եղած*

Փառաբանութենէն ու երկրպագութենէն քունս կու գար: Հովիւը ոտքի ելաւ, յայտարարութիւններ ըրաւ, զոհաբերութիւն «սորվեցուց»: Շատ ծանծրալի էր այդ ընթացքը: Երբ մենք կը ճաշէինք ծառայութենէն ետք, ան միայն ֆութպոլի մասին կը խօսէր: Ատիկա ծանծրալի ճաշկերոյթ էր:

Յաջորդ երեկոյ Աստուած մղեց ինծի քարոզել երկչորութիւնը կոտրելու մասին: Քարոզի կիսուն հովիւը գետին ինկաւ՝ ապաշխարելով այն թուլութենէն, որ հանդուրժած էր իր կեանքին եւ ծառայութեան մէջ: Ես գիտէի, որ Աստուած գործ կ'ընէր անոր կեանքին մէջ, բայց ես չէի հասկնար, թէ ատիկա ինչքան կը տեսէր:

Յաջորդ օրը ան հեռաձայնեց. «Ճո՛ն, իմ կիներ մէկ ժամ է քնացած է, իսկ ես՝ ընդհանրապէս չեմ քնացած: Մենք ամբողջ գիշերը արթուն էինք, ապաշխարեցինք, լացինք, յետոյ խնդացինք: Յետոյ այդ ամէնը նորէն կը կրկնուէր՝ ապաշխարութիւն, լաց եւ ծիծաղ»: Այդ օրը ան գացած էր իր օգնականներուն քով եւ ապաշխարած էր անոնց առջեւ՝ ներողութիւն խնդրելով, որ չէ եղած Աստուծոյ այն առաջնորդը, որ կանչուած էր ըլլալու:

Օգնականներէն քանի մը հոգի լքեցին եկեղեցին, երբ հասկցան, որ այլեւս չեն կրնար ղեկավարել հովիւին: Միւսները միացան անոր եւ աջակցեցան անոր աճին:

Եկեղեցին եւ այս մարդը երբեք այսպիսին չէին եղած: Այժմ՝ չորս տարի յետոյ, փառաբանութիւնն ու երկրպագութիւնը կենդանի են: Անոնք վերջին երկու տարուան ընթացքին ամէն շաբաթ արթնութեան հաւաքոյթներ կ'ունենային: Երբ հովիւը հեռաձայնեց ինծի, պատմեց, թէ ինչպէս Աստուած կը խօսի իրեն հետ եւ ինչպիսի հրաշքներ կը կատարուին եկեղեցոյ մէջ: Քանի մը անգամ վերադարձած եմ այդ եկեղեցի, եւ ամէն անգամ վիճակը աւելի կը լաւանայ: Ան նաեւ ինծի քանի մը անգամ ըսած է, որ երկչորութենէն ազատելու ուղերձը փոխած է իր կեանքն ու ծառայութիւնը:

Այս ազատագրումը ոչ միայն հովիւներու եւ աւագներու, այլեւ բոլոր հաւատացեալներու համար է: Մենք ստացած ենք

շատ վկայություններ, որ մարդիկ ազատագրուած են կեանքի տարբեր բնագաւառներուն մէջ, երբ կոտորած են երկչոտութեան կապանքները:

Ճառայութիւններէն մէկուն ժամանակ, երբ ես կը քարոզէի երկչոտութիւնը կոտորելու մասին, հաւաքոյթի աւարտին կին մը վկայեց, որ վախի ճնշում զգացած է եւ երկչոտութիւնը դուրս ելած է անոր կեանքէն:

Քանի մը օր յետոյ այդ կնոջն ու անոր աղջկան ճամբան կը կեցնէին կրակոցը: Յարձակողները կը յափշտակեն կանանց դրամապանակները, եւ երեք երիտասարդ տղամարդիկ կը շրջապատեն իրենց:

Մեծ համարձակութիւն կը բարձրանայ կնոջ ներսը, եւ ան կը սկսի որքան հնարաւոր է բարձրածայն խօսիլ լեզուներով: Ատրճանակով երիտասարդը կը հրամայէ դադրեցնել այն: Կինը չի դադրիր: Երիտասարդ տղամարդիկ այնքան կը շփոթին, որ այդ կնոջ աղջիկը կը կարենայ տուն վազել եւ հեռաձայնել 911: Տղամարդիկ կը փախչին՝ տանելով միայն կնոջ դրամապանակը:

Յաջորդ օրը քրիստոնեայ մը կ'որոշէ, քալելով երթալ իր մօրը տունը եւ կ'երթայ ոչ սովորական դարձած ճանապարհով: Անտառին մէջ ան կը գտնէ այս կնոջ դրամապանակը եւ կը հեռաձայնէ անոր: Անոնք երկուքով կ'ուրախանան: Դրամապանակէն շատ քիչ գումար կը պակսէր, իսկ կնոջ ամբողջ փաստաթուղթերը մնացած էին դրամապանակին մէջ:

Ան կնոջս ըսած էր, որ այդ քարոզը քաջութիւն տուած էր իրեն, որ փրկած էր իր կեանքը: Եթէ նախկինին նման իրավիճակներուն մէջ ինքը վախէն կ'ընկճուէր, ապա հիմա չունի վախի զգացումը:

Ես Աստուծոյ կու տամ ամբողջ փառքը բոլոր այս վկայութիւններու համար: Ես ալ կապուած էի վախով, բայց Աստուծոյ շնորհքով հիմա ազատ եմ: Ազատագրման այս իմաստութիւնն ու զօրութիւնը, որ կ'ազատէ գերիներուն, կու գայ Անորմէ:

*Երկչորությունն էն կաթուածահար եղած*

Մենք բացայայտեցինք վախն ու երկչորութիւնը եւ թէ ինչպէս  
ատոնք կրնան խանգարել, իսկ շատ յաճախ ալ կեցնել Աստուծոյ  
պարգէնն ու զօրութիւնը: Այնուամենայնիւ մեր նպատակն է ոչ  
թէ պարզապէս բացայայտել, այլ աւելին՝ կոտրել անոր մահացու  
կապանքը:

**Հոգեւոր դիմադրութիւնը կը պահանջէ  
հոգեւոր աջակցութիւն:**

## ԵՐԿՉՈՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

Երկչոտությունը հասկնալու եւ անոր հետ գործ ունենալու համար մենք պետք է քննարկենք երկու նիւթ: Առաջինն այն է, որ վախը կամ երկչոտությունը հոգի է, իսկ երկրորդը, որ ասիկա Աստուծմէ չէ:

*«Որովհետեւ Աստուած չտուաւ մեզի երկչոտութեան հոգի» (Բ. Տիմոթ. 1.7):*

Այս ուղերձին մէջ «հոգի» բառը յունարէնին մէջ «փնեումա» բառն է, որ կ'օգտագործուի Սուրբ Հոգիին համար, մարդու հոգիին համար, երբ կը խօսուի դեպի քշելու մասին (ըստ Սթրոնկի համաբարբառին): Երկչոտությունը դիրք կամ վերաբերմունք չէ. այն հոգի է:

Քանի որ երկչոտությունը հոգի է, կը նշանակէ անոր դէմ չենք կրնար պայքարիլ բանականութեան կամ կամքի մակարդակով: Մտաւոր դրական դիրք ունենալով չես յաղթեր երկչոտութեանը:

Հոգեւոր դիմադրութիւնը կը պահանջէ հոգեւոր աջակցութիւն, այն հասցէագրուած է հոգիի բնագաւառին:

Հարցում կը յառաջանայ՝ ինչո՞ւ խելամիտ եւ ֆիզիքսապէս ուժեղ մարդիկ, պայքարելով երկչոտութեան դէմ, յաճախ կը վախնան ինչ որ մէկէն կամ ինչ որ բանէ մը, որ աւելի թոյլ է մարմինով կամ մտքով: Թերեւս ամէն ինչ հիանալի է, բայց անոնք կ'ապրին անփոփոխ սոսկումի մէջ, որ իրենց կեանքին մէջ հանգամանքները պիտի փոխուին աւելի վատի: Անոնք իրենց ողջ ժամանակն ու եռանդը կ'օգտագործեն անհանգստութեան մէջ եւ կը փորձեն իրենց ապահովագրել որոշ բաներէն, որոնք, թերեւս, երբեք ալ տեղի չեն ունենար: Անոնք չեն կրնար ուրախանալ ներկայով, որովհետեւ շատ վախցած են իրենց ապագայէն: Նշանակութիւն չունի, թէ ինչ կարծիք ունիս անոնց մասին, միեւնոյնն է, անոնց վախը կը մնայ: Այդպիսիք ունին վախի կամ երկչոտութեան հոգի եւ պայքարի մէջ են ոչ թէ ֆիզիքական թուլութեան, այլ հոգեւոր թուլութեան հետ:

Այժմ անդրադառնանք այն մարդոց, որոնք, կը թուի, թէ միշտ կը հասնին իրենց ուզածին: Պատճառը անոնց հասակը կամ կրթութիւնը չէ: Անոնք կրնան ոչ մէկ դիրք կամ իշխանութիւն ունենալ, մինչդեռ շրջապատող մարդիկ կը խոնարհին ու կ'ենթարկուին անոնց: Ինչո՞ւ: Ատիկա շատ պարզ է: Անոնք ուրիշներուն կը ղեկավարեն երկչոտութեան հոգիին միջոցով, անոնք կը սորվին երկչոտութիւնն օգտագործել իրենց օգուտին համար:

Ես կը նախաճաշէի մարդու մը հետ, որ բարգաւաճ առեւտուր ունէր: Ան կը պատմէր ինծի, թէ ինչպէս կ'ապրէր ու ինչպէս կը գործէր իր առեւտուրը փրկուելէն առաջ:

Ես իմ առեւտուրին մէջ որեւէ բանի կը հասնէի մարդոց վախի մէջ պահելով: Ես ուղղակի կը զգայի այդ վախի զօրութիւնն իմ վրայ, երբ կը քալէի քաղաքին մէջ: Ինծի հաճելի կը թուէր այն փաստը, որ մարդիկ կը սարսափէին ինձմէ, եւ կը հասնէի իմ ուզածին նոյնիսկ այն պարագային, եթէ ուզածս քաղաքային

## Երկչորության հոգին

խորհուրդի որոշման հետ կապուած էր: Անոր մէջ կար վախցնող հոգի: Քաղաքի ղեկավարները, չնայած իրենց ունեցած դիրքին եւ իշխանութեանը, չէին համարձակեր դէմ կենալ անոր:

## Վերահսկող հոգի

Եղիան չէր վախնար Իսրայէլի ժողովուրդէն, երբ անոնք նուիրուած էին Բահաղի պաշտամունքին: Ինչպիսի մեծ համարձակութիւն՝ մէկ մարդը դէմ կեցած էր ողջ ազգին: Ան չվախցաւ, երբ կը պայքարէր 850 սուտ մարգարէներու դէմ: Ինչպիսի որոշում, մէկ մարգարէն դէմ կեցած էր մօտ հազար կրօնական առաջնորդներուն: Եղիան հոգ չէր ըներ նոյնիսկ այն ժամանակ, երբ Իսրայէլի թագաւորը բարկացած էր իր վրայ: Այս ամէնն ատելին էր, քան շատերը կրնային ընել: Բայց եւ այնպէս Եղիան թոյլ տուաւ կնոջ մը վախցնել իրեն այն աստիճան, որ ընտրէ փախուստի ճամբան եւ ցանկայ մեռնիլ:

Հոգեբանները կրնան ըսել, որ ան կը վախնար կիներէն, բայց ասիկա շատ թոյլ փաստարկ է, որովհետեւ Իսրայէլի ժողովուրդին մէջ միայն տղամարդիկ չէին: Ո՛չ, ասիկա մեծ կարեւորութիւն ունեցող հոգեւոր հակամարտութիւն էր, որուն մէջ խառնուած էին ազգը, թագաւորը եւ կեղծ մարգարէները: Եղիան Յեզաբէլին մէջ հանդիպեցաւ սարսափի ուժեղ, վերահսկող հոգիին, որ չունէին թագաւորը եւ կեղծ մարգարէները:

Եկնր տեսնենք, թէ Աստուածաշունչը ինչ կ'ըսէ այս հոգիի բնոյթի մասին: Ուշադիր եղիր Յէուի եւ Յեզաբէլի որդի Յովրամի գրոյցին.

*«Եւ եղաւ, երբ որ Յովրամը Յէուին տեսաւ, ըսաւ՝  
խաղաղութիւն է, Յէու, եւ ան ըսաւ՝ ինչ է խաղա-  
ղութիւնը, մինչեւ որ կան քու մօր՝ Յեզաբէլի  
պոռնկութիւնները եւ անոր շատ կախարդութիւնները»  
(Դ. Թագ. 9.22):*

Մի գայթակղիր «կախարդութիւն» բառէն: Մի սխալիր՝

պատկերացնելով կեռ քիթով կին մը, որ կը թռչի ատելով, կախարդանքներ կ'ընէ, թոյներ կ'օգտագործէ: Անձը կախարդութեամբ կը զբաղի, երբ ան, ըլլայ կին, թէ տղամարդ, վերահսկելու ջանք կ'ընէ: Այո՛ր, կայ կախարդութեան կամ իշխելու ձեւ, որ կը կանչէ դիական հոգիներուն: Բայց եւ այնպէս կախարդութիւնը չի սահմանափակուիր միայն ասորմով: Պօղոսը կը յանդիմանէ գաղատացիներու եկեղեցին. «Ո՛վ անմիտ գաղատացիներ, ո՛վ կախարդեց ձեզ, որ ճշմարտութեանը չհնազանդիք» (Գաղատ. 3.1): Այս կախարդելը թոյներ օգտագործելու կախարդանք չէր: Պօղոսը նկատի ունէր այն ուսուցիչներուն, որոնք համոզած էին անոնց չհնազանդիլ այն ամէնուն, ինչ որ Աստուած հասկնալի ձեւով յայտնած էր: Այս ուսուցիչները խորհրդապաշտութեան (occultism) վարպետներ չէին, այլ ունէին վերահսկող հոգի, եւ ատիկա ազդած էր ամբողջ եկեղեցիին վրայ:

Յեզաբէլը վերահսկելու եւ վախցնելու այնքան ուժեղ հոգի ունէր, որ թագաւորը, առաջնորդներն ու Իսրայէլի ողջ ժողովուրդը ճանապարհը զիջած էին անոր: Եղիան ալ ենթարկուած էր այդ հոգիին եւ կը փախչէր իր կեանքը փրկելու համար: Երբ դուն թոյլ կու տաս, որ վախը մտնէ քու սիրտը, դուն կը կորսնցես խաղաղութիւնը, վստահութիւնը, քաջութիւնը, համբերութիւնը, հերոսութիւնը, վճռականութիւնը եւ անվտանգութիւնը: Այս ցուցակը կարելի է շարունակել:

Ես նկատած եմ, թէ ինչպէս մարդիկ կը փորձեն դրական մտքերու միջոցով ազատիլ վախի չարչարանքէն: Անոնք չեն ազատիր, քանի որ գործ ունին ոչ թէ վախի հետեւանքներու, այլ արմատի հետ: Դուն կրնաս պոկել ծառին պտուղը եւ ինչ որ ժամանակ մը այն անպտուղ կը դառնայ, բայց վերջին հաշուով պտուղը նորէն պիտի աճի: Ծառը կը շարունակէ պտուղ տալ այնքան ժամանակ, քանի դեռ արմատները ամուր են: Եթէ փորձես այսպէս կտորել երկչոտութեան զօրութիւնը, ստիպուած կ'ըլլաս իննալու ատոր ետեւը եղող հոգեւոր ուժի ետեւէն:



## Վերահսկելու եւ վախցնելու հոգիները եկեղեցիին մէջ

Մեր եկեղեցիներուն մէջ կան մարդիկ, որոնց սիրտն ուղիղ չէ Աստուծոյ առջեւ: Անոնք կը վախցնեն աազներուն, որպէսզի հասնին իրենց ուզածին: Անոնք հնազանդ են այնքան ժամանակ, քանի դեռ ամէն բան իրենց ուզածին պէս է: Այդպիսի մարդիկ կը վազեն այնպիսի եկեղեցիներ, ուր աազները թոյլ են:

Տարբեր եկեղեցիներուն մէջ յաճախ ես կը հանդիպէի երկչոտութեանը եւ չէի գիտեր, թէ ինչու կը պայքարիմ ատոր դէմ, կամ ուրկէ կու գայ այն: Պատճառը հետեւեալն է. «Երկչոտութիւնը հոգի մըն է, որ իրեն կը դրսեւորէ ուրիշ անձի միջոցով, որ կ'ենթարկուի իրեն, նոյնիսկ հաւատացեալի միջոցով: Աստուածաշունչը հաւատացեալներուն կը զգուշացնէ տեղ չտալ աստանային (Եփես. 4.27):

Կ'ուզեմ ձեզի հետ բաժնեկցիլ որոշ փորձառութիւններով: Ես կը համարակիմ ասիկա ընել՝ շատ լաւ հասկնալով, որ ինձի կրնան փակցնել «գերհոգեւորի» կամ «դել որսացողի» պիտակ: Հասկցած եմ, որ որոշ մարդիկ իրենց հանդիպած ամէն մէկ խնդիրին մէջ դել կը փնտռեն: Եթէ դուն կրնաս ամէն ինչի մէջ սատանային մեղադրել, ուրեմն քու ըրածներուն համար պատասխանատուութիւն չես կրեր: Այդպիսով դուն աւելի շատ կը կեդրոնանաս դելներուն, քան թէ Յիսուսին վրայ: Աստուածաշունչը կը սորվեցնէ մեր աչքերը յառել Յիսուսին վրայ, այլ ոչ թէ դելներուն: Անիկա է մեր հաւատքի հեղինակն ու աւարտը (Եբր. 12.2):

Ես կը հասկնամ այն, որ մենք պարտաւոր ենք ապրելու՝ մեր ուշադրութիւնը կեդրոնացնելով Յիսուսին վրայ, եւ եթէ մէկ հոգի դուրս հանէ մեզ ճանապարհէն, մենք պէտք է ոչնչացնենք անոր Աստուծոյ Խօսքով ու շարունակենք հետեւիլ Յիսուսին: Հալելուիս: Այնուամենայնիւ, որպէսզի արդիւնաւէտ ձեւով կոտրենք երկչոտութիւնը, պէտք է իմանանք, որ այն հոգի մըն է, որ չի հեռանար պարզապէս անտեսուած ըլլալէն:

### Յարձակում

Ես կը պատմեմ այն բազմաթիւ դէպքերէն մէկը, որ կը հաստատէ, թէ երկչոտութիւնը հոգի է: Ես կը քարոզէի Հարաւի եկեղեցւոյ մը հերթական հաւաքոյթներէն մէկուն ժամանակ: Առաջին հաւաքոյթը կիրակի առաւօտեան էր, եւ այն շատ զօրաւոր էր: (Չորս տարի շարունակ մենք կ'օգտագործենք այդ ծառայութեան տեսերիզը): Ծառայութենէն ետք ոչ մէկը վախճած էր կամ բացասական որեւէ բան ըսաւ: Փաստօրէն իմ շուրջ գտնուող մարդիկ շատ դրական տրամադրուած էին: Բայց կէսօրէ ետք ես յայտնաբերեցի, որ կը պայքարիմ հիասթափութեան եւ շփոթութեան դէմ: Կը հասկնայի, որ ինչ որ բան մը ճիշդ չէ, բայց չէի գիտեր, թէ ատիկա ուրկէ կու գար: Ես ճանչցայ այս ակտանիշները. ատոնք նոյնն էին, երբ ես կը պայքարէի երկչոտութեան դէմ: Այդ գիշեր Տէրը կարգեց ինձի, որ եկեղեցւոյ մէջ քարոզեմ իշխանութեամբ: Այդպէս ծառայեցի շատերուն:

Ծառայութենէն յետոյ հովին ինձի իր գրասենեակը տարաւ: Ան ըսաւ. «Դուն չես գիտեր, թէ ինչ նշան բռնած էիր այս երեկոյ՝ քարոզի ժամանակ»: Ան շարունակեց պատմել ինձի, որ եկեղեցիէն կին մը կէսօրին կանչած էր իրեն եւ ըսած. «Հովի, ես գիտեմ, որ դուն համաձայն չես այս մարդուն քարոզին հետ: Ան շատ կը ճնշէ ժողովուրդին: Ես գիտեմ, որ դուն կը դադրեցնես հաւաքոյթները այս երեկոյէն ետք, որովհետեւ դուն անոր պէս չես: Ես չեմ պատրաստուիր այս երեկոյ գալու ծառայութեան, ես կը մնամ տունը եւ կ'աղօթեմ այդ մարդուն դէմ»:

Ինձի համար պարզ դարձաւ, թէ ուրկէ կու գար վիատութիւնը: Ես հարցուցի հովիին, թէ ան ուղղեց այդ կնոջը: Հովիւը շատ ողորմած մարդ էր եւ ըսաւ, որ այդպէս չէր ըրած, պարզապէս ըսած էր, որ այս խնդիրը յանձնէ Տիրոջ ձեռքերուն մէջ: Եթէ այս հովիւը ուղղէր կնոջը եւ մնար իր իշխանութեան դիրքին մէջ, ես վստահ եմ, որ կէսօրուընէ ետք պատկերն ուրիշ պիտի ըլլար: Այն ինչին դէմ, որ մենք չենք կանգնիր, երբեք չի փոխուիր: Երբ չարը կ'անտեսուի, աստորմով այն ատիկ զօրաւոր կը դառնայ:

## *Երկչորութեան հոգին*

Մենք երկուքով դաս առինք այս դէպքէն: Տէրն օգտագործեց այս փորձառութիւնը, որպէսզի ցոյց տայ ինծի, թէ ինչպէս մնամ իմ հոգեւոր իշխանութեան մէջ եւ ծունկի չգամ երկչորութեան հոգիին առջեւ:

Շնորհակալութիւն Աստուծոյ Սուրբ Հոգիին համար, Որ գիտէր, թէ ինչ տեղի կ'ունենար եւ օգնեց ինծի բեմին վրայէն հակառակելու այդ հոգիին, հակառակելու անկախ այն հանգամանքէն, որ ես չէի գիտեր, թէ ինչ տեղի կ'ունենար: Հովիւը հասկցաւ, եւ ատիկա բացաւ անոր աչքերը: Այդ հաւաքոյթները դարձան ամբողջ տարուան ամէնէն զօրաւոր հաւաքոյթները: Ես նորէն եղած եմ այդ եկեղեցւոյ մէջ, եւ հովին ու ես հիմա լաւ ընկերներ ենք:

## **Մէկ ուրիշ ընդհարում վախցնող եւ վերահսկող հոգիին հետ**

Անգամ մը ինձմէ խնդրած էին քարոզել արտասահմանի հանգստավայրի մը մէջ, ուր գրեթէ հազար մարդ կը հանգստանար: Իւրաքանչիւր օր պէտք է երեք հաւաքոյթ ըլլար, երկուքը՝ առաւօտեան եւ մէկը՝ երեկոյեան: Առաջին երկու ծառայութիւնները շատ զօրաւոր էին: Մինչդեռ ես անընդհատ դիմադրութիւն կը զգայի մթնոլորտին մէջ: Երկրորդ ծառայութենէն ետք ամբողջ կէսօրը անցուցի իմ սենեակին մէջ՝ կռուելով ծանրութեան եւ յուսալքութեան դէմ: Ես գիտէի, որ ատիկա վախցնող, վերահսկող հոգի մըն էր, սակայն այս անգամ ոչ մէկը ինծի հակառակ որեւէ բան ըսած էր: Բայց ես արդէն սորված էի, որ կը կռուիմ ոչ թէ մարմինի եւ արեան, այլ չար հոգիներու դէմ:

Հաւատացեալները կարիք ունին սորվելու, թէ ինչպէս ապրին հոգիին մէջ: Աստուծոյ Հոգիին քեզի կը յայտնէ, թէ ինչին դէմ ըլլաս:

Առանց թշնամիին զինաթափելու մենք մեր ուշադրութիւնը կը կեդրոնացնենք կողմնակի ազդեցութիւններու վրայ: Երբ ես չէի հասկնար, թէ ինչի հետ գործ ունիմ, ինծի համար հետաքրքրական էր գիտնալ, թէ ինչն էր կռուիմ ընկճութեան դէմ, արդեօք կ'ընդունին ինծի, ինչն է հեռու եմ իմ կնոջմէն ու երեխաներէն,

վրիպամ՝ եմ իմ կոչման մէջ, ժամանակը չէ՛ արդեօք վերջ տալու ճամբորդութիւններուն... Եթէ ես շարունակէի մտքերու այս շարանը, պիտանի չէի ըլլար ծառայութեան համար, իսկ վախցնող, վերահսկող հոգին ալ ճիշդ ատիկա կ'ուզէր: Ես կեդրոնացած էի իմ վրայ եւ ոչ թէ այն բանին վրայ, որ Աստուած ունէր այդ մարդոց համար:

Կէսօրն անցաւ պայքարի մէջ: Երբ ինծի կանչեցին երեկոյեան ծառայութեան, իմ թարգմանիչին ըսի, որ ողջ կէսօրին պայքարի մէջ էի երկչոտութեան հետ: Ան աղաղակեց. «Ես նոյնպէս»: Մենք յայտնաբերեցինք, որ պայքարած ենք միեւնոյն ախտանիշին դէմ: Այդ երեկոյ ես քարոզեցի երկչոտութեան հոգիին դէմ, եւ շատերն ազատագրուեցան:

Յաջորդ առաւօտ, երբ ես մօտեցայ ամպիոնին, զգացի, որ օծութիւն չկար: Կը թուէր, թէ Աստուած լուռ էր: Քանի մը վայրկեան կեցած էի բեմահարթակին վրայ, կը սպասէի Տիրոջ խօսքին: Ես աղօթեցի եւ ժողովուրդին ալ մղեցի աղօթելու, բայց տակաւին ոչ մէկ առաջնորդութիւն, օծութիւն կամ ըսելիք կար, որպէսզի որեւէ բան ընէի: Իմ սրտի խորքին մէջ ես գիտէի, որ պայքարի մէջ եմ: Ես կը հասկնայի, որ այս յարձակումն իմ դէմ ուղղուած էր: Գիտէի, որ պէտք է քանդեմ այն խօսքերը, որոնք խօսուած էին իմ դէմ: Աստուծոյ խօսքը կ'ըսէ.

*«Բոլոր քեզի դէմ շինուած գործիքը պիտի ջաջողի, եւ ամէն լեզու, որ վեր կ'ելլէ քու դէմ դատաստանի, պիտի դատապարտուի. ասիկա է Տիրոջ ծառաներու ժառանգութիւնը, անոնց արդարութիւնը Ինձմէ է, կ'ըսէ Տէրը» (Եսայիա 54.17):*

Ես սկսայ կոտրել վախը: Հրամայեցի, որ իմ դէմ ըսուած ամէն խօսք դատապարտուի: Ինծի չէր հետաքրքրեր, թէ մարդիկ ինչ կը մտածէին: Ես սորված էի լսել իմ սրտին, ուր Հոգին կը խօսէր:

Տիրոջ խօսքը հրազէնի կրակոցի պէս եկաւ ինծի: Աստուած ինծի ճշգրտօրէն ըսաւ, թէ ժողովուրդը ինչ պէտք է ընէր:

### *Երկչորության հոգին*

Աստուծոյ զօրութիւնն իջաւ երկու կամ երեք վայրկեանի մէջ: Մարդիկ այնքան լեցուեցան Սուրբ Հոգիով, որ սկսան անզուսպ ձեւով ծիծաղիլ: Աստուծոյ Հոգիի շարժն այնքան զօրաւոր էր, որ ես նոյնիսկ չէի կրնար քարոզել: Մարդոց ձայները չէին դադարէր մինչեւ կէսօրուան ժամը երեքը: Հզօր ճեղքում տեղի կ'ունենար, եւ իմ սիրտը կ'ուրախանար: Եթէ ես չհակառակէի այդ հոգիին, այս ամէնը տեղի չէր ունենար:

Յետոյ թարգմանիչէն գիտցայ, որ հաւաքոյթներուն ժամանակ ծառայող կին մը, որ դուրս ելած էր ծառայութենէն, մօտեցած էր ծառայութեան աւագին եւ ըսած. «Մարդիկ ինչո՞ւ պէտք է լսեն միայն ճոն Պիվիրին, որ կը քարոզէ հոս կատարուող բոլոր ծառայութիւններուն: Մենք ունինք նաեւ ուրիշ ծառայողներու քարոզի կարիքը»: Այդ կինն ինքը կը ցանկար ծառայել:

Ուրիշ անսովոր վկայութիւններ ալ լսեցի այս կնոջ մասին: Ծառայութիւններու ժամանակ ան ոչ Աստուածաշնչեան սկզբունքներով «ազատագրման» փորձ ըրած էր: Օրինակ՝ օգտագործած էր աչքի կաթիլներ եւ հիւանդ մարդու մաշկը շփած էր գինիով: Անոր երբեք չէին կեցուցած: Փաստօրէն աւագը, որոշակի սահմանափակումներով, այդ կնոջ թոյլ տուած էր ծառայել:

Յաւալի է ըսել, բայց աւագները յաճախ աւելի շատ կը նախընտրեն փոխզիջման երթալը, քան հակառակիլը, որովհետեւ կը կարծեն, թէ փոխզիջման երթալը աւելի դիւրին է: Բայց փոխզիջման երթալը երբեք ալ դիւրին չէ, յաճախ այն սուղ կ'արժէ:

Հաւաքոյթներէն ետք ես խօսեցայ այդ աւագին հետ եւ հարցուցի, թէ արդե՞ծք ճիշդ են այդ կնոջ մասին վկայութիւնները: Ան ըսաւ, որ ճիշդ են: Աւագին հետ բաժնեկցեցայ ինծի մտահոգող այն հարցին մասին, որ այդ կինը անոնցմէ բացատրութիւն պահանջած էր իմ քարոզելու վերաբերեալ, երբ արդէն կար աւագի՝ Աստուծոյ խօսքը քարոզելու որոշումը:

Ես ըսի աւագին, որ հաւանաբար այդ կինը կ'ուզէր վերահսկել իրեն (կինը ոչ աւագ էր եւ ոչ ալ եկեղեցւոյ անդամ):

Ինչհու թոյլ տուած ես այդ կնոջը, որ ծառայէ:

Ճո՛ն, ես ըսած եմ անոր, որ չկիրառէ իր փորձերը:

Դուն կրնաս կեցնել անոր, որպէսզի ոչ Աստուածաշնչեան մեթոսներ չկիրառէ, բայց աստոնց ետելը եղող հոգին տակաւին եկեղեցոյ մէջ է: Կնոջ սրտի դիրքը չէ փոխուած: Որպէս աւագ՝ դուն կ'ուզէիր խաղաղութիւն պահպանել եւ, հետեւաբար, դուն վերահսկող, վախցնող հոգի ունեցող անձնաւորութիւն մը դրած էիր ծառայութեան եւ իշխանութեան դիրքին վրայ: Ատիկա երկչոտութեան հոգիին օրինական իրաւունք տուաւ իմ դէմ կռուելու ու նաեւ ոեւէ մէկուն, որ համաձայն չէր ըլլար անոր ուզածին հետ:

Որպէսզի օգնեմ աւագին տեսնելու, թէ ինչ տեղի կ'ունենար, անոր հետ բաժնեկցեցայ իմ կեանքէն դէպքի մը մասին:

Ես որպէս հովի կը ծառայէի քոլեճի մէջ: Մենք գիշեր մը ունեցանք փառաբանութեան եւ երկրպագութեան զօրաւոր ծառայութիւն: Արցունքները կը հոսէին շատ երիտասարդներու աջքերէն: Աստուծոյ խաղաղութիւնն ու ներկայութիւնը լեցուցած էր սենեակը: Մենք երկրպագութեան մէջ էինք գրեթէ քառասուն վայրկեան: Այդ պահուն բոլորը լուռ էին, բացի քանի մը հոգիէ, որոնք ցած ձայնով կու լային:

Յանկարծ երիտասարդ մարդ մը, որուն նախկինին երբեք չէի տեսած, խօսեցաւ անձանօթ լեզուով: Ատկէ ետք խանգարող, արտասովոր զգացողութիւնով մը լեցուցաւ սենեակի մթնոլորտը: Յետոյ անոր կողքի երիտասարդ կինը, որուն ես նոյնպէս երբեք չէի տեսած, առջեւ եկաւ տարօրինակ մեկնաբանութեամբ մը:

Ես զգաստացայ եւ ոչինչ ըսի, քանի որ վայելած էի Տիրոջ ներկայութիւնը մեր փառաբանութեան եւ երկրպագութեան ժամանակ:

Երբ կինը վերջացուց, մթնոլորտն արդէն փոխուած էր: Չկար Տիրոջ ներկայութիւնը: Ես նկատեցի, որ արդէն ուշ էր որեւէ բան ըսելու համար, վստան արդէն հասցուած էր: Յետոյ ես բոլորէն խնդրեցի նստիլ, կարճ յայտարարութիւններ ըրի եւ հաւաքեցի

## *Երկչորութեան հոգին*

զոհաբերութիւնը: Ատկէ յետոյ սկսայ քարոզել:

Երբ կը քարոզէի, կը մտածէի. «Ո՛ր է կեանքը: Ո՛ր կ'երթամ: Ինչո՞ւ ատիկա ըսի»: Ոչ մէկ օծութիւն կար քարոզելու համար, եւ ես կը զգայի, որ ինչ որ բան մը կը կռուի հետս: Չէի հասկնար, թէ ինչու Աստուծոյ պարգեւը կը հանգի, ատոր համար ալ բոլորէն խնդրեցի աղօթել: Տէրը խօսեցաւ. «Ես կ'ուզեմ, որ դուն դէմ կենաս այդ տղամարդուն ու կնոջը»:

Ես մտածեցի, որ արդէն անցած է քսան վայրկեան, ես չեմ կրնար ատիկա ընել: Այդպիսով ես մէկ կողմ դրի այն, ինչ որ Աստուած ըսած էր, եւ մտածեցի, որ քիչ մը երկար կ'աղօթեմ: Մենք շարունակեցինք աղօթել եւ նորէն հոգեւոր դիմադրութեան հանդիպեցանք:

Անցաւ եւս քանի մը վայրկեան: Յուսահատած ըսի. «Աստուած իմ, ինչ կը կատարուի»:

Իմ հոգիին մէջ նորէն լսեցի Աստուծոյ ձայնը. «Ես կ'ուզեմ, որ դուն դէմ կենաս անոնց»:

Հիմա ատիկա ւելի երկար տեւեց: Իմ ներսէն ես կ'ըսէի՝ ոչ պարագային: Մարդիկ սկսան մտածել, որ ես տարօրինակ եմ: Մենք եւս տասը վայրկեան աղօթեցինք, եւ ոչ մէկ փոփոխութիւն եղաւ: Ես յուսահատած ամարտեցի ծառայութիւնը:

Այդ գիշեր տուն գացի ճնշուած սրտով: Ես նոյնիսկ չէի ուզեր Աստուծոյ հարցնել տեղի ունեցածին մասին: Ուղղակի անկողին մտայ: Յաջորդ առաւօտ արթնցայ ւելի ծանրացած հոգիով: Դուրս ելայ աղօթելու:

Ես հարցուցի. «Աստուած իմ, ինչ տեղի ունեցաւ անցեալ երեկոյ»:

Ան պատասխանեց. «Ճո՛ն, Ես քեզի ըսի, որ դէմ կենաս այդ մարդուն եւ կնոջը»: Ան շարունակեց. «Եթէ Ես քեզ դրած եմ աւագութեան դիրքի մէջ, դուն պատասխանատու ես ծառայութեան մէջ կարգուկանոնն ու իշխանութիւնը պահպանելու համար: Ես ատիկա չեմ ըներ, որովհետեւ ատիկա քեզի վստահած եմ: Երբ Ես

Ադամին պարտեզին մէջ դրի, ըսի անոր, որ պահպանէր այն: Երբ սատանան եկաւ կործանելու, չնայած որ Ես գիտէի այն դաժան հետեանքին մասին, որ պիտի ըլլար ոչ միայն Ադամին, այլեւ ողջ մարդկային ցեղին համար, Ես չիջայ եւ անոր ձեռքին չզարկի՝ պտուղը վերցնելու համար: Ես չեմ վերցնէր այն, ինչ որ կու տամ. Ես անոր տուած էի այդ պատասխանատուութիւնը: Այդ կիներ ու տղամարդը, որոնց համար ըսի, որ դէմ կենաս, ունէին ապստամբ հոգի: Երբ դուն դէմ չկեցար անոնց, այդ հոգին ծառայութիւնը դեկավարելու իրաւունք ստացաւ: Երբ ատիկա տեղի ունեցաւ, Իմ Հոգին հեռացաւ, որովհետեւ դուն յանձնեցիր քու իշխանութիւնը»:

Ես անմիջապէս ապաշխարեցի՝ որոշելով, որ երբեք առիթ պիտի չտամ, որ ատիկա նորէն տեղի ունենայ:

Այն բանէն ետք, երբ այս պատմութիւնը պատմեցի հովիւին, ան հասկցաւ, թէ ինչու պէտք է դէմ կենար ապստամբ ծառայողին: Անոր դէմքը պայծառացաւ, երբ Աստուծոյ իմաստութեան լոյսը մտաւ անոր սրտին մէջ: Ես քաջալերեցի անոր. «Որպէս այս ժողովուրդի հովիւ՝ դուն ոչ միայն կանչուած ես անոնց կերակրելու, այլ նաեւ անոնց պաշտպանելու: Պաշտպանել կը նշանակէ դիմադրել»:

Ես հարցուցի անոր. «Դուն եղամ՞ ես այնպիսի իրավիճակներու մէջ, երբ մարդիկ քեզմէ ինչ որ բան մը խնդրած են, եւ քու սրտին մէջ իմացած ես, որ պէտք է «ոչ» ըսես, բայց խաղաղութիւնը պահպանելու համար ըսած ես՝ այո»:

Ան պատասխանեց. «Այո՛, ճո՛ն, ես այդպէս ըրած եմ»: Յետոյ ան պահ մը խորհեցաւ եւ մտածկոտ հայեացքով նայեցաւ ինծի. «Ատիկա կեղծաւորութիւն է, այնպէս չէ՛»:

Ես համաձայնեցայ. «Դուն ճիշդ ըսիր, իսկ կեղծաւորութիւնն ու փոխզիջումը կը ծնին երկչոտութենէն»:

Ան ապաշխարեց երկչոտութեան հոգի ունենալու համար եւ անմիջապէս հեռացաւ, որպէսզի լուծէր խնդիրները անոնց հետ, որոնք վախցուցած են իրեն: Յաջորդ անգամ, երբ տեսայ անոր,



### Երկչոտութեան հոգին

դէմքին ժպիտ մը կար: Ան իր ուրախութիւնը բացատրեց՝ ըսելով.  
«Ես ազանտ եմ»:

Հասկցիր, որ ոչ լիարժէք պայքարի այս օրինակները կը ներկայացնեն քանի մը ծայրայեղ իրավիճակներ: Ես քարոզած եմ գրեթէ հարիւրաւոր ծառայութիւններու ժամանակ, որոնց ժամանակ ոչ մէկ դիմադրութիւն եղած է, եղած է հզօր ազատութիւն: Ազատութիւնը բնական է, դիմադրութիւնը՝ բացառութիւն: Բայց ես կը զգամ, որ այս քանի մը օրինակները մանրակրկիտ ներկայացնելը ձեր օգուտին համար է:

Չնայած որ այս օրինակները կապ ունին ծառայութեան հետ, բայց սկզբունքները կիրառելի են կեանքի ցանկացած բնագաւառի մէջ: Երկչոտութիւնը հոգի է եւ պիտի գործէ ըստ իրավիճակի: Եթէ փորձենք հոգեւոր պատերազմի մէջ կռուիլ մարմնաւոր զէնքերով, վէրքեր կը ստանանք ու կը տապալինք:

*«Որովհետեւ թէեւ մարմինով կը վարուինք, բայց մարմնաւորապէս զինուորութիւն չենք ըներ: Որովհետեւ մեր զինուորութեան զէնքերը մարմնաւոր չեն, այլ Աստուծով զօրաւոր՝ բերդեր քանդելու, խորհուրդներ կը քանդենք, եւ ամէն բարձրութիւն, որ կը գոռոզանայ Աստուծոյ գիտութեան դէմ, եւ գերի կը բռնենք ամէն միտք՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար» (Բ. Կորնթ. 10.3-5):*

Վախի միջոցով թշնամին կը յարձակի մեր շունչին վրայ: Այն չի հեռանար հոգեբանութեան եւ դրական մտքերու միջոցով: Երկչոտութեան դէմ մեր զէնքը Հոգիի սուրն է՝ Աստուծոյ Խօսքին վրայ հաստատ կենալը (Եփես. 6.17): Յաջորդ գլուխին մէջ մենք պիտի խօսինք այն մասին, որ երբ հակառակինք երկչոտութեանը, մեր ներսը կ'արթնցնենք Աստուծոյ պարգեւը:



ԿՈՏՐԵԼ  
ԵՐԿՉՈՏՈՒԹԻՒՆԸ

**«Տէրն է իմ օգնականը, ես չեմ վախնար,  
ինչ կրնայ ընել ինձի մարդը»:**

## ԲՈՐԲՈՔԷ ՊԱՐԳԵԻԸ

**Ե**րկչոտության նպատակն է մեզ դարձնել այնպիսին, որ յանձնենք իշխանությունը՝ մեր պարգեները դարձնելով չգործող: Ատկէ յետոյ մենք կը գործենք մեր սահմանափակ ուժով եւ կարողութեամբ: Ասիկա սովորաբար յարձակողէն մեր դիրքը կը փոխէ պաշտպանուողի: Այնուհետեւ գիտակցելով, որ անպաշտպան ենք՝ մենք ապաստան կը գտնենք հոն, ուր յարմարաւէտ է եւ ապահով:

### Արթնցնոր պարգելը

Այսպիսով, եթէ երկչոտութիւնը կը քնացնէ պարգելը, ապա ինչը կ'արթնցնէ այն:

**Համարձակութիւնը:** Երկչոտութիւնը պատճառ կը դառնայ, որ անձը նահանջէ, մինչդեռ համարձակութիւնը միշտ կը մղէ առաջ, նոյնիսկ դիմադրութեան ժամանակ: Ինչպէ՛ս կրնայ երկչոտ մարդն ըմբռնել համարձակութիւնը:

*«Որովհետև Աստուած չտուաւ մեզի երկչտրութեան հոգի, այլ զօրութեան, սիրոյ եւ զգաստրութեան»  
(Բ. Տիմոթ. 1.7):*

Համարձակութիւնը կու գայ առողջ մտքի, սիրոյ եւ զօրութեան շնորհիւ: Համարձակութիւնը ինքն իրմով արժանիք չէ: Մենք բոլորս ալ կը ճանչնանք մարդոց, որոնք անպատկառ ու համարձակ եղած են: Ճշմարիտ համարձակութիւնը կու գայ Աստուծմէ եւ կը գործէ Աստուծային առաքինութեամբ: Համարձակութիւնը, որը կը գործէ Աստուծոյ բնատրութեամբ, մեր կեանքին մէջ կ'արթնցնէ պարգեւները:

Որոշ մարդիկ իրենց համարձակութեան ետեւը չունին առաքինութիւն: Անոնք գիտեն ճիշդ բաներ խօսիլ եւ գործել վստահութեամբ, երբ չեն հանդիպիր դիմադրութեան կամ ալ երբ դիմադրութիւն ընդհանրապէս չկայ: Բայց անոնց համարձակութիւնը երկար չի մնար, այն մակերեսային է: Այդպիսի մարդոց համարձակ դէմքին գոռոզութեան կամ տգիտութեան դիմակ կայ: Անոնց արմատները խորունկ չեն, եւ, վերջիվերջոյ, զօրաւոր փոթորիկ մը կը տապալէ անոնց: Երբ եղանակը պարզ է, դուն չես կրնար նկատել, թէ որքան խորունկ է ծառին արմատը, բայց ծախորդութեան քամիներու պարագային ծառը կամ արմատախիլ կ'ըլլայ, կամ ալ կ'ապացուցէ իր կանգուն ըլլալը:

## **Ո՞վ անելի ուժեղ է**

Դաւիթը կ'ըսէր. «Տէրն է իմ կեանքի զօրութիւնը, ես զոնք պիտի սարսափիմ» (Սաղմ. 27.1): Ան հռչակեց Տիրոջը իր ուժի եւ զօրութեան աղբիւր: Գիտնալով, որ գոյութիւն չունի Աստուծմէ հզօր մէկը, Դաւիթն առանց վախի կրնար յայտարարել՝ ես ոչ մէկէն կը վախնամ:

Ան ոչ միայն համարձակօրէն կը յայտարարէր իր վստահութեան մասին, այլեւ կ'ապրէր այդ վստահութեամբ: Դաւիթը գիտէր

## *Բորբոքէ պարգելը*

Աստուծոյ զօրութիւնը, որովհետեւ ան կը ճանչնար Աստուծոյ: Համարձակութիւնը Դաւիթին կարողութիւն կու տար տնօրինելու իր ճակատագիրը եւ կառավարելու արդար ձեւով: Եկնոր նայինք Դաւիթի երիտասարդ տարիներուն:

Դաւիթը Յեսսէի ութերորդ որդին էր: Անոր երեք ասագ եղբայրները կը ծառայէին Սաուլը թագաւորի բանակին մէջ: Փղշտացիները հաւաքած էին իրենց բանակը Իսրայէլին դէմ: Ամէն օր անոնց հերոս Գողիաթը մարտահրաւէր կը նետէր իսրայէլցի զինուորներուն. «Ձեր մէջէն մարդ ընտրեցէք, որ իջնէ քովս: Եթէ ան կարենայ հետս մենամարտիլ եւ ինձի մեռցնել, այն ժամանակ մենք ձեր ծառաները ըլլանք, բայց եթէ ես յաղթեմ եւ անոր մեռցնեմ, այն ժամանակ դուք մեր ծառաները կ'ըլլաք եւ մեզի կը ծառայէք» (Ա. Թագ. 17.8,9):

Ըստ կարգի՝ իսրայէլցիները պէտք էր պատերազմի ընտրութիւն ընէին, բայց Գողիաթը սովորական զինուոր չէր: Ըստ որոշ հաշուարկներու՝ ան ունէր տասնմէկ ու կէս ոտնաչափ հասակ (մօտ 3,5 մէթր): Պատկերացնելու համար վերցնենք պասքէթպոլի զամբիւղը: Գողիաթի զլուխը մօտ յիսուն սանթիմետրով բարձր էր այդ զամբիւղէն: Ան ոչ միայն հսկայ էր, այլեւ փորձառու պատերազմող: Գողիաթի նիզակին միայն տէգը կը կշռէր մօտ եօթը քիլոկրամ: Անոր սաղաւարտը պրոնզէ էր, զրահապատուած եւ կը կշռէր շուրջ յիսունեօթ քիլոկրամ: Գողիաթի զրահը, նիզակը եւ վահանը միասին շուրջ հարիւր քիլոկրամ էր (հաւանաբար Դաւիթի մարմինի կշիռքէն շատ ատէլին): Անկասկած ան շատ սարսափազդու էր: Աստուածաշունչը կ'ըսէ. «Եւ երբ որ Սաուլն ու բոլոր Իսրայէլը լսեցին փղշտացիին այս խօսքերը, զարհուրեցան եւ շատ վախցան» (Ա. Թագ. 17.11):

Դաւիթին, որ ոչխարներ կ'արածեցնէր, հայրն ուղարկած էր երեք ասագ եղբայրներուն համար սնունդ տանելու եւ տեսնելու, թէ ինչպէս են անոնք: Սնունդը պահապանին տալէն ետք Դաւիթը վազեց հանդիպելու եղբայրներուն: Շուտով՝ քառասուներորդ օրը, հերոս Գողիաթը դուրս ելաւ իսրայէլցիներուն ծաղրելու:

Դաւիթը ապշած էր տեսածէն: Ան զարմացած էր ոչ թէ Գողիաթին ըրածէն, այլ իր եղբայրներու եւ համաերկրացիներու պահուածքէն. «Եւ Իսրայէլի բոլոր մարդիկ, երբ որ այն մարդուն տեսան, անոր երեսէն փախան եւ շատ վախցան» (Ա. Թագ. 17.24): Դաւիթին կը հետաքրքրէր. «Անոնք մոռցած են, թէ Ով մեր կողմն է: Ան մեզի մարտահրաւէր չի նետեր: Ան Աստուծոյն մարտահրաւէր կը նետէ»:

Այնպէս որ Դաւիթը համարձակօրէն հարցուց. «Այս անթլպատ փղշտացին ո՞վ է, որ կենդանի Աստուծոյ զօրքերուն նախատէ» (Ա. Թագ. 17.26): Օղը լեցուած էր հակամարտութեամբ: Անոր աւագ եղբայրներն իրենց մերկ զգացին, երբ Դաւիթը բացայայտեց անոնց երկչոտութիւնը: Անոնք չէին ուզեր լսել իրենց փոքր եղբոր յայտարարութիւնը, ատիկա կը բացայայտէր եղբայրներուն թուլութիւնը, որուն այդ ժամանակ անոնք չէին ուզեր դէմ առ դէմ հանդիպիլ:

Եղբայրները բարկացան Դաւիթին վրայ՝ մտածելով, որ եթէ յուսահատեցնեն անոր, ատորմով պիտի ծածկեն իրենց ամօթը: Աւագ եղբայրը, որ սարսափած էր Գողիաթէն, փորձեց վախցնել փոքր եղբորը.

*«Եւ անոր մեծ եղբայր Եղիաբը, երբ որ լսեց անոր խօսիլն այն մարդոց հետ, Դաւիթին վրայ բորբոքեցաւ եւ ըսաւ. «Դուն ինչո՞ւ իջար այստեղ, եւ այն քանի մը ոչխարները անապատին մէջ որոն՞ յանձնեցիր: Ես քու հպարտութիւնը եւ քու սրտի չարութիւնը գիտեմ: Անտարակոյս դուն իջած ես պատերազմը տեսնելու»» (Ա. Թագ. 17.28):*

Այդ պահուն Եղիաբը խիզախ էր, խիզախ էր բարկութեամբ: Ան յարձակեցաւ Դաւիթի բնաւորութեան վրայ, այլ ոչ թէ Իսրայէլին հանդիպած խնդիրին վրայ: Երբ անձը վախցած է, ան փախուստ կը փնտռէ, կը փնտռէ ազատիլ ճնշումէն:

Եթէ անձը թոյլ է, ան ներումներ կը շնորհէ, իսկ եթէ զօրաւոր է, յաճախ կը յարձակի անոնց վրայ, որոնք հակառակած են իրեն՝ մեղադրելով անոնց:



### *Բորբոքէ պարգելը*

Ուշադիր եղիր, որ Եղիաբը Դաւիթին կը մեղադրէր մեծամտութեան եւ չարութեան մէջ: Քանի որ Եղիաբը միայն իր մասին կը մտածէր, ան կ'ենթադրէր, որ Դաւիթն ալ այդպիսին էր: Բայց Դաւիթն այդպիսին չէր: Ան Աստուծոյ սրտին համեմատ մարդ էր: Ան հպարտ չէր, այլ խոնարհ էր Տիրոջ առջեւ:

Այն մարդիկ, որոնք զօրաւոր անհատականութիւններ են, վախը կ'օգտագործեն սուտը ճշմարտութեան նման դարձնելու համար: Դուն պէտք է մնաս Հոգիի մէջ, որպէսզի յաղթես այդպիսի յարձակումներու ժամանակ:

Թերեւս Եղիաբը նախանձ էր: Սամուէլը Դաւիթին թագաւոր օժած էր, չնայած որ Եղիաբն էր աւագը: Կը թուէր, թէ ան ունէր հզօր առաջնորդի եւ պատերազմողի առանձնայատկութիւններ: Նոյնիսկ Սամուէլը, երբ տեսաւ Եղիաբին, մտածեց. «Իսկապէս Տիրոջ օժեալն է իմ առջեւ»: Բայց Աստուած օգտագործեց ասիկա Սամուէլին դաս տալու համար. «Բայց Տէրը Սամուէլին ըսաւ. «Անոր երեւոյթին եւ հասակի երկայնութեանը մի՛ նայիր, որովհետեւ անոր անարգեցի այն պատճառով, որ այն չէ բանը, որ կը տեսնէ մարդը, որովհետեւ մարդը կը տեսնէ աչքի առջեւը, բայց Տէրը սրտին կը նայի»» (Ա. Թագ. 16.7):

Այսպիսով, որոնք սիրտը հպարտ էր: Աստուած յայտնեց Սամուէլին, որ Ինքը պիտի չընտրէ Եղիաբին անոր հասակին ու երեւոյթին նայելով, ոչ ալ անոր կը մերժէ այս գործօններուն համար: Աստուած սիրտը կը քննէ: Երբ Աստուած սրտին մէջ հպարտութիւն կը գտնէ, կը հակառակի այդ անձին (Յակոբ. 4.6):

Աստուած մերժեց Եղիաբին, որովհետեւ ան հպարտ էր իր սրտին մէջ: Այնպէս որ Եղիաբին մէջ կար այն, ինչին մէջ, որ ան կը մեղադրէր Դաւիթին՝ հպարտութիւնը:

Սովորաբար երկչոտութիւնը կը մեղադրէ քեզ անգամ ամենաթոյլ բաներու մէջ, որոնց ետեւը ինքը կը ջանայ պահուիլ: Անոնք, որոնք արտաքինէն մաքուր կը գործեն, բայց ունին անմաքուր սիրտ, միշտ կը յարձակին սրտով մաքուրներուն վրայ: Յիշէ՛, որ մաքուր սիրտ ունեցող Տիմոթէոսը վախցած էր:

Ես վստահ եմ, որ Եփեսոսի եկեղեցւոյ մէջ կային տղամարդիկ եւ կանայք, որոնց սրտերը Եղիաբին պէս այլասերուած էին:

Յիսուսը յաճախ դէմ առ դէմ կը հանդիպէր երկչոտութեանը: Անմաքուր փարիսեցիներն ու դպիրները կը փորձէին յուսահատեցնել Անոր կամ բռնել Յիսուսին Իր խօսքերով: Եթէ անոնք կարենային վախցնել Յիսուսին, կրնային նաեւ վերահսկել Անոր: Այսպէս, անոնք կ'ըսէին, որ Յիսուսը դաւաճան էր, որկրամոլ, գինով եւ Իր մէջ դէռ ունեցող մեղաւոր: Ասոնք այն առանձնայատկութիւններն էին, որ անոնցմէ շատերն ունէին: Մերժելով անոնց վերահսկողութիւնը՝ Յիսուսը կը բացայայտէր անոնց սրտերը:

Ինչո՞ւ անմաքուր սիրտ ունեցողները կը ջանան վախցնել մաքուր սիրտ ունեցողներուն: Ատորմով անոնք կ'ուզեն իրենց ազատել դատապարտումէն եւ պահպանել վերահսկումը: Եթէ ատիկա անոնց կը յաջողի, ապա անոնք իրենց սրտերը չեն քններ ու չեն ապաշխարեր: Եղիաբը գիտէր, որ իր յուսահատեցնող եւ վախցնող յարձակումը իր եղբայր Դաւիթին պիտի ստիպէ հպատակելու իրեն եւ պիտի ազատի իր ճշումներէն:

Դաւիթն այն միակն էր, որուն դէմ կեցան: Ան յարձակման տակ էր, եւ անոր մեծ եղբայրը շատ անելի խոշորամարմին էր, քան ինքը: Յիշէ՛, մեծ եղբայրները կրնան անախորժութիւններ ստեղծել փոքրերուն համար: Եթէ Դաւիթը չընէր Եղիաբին ուզածը, յետոյ շատ դժուարութիւններ պիտի ունենար տունը: Անորմէ շատ ժամանակ կը պահանջուէր ճշմարտութիւնը պաշտպանելու համար: Արժէ՛ր արդեօք:

Ատիկա միակճշումը չէր Դաւիթին վրայ: Միւսներն կ'աջակցէին Եղիաբին: Անոնք երբեք չէին ցանկար, որ կարմրաթուշ երեխայի մը միջոցով բացայայտուէր իրենց վախը: Դաւիթին համար անելի դիրին պիտի ըլլար նահանջել եւ այլեւս չհետապնդել: Ասիկա ճիշդ այն էր, ինչ որ կը ցանկային Եղիաբն ու միւսները:

Դաւիթն ընտրեց Աստուծոյ կողմն անցնիլը՝ կոտրելով իր դէմ ուղղուած երկչոտութիւնը: Ան հարցուց Եղիաբին. «Վի՛մա ես ի՛նչ

### Բորբորէ պարգելը

ըրած եմ, իրաւունք չունիմ» (Ա. Թագ. 17.29): Իրականութեան մէջ ան կ'ըսէր. «Միթէ այն, ինչ որ ես ըսի, ճիշդ չէ: Ուր է ձեր խիզախութիւնը: Ես չեմ վախնար: Ակնյայտ է, որ այն պահէն, երբ բոլորդ վախցած էք քառասուն օր շարունակ, Աստուած պէտք է ինչ որ մէկուն գտնէր, որ չէր վախնար եւ որ կը կռուէր այս անթլպատ փղշտացիին դէմ: Ահա ասոր պատճառով է, որ ես հոս եմ»:

Յետոյ Դաւիթին տարին թագաւորին առջեւ: Սաւուղը, որ նոյնպէս վախցած էր Գողիաթէն, կը համոզէր Դաւիթին՝ ըսելով. «Դուն չես կրնար այն փղշտացիին վրայ երթալ եւ անոր հետ մարտնչիլ, որովհետեւ դուն երիտասարդ ես, բայց ան իր մանկութենէն ի վեր պատերազմի մարդ է» (Ա. Թագ. 17.33): Ասոնք մեղադրանքի խօսքեր չէին մեծ եղբօր յայտարարութեան համեմատ, այլ վախցած թագաւորի կողմէն եղած ոչ կարեւոր դիտողութիւն:

Դաւիթը թագաւորին այսպէս պատասխանեց.

*«Ծառադ իր հօր ոչխարները կ'արածեցնէր, եւ առիւծը կամ արջը կու գար եւ հօտերէն ոչխար կը տանէր: Ես անոր ետեւէն կ'երթայի, անոր կը զարնէի եւ անոր բերանէն կ'ազատէի: Եւ երբ ան ոտքի կը կենար իմ վրայ, մօրուքէն կը բռնէի, կը զարնէի եւ կը մեռցնէի: Ծառադ առիւծ ալ մեռցուցած է՝ արջ ալ, եւ այս անթլպատ փղշտացին ալ թող անոնցմէ մէկուն պէս ըլլայ, որովհետեւ կենդանի Աստուծոյ զօրքերուն նախապէս: Եւ Դաւիթն ըսաւ. «Եհովան, որ առիւծի եւ արջի ձեռքէն ինծի ազատեց, այս փղշտացիին ձեռքէն ալ կ'ազատէ»» (Ա. Թագ. 17.34-37):*

Իր եղբայրներուն եւ զինուորներուն հետ խօսելու ժամանակ Դաւիթը շատ համարձակ էր եւ դիմադրող: Այնուամենայնիւ, երբ ան կը խօսէր թագաւորին հետ, գիտէր, որ կը դիմէ մէկուն, որ իշխանութիւն ունէր իրեն վրայ:

Ան կ'աղերսէր թագաւորին այնպէս, ինչպէս որդին հօրը: Ան ներկայացուց իր փորձառութիւնը եւ կը վկայէր, որ Տէրն էր իր Ազատողը՝ հաւատալով, որ թագաւորը ճիշդ որոշում կը կայացնէ:

Այս որոշման պարտաւորութիւնն ու պատասխանատուութիւնը ինկած էր թագաւորին վրայ: Եթէ ճակատամարտին մէջ պարտուէին, ազգը կ'երթար ստրկութեան: Դաւիթը գիտէր, որ եթէ ինքը որոշէր կռուիլ, Աստուած կը փոխէր թագաւորին սիրտը: Շատ կարեւոր է, որ գործելու այս կարգին մէջ մենք գործենք անոնց հետ, որոնք իշխանութիւն ունին մեր վրայ: Դաւիթի խօսքէն ետք Սաուղը համաձայնեցաւ թոյլ տալ անոր կռուելու: Ան ըսաւ. «Գնա՛, եւ Տէրը քեզի հետ ըլլայ»:

Դաւիթը մերժեց Սաուղին տուած հանդերձները՝ զէնքն ու գրահը, որովհետեւ վարժուած չէր ատոնք կրելու, վերցուց իր ցուպն ու պարսաստիկը եւ գնաց դէպի վտակը՝ հինգ ողորկ քարեր վերցնելու: Երբ փղշտացին մօտեցաւ, Դաւիթը դէմ առ դէմ հանդիպեցաւ անոր յաղթական վախի ամենամեծ մարտահրաւերին: Եթէ Դաւիթը վախնար, ատիկա ոչ միայն պատճառ կը դառնար, որ Աստուծոյ պարգեւը հանգէր, այլեւ ան կը կորսնցնէր իր կեանքը եւ երկիրը ստրկութեան կը տանէր:

*«Եւ երբ փղշտացին նայեցաւ եւ Դաւիթին տեսաւ, արհամարհեց անոր, որովհետեւ ան կարմիր գոյնով եւ գեղեցկադէմ պատանի էր: Եւ փղշտացին ըսաւ Դաւիթին. «Մի՞թէ ես շուն եմ, որ իմ վրայ ցուպով կու գաս»: Եւ փղշտացին նզովեց Դաւիթին իր «աստրուածներով»: Եւ փղշտացին ըսաւ Դաւիթին. «Եկուր քովս, եւ ես քու մարմինը երկինքի թռչուններուն եւ դաշտի գազաններուն տամ»» (Ա. Թագ. 17.42-44):*

Գողիաթը կը փորձէր Դաւիթին վախցնել ոչ միայն իր չափերով, այլեւ իր խօսքերով: Դաւիթին անհծելէն ետք այս հսկան նկարագրեց ազդեցիկ պատկեր մը, թէ ինչ մտադրած էր ընել Դաւիթին հետ:

Շատ լաւ հասկնալով ասիկա՝ Դաւիթը երբեք չկասկածեցաւ իր ուժի եւ զօրութեան Աղբիւրին վրայ:

### Բորբոքէ պարգելը

«Եւ Դաւիթը ըսաւ Փղշտացիին. «Դուն սուրով, նիզակով եւ գեղարդով կու գաս իմ վրայ, բայց ես կու գամ քու վրայ Ջօրաց Տիրոջ՝ Իսրայէլի զօրքերու Աստուծոյ անունով, Որուն դուն նախաբեցիր: Այսօր Տէրը քեզի իմ ձեռքը կը մատնէ, ու ես քեզի կը մեղցնեմ եւ քու վրայէն գլուխդ կ'առնեմ եւ փղշտացիներու բանակի դիակներն այսօր երկինքի թռչուններուն եւ երկրի գազաններուն կու տամ, որպէսզի բոլոր երկիրը իմանայ, որ Իսրայէլը Աստուած ունի: Եւ այս բոլոր ժողովքը իմանան, որ Տէրը սուրով եւ նիզակով չ'ազատեր, որովհետեւ պատերազմը Տիրոջն է, եւ Ան ձեզի մեր ձեռքը կը մատնէ»» (Ա. Թագ. 17.45-47):

Դաւիթը համարձակօրէն հռչակեց Աստուծոյ հաւատարմութիւնը: Իսրայէլի մարդիկ միայն տեսած էին, թէ որքան մեծ էր այդ հսկան, բայց Դաւիթը կը տեսնէր, թէ որքան մեծ է Աստուած: Իսրայէլի մարդիկ տեսան, երբ Դաւիթը վազեց Աստուծոյ թշնամիին վրայ, ոչ միայն անոր համարձակ խօսիլը տեսան, այլեւ համարձակ գործելը:

«Եւ Դաւիթն իր ձեռքը իր մախաղին մէջ կոխեց եւ հոնկէ քար մը առաւ, պարսով շարտեց եւ փղշտացիին ճակատին զարկաւ, եւ քարը անոր ճակատին մէջ փորուեցաւ, եւ ան երեսին վրայ գետին ինկաւ» (Ա. Թագ. 17.49):

Դաւիթին համարձակութիւնը վարակիչ էր, եւ Իսրայէլի յոյսը վերականգնուեցաւ: Աստուած անոնց կողմն էր, մինչդեռ փղշտացիներն ունէին միայն մէկ մեռած հերոս: Իսրայէլցիները յարձակեցան եւ հետապնդեցին փղշտացիներուն՝ յաղթելով անոնց:

Այս պայքարի ընթացքին Դաւիթը երեք անգամ դէմ առ դէմ հանդիպեցաւ երկչոտութեանը: Առաջինը այն ժամանակ էր, երբ անոր եղբայրներն ու զինուոր ընկերները կը փորձէին ամէն ինչ ընել Դաւիթին ստորացնելու, զրպարտելու եւ յուսահատեցնելու համար: Եթէ ան մտնէր անոնց վախի իշխանութեան տակ,

ատորմով ետ պիտի կենար Աստուծմէ իր սրտի մէջ դրուածը իրականացնելէն: Դաւիթը կը շրջէր ու կ'երթար տուն, իսկ Աստուծոյ պարգեւը կը հանգէր: Հետեանքներն ուրիշ պիտի ըլլային: Հսկան չէր սպաննուեր Դաւիթին կողմէ: Գողիաթը կը շարունակէր ճնշել ազգին, իսկ Աստուած ալ կը փնտռէր մէկ ուրիշին՝ Իր գործն ընելու համար:

Երկրորդ անգամ Դաւիթը վախցաւ, երբ դէմ առ դէմ հանդիպեցաւ թագաւորին յուսահատեցնող եւ նսեմացնող յայտարարութիւններուն: Եթէ Դաւիթը նահանջէր, ապա Աստուծոյ պարգեւը քնացած կը մնար, բայց ան մերժեց նոյնիսկ թագաւորէն վախնալը: Դաւիթը պահեց իր յարգանքը ազգի առաջնորդին նկատմամբ, բայց կրցաւ համոզել թագաւորին, որ թոյլ տայ իրեն կռուելու:

Երրորդ անգամ, երբ Դաւիթը դէմ առ դէմ հանդիպեցաւ փղշտացի հսկային, անոր մէջ կրկին վախ յառաջացաւ: Ոչ միայն անոր հասակն անյաղթահարելի էր, այլեւ այս մարդը շատ համարձակ էր: Գողիաթը կը փորձէր այնպէս ընել, որ Դաւիթը իրեն զգար փոքրիկ կենդանիէ մըն ալ թոյլ ու աննշան: Եթէ Դաւիթը մնար անոր վախի ազդեցութեան տակ, Աստուծոյ պագեւը դարձեալ քնացած պիտի մնար, եւ Դաւիթը պիտի կորսնցնէր կեանքը:

Դաւիթն այնքան համարձակ էր Աստուծոյ զօրութեամբ, որ ընդունակ եղաւ իր կեանքը վտանգի ենթարկել: Անոր մէջ այս համարձակութիւնն արթնցուց Աստուծոյ պարգեւը, եւ Դաւիթը յաղթեց հսկային, որ քառասուն օր շարունակ կը վախցնէր ու կը ճնշէր ողջ քանակին:

## **Նոր ուխտի զօրութիւնը**

Պօղոսը Կորնթոսի եկեղեցիին ուղղած իր նամակին մէջ համեմատութիւն կ'ընէր մահուան ծառայութեան փառքի (Հին ուխտի) եւ Հոգիի ծառայութեան փառքի (Նոր ուխտի, Բ. Կորնթ. 3.7,8) միջեւ: Պօղոսը կ'ըսէր, որ եթէ Հին ուխտն այնքան փառաւոր էր, որ Իսրայէլի որդիները չէին կրնար մշտապէս

*Բորբոքէ պարգեւը*

նայիլ Մովսէսի դէմքին, ուրեմն որքան անելի զօրաւոր է Նոր եւ կեանք տուող ուխտի ծառայութիւնը:

Պօղոսն այս «նորը» կը նկարագրէր այսպէս. «Բայց այս անձն ունինք հողի անօթներուն մէջ, որ զօրութեան գերազանցութիւնը Աստուծոյնը ըլլայ եւ ոչ թէ մեզմէ» (Բ. Կորնթ. 4.7): Ահա մարդ մը, որ գիտէ իր Աստուծոյն եւ կը գիտակցի, որ այդ ուժն ու զօրութիւնը իրմէ չէ:

Պօղոսը կը շարունակէ.

*«Որովհետեւ, եթէ այն խափանուողը փառքով էր, որքան անելի փառքով է հասարակ մնացողը: Արդ, այսպիսի յոյս ունենալով՝ շատ համարձակութեամբ կը վարուինք» (Բ. Կորնթ. 3.11,12):*

Զօրութիւնը համարձակութիւն կը ծնի: Դուն մեծ համարձակութիւն կը գտնես այն հաւատացեալներուն մէջ, որոնք չեն վստահիր իրենց սեփական ուժին: Անոնք չեն վախնար հանգամանքէն, մարդէն կամ սատանայէն, քանի որ Աստուած իրենց հետ է: Ասիկա մեր խոստումն է Եբրայեցիս 13.5,6-ին մէջ.

*«Որովհետեւ ինքն ըսաւ, թէ չեմ ձգեր քեզ եւ երեսէ չեմ ձգեր: Այնպէս որ համարձակ ենք ըսելու՝ Տէրն է իմ օգնականը, եւ ես չեմ վախնար, ինչ պիտի ընէ ինձի մարդը»:*

Մենք կարիք ունինք համարձակօրէն յայտարարելու՝ *ինչ կրնայ ընել ինձի մարդը:*

Այս նոյն համարձակութիւնը կայ իւրաքանչիւր հաւատացեալի մէջ: Ինչո՞ւ մենք կը կոչուինք հաւատացեալներ, եթէ չենք հաւատար: Իսկ ինչի՞ն հաւատալ: Հաւատա՞ Աստուծոյն: Ո՛չ մարդը, ոչ ալ սատանան իրաւունք ունին վախցնելու ճշմարիտ հաւատացեալին: Ինչո՞ւ: Յիսուսին պատճառով: Ո՛չ մէկ անուն բարձր է, ոչ մէկ զօրութիւն մեծ է: Իր հետեւեալ խօսքերուն մէջ Յիսուսը կ'ըսէ. «Ահա՛ իշխանութիւնը տուի ձեզի՛ կոխելու օճերու

եւ կարիճներու վրայ, եւ թշնամիի բոլոր զօրութեան վրայ, եւ ձեզի ոչինչ կը վնասէ» (Ղուկ. 10.19):

Միթէ աւելի պարզ չէ: Յիսուս Իր ժողովուրդին զօրութիւն տուած է բոլոր այն բաներուն վրայ, որ թշնամին ունի: Երկչոտութիւնն ալ թշնամի է: Այն կը խաբէ քեզ եւ կ'ըսէ. «Ես աւելի իշխանութիւն կամ զօրութիւն ունիմ, քան դուն: Աւելի լաւ է, որ դուն նահանջես եւ ընես այն, ինչ որ ես կ'ըսեմ, իսկ եթէ ոչ՝ հետեանքները վատ կ'ըլլան»:

Եթէ մենք հաւատանք այս վախցնող սուտերուն, Աստուծոյ պարգեւը կը մարի, եւ մենք կ'ապրինք ճնշուած վիճակի մէջ: Բայց երբ մենք կը ճանչնանք այն Մէկուն, Որ խոստացած է հաւատարիմ ըլլալ, կը յենինք այն զօրութեան վրայ, որ բարձր է բոլոր զօրութիւններէն եւ Դաւիթին պէս մեծ համարձակութեամբ դուրս կու գանք մեր վախի հսկային դէմ:

*Միթէ քու հաւատքն այնքան բարդ է, որ չես կրնար հաւատալ*

Այս ճշմարտութիւնները հասկնալը դժուար չէ: Փաստօրէն ատոնք պարզ են: ճշմարիտ Աւետարանը բարդ եւ խճճուած չէ: Մարդիկ իրենց նպատակին չեն հասնիր անհաւատութեան պատճառով:

Այս հարցումը դուն քեզի հարցուր եւ պատասխանէ անկեղծօրէն. «Արդե՞ք քու վստահութիւնը հիմնուած է Աստուծոյ ըսածին վրայ, թէ՛ քու տեսածին եւ փորձառութեան վրայ»: Եթէ դուն ամէն ինչ կը չափես քու անցեալին մէջ կատարուածով, ապա ատկէ աւելի դուն երբեք չես աճիր:

Դուն կը հիմնեմ քու հաւատքն այն բաներուն վրայ, ինչ որ ուրիշներու կեանքին մէջ կատարուած կը տեսնես: Արդե՞ք քու վստահութեան մակարդակը կը չափուի ուրիշներուն հաւատարմութեամբ:

Եթէ դուն «այո» կը պատասխանես այս հարցումներուն, ուրեմն աւելի խորունկ քննէ սիրտդ: Բարդացուցած ես ամէն ինչ՝ փորձելով



## Բորբոքէ պարգելը

բացատրել քու կամ ուրիշներու անցեալի ծախողումները: Բարդ հաւատքը չի սպաններ հսկաներուն: Այն մեզ կը բանտարկէ «հրաշքներու» երկրի մէջ, ուր մենք կը փորձենք հասկնալ, թէ ինչը չենք կրնար փոխել եւ կը տատանինք քայլ առնելու հարցին մէջ:

Ինչո՞ւ մենք՝ հաւատացեալներս, չենք կրնար ուղղակի հաւատալ: Ինչո՞ւ թոյլ կու տանք, որ մեր կասկածները բարդացնեն Աւետարանը:

Կ'ուզեմ քեզի դէպք մը պատմել, որ երբեք չեմ մոռնար: 1980-ական թուականն էր: Ես ուսանող էի եւ կ'ապրէի Հիւսիսային Քարոլինայի մէջ: Օր մը ես արթնցայ առաւօտեան ժամը չորսին իմ սեփական ծայնէն, իմ ծայնը կը պոռար. «Ես ուղղակի կը փնտռեմ ինչ որ մէկուն, որ կը հաւատայ»:

Ատիկա ցնցեց ինձի: Անկողինս քրտինքէն թրջուած էր: Ես հասկցայ, որ Աստուած խօսած էր հետս անսովոր եւ գերբնական ձեւով մը: Այդ պահուն կը մտածէի. «Որքան պարզորոշ կը լսուէր Աստուծոյ ձայնը: Ինչո՞ւ Ան ինձի ինչ որ խորհմաստ բան մը չըսաւ: Անշուշտ ես գիտեմ, որ Ան կարիք ունի հաւատացող մարդոց»:

Յաջորդ առաւօտ այդ բառերը կը պտըտէին իմ գլխուն մէջ: Ժամանակ առ ժամանակ ականջիս կը հասնէր նոյն շշուկը. «Ես ուղղակի կը փնտռեմ մէկու մը, որ կը հաւատայ: Ես ուղղակի կը փնտռեմ ինչ որ մէկու մը, որ կը հաւատայ»: Երբ ես նորէն ու նորէն լսեցի, հասկցայ, որ Ան ինչ որ աննշան բան ցոյց չէր տուած ինձի, այլ Աստուծոյ հետ քալելու միակ բանալին:

Ուշադրութեամբ ուսումնասիրեցի Աւետարանները: Յիսուսը միայն կը վշտանար ու կը վհատէր մարդոց անհաւատութենէն: Երբ աշակերտները չկրցան դուրս քշել դէրը երիտասարդի մը միջէն, Յիսուսը խստօրէն յանդիմանեց անոնց:

*«Յիսուսն ալ պատասխանեց եւ ըսաւ. «Ո՛վ անհաւատ եւ խոփորեալ ազգ, մինչեւ երբ ձեզի պիտի համբերեմ, անոր Իմ քովս բերէք»» (Մատթ. 17.16):*

Նախատինքի ինչպիսի խօսքեր սեփական աշակերտներու

հասցեին: Յիսուսը թուլութիւն չունէր այսօրուան շատ ամազներու պէս: Ան աշակերտներուն հասկցուց, որ Աստուծոյ պարգեւը հանգած կը մնայ անոնց մէջ, եթէ անոնք չկարենան հաւատալ: Յիսուսը կ'ուզէր, որ աշակերտները գիտնային, որ Ինքը վշտացած էր:

Ես նաեւ ուշադրութիւն դարձուցած եմ, թէ ինչը կը հիացնէր Յիսուսին: Անոնք որոնք կը հաւատային առանց հարցեր տալու, կը հիացնէին Յիսուսին: Հեթանոս եւ հռովմայեցի զինուորականն անլի շատ ուշադրութեան արժանացաւ իր հաւատքի համար, քան մէկ ուրիշը Իսրայէլի մէջ: Այս հռովմայեցին Յիսուսին ըսաւ, որ կարիք չկայ, որ Ան իր տունը գայ. Անոր մէկ խօսքն ալ բաւական է, որ իր ծառան բժշկուի. «Եւ երբ Յիսուսը լսեց, զարմացաւ եւ ըսաւ ետեւէն եկողներուն, «ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ ալ այսպիսի հաւատք չգտայ»» (Մատթ. 8.10):

Մենք կ'ուզենք, որ Յիսուսը մեր տունը գայ, բայց պէտք է հարցնենք Անոր, թէ երբ կ'ընէ ատիկա: Մենք հաւատքը դժուար հասկնալի կը դարձնենք: Այսպիսով, ինչ է հաւատքը: Աստուծոյ հաւատալը կ'ընէ այն, ինչ որ Ան ըսած է, որ կ'ընէ:

Յիսուսն ըսաւ, որ Ան մեզի զօրութիւն եւ իշխանութիւն տուած է թշնամիի ողջ զօրութեան վրայ: Ամէնը, ինչ որ պէտք է ընենք, Անոր հաւատալն է եւ յետոյ այդ զօրութեան եւ իշխանութեան մէջ քալելը: Մենք կարիք չունինք մեր ընթացքը բարդացնելու վախի, կասկածի կամ մեր անցեալի թերութիւններուն ու ծախողութիւններու յիշողութիւններով: Եթէ այդպէս վարուինք, կը զրկուինք մեր համարձակութենէն եւ անընդունակ կը դառնանք Աստուծոյ կարողութեամբ քալելու համար: Աստուծոյ պարգեւը կը հանգի մեր մէջ:

Նախքան մեր նաւակէն դէպի կեանքի ալեկոծուած ջուրեր համարձակօրէն քայլ ընելը, պէտք է գիտնանք մեր սրտի շարժառիթները, որպէսզի չսուզուինք: Յաջորդ գլուխին մէջ պիտի խօսինք այն բանին մասին, որ տարբերութիւն կայ քեզ կեցնելու համար օգնող եւ քեզ սուզող շարժառիթներուն միջեւ:



**Դիւրին է համարձակ ըլլալ այն ժամանակ,  
երբ Աստուած կ'ընէ այն, ինչ որ մենք  
կ'ակնկալենք.**

## ԵՐԿՉՈՏՈՒԹԵԱՆ ԱՐՄԱՏԸ

Կենսության, հաղորդակցող ըլլալը չ'ապացուցեր, որ կ'ապրիս երկչոտությունն ազատ: Ես ճանչցած եմ շատ կենսության մարդոց, որոնք կը պայքարէին երկչոտության դէմ: Իրականության մէջ, երբեմն անոնց կենսութիւնները պարզապէս երկչոտութիւնը պահելու ծածկոց է, որուն դէմ անոնք կը կռուին իրենց ներսը: Լռակեացութիւնը երկչոտության միակ ախտանիշը չէ: Որոշ մարդիկ, որոնք շփոթած վիճակի մէջ են, աւելի շատ կը խօսին:

Նշանակութիւն չունի, թէ ինչքան օծուած ես դուն: Դուն ալ կրնաս երկչոտ ըլլալ: Ես ճանչցած եմ մարդոց, որոնք զօրաւոր եղած են ծառայութեան մէջ, մինչդեռ պայքարի մէջ եղած են երկչոտութեան հետ: Երբ անոնց վրայ օծութիւնը կ'իջնէր, անոնք կը դառնային անվախ, անոնց թուլութիւնը կը ծածկուէր Աստուծոյ

օծութեան մէջ: Բայց երբ օծութեան ծածկոցը կը հեռանար, կը դառնային վախի եւ անապահովութեան հետ պայքարող մարդիկ: Մարդոց հետ հաղորդակցելու ժամանակ անոնց ամչկոտութիւնը անթաքոյց է: Ինչէն գիտեմ, որ այս ամէնը ճիշդ է: Որովհետեւ ես ինքս այդպիսին էի:

Դուն կրնաս կենսութեան, ուժեղ, համարձակ, նոյնիսկ օծուած ըլլալ եւ, միեւնոյն ժամանակ, շարունակել պայքարիլ երկչոտութեան դէմ: Երբ ճնշումը բաւականին կը զօրանայ, կը բացայայտուի քու իրական էութիւնը: Երկչոտութեան հոգի ունենալը կապ չունի անհատականութեան, ֆիզիքական ուժի կամ օծութեան պակասի հետ: Այսպիսով, ինչը մարդոց կը դարձնէ երկչոտութեան գերի:

## **Արտաքին երեւոյթը հակառակ է ճշմարտութեանը**

Պատասխանի համար նայիր Սիմոն-Պետրոսին: Ան կենսութեան էր, երբեք չէր ամչնար բարձրաձայն իր կարծիքը ըսելէ: Պետրոսը համարձակ էր: Արտաքուստ ան ուժեղ կամք ունեցող ու անվախ մարդ էր: Կը թուէր, թէ ոչինչ կրնար վախցնել Պետրոսին, բայց, այնուամենայնիւ, ինչ որ բան վախցուց անոր: Մեռնելու վախը պատճառ դարձաւ, որ Պետրոսը երեք անգամ ուրանար Յիսուսին: Այնպէս որ երկչոտութենէն ազատ ըլլալու կարողութիւնն ուժեղ անհատականութիւն ունենալու մէջ չէ: Աւելի քիչ հաւանական էր Պետրոսի՝ Յիսուսին ուրանալը, քանի որ ան Յիսուսին շատ հաւատարիմ էր:

Ոմանք կը մեղադրեն Սիմոն-Պետրոսին՝ պատճառաբանելով, որ երբ եկաւ գործելու ժամանակը, այդ պահուն Պետրոսը իսկական «հաւ» էր: Ասոր ես կը պատասխանեմ հարցումով. «Իսկ որքան «հաւեր» համարձակութիւն կ'ունենային կենալու զինուած ամբոխի դէմ եւ յարձակման անցնելու»: Պետրոսը համարձակօրէն ըրաւ ատիկա: Յովհաննէս 18.3,10-ին մէջ գրուած է.

*«Եւ Յուդան, զինուորներու գունդը եւ քահանայապետներէն փարիսեցիներէն սպասաւորներ առնելով,*

### Երկչորութեան արմատը

*Եկաւ հոն ջահերով, լապտերներով եւ զէնքերով...  
Բայց Սիմոն-Պետրոսը, որ սուր ունէր, քաշեց անոր  
եւ քահանայապետի ծառային զարկաւ եւ անոր աջ  
ականջը կտրեց նեւրեց»:*

Ասիկա ինծի համար հաւի արարք չէ: Այսպիսով, ինչո՞ւ Սիմոն-Պետրոսը արհամարհեց զինուորներուն եւ վախցաւ աղախինէ մը: Այո՛, ատիկա ճիշդ է, ան վախցաւ: Աղախին մը վախցուց անոր: «Եւ Պետրոսը դուրսը նստած էր սրահին մէջ, եւ աղախին մը եկաւ անոր քով եւ ըսաւ. «Դուն ալ Գալիլիացի Յիսուսին հետ էիր»: Ան ալ բոլորին առջեւ ուրացաւ եւ ըսաւ. «Ես չեմ գիտեր, թէ դուն ինչ կ'ըսես»» (Մատթ. 26.69,70):

Ինչո՞ւ փոխուեցաւ ան:

## Յուցադրական համարձակութիւն

Պատասխանելու համար եկուր վերադառնանք այդ երեկոյ կատարուածին: Բոլոր աշակերտները միասին կը տօնէին Ջատիկը: Յիսուսը զգուշացուց անոնց. «Դուք ամէնքդ այս գիշեր կը գայթակղիք Ինձմէ» (Մատթ. 26.31): Բայց Պետրոսը իրեն բացառեց եւ համարձակօրէն յայտարարեց. «Թէեւ ամէնքը գայթակղին Քեզմէ, ես երբեք չեմ գայթակղիր» (Մատթ. 26.33): Քաջալերանքի ինչպիսի համարձակ ցուցաբերում: Կը թուի, թէ Յիսուսը սխալած էր, երբ Պետրոսին ալ ներառած էր այդ մարդոց մէջ:

Բայց Յիսուսը ուղիղ նայեցաւ Պետրոսի հոգիին մէջ եւ, ուղղելով անոր՝ ըսաւ, «Ճշմարիտ կ'ըսես քեզի, այս գիշեր՝ տակաւին հաւը չխօսած, երեք անգամ կ'ուրանաս Ինձի» (Մատթ. 26.34): Ինչպիսի հարուած Պետրոսի վստահութեանը: Յիսուսը Պետրոսին ըսաւ, որ ոչ միայն կը գայթակղի, այլեւ կ'ուրանայ Իրեն:

Թոյլ մարդը ասոր պատճառով կրնայ նահանջել: Թերեւս Վարդապետը կը սխալէր: Բայց Պետրոսը մինչեւ վերջ պաշտպանեց իր դիրքը. «Եթէ Քեզի հետ մեռնելու ալ ըլլամ, չեմ ուրանար Քեզի» (35 խօսք): Փաստօրէն այս համարձակ յայտարարութիւնը

միաներուն ալ ոգեշնչեց համաձայնիլ, «...այնպէս ալ բոլոր աշակերտները կ'ըսէին» (35 խօսք):

## **Շարժառիթները կրնան տարբեր ըլլալ արտաքին երեւոյթներէն**

Կը թուէր, որ այս մարդիկ ունէին մեծ խիզախութիւն եւ ճիշդ շարժառիթներ: Աւելի խորունկ քննելով՝ մենք կը յայտնաբերենք ոչ թէ դրդապատճառ հանդիսացող Աստուծոյ սէրը, այլ մէկ ուրիշ բան:

Մինչեւ աշակերտներուն զգուշացնելը՝ Յիսուսը բաժնեկցեցաւ անոնց հետ. «Սակայն ահա Իմ մատնողի ձեռքն Ինձի հետ սեղանի վրայ է» (Ղուկ. 22.21): Որքան սարսափելի էր, որքան ահաւոր էր, որ անոնցմէ մէկը կրնար մատնել Յիսուսին: Մէկը, որ ապրած եւ քալած էր Անոր հետ, մէկը, որուն համար Ան հոգ տարած էր, հիմա պէտք է իր ձեռքը բարձրացնէր Անոր՝ Մեսիային վրայ:

Չնայած որ Յիսուսը գիտէր եւ ճիշդ սկիզբէն ալ գիտցած էր, թէ ով էր ան եւ ինչ պիտի ընէր, Անոր աշակերտները առաջին անգամ կը լսէին ասոր մասին: Կրնան պատկերացնել այն սոսկումն ու կասկածը, որ տարածուեցաւ սենեակին մէջ այս յայտարարութենէն ետք. «Եւ անոնք սկսան հարցուփորձ ընել իրենց մէջ, թէ իրենցմէ ո՞վ է արդեօք ան, որ այն բանը պիտի գործէ» (Ղուկ. 22.23): Աշակերտները շփոթած էին եւ չէին հաւատար, որ իրենցմէ ոեւէ մէկը ընդունակ կ'ըլլայ անհաւանական չարութիւն ընելու: Ուրեմն ինչն էր անոնց քննարկման շարժառիթը: Անկասկած այն պէտք է ըլլար Յիսուսին համար մտահոգուիլը: Բայց արդե՞օք ատիկա այդպէս էր: Աշակերտներուն զրոյցը մատնեց անոնց: Նայինք յաջորդ խօսքին.

*«Անոնց միջեւ վէճ մըն ալ եղաւ, թէ իրենցմէ ո՞վ պիտի մեծ համարուի» (Ղուկ. 22.24):*

Ինչպէս պարզ կը տեսնենք, անոնց պարզաբանման հիմքը եսասիրութիւնն ու հպարտութիւնն էր: Յիսուսն աշակերտներուն ըսաւ, որ Ինքը պիտի մատնուէր քահանայապետներուն՝ մահուան դատապարտուելու համար, իսկ աշակերտները սկսան ձգտիլ



## Երկչորութեան արմարը

իշխանութեան ու դիրքի: Ինչպիսի՞նք եսասիրութիւն:

Մենք կրնանք կռահել, թէ ով կ'առաջնորդէր վէճը: Աւելի հաւանական է, որ ատիկա Սիմոն-Պետրոսն էր, որ անցեալին ունեցած էր ամառ ըլլալու ձգտում եւ իշխող անհատականութիւն էր, իսկ հիմա կը գործէր այդ հիմքէն դրդուած:

Հաւանաբար ան կը շտապէր միաներուն յիշեցնելու, որ Ինքն այն միակն էր, որ բաւականին խիզախ էր ջուրին վրայ քալելու համար (Մատթ. 14.28-31): Թերեւս Պետրոսը կը թարմացնէր ընկերներուն յիշողութիւնը, որ ինքը մատնանշեց, թէ իրականութեան մէջ Ով էր Յիսուսը (Մատթ. 16.15,16), կամ ալ թէ ինչպէս ան ունեցաւ իր փորձառութիւնը այլակերպութեան լերան վրայ Յիսուսին, Մովսէսին եւ Եղիային հետ (Մատթ. 17.1-8):

Պետրոսը բաւական համարձակ էր ապացուցելու համար, որ ինքը ամենամեծն էր տասներկուքին մէջ: Բայց արդեօք այս համարձակութիւնն արմատաւորուած էր սիրոյ վրայ: Ես վստահ եմ, որ Պետրոսը կը մտածէր, թէ արդէն իր կարեւորութիւնը յիշեցնելու ժամանակն էր: Մինչդեռ յետոյ պիտի պարզուէր, որ իրականութիւնն ուրիշ պիտի ըլլար: Անոր համարձակութիւնը հիմնուած էր հպարտութեան եւ եսասիրութեան վրայ:

Մտապահելով այս ամէնը՝ երթանք առջեւ:

## Ձիթհան

*«Այն ժամանակ Յիսուսն անոնց հետք տեղ մը եկաւ՝ անունը Գեթսեմանի, եւ ըսաւ աշակերտներուն. «Հոն նստէք, մինչեւ որ ես երթամ աղօթք ընեմ հոն»»*  
(Մատթ. 26.36):

«Գեթսեմանի» բառը բառացի կը նշանակէ «ձիթհան» (ձէթ հանող): Ձիթհանը ձիթապտուղէն ձէթ կը քամէ: Ձիթապտուղն ինքն իրմէ ձէթ չ'արտազատեր: Միայն երբ մեծ ճնշում կը գործադրուի, ձէթը դուրս կու գայ ձիթապտուղին մէջէն: Գեթսեմանին այդպիսի ճնշման վայր է, ոչ թէ ձիթապտուղներու, այլեւ՝ սրտերու: Ուժգին

ճնշման տակ մեր ներսը եղածը դուրս կու գայ՝ յաճախ անակնկալի բերելով մեզ: Ուրիշ ձեռով ըսելու համար՝ քու սրտի շարժառիթները կը փորձուին եւ կը բացայայտուին, երբ կու գան փորձութիւնները (ճնշումները):

Երբ Յիսուսը Պետրոսին, Յակոբոսին եւ Յովհաննէսին հետ գնաց Գեթսեմանի, սկսաւ տրտմիլ եւ վշտանալ (Մատթ. 26.37): Յիսուսի անձը «չափազանց վշտացած» էր, որովհետեւ Ան ձիթհանի մէջ էր: Ան Իր ամենամեծ ճակատամարտի՝ Հօր կամքը այլ ձեռով իրագործելու փորձութեան մէջ էր, որովհետեւ Ան պիտի փրկէր Ինքն Իրեն:

Որոշ մարդիկ չեն հաւատար, որ Յիսուսը հնարաւորութիւն ունէր մեղք գործելու: Մենք պէտք է յիշենք, որ Յիսուսը փորձուեցաւ «ամէն բանով... մեր նմանութեամբ, բայց առանց մեղքի» (Եբր. 4.15): Փորձուած ըլլալ կը նշանակէ պայքարիլ ինչ որ բանի մը դէմ: Յիսուսն Իրեն չէր պաշտպաներ պայքարներէն եւ միշտ յաղթանակած դուրս գալու ապահովութեան մասին չէր մտածեր: Ինչհի: Որովհետեւ Իր սեփական կամքը չէր կատարեր: Եթէ Յիսուսին համար անկարելի ըլլար մեղք գործելը, ապա նաեւ անկարելի պիտի ըլլար փորձուիլը: Ասիկա չի պակսեցնէր Յիսուսին փառքը, այլ աւելին, կ'ընդգծէ, թէ որքան արժանատի է Ան, որովհետեւ մեղք չգործեց: Հալելուիս:

Յիսուսը պարտէզին մէջ կը խնդրէր. «Իմ Հայր, եթէ կարելի է, թող այս բաժակն Ինձմէ անցնի, սակայն ոչ թէ ինչպէս Ես կը կամենամ, այլ՝ ինչպէս Դուն» (Մատթ. 26.39):

Այս պայքարի ճնշումը կը մոլեգնէր Յիսուսին Հոգիին մէջ: Կ'երեւէր, որ միայն մէկ բան կրնար Անոր ետ մղել. Ան կրնար ընտրել Հօր կամքն իրագործելու մէկ այլ տարբերակ եւ ատորմով պիտի փրկէր Ինքն Իրեն: Աւելի վաղ Յիսուսն ըսած էր փարիսեցիներուն, որ Ինքը իշխանութիւն ունի Իր կեանքը դնելու (Յովհ. 10.17,18): Աստուած չստիպեց Անոր ընելու ատիկա, ատոր համար ալ Ան առանձին կը պայքարէր:

Յիսուսը գիտէր, որ այս պայքարը կար Իրմէ առաջ՝ մինչեւ

### *Երկչորութեան արմարը*

Գեթսեմանի պարտէզին մէջ Իր ծունկի գալը: Ասոր մասին Յիսուսը բաժնեկցեցաւ Իր աշակերտներուն հետ երեք անգամ՝ մինչեւ անոնց Երուսաղէմ գալը: Յիսուսն անոնց ըսաւ, որ Իր Հօր կամքն էր, որ Ինքը չարչարուէր, մահանար եւ մեռելներէն յարութիւն առնէր:

Իսաչելութենէն քանի մը օր առաջ Յիսուսը գաղտնիքը վստահեցաւ Իր աշակերտներուն՝ ըսելով. «Հիմա Իմ անձը խռոված է, եւ ինչ ըսեմ՝ Հայր, ազատէ՛ Ինձի այս ժամէն, սակայն ասոր համար եկայ այս ժամուն մէջ: Հայր, փառաւորէ՛ Քու անունը» (Յովհ. 12.27,28):

Յիսուսը պէտք է Իր կեանքը զոհէր, որպէսզի ատորմով Հօր անունը փառաւորուէր: Ան այս սկզբունքին մասին հազիւ նոր բաժնեկցած էր Իր աշակերտներուն հետ: «Իր անձը սիրողը՝ կը կորսնցնէ այն, եւ իր անձն ատողը այս աշխարհին մէջ յաւիտենական կեանքի մէջ կը պահէ այն» (Յովհ. 12.25):

Այս խօսքը կու տայ երկու հարցի պատասխան: Առաջինն այն է, թէ ինչու Պետրոսը չկրցաւ հետեւիլ իր տուած երդումին, եւ երկրորդը՝ թէ ինչու Յիսուսը կրցաւ: Յիսուսը Հօրն Իր սեփական կեանքէն աւելի կը սիրէր, ատոր համար ալ Ան կրցաւ զոհել Իր կեանքը: Պետրոսը կը կարծէր, որ ինքը Յիսուսին իր սեփական կեանքէն աւելի կը սիրէր, բայց Գեթսեմանիի «ծիթհանը» բացայայտեց անոր շարժառիթները:

Պարտէզին մէջ բաւական չէր միայն այն, որ Յիսուսը գիտէր Հօր կամքը: Հիմա Ան պէտք է կատարէր այդ կամքը: Ասիկա այնքան դժուար էր, որ Ան կը խնդրէր Հօրը, թէ արդեօք հնարաւոր չէ՞ր մէկ ուրիշ ձեւով իրականացնել կամքը: Աղօթքի մէջ Յիսուսը կը պայքարէր ինքնապահպանման այս փորձութեան դէմ եւ կը դիմադրէր արեան քրտինք թափելու աստիճան (Ղուկ. 22.44):

Փորձութիւնը յաղթելու Յիսուսի զօրութիւնը արմատաւորուած էր Հօր նկատմամբ սիրոյ եւ Իր անձը չսիրելու վրայ: Յիսուսն Իր անձը կորսնցուց Իր Հօր հանդէպ ունեցած սէրէն դրդուած (Յովհ.14.31): Այս սէրը կը յաղթէ անոր, ինչին ոչ մէկ մարդ

նախկինին յաղթած էր՝ անձի նկատմամբ ունեցած սիրոյն: Ձէթը դուրս ելաւ՝ ապացուցելով Հօր հանդէպ Յիսուսի սէրը ոչ միայն խօսքով, այլեւ զոհաբերութեամբ եւ հնազանդութեամբ:

Հիմա տես, թէ ինչ ազդեցութիւն ունեցաւ այդ «ծիրթանը» կամ ճնշումը Պետրոսին եւ միւս աշակերտներուն վրայ:

## **Յօժար հոգի, տկար մարմին**

Մօտ մէկ ժամ Իր կամքին հետ պայքարելէն ետք Յիսուսը ոտքի ելաւ, գնաց Իր աշակերտներուն քով եւ «անոնց գտաւ տրտմութենէն քնացած» (Ղուկ. 22.45): Աշակերտները երկար չքննարկեցին, թէ ով էր ամենամեծը: Անոնք ծանրացան վիշտէն եւ տխրութենէն: Յիսուսը միակը չէր, որ ճնշման տակ էր: Անոր աշակերտները եւս «ծիրթանի» մէջ էին:

Աշակերտները դէմ առ դէմ հանդիպած էին իրենց անձերը փրկելու փորձութեանը: Անոնք այլեւս ուժ չունէին դիմանալու, որովհետեւ կեդրոնացած էին իրենց սեփական կամքին, այլ ոչ թէ Հօր կամքին վրայ: Ի տարբերութիւն Յիսուսի՝ անոնք չէին ցանկար իրենց կամքը հնազանդեցնել Աստուծոյ կամքին: Եթէ մենք մտածենք, որ մեր սեփական կեանքը սուղ է, մենք չենք պայքարիր այն դնելու կարողութեան համար:

Մտածէ՛ ասոր վրայ: Այն ժամանակ, երբ Յիսուսը պայքարի մէջ էր Իր կեանքը կորսնցնելու մտքի հետ, աշակերտները քնանալով խուսափեցան պայքարէն: Յիսուսը յատկապէս Պետրոսին հետ խօսեցաւ. «Այդպէս, մէկ ժամ ամլ չկրցաք Ինձի հետ արթուն մնալ: Արթուն կեցէ՛ք եւ աղօթք ըրէ՛ք, որ փորձութեան մէջ չմտնէք, հոգին յօժար է, բայց մարմինը՝ տկար» (Մատթ. 26.40,41):

Ահա Պետրոսը, որ համարձակ խոստումներով մարդ էր, աղօթելու փոխարէն քնացած էր: Ան տակաւին չէր սորված յենիլ ուժի մը վրայ, որ իր սեփականը չէր: Քնանալով ան պաշտպանեց իր կարծեցեալ ուժը:

Մեր հոգիները կամ սրտերը կրնան յօժար ըլլալ, բայց մեր

մարմինը միշտ կը փնտոէ ինքն իրեն պաշտպանելը: Հետեւաբար, եթէ մեր մարմինը խաչուած չէ, մենք անոր կու տանք այն, ինչ որ ան կը ցանկայ: Պետրոսը կ'ուզէր հաւատարիմ ըլլալ Յիսուսին, բայց չկրցաւ, որովհետեւ մարմինը իշխանութիւն ունէր անոր վրայ: Պետրոսն աւելի շատ կը սիրէր իր կեանքը, քան կը ցանկար Աստուծոյ կամքը: Ան չճանչցաւ իր սրտի իրական վիճակը: Պետրոսը լուրջ կը վերաբերէր իր ըսածին եւ ճշմարտապէս կը հաւատար, որ իր կեանքը կը զոհէ Յիսուսին համար: Այնուամենայնիւ այս «ճնշումէն» ետք բացայայտուեցաւ այն, ինչ որ նախօրօք դրսեւորուած էր Վերջին Ընթրիքի ժամանակ, այսինքն՝ եսասիրութիւնն ու հպարտութիւնը:

## Երկու տարբեր արդիւնքներ

Այն բանէն ետք, երբ Յիսուսն աշակերտներուն քնացած գտաւ, գնաց երկրորդ անգամ աղօթելու: Երբ Ան վերադարձաւ, աշակերտներուն նորէն քնացած գտաւ, քանի որ «անոնց աչքերը ծանրացած էին» (Մատթ. 26.43): Նոյնիսկ երբ Յիսուսը զգուշացուց անոնց, անկէ ետք ալ աշակերտներն արթուն չմնացին:

*«Անոնց ձգեց՝ դարձեալ գնաց, եւ երրորդ անգամ աղօթք ըրաւ եւ միեւնոյն խօսքն ըսաւ: Այն ժամանակ կու գայ իր աշակերտներուն քով եւ անոնց կ'ըսէ. «Այսուհետեւ քնացէք եւ հանգստացէք, որ ահա հասած է ժամը»» (Մատթ. 26.44,45):*

Յիսուսը երեք ժամ այնքան աղօթեց, մինչեւ իմացաւ, որ յաղթած է պայքարին մէջ: Անոր կամքն ամբողջապէս մէկ էր Հօր կամքին հետ: Այժմ Յիսուսը պատրաստ էր դէմ առ դէմ կանգնիլ հրեայ առաջնորդներուն եւ հռովմայեցի զինուորներէն եկած թշնամիի վախին:

Յիսուսին ամուր կանգնելու կարողութիւնը նոյնիսկ հալածանքի այդ հնոցի մէջ ապշեցուց հռովմայեցի կառավարիչին: «Եւ երբ որ քահանայապետներէն եւ ծերերէն կ'ամբաստանուէր, ոչինչ

պատասխանեց: Այն ժամանակ Պիղատոսը ըսաւ Անոր. «Չե՛ս լսեր՝ որչա՛մի բաներ կը վկայեն Քեզի հակառակ»: Եւ Ան անոր բան մըն ալ չպատասխանեց, մինչեւ որ կուսակալն ալ շատ զարմացաւ» (Մատթ. 27.12-14):

Համարձակութիւնն այն չէ, թէ որքան բարձր կամ որքան շատ մենք կը խօսինք: Այն կը գտնենք նաեւ լռութեան մէջ: Դուն կը լռես այնքան ժամանակ, քանի դեռ սուտ մեղադրանքներ կը շարտեն երեսիդ: Յիսուսը կը մնար Իր իշխանութեան մէջ՝ չարձագանգելով մեղադրանքներուն: Ան գիտէր, որ անոնք ոչ մէկ իշխանութիւն ունէին Իր վրայ: Արձագանգելը ցոյց կու տար, որ անոնք ունին այդ իշխանութիւնը: Քահանայապետներն ու ծերերը կը փորձէին վերահսկել Յիսուսին իրենց մեղադրանքներով, սպառնալիքներով եւ զօրաւոր պաշտօններով: Անոնց պատասխանելը յիմարութիւն կ'ըլլար, քանի որ քահանայապետներն ու ծերերը մտահոգուած չէին ճշմարտութեան համար: Յիսուսը գիտէր, որ անոնք չէին կրնար Իր կեանքը վերցնել, որովհետեւ Ան արդէն տուած էր այն Հօրը:

Երբ Յիսուսը հանդիպեցաւ Իրեն մեղադրողներուն, Պետրոսն իրեն համար դուրսը՝ կրակին քով կը տաքնար: Վախնալով այդ առաջնորդներուն ծառաներէն՝ Պետրոսն ուրացաւ, թէ նոյնիսկ Յիսուսին չի ճանչնար (Մատթ. 26. 69-75): Չնայած որ Պետրոսը կ'ըսէր, թէ կը մեռնի, բայց չ'ուրանար Յիսուսին, այնուամենայնիւ վախցաւ եւ ըրաւ այն, ինչ որ ըսած էր, որ պիտի չընէ: Պատճառն այն էր, որ Պետրոսը իր սեփական կեանքը սիրեց:

Յիսուսին ուղղուած անոր խօսքերը ցոյց կու տային, որ Պետրոսը մեծ սէր կը տածէր Յիսուսին հանդէպ, բայց այս գործերը այլ բան կը վկայէին: Իր անձին հանդէպ սէրն էր Պետրոսի վախին արմատը: Այն լաւ պահուած էր վաղ ժամանակ եղած խիզախ յայտարարութիւններուն եւ գործողութիւններուն ետեւը, բայց «ձիթհանի» շնորհիւ բացայայտուեցաւ Պետրոսին երկչոտ հոգին:

Վախին եւ երկչոտութեան արմատը եսասիրութիւնն է: Կատարեալ սէրը կը քշէ վախը եւ մեզի կու տայ համարձակութիւն: Սէրէն ծնած համարձակութիւնը կը կոտրէ երկչոտութեան

## Երկչոտութեան արմարը

ճնշումը: Անկատար սէրը կամ եսասիրութիւնը դուռ կը բանայ երկչոտութեան համար:

*«Ասով սէրը կատարեալ կ'ըլլայ մեզի հետ, որ համարձակութիւն ունինք դատաստանի օրուան մէջ... Վախ չկայ սիրոյ մէջ, այլ կատարեալ սէրը կը հեռացնէ վախը, որովհետեւ վախը տանջանք ունի, բայց ան, որ կը վախնայ, կատարեալ չէ սիրոյ մէջ» (Ա. Յովհ. 4.17,18):*

Վախն ու երկչոտութիւնը կը զօրանան, երբ մենք կը կեդրոնանանք մեր վրայ՝ ըսելով. «Իսկ ես, ինչ պիտի պատահի հետս»: Ասոնք տանջանքի ճիչեր են:

Յիսուսն ըսաւ. «Ոչ մէկը ասկէ աւելի մեծ սէր ունի, որ մէկն իր անձը դնէ իր բարեկամներուն համար» (Յովհ. 15.13): Երբ մենք ճշմարտապէս մեր կեանքը կը դնենք Յիսուսի սիրոյն համար, այլեւ չենք մտահոգուիր, թէ ինչ պիտի պատահի մեզի հետ, որովհետեւ գիտենք, որ Ան հոգ կը տանի մեզի համար: Անկէ ետք մենք մահացած եւ ծածկուած ենք Անոր մէջ: Մենք կարիք չունինք անհանգստանալու մեր կեանքերուն համար ինչ ալ որ պատահի մեզի հետ. ատոր մասին Յիսուսը հոգ կը տանի: Մենք ուղղակի պէտք է սիրենք եւ հնազանդինք:

Վախն այլեւ չի տանջեր մեզի, քանի որ մեռած մարդը չի կրնար տանջուիլ: Դուն կրնաս հրազէնով նշան բռնել դագաղին մէջ պառկած մարդուն վրայ եւ սպառնալ անոր, բայց ան նոյնիսկ աչքն ալ չի թարթեր:

## Ինչ պատահեցաւ միւսներուն հետ

Ինչ պատահեցաւ միւս աշակերտներուն հետ: Նախքան Յիսուսին ուրանալը, անոնք միացած էին Պետրոսին եւ կը պնդէին, որ կը մեռնին, բայց չեն ուրանար: Ինչպէս վարուեցան անոնք «ձիթհանի» ճնշումին մէջ: Անոնք փախսան նոյնիսկ մինչեւ Պետրոսին ուրանալը: Աստուածաշունչը կը պատմէ, որ երբ

անոնք տեսան, թե ինչպէս զինուորները բռնեցին Յիսուսին, «բոլոր աշակերտները Անոր ձգեցին եւ փախան» (Մատթ. 26.56):

Աշակերտները բոլորն ալ կը վախնային իրենց անձերուն համար: Անոնք անլի շատ կ'ուզէին քնանալ, քան աղօթել: Յիսուսին հետ ունեցած վերջին ճաշկերոյթին ժամանակ աշակերտները կը կռուէին իրենց մէջ, թէ ով է ամենամեծը: Անոնք կարծես թէ չէին լսեր կամ ալ չէին կրնար լսել: Անոնց միայն մէկ բան կը հետաքրքրէր. «Ինչ կը պատահի հետս»: Աշակերտներուն եսասիրութիւնը բացայայտուեցաւ «ձիթահանի» ճնշման մէջ:

Անոնց շարժառիթները չէին տարբերեր Պետրոսի շարժառիթներէն: Պարզապէս Պետրոսն անլի դժուար իրավիճակի մէջ էր, որովհետեւ ան հետեւեցաւ զինուորներուն մինչեւ այն տեղը, ուր Յիսուսին տարին:

## **Ամէն համարձակութիւն չէ, որ սէրէն դրդուած է**

Թերեւս քեզի մինչեւ հիմա կը հետաքրքրէ, թէ ինչ տուաւ Պետրոսին այն համարձակութիւնը, որուն միջոցով ան սուրը ձեռքին կեցաւ փոքրիկ բանակին առջեւ: Ես կը հաւատամ, որ Պետրոսին համարձակութիւնը կու գար միւսներուն հաւանութեանն արժանանալու ցանկութենէն: Ան գնաց այդ քայլին՝ ուրիշներու վրայ ազդեցութիւն ձգելու համար: Մտածէ՛ ստոր մասին: Աշակերտները հազիւ նոր վէճ ունեցած էին, թէ ով էր ամենամեծը: (Այս թեման առաջին անգամ մը չէ, որ կը շօշափուէր: Աշակերտները մշտապէս մրցակցութեան մէջ էին): Ասոր մասին Պետրոսը տակաւին չէր մոռցած, եւ հիմա անոր հնարաւորութիւն ընձեռնուած էր ապացուցելու իր մեծ հաւատարմութիւնը:

Բայց երբ ան քահանայապետներու ծառաներու հետ նստաւ կրակի քով, այլեւս շրջապատուած չէր իր հաւատակիցներով: Անոր իրական ապահովութիւնը մակերեսային էր: Վախը, որ պահուլուած էր անոր արտաքին հանգստութեան մէջ, բացայայտուեցաւ:



### *Երկչորութեան արմատը*

Նախորդ դէպքերը եւս կը բացայայտէին Պետրոսի տատանուող համարձակութիւնը: Մէկը այն ժամանակ էր, երբ Պետրոսը կը քալէր ջուրին վրայէն: Երբ միւս աշակերտները շփոթած էին, Պետրոսն աղաղակեց. «Տէր, եթէ Դուն ես, հրամայէ ինձի, որ ջուրերուն վրայէն Քովդ գամ» (Մատթ. 14.28): Պետրոսը դուրս ելաւ նաակէն եւ քալեց ծովին վրայէն: Հաւանաբար ան համարձակութիւն ստացած էր աշակերտներուն վրայ տպաւորութիւն ձգելու ցանկութենէն: Բայց եւ այնպէս, երբ Պետրոսը առանձին յայտնուեցաւ մոլեգնած ծովուն մէջ, աղաղակեց Յիսուսին, որ փրկէ իրեն: Երբ ան կը քալէր ալիքներուն վրայէն, հասկցաւ, որ իր մրցակիցներէն ոչ մէկն ալ իր հետ էր: Վախի ճնշումին տակ ան կանչեց Յիսուսին, որպէսզի փրկէր իրեն:

Շատ հնարաւոր է, որ Պետրոսը կը մտածէր, թէ Յիսուսը կ'ազատէր իրեն պարտէզին մէջ կատարուած դէպքէն, ինչպէս որ ըրած էր շատ անգամներ: Եւ ան ճիշդ էր: Պետրոսն ու միւսները չէին պատկերացներ, որ Յիսուսին ձերբակալուած պիտի տեսնեն: Չնայած որ Յիսուսը բազմաթիւ անգամ ըսած էր անոնց, որ ատիկա տեղի պիտի ունենայ, անոնք կը շարունակէին հաւատալ, որ Ան պիտի հաստատէ Իր Թագաւորութիւնը երկրի վրայ ճիշդ այդ ժամանակ (Գործք 16.21):

Դիւրին է շարունակ վստահ ըլլալ անոր մէջ, ինչ մենք կ'ակնկալենք, որ Աստուած պիտի ընէ: Բայց երբ Ան անակնկալի կը բերէ, մենք կրնանք տատանիլ: Երբ ինչ որ բան տեղի կ'ունենայ մեր կեանքին մէջ կամ ծառայութիւններուն մէջ՝ որսալով մեզ մեր տգիտութեան պատճառով, մենք կը կորսնցնենք մեր համարձակութիւնը: Յաճախ մենք նախապատրաստուած չենք ըլլար չարչարանք, հալածանք կամ փորձութիւններ կրելու համար: Երեխաներու պէս մեզի յարմարաւէտ է մեր առօրեայ կեանքը եւ մեր սեփական ճանապարհը: Երբ մենք չենք հասնիր մեր ցանկացածին եւ մեր ուզած ճանապարհին, մեր սրտերը կը ստուգուին: Եթէ մենք կը յաղթանակենք փորձութիւններու մէջ,

մեր սրտերը կը զօրանան: Մենք կրնանք համարձակ երեւալ, երբ Աստուած մեզ ճշգրտօրէն կու տայ այն, ինչ որ մենք կ'ուզենք, կամ ալ երբ կեանքը կանխատեսելի է, բայց երբ ամէն ինչ ուրիշ ձեւով կ'ընթանայ, յայտնի կը դառնան մեր իրական շարժառիթները: Յիսուսը կը նկարագրէ այս իրավիճակը.

*«Նոյնպէս ալ քարքարոյ տեղը սերմուածներն անոնք են, որոնք, երբ որ խօսքը կը լսեն, շուրով ուրախութիւնով կ'ընդունին այն: Եւ իրենց մէջ արմար չունին, այլ առժամանակեայ են: Յետոյ երբ որ այն խօսքի համար նեղութիւն կամ հալածանք կ'ըլլայ, շուրով կը գայթակղին» (Մարկ. 4.16,17):*

Ուշադրութիւն դարձուր, որ աշակերտները դիմացկուն չէին, որովհետեւ արմատներ չունէին: Ինչպէս զարգացնենք արմատները, որպէսզի մեզ հաստատուն պահեն: Մենք ինչի մէջ պէտք է արմատաւորուած ըլլանք: Եփեսացիներու 3.17-ն կ'ըսէ, որ մենք պէտք է արմատ նետենք եւ հաստատուինք Քրիստոսին համար մեր ունեցած սիրոյ մէջ: Ճշմարիտ սէրն իրենինը չի փնտռեր: Այն մարդիկ, որոնց սէրը արմատներ չունի, կը համբերեն այնքան, որքան որ իրենց համար դիւրին կ'ըլլայ: Անոնք չեն խաչուած Քրիստոսին հետ, այլ եկած են Յիսուսին քով ինչ որ բան մը ստանալու համար եւ ոչ թէ այն բանի համար, թէ ով է ան:

Անոնք, որոնք ճշմարտապէս կը սիրեն, ոչինչ կը փնտռեն, բացի իրենց Սիրելիէն եւ այն, ինչ որ կը հաճեցնէ Անոր: Այդպիսի սէրն իր մէջ սպասումներ չունի: Ընդհակառակը, այն տուող է: Նման շարժառիթը ոչ մէկ ազդեցութեան կ'ենթարկուի, երբ ամէն բան իր սպասածին պէս չ'ըլլար: Սէրը չի յուսահատիր, ատոր համար ալ չի վախնար:

Համարձակութիւնը, որուն միջոցով կը կոտրենք երկչոտութեան զօրութիւնը, պէտք է բոցավառի Աստուծոյ հանդէպ մեր ունեցած սէրէն: «Որովհետեւ Աստուած չտուաւ մեզի երկչոտութեան հոգի, այլ՝ զօրութեան, սիրոյ եւ զգաստութեան» (Բ. Տիմոթ. 1.7):

### *Երկչորութեան արմատը*

Զօրութիւնը երկչորութիւնը կոտրելու մէկ մասն է, բայց ատիկա տակաւին բաւարար չէ: Ինչպէս արդէն ըսած են, ես տեսած եմ օծուած մարդոց, որոնք կծկուած են երկչորութենէն, երբ ճնշումներ եղած են:

Զգաստութիւնը ես բաւարար չէ: Սուրբ Հոգին Պետրոսին անձնապէս յայտնեց, որ Յիսուսը Մեսիան է (Մատթ. 16.13-18): Միայն այն ժամանակ, երբ Պետրոսը լեցուեցաւ Աստուծոյ սիրով, իրապէս դրաւ իր կեանքը: Մենք ասիկա կը դիտարկենք յաջորդ գլուխին մէջ:

**Երկչորությունը յաղթահարելու  
միակ ճանապարհը անձը կորսնցնելն է.**

## ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ ԲԱՒԱԿԱՆ ՉԷ

**Բ**արի մտադրությունները բաական չեն: Պետրոսը փափաքեցաւ ցոյց տալ, որ ինքը կրնար հաւատարիմ ըլլալ, նոյնիսկ եթէ ասոր համար պէտք իր կեանքը զոհէր: Բայց այս ցանկութեան ուժը բաական չէր այն պահպանելու համար: Պետրոսի սրտին մէջ եղած վախը յաղթեց Վարդապետին նկատմամբ ունեցած իր սիրոյն: Յիսուսն անդրադարձաւ ասոր իր յարութենէն ետք:

Յովհաննէս Աւետարանի 21-րդ գլուխը կը պատմէ մեզի, որ Յիսուսը յայտնուեցաւ իր աշակերտներուն եւ անոնց նախաճաշին համար ձուկ եւ հաց կը պատրաստէր: Յետոյ Ան Պետրոսին երեք անգամ հարցուց. «Դուն կը սիրե՞ս Ինձի»: Առաջին երկու անգամները Յիսուս օգտագործեց «սկսափասօ» բառը, որ կը նշանակէ սէրէն դրդուած գործողութիւն: Բայց Պետրոսն ամէն

անգամ կը պատասխանէր յունարէն «*Ֆիլիո*» բառով: Այս բառը կը սահմանափակուի զգացմունքային սիրով՝ առանց գործողութեան:

Պետրոսը վշտացաւ, երբ Յիսուան անոր երրորդ անգամ հարցուց: Երրորդ անգամ Յիսուան օգտագործեց «*Ֆիլիո*» բառը: Յիսուին հարցումին մէջ սէրը գործողութեան մակարդակէն իջեցուց զգացմունքային մակարդակի: Վհատութեան մէջ Պետրոսը պատասխանեց. «Տէր, Դուն ամէն բան գիտես, Դուն գիտես, որ ես կը սիրեմ քեզ» (Յովհ. 21.17), ինչ որ կը նշանակէ. «Դուն գիտես, որ ես ջերմ զգացումներ ունիմ քու նկատմամբ»:

Յիսուան աւելի ընդգծեց ու յստակեցուց հարցումը. «Դուն կը սիրե՞ս Ինձի այնքան, որ կեանքդ դնես Ինձի համար»: Ասիկա կը խօսի այն սիրոյ մասին, որը նկարագրուած է «*ակափասօ*» բառով: Պետրոսը ճշմարտութեամբ եւ խոնարհաբար պատասխանեց, որ իր սէրը զգացմունքային կամ քնքուշ սէր էր: Յիշէ՛ք, որ ան հազիւ նոր ուրացած էր Յիսուին: Պետրոսը կ'ընդունէր իր սեփական թուլութիւնը: Անոր քնքուշ, մտերիմ սէրն այնքան զօրաւոր չէր, որ թոյլ տար դնել սեփական կեանքը:

Վերջաւորութեան Յիսուսը հարցուց Պետրոսին. «Դուն կը սիրե՞ս Ինձի ջերմ զգացումներով»: Յիսուսը գիտէր, որ հիմա Պետրոսը կոտորուած մարդ էր եւ դեռ ընդունակ չէր «*ակափասօ*» սիրոյն:

Յիսուսը, ցանկալով բացատրել Պետրոսին, թէ ինչ նկատի ունէր Ինքը, երբ հարցուց անոր առաջին երկու անգամները, ըսաւ. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, երբ որ պատանի էիր, դուն առանձին գօտիդ կը կապէիր եւ կը պտըտէիր ուր որ կ'ուզէիր, բայց երբ որ ծերանաս, ձեռքերդ կը մեկնես, եւ ուրիշը գօտիդ կը կապէ եւ կը տանի՝ ուր որ չես ուզեր: Ասիկա ըսաւ ցոյց տալով, թէ ան ինչ մահով պիտի փառաւորէ Աստուծոյն, եւ ասիկա ըսելէն ետք ըսաւ անոր՝ Իմ ետեւէն եկուր» (Յովհ. 21.18,19):

Ես կը կարծեմ, որ Յիսուսը Պետրոսին այս խօսքերն ըսելով նկատի ունէր հետեւեալը. «Նախկինին դուն ձախողեցար՝ ապրելով զգացմունքային սիրոյ ուժով, բայց օրեր պիտի գան, երբ դուն դէմ

### Յանկութիւնը բաական չէ

առ դէմ կը հանդիպիս քու ամենամեծ վախին, եւ դուն կը յաղթես կատարեալ սիրոյ զօրութեամբ»: Մինչ այդ պահը Պետրոսը սիրած էր մարդկային լաւագոյն կարողութեամբ, բայց ատոր մէջ ան ձախողած էր: Եթէ Պետրոսը հետեւէր Յիսուսին, սպառազինուած պիտի ըլլար «ակափաօ» սիրով: Սիրոյ այդ տեսակը չի ծնիր մարդկային ցանկութենէն, այլ Հօրմէն կը ծնի մեր սրտերուն մէջ (Հռովմ. 5.5): Աստուծոյ սէրը (*ակափէ կամ ակափաօ*) չի վախնար մեռնելէ ուրիշին համար: Յիսուսը քաջալերեց Պետրոսին՝ ըսելով անոր, որ երբ Պետրոսը կրկին հանդիպի «ճնշման», յաղթանակած դուրս պիտի գայ: Ան ընդունակ պիտի ըլլայ իրականացնելու այն, ինչին համար նախկինին երդում ըրած էր ինքնավստահութեամբ: Ան կրնար մեռնիլ մինչեւ Յիսուսին ուրանալը, իսկ եթէ ազատէր վախի եւ երկչոտութեան ճնշումէն, կը դառնար փոխուած մարդ:

Աստուած ասկա կ'ընէ մեր օգուտին համար: Ան կը զօրացնէ մեզ, երբ վախցած ենք: Ան թոյլ կու տայ, որ մենք այնքան ժամանակ դէմ առ դէմ հանդիպինք այն ամէնուն, ինչէն կը վախնանք, մինչեւ որ յաղթող ըլլանք: Երբ կը սպառենք մեր հնարատրութիւնները, պէտք է աղաղակենք Անոր: Այդ զօրութեան մէջ մենք չենք կրնար ձախողիլ, որովհետեւ սէրը երբեք չի ձախողիր (Ա. Կորնթ. 13.8):

Աստուած չի ցանկար, որ մենք փախչինք մեր թոյլ ոլորտներէն: Ան կը ցանկայ, որ մենք դէմ առ դէմ հանդիպինք ատոնց առանց վախնալու:

### «Կը խնդրեմ, հեռացուր ասկա»

Պօղոսն այս ամէնը լաւ գիտէր. «Եւ որ յայտնութիւններու առաւելութեամբ չհպարտանամ, մարմինիս համար խայթ տրուեցաւ ինծի՝ սատանայի հրեշտակ, որ ինծի բռունցքով ծեծէ, որ չգոռոզանամ» (Բ. Կորնթ. 12.7):

Ես կը կարծեմ, որ այս խօսքին մէջ վկայուած է չար հրեշտակի մը մասին, որուն սատանան ուղարկած էր Պօղոսին հարուածելու: Այս հրեշտակը Պօղոսին համար խնդիրներ կը ստեղծէր ամէնուր, ուր որ ան կ'երթար: Կորնթացիս երկրորդ թուղթի 11.24-27-ը կը

պատմէ որոշ խնդիրներու մասին, որոնց հանդիպած էր Պօղոսը.

*«Հրեաներէն հինգ անգամ՝ քառասունէն մէկը պակաս ծեծ ընդունեցի: Երեք անգամ ծաղկով ծեծուեցայ, մէկ անգամ քարկոծուեցայ, երեք անգամ նաւաբեկութեան հանդիպեցայ, ցերեկ ու գիշեր մը անդունդի մէջ մնացի: Շապ անգամ ճանապարհներու մէջ, գետերէն վրանգներ, հեթանոսներէն վրանգներ, քաղաքի մէջ վրանգներ, անապատի մէջ վրանգներ, ծովու մէջ վրանգներ, սուր եղբայրներէն վրանգներ: Ջանքի եւ աշխատանքի մէջ՝ շապ անգամ, արթնութիւններու մէջ, սովի եւ ծարաւի մէջ, շապ անգամ ծովի մէջ, ցուրտի եւ մերկութեան մէջ»:*

Ամէն տեղ, ուր Պօղոսը կը քարոզէր, Աւետարանին համար կ'իյնար զօրաւոր հալածանքի մէջ: Շղթաներ ու փորձանքներ կը սպասուէին անոր իւրաքանչիւր քաղաքի մէջ: Պօղոսը կը մտրակուէր, ճիպտոով կը ծեծուէր, կը քարկոծուէր, նաւաբեկութեան կ'ենթարկուէր եւ շատ այլ բաներ: Այսպիսով, ան գնաց Աստուծոյ քով ասոր համար:

*«Ասոր համար երեք անգամ աղաչեցի Տիրոջը, որ անոր հեռացնէ ինձմէ» (Բ. Կորնթ. 12.8):*

Հասկնալի է, որ Պօղոսը կ'ուզէր ազատ ըլլալ այս դիմադրութենէն եւ հալածանքէն: Աստուած պատասխանեց.

*«Բաւական է քեզի Իմ շնորհքը, որովհետեւ Իմ զօրութիւնը քեզ բարձրացնեն այն բաներէն վեր, որոնց դուն չես կրնար յաղթել: Պօղոս, ուր որ չկան խոչընդոտներ, հոն չկայ եւ զօրութեան կարիք: Յաղթանակը տեղի կ'ունենայ այն ժամանակ,*



### *Յանկութիւնը բաական չէ*

երբ պայքար կայ: Որքան մեծ է պայքարը, այնքան մեծ է յաղթանակը: ճշմարիտ զինուորը չի փախչի որ հակամարտութենէն, այլ կը վազէ ատոր ընդառաջ»: Պայքարի թէժ պահուն պէտք չէ խնդրել Աստուծոյն, որ մեզ դուրս հանէ պատերազմէն: Ատիկա ճիշդ այն պահն է, երբ պէտք է աղօթենք Աստուծոյ շնորհքին համար, որպէսզի կարենանք յաղթել: Աստուած կը փառաւորուի այն ժամանակ, երբ մենք դէմ առ դէմ կը հանդիպինք ինչ որ բանի, որ մեր մարդկային ուժերով անկարելի է յաղթահարել: Անկէ ետք է, որ Անոր զօրութիւնը կու գայ մեր վրայ, եւ բոլորը կրնան տեսնել ստիկա: Աստուծոյ շնորհքը կը յաղթէ ամէն տեսակի վախի եւ խոչընդոտի, որուն կը հանդիպինք: Դուն քեզ քաջալերէ Աստուծոյ այս քանի մը յորդորներով.

*«Բայց շնորհակալութիւն Աստուծոյ, որ ամէն ժամանակ մեզ յաղթող կը դարձնէ Քրիստոսին մէջ»  
(Բ. Կորնթ. 2.14):*

*«Բայց շնորհակալութիւն Աստուծոյ, որ տուաւ մեզի յաղթութիւն մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով»  
(Ա. Կորնթ. 15.57):*

*«Ապա ի՞նչ պիտի բաժնէ մեզ Քրիստոսի սէրէն, տառապանք, թէ նեղութիւն, թէ հալածանք, թէ սով, թէ մերկութիւն, թէ վրանգ, թէ սուր: Ինչպէս գրուած է, թէ ամէն օր Քեզի համար կը սպաննուինք եւ մորթուելու ոչխարի պէս համարուեցանք: Բայց այս ամէն բաներուն մէջ առաւել եւս կը յաղթենք Անոր միջոցով, որ մեզ սիրեց» (Հռովմ. 8.35-37):*

Յաղթողը կը հակառակի դիմադրութեան, կը յաղթէ եւ յաղթած դուրս կու գայ պայքարի միջէն: Պօղոսն ամուր բռնուեցաւ ասկէ, եւ անոր անհանգստութիւնը վերածուեցաւ յոյսի: Ան գրեց.

*«Արդ աւելի յօժարութեամբ իմ տրտութիւններով կը պարծենամ, որպէսզի Քրիստոսի զօրութիւնը իմ մէջ բնակի: Որովհետեւ հաճոյք ստացած եմ (հաւանած*

*եմ) տկարութիւններու, թշնամանքներու, վիշտերու, հալածանքներու եւ նեղութիւններու մէջ յանուն Քրիստոսի, որ երբ կը տկարանամ, այն ապեն կը զօրանամ» (Բ. Կորնթ. 12:9,10):*

Ուշադրութիւն դարձուր, որ ան կ'ըսէ՝ «հաւնած եմ, հաճոյք ստացած եմ»: Որքան յաճախ մենք կը տեսնենք մարդոց, որոնց հաճելի կը թուի յանդիմանութիւններու, կարիքներու, հալածանքներու եւ վիշտերու մէջ ըլլալը: Ատիկա միայն այն անձնաւորութիւնն է, որ ծածկուած է Քրիստոսի մէջ (Գաղատ. 2.20), միայն ան կրնայ հաճոյք ստանալ այսպիսի բաներէն: Այդպիսի մէկն կ'ապրի Քրիստոսին բարձրացնելու համար: Պօղոսը գիտէր, որ կրնայ վստահիլ Աստուծոյ շնորհքին, որն իրեն կը պահէր այնքան, մինչեւ Քրիստոսը մեծարուէր:

Պօղոսը Յիսուսին աւելի շատ կը սիրէր, քան իր սեփական կեանքը: Ան պատրաստ էր մեռնելու, բայց աւելի կը ցանկար ապրիլ Անոր համար: Աւելի ուշադիր նայիր փիլիպպեցիներուն ուղղած նամակին.

*«Իմ ականկալութեան եւ յոյսի համեմատ ոչ մէկ բանով ամօթ կ'ըլլամ, այլ բոլոր համարձակութիւնով, ինչպէս ամէն ժամանակ, հիմա ալ Քրիստոսը փառաւորուի իմ մարմինին մէջ, թէ՛ կեանքով, թէ՛ մահով» (Փիլիպ. 1.20):*

Պօղոսին համար նշանակութիւն չունէր կեանքով կը փառաւորէր Քրիստոսին, թէ մահով: Անոր համար կարելորդն այն էր, որ միայն թէ Քրիստոսը փառաւորուած ըլլար: Պօղոսը նկատի չունէր այն մահը, որ կ'ըլլայ տկարութեան կամ հիւանդութեան պատճառով: Յիսուսն այդ մահը կրած է մեզի համար՝ խաչի վրայ: Տկարութիւնը, հիւանդութիւնը Անոր փառք չեն բերեր: Հաւատալ, թէ մենք կը փառաւորենք Քրիստոսին հիւանդութենէն մեռնելով, այնքան սխալ է, որքան հաւատալը, թէ Յիսուսը կը փառաւորուի, եթէ մենք մեռնէինք մեղքի ստրկութեան մէջ: Յիսուսը երկուքն

### *Յանկութիւնը բաական չէ*

ալ կրեց խաչին վրայ (Եսայիա 53.4,5): Սաղմոս 103.2,3-ն կ'ըսէ. «Օրհնէ՛ Տիրոջը, ո՛վ իմ անձ, եւ մի՛ մոռնար Անոր բոլոր բարիքները, որ կը ներէ քու բոլոր մեղքերը, կը բժշկէ քու ամէն ցաւերը»: Ինչպէս կը տեսնենք, Պօղոսը չէր խօսեր տկարութեան կամ հիւանդութեան մասին: Մեր վերաբերմունքը պէտք է ըլլայ այսպիսին. «Տէ՛ր, կարեւորը Դուն փառաւորուած ըլլաս, որ Քու կամքը կատարուի, եւ սատանան բաժին չունենայ»: Պօղոսի՝ եսասիրութենէն զուրկ սէրը ծնունդ տուաւ համարձակութեան մը, որուն պարագային ոչ մէկ երկչոտութիւն կրնայ ներս թափանցել (կրկին՝ Փիլիպ. 1.20): Գիտնալով, որ իւրաքանչիւր քաղաքի մէջ կը հանդիպի հալածանքի եւ սպառնալիքի, ան ճեղքելով առջեւ կ'երթար: Պօղոսը ոչ մէկ մարդէ կը վախնար: Ան կը բաժնեկցէր Եփեսոսի երէցներուն հետ՝ ըսելով.

*«Եւ հիմա ահա ես Հոգիով կապուած կ'երթամ Երուսաղէմ եւ չեմ գիտեր, թէ հոն ինչ պիտի պատահի ինձի: Միայն թէ Սուրբ Հոգին քաղաքէ քաղաք կը վկայէ եւ կ'ըսէ, թէ կապանքներ ու նեղութիւններ կը սպասեն ինձի» (Գործք 20.22,23):*

Օ՛, ինչպիսի մարգարէական խօսք: Ինձի համար հետաքրքրական է, թէ քանի հոգիներ այսօր կը վազեն հոսուիոն այսպիսի խօսքի մը համար: Ո՛չ, անոնք չեն ալ ցանկար այսպիսի բան լսել: Մենք բոլորս կը սիրենք լաւ բաներ լսել, բայց Աստուած նաեւ կը զգուշացնէ զրկանքի համար, ատոր հետ մէկտեղ կը բերէ եւ յոյս, եւ քաջութիւն: Պօղոսը կը քաջալերէր նորադարձներուն՝ ըսելով. «Շատ նեղութիւններով պէտք է մեզ մտնել Աստուծոյ Արքայութիւնը» (Գործք 14.22):

Հետաքրքրական է, թէ ինչպէս մենք կ'արձագանգենք, եթէ ստանանք մարգարէական խօսք մը, որ ամէն անգամ մեզի կը սպասուին հալածանքներ եւ դիմադրութիւն: Անշուշտ, ես չեմ ըսեր, որ Աստուծմէ ստացած ամէն մէկ խօսք պէտք է այս բնոյթի ըլլայ:

Ինդիրն այն է, որ մեզի տրուած շատ խօսքեր մարդոց կը

դրդեն սխալ բաներ փնտոելու: Ատոնք գեղեցիկ, հաճելի խօսքեր են այն մասին, որ մարդիկ պէտք է բարգաւաճին առեւտուրի կամ ծառայութեան մէջ, որ ամէն բան լաւ պիտի ըլլայ անոնց համար: Յաճախ մարդիկ Աստուծոյ կը փնտոեն ու կը ծառայեն միայն այն բանի համար, թէ Ան ինչ կրնայ ընել իրենց կեանքին մէջ: Անոնց սէրը տակաւին հետաքրքրուած չէ Աստուծոյն իրենց կեանքով կամ մահով մեծարելով: Նայինք, թէ ինչպէս Պօղոսը կ'արձագանգէ կապանքներու եւ փորձանքներու մասին մարգարէական այս խօսքին.

*«Բայց ես բանի մը տեղ չեմ դներ եւ իմ անձն ալ պատրաստակամ չեմ համարեր, որ ուրախութեամբ կատարեմ իմ ընթացքը, եւ այն պաշտօնը, որ Տէր Յիսուսէն առի, որ Աստուծոյ շնորհաց Աւետարանին վկայեմ» (Գործք 20.24):*

Պօղոսի համարձակութեան բանալին այն էր, որ ան իր կեանքը սուղ բան չէր համարեր: Ան նաեւ հասկցած էր, որ Աստուծոյ ծրագիրն իր կեանքին համար կը ներառէր նաեւ հանդիպող փորձութիւններն ու հալածանքները: Յիսուսի հանդէպ Պօղոսի սէրն աւելի մեծ էր իր կեանքին նկատմամբ ունեցած սէրէն: Պօղոսի կեանքը ցոյց կու տայ մրցավազքն աւարտելու գաղտնիքը: Վար դիր քու կեանքը եւ վերցուր Քրիստոսի կեանքը: Յաճախ ասիկա կը նշանակէ, որ մենք պէտք է վար դնենք այն, ինչ որ յարմարաւէտ է, եւ վերցնենք ոչ յարմարաւէտը՝ խաչը:

## **Դուն համոզուած ես, որ այս Աւետարանը ամերիկեան է**

Ես գիտեմ, որ ասիկա հոգեհարազատ չէ ժամանակակից՝ արեւմտեան քրիստոնէութեան: Այն բաւական տարբեր է 1980-ականներուն եւ 1990-ականներուն մեր ապրածէն եւ քարոզածէն: Ես առաջիններէն եմ, որ կը խոստովանիմ, թէ ես ալ սխալած եմ: Անցեալ տասը տարիներու ընթացքին ես

### Յանկութիւնը բաական չէ

հանդիպած եմ «ծիթհանի» իրավիճակներու՝ սրտիս մէջ եղածը բացայայտելու համար: Պետրոսի նման կը վշտանայի, երբ կը տեսնէի իմ դատարկ խոստումները եւ սրտիս իրական վիճակը: Շատ դէպքերու մէջ ես կ'աղաղակէի Տիրոջը՝ խնդրելով Անոր փոխել իմ սիրտը: Ես վարժուած էի երախտապարտ ըլլալ ինծի զօրացնող փորձութիւններուն համար (Ա. Պետր. 1.6,7): Ես շատ լաւ հասկցած եմ Աստուածաշունչի հետեւեալ խօսքերը.

*«Արդ Քրիստոսը, որ մարմինով մեզի համար չարչարուեցաւ, դուք ալ նոյն մտքով զինուեցէք, որովհետեւ մարմինով չարչարուողը մեղքէն դադրեցաւ: Որ այլեւս ոչ թէ մարդոց ցանկութիւններուն պէս, այլ Աստուծոյ կամքին պէս ապրիք մարմինին մէջ մնացած ժամանակ» (Ա. Պետրոս 4.1,2):*

Չարչարանքներու մէջ մենք կը հասունանք: Ես չեմ խօսիր չարչարանքի կրօնական հասկացողութեան մասին, ըստ որուն պէտք է ընդունիլ հիւանդութիւնն ու աղքատութիւնը, քանի որ ատոնցմով կ'արժանանաս Աստուծոյ գնահատանքին: Եւ ոչ ալ նկատի ունիմ այն չարչարանքը, որ կ'ըլլայ տգիտութեան եւ սխալ, անաստուած վարքագիծին պատճառով: Աստուած չի փառաւորուիր այս բաներով: Չարչարանքները, որոնց մենք պէտք է հանդիպինք, այն չարչարանքներն են, որոնց փորձառութիւնը ունեցած է Քրիստոսը, փորձուած է ամէն ձեւով, մինչդեռ առանց մեղքի (Եբր. 4.15): Չարչարանքը, որ կը նկարագրէ Պետրոսը, մարդուն հանդիպած այն դիմադրութիւնն է, երբ սեփական մարմինն ու շրջապատի մարդիկ կը ստիպեն անոր երթալ ոչ թէ Աստուծոյ կամքով, այլ այն ճանապարհով, որ իրենք կ'ուզեն: Այս պարագային երկչոտութիւնը գլուխ կը բարձրացնէ, եթէ մենք արմատաւորուած չըլլանք Յիսուսի նկատմամբ ունեցած սիրոյ մէջ:

Պետրոսին պէս ես կը ցանկամ հետեւիլ Յիսուսին ոչ թէ մինչեւ հոն, ուր ես պարզապէս կ'ըսեմ, թէ Անոր համար կը դնեմ իմ կեանքը, այլ հոն, ուր ես կ'ընդունիմ իմ սեփական կեանքի եւ ցանկութիւններու մահը: Թոյլ տուր, որ միայն Ան փառաւորուի:

Ասիկա կ'իրագործուի Անոր շնորհքով: Ան Իր շնորհքը կու տայ խոնարհներուն (Յակոբ. 4.6): Ահա թէ ինչու հալածանքի հանդիպելու ժամանակ Պողոսը կրնար ըսել. «Ես հաճոյք ստացած եմ (հաւնած եմ): Տես, թէ ինչ կ'ըսէր Յովհաննէս առաքեալը անոնց մասին, որոնք յաղթեցին սատանային.

*«Եւ անոնք յաղթեցին անոր՝ Գառնուկին արիւնով եւ իրենց վկայութեան խօսքով, եւ չսիրեցին իրենց հոգին մինչեւ ի մահ» (Յայտնութիւն 12.11):*

Ես շատ շատ անգամ լսած էի այս խօսքը, բայց միայն ատոր մէկ մասը: Շատերը շատ շուտ կը կենան, անոնք բաց կը ձգեն խօսքի վերջին մասը: Ասիկա ալ ճիշդ այն բաժինն է, որ մեր՝ արեւմտեան մշակոյթին մէջ հանրաճանաչ չէ: Մենք չենք յաղթեր երկչոտութեան դէմ մղուող պայքարին մէջ այնքան ժամանակ, մինչեւ չմերժենք սիրել մեր կեանքը մինչեւ մահ: Եթէ մենք սիրենք մեր կեանքը, ապա ճանապարհներ կը փնտռենք այն փրկելու համար:

Աստուծոյ տղամարդիկ եւ կանայք, հիմա դուք գիտէք ճշմարտութիւնը. «Երկչոտութիւնը յաղթելու միակ ճանապարհը կեանքդ կորսնցնելն է»: Աղաղակէ՛ Աստուծոյ, երբ կը կարդաս: Մի՛ նահանջեր, այլ համարձակիր հաւատալ: Խնդրէ՛ Անոր, որ լեցնէ սիրտդ Իր սիրով, որ երբեք չի նահանջեր: Խնդրէ՛ Անորմէ Իր շնորհքը, որուն միջոցով կը յաղթես քեզի հանդիպող իրավիճակներուն: Խնդրէ՛ Անոր, որ քեզի արտօնութիւն տայ դժուար տեղերով երթալու համար: Աղօթէ՛, որ ըլլաս այն գործերուն կեդրոնը, որոնք Ան կ'ընէ երկրի մէջ: Մի՛ խնդրեր դիւրին կեանք: Ատոր փոխարէն խնդրէ՛ կեանք, որ կը փառաւորէ Անոր:

## **«Բայց ի՞նչ կ'ըսես այս մարդուն մասին»**

Եկրոր վերադառնանք այն պահուն, երբ Յիսուսն Իր յարութենէն յետոյ նախաճաշ կը պատրաստէր աշակերտներուն համար: Նախաճաշէն յետոյ Յիսուսը Պետրոսին չտուաւ «օրինում»

### *Յանկութիւնը բաական չէ*

մարգարէութիւն մը: Մինչդեռ Յիսուսին խօսքերը կը կրէին այն խոստումը, որ Պետրոսը պիտի յաղթէր իր ամենամեծ վախին եւ ան իր սեփական ցանկութիւնները չ'իրականացներ մարդկային ուժով: Յիսուան ըսաւ Պետրոսին, որ Իրեն հանդէպ ունեցած հաւատարմութեան պատճառով կը նահատակուի: Պետրոսը կը յաղթէր մէկ բանի, ինչին նախկինին չէր կրնար հանդիպիլ: Ան կը տեսնէր նոր Պետրոսին: Յիսուսը տեսաւ վերջնական աշխատանքը:

Պետրոսը դեռ պատրաստ չէր: Լսելով, թէ ինչ տեղի պիտի ունենայ, Պետրոսը շրջուեցաւ եւ տեսաւ Յովհաննէս առաքեալին եւ հարցուց Յիսուսին. «Բայց Տէր, ինչ կ'ըսես այս մարդուն մասին» (բառացի թարգմանութիւն անգլերէնէն) (Յովհ. 21.21): Պետրոսն իր անձը տակաւին կը համեմատէր ուրիշներուն հետ: Ըստ էութեան ան կ'ըսէր. «Եթէ ես պէտք է ասոր մէջէն անցնիմ, իսկ ան ինչ պիտի ընէ»:

Յիսուսը պատասխանեց. «Եթէ ես կամենամ, որ ան կենայ, մինչեւ ես գամ, քեզի ինչ, դուն Իմ ետեւէս եկրո՛ր» (Յովհ. 21.22):

Ուրիշ ձեւով ըսելու համար՝ ատիկա կարեւոր չէ. մի' համեմատեր քեզ ուրիշներուն հետ, ուղղակի հետեւիր Ինձի: Շատերը կը չափեն իրենց կեանքն ու ծառայութիւնները ուրիշներու ըրածին եւ ըսածին հետ: Դուն չես ցանկար քեզ չափել սխալ չափանիշով: Գոյութիւն ունի մեծ տարբերութիւն սանթիմետրի եւ քիլոմետրի միջեւ: Մեր եկեղեցիներուն մէջ մարդոց մեծ մասը իրենց կեանքը կ'ապրին ինչպէս, որ կ'ուզեն՝ յարմարաւէտութեան մէջ: Երբ մենք մեզ կը համեմատենք միւսներուն հետ, կը թուի, թէ մեր քով ամէն ինչ լաւ է (եւ շատ գաղջ): Կեղծ մխիթարութիւն է ըսելը, թէ ես լաւ եմ այնքան, որքան միւսները: Ասիկա ինքնախաբէութիւն է. մարդիկ կը հաւատան, որ եթէ դիմացինի կեանքին մէջ ամէն ինչ լաւ է, ապա իրենց քովս ալ ամէն ինչ լաւ է: Բայց եւ այնպէս, մենք ունինք մէկ չափանիշ, չափման մէկ ընդհանուր միաւոր: Մենք ոչ միւս քարոզիչներուն կամ եկեղեցիներուն, ոչ ալ մեր քոյրերուն ու եղբայրներուն մեզի համար չափանիշ կը համարենք: Մեր

չափանիշը Յիսուսն է: Յիսուսը Պետրոսին չըսաւ, որ հետեւի Յովհաննէսին: Ան ըսաւ. «Հետեւիր Ինձի»:

Յիսուսի անցած ուղին անձնուրացութեան ուղի էր: Բաւարար չէ Յիսուսին պարզապէս հետեւիլ ցանկալը կամ փափաքիլը: Մենք պէտք է հետեւինք: Կարդա՛ հետեւեալը.

*«Եւ Ան ժողովուրդն Իր աշակերտներուն հետ Իրեն քով կանչեց եւ անոնց ըսաւ. «Ո՛վ որ կ'ուզէ Իմ ետեւէն գալ, թող իր անձն ուրանայ եւ իր խաչը առնէ եւ Իմ ետեւէն գայ: Որովհետեւ, ով որ կամենայ իր անձն ապրեցնել՝ պիտի կորսնցնէ այն»» (Մարկ. 8.34,35ա):*

Ուշադրութիւն դարձուր, որ Յիսուսն ըսաւ՝ եթէ քու ցանկութիւնն է ամէն ինչ ընել կեանքդ փրկելու համար, ապա դուն կը կորսնցնես այն: Չարմանալի է, չէ՞: Եթէ փափաքիս այն բաները, որ այս աշխարհը կը ցանկայ, (նոյնիսկ եթէ երբեք չես ունենար), կը կորսնցնես քու կեանքը: Բայց եւ այնպէս ուշադիր նայիր, թէ Յիսուսն ինչ կ'ըսէ շարունակութեան մէջ:

*«Բայց ով որ իր անձն Ինձի եւ Աւերարանին համար կը կորսնցնէ, կ'ապրեցնէ այն» (Մարկ. 8.35բ):*

Ուշադրութիւն դարձուր, որ Յիսուսը չըսաւ, թէ ով որ կը ցանկայ կորսնցնել իր կեանքը Ինձի համար: Յանկութիւնը բաւարար չէ: Պետրոսն ալ ցանկաց հետեւիլ Յիսուսին եւ ճիշդ այդ գիշեր ուրացաւ Անոր: Բայց անոր շարժառիթին ետեւը ոչ Աստուծոյ սէրը կար, ոչ Անոր զօրութիւնը: Ատիկա պատճառ դարձաւ, որ ան պարտուի:

## Ստուգէ՛ քու սիրտը

Մինչ կը կարդաս այս գիրքը, ստուգէ՛ քու շարժառիթները: Արդե՞ծք դուն Յիսուս Բրիստոսին ճշմարիտ աշակերտն ես, թէ կը ցանկաս հետեւիլ Անոր միայն քու պայմաններով: Արդե՞ծք դուն կը մնաս քու սահմաններուն մէջ՝ հեռու մնալով անձնագոհութենէն:

Հնարաւոր է, որ այդ սահմանները պահպանեն քեզ Յիսուսին



### Յանկութիւնը բաական չէ

անցած ուղիներէն եւ վերջիվերջոյ որակագրկեն քեզ (տես Բ. Կորնթ. 13.5): Յիսուսին հետեւելու որոշում կայացնելէն առաջ, մենք նախեառաջ պէտք է իմանանք ատոր գինը: Այո՛, ատիկա ճիշդ է: Ատիկա արժէք ունի: Այն կը պահանջէ ոչ պակաս, քան քու ամբողջ կեանքը: Լսէ՛, թէ ինչպէս Յիսուսը բացատրեց ասիկա Իրեն հետեւիլ ցանկացող բազմութեանը:

*«Եւ շար ժողովորդներ կ'երթային Անոր ետեւէն, եւ դարձաւ անոնց ըսաւ. «Եթէ մէկը քովս գայ, եւ չափէ իր հորն ու մօրը, կնոջն ու որդիներուն, եւ եղբայրներուն եւ քոյրերուն եւ ինքն իր անձն ալ, ան չի կրնար Իմ աշակերտը ըլլալ: Եւ ով որ իր խաչը վեր չ'առնէր եւ Իմ ետեւէս չի գար, ան չի կրնար Իմ աշակերտը ըլլալ: Որովհետեւ ձեզմէ ով է, որ կամենայ աշտարակ շինել եւ առաջ չնստի ու ծախսը հաշուէ, թէ աւարտելու համար բաական բան ունի՞: Որ թերեւս, երբ որ հիմքը դնէ եւ չկարենայ աւարտել, ամէն փեսանողները սկսին ծաղր ընել անոր: Եւ ըսել, թէ այս մարդը սկսաւ շինել եւ չկրցաւ աւարտել... Արդ այդպէս ալ ձեզմէ ամէն մէկը, որ իր բոլոր ինչքէն չհրաժարի, չի կրնար Ինձի աշակերտը ըլլալ» (Ղուկ. 14.25-30,33):*

Ահա թէ ինչ կ'արժէ մինչեւ վերջ համբերելը: Մենք քիչ մը առաջ Յայտնութեան գիրքին մէջ կարդացինք, որ անոնք, որոնք յաղթեցին, չսիրեցին իրենց կեանքը մինչ ի մահ: Դժբախտաբար ասիկա չի կրնար ըլլալ այսօրուան Ամերիկայի եկեղեցւոյ ճշգրիտ նկարագրութիւնը:

Ես կրնամ շատ օրինակներ բերել քրիստոնեայ տղամարդոց եւ կանանց կեանքէն, որոնք կը շարունակեն իրենց կեանքի սեփականատէրերը ըլլալ: Երբ ես հովիւ էի, երիտասարդ կին մը մօտեցաւ ինձի եւ դժգոհելով ըսաւ. «Հովիւ ճո՛ն, ես այնքան սարսափելի կարծիք ունիմ իմ մասին: Կը խնդրեմ, աղօթէ՛, որպէսզի կարծիքս փոխուի»: Ես նայեցայ անոր եւ ըսի. «Ատիկա քու խնդիրն է»:

Կինը շփոթեցաւ: Ան կ'ակնկալէր երկարաժամ խրատներ լսել եւ վերջաւորութեան ալ՝ աղօթք: Կինը կը սպասէր, որ ես բարեհաճ կը գտնուիմ եւ քաղցր խօսքեր կ'ըսեմ, որպէսզի ան ինքնիրեն լաւ զգար: Իմ պատասխանը ցնցեց անոր: Բայց ճշմարտութիւնը մեզի կ'ազատէ, այլ ոչ թէ մեր խնդիրներու մասին խօսիլը՝ առանց ատոնց արմատներուն հարցերը լուծելու:

Ես հարցուցի կնոջը. «Աստուածաշունչին մէջ դուն դուր կը գտնես վկայութիւններ ինքնամեծարման կամ դուն քու մասին լաւ կարծիք ունենալու մասին: Յիսուսն ըսաւ, որ Իրեն հետեւելու համար դուն պէտք է մեռնիս: Երբեք դուն տեսած ես մեռած մարդ մը, որ նստած է դագաղին մէջ եւ կ'ըսէ՝ հէյ, ինչո՞ւ ինձի այսպէս հագցուցած էք, ատիկա ինձի հաճելի չի թուիր, ինչո՞ւ իմ մազերն այսպէս յարդարած էք, ինչ կը մտածեն մարդիկ»:

Ես կ'ուզէի ցոյց տալ կնոջը, որ Աստուածաշունչին համապատասխան չեն ինքնամեծարումն ու քու մասին լաւ կարծիք ունենալը: Յիսուսին հետեւելու եւ սիրելու համար դուն քու մասին լաւ կարծիք ունենալը պարտադիր չէ: Այդ կինը կեդրոնացած էր ժամանակաւորի եւ ոչ թէ յաւիտենականի վրայ:

Մենք չենք կրնար Աստուծոյ ծառայել, երբ միայն լաւ կարծիք ունինք մեր մասին, երբ մենք ոգեւորուած ենք, կամ ալ երբ ամէն ինչ կ'ընթանայ մեր ուզած ձեւով: Մարդոց, որոնք այսպէս կը վարուին, մենք կ'անուանէինք «լաւ օրերու ընկերներ»: Կ'ըլլան նաեւ «լաւ օրերու քրիստոնէաներ»: Անոնք իմաստուն չեն: Վերջիվերջոյ անոնք կը հանդիպին ինչ որ բանի, որ չի համապատասխաներ իրենց պատկերացումներուն: Այն կրնայ պատահիլ անոնց ընթացքի որեւէ փուլի մէջ: Եթէ անոնք պատրաստուած չեն, ապա կը յանձնուին: Հնարաւոր է, որ անոնք երթան եկեղեցի, տասանորդ վճարեն եւ զոհաբերութիւններ տան, խօսին լեզուներով եւ ըսեն ճիշդ բաներ, բայց իրենց սրտերուն մէջ հրաժարին Աստուծոյն որոնելէ: Աստուծոյ սէրը ոչ մէկ սահմանափակում ունի: Եթէ մենք իսկապէս կը ցանկանք քալել Անոր հետ, մենք պէտք է հեռացնենք մեր սահմանափակումները:

## Փոխուած մարդ

Երբ մենք կը նայինք Պետրոսին Գործք առաքելոց գիրքին մէջ, դժուար է հաւատալ, որ ան այն նոյն մարդն է, որ վախցաւ եւ ուրացաւ Քրիստոսին ծառաներուն առջեւ:

Սուրբ Հոգիով լեցուելէն յետոյ ան համարձակօրէն, առանց վախի ողջ Երուսաղէմի՝ տարածքին կը հռչակէր, որ Յիսուսը Տէրն է ու Մեսիան: Պետրոսը ձերբակալուեցաւ, եւ իրեն առաջնորդներուն առջեւ բերին, այն քահանաներուն, որոնք խաչաձ էին Յիսուսին: Այժմ Պետրոսը կեցած էր ոչ թէ ծառաներու, այլ ճիշդ նոյն խորհուրդին առջեւ, որ դատապարտեց Յիսուսին: Պետրոսը նայեցաւ անոնց եւ մեծ համարձակութեամբ յայտարարեց. «Դո՛ւք էիք, որ խաչեցիք Յիսուս Քրիստոսին՝ Մեսիային, եւ ուրիշ մէկով ալ փրկութիւն չկայ, բացի Անորմէ» (տես Գործք 4.8-12):

Պետրոսին եւ Յովհաննէսին համարձակութիւնը զարմացուց խորհուրդին, եւ անոնք չկրցան որեւէ բան ըսել այն գործին դէմ, որ Աստուած կ'ընէր: Այդ մարդիկ վերահսկելու վարպետներ էին եւ դիմեցին վախցնելու միջոցին: Անոնք ըսին իրարու. «Այլ որպէսզի անելի չտարածուի ժողովուրդին մէջ, սաստիկ սպառնանք անոնց, որ այլեւս այն անունով չխօսին մարդոցմէ ոչ մէկուն հետ» (Գործք 4.17):

Յիշէ՛, որ այս առաջնորդները հազիւ նոր խաչաձ էին Յիսուսին: Իսկ Յիսուսը Պետրոսին արդէն ըսած էր, որ ան պիտի մահանայ այնպէս, ինչպէս որ Ինքը մահացաւ: Ասոնք դատարկ սպառնալիքներ չէին: Մինչդեռ, նոյնիսկ հնարաւոր մահուան առջեւ կեցած, Պետրոսն ու Յովհաննէսը համարձակօրէն հաստատեցին. «Եթէ արժան է Աստուծոյ առջեւ, որ ձեզի անելի ականջ դնենք, քան թէ Աստուծոյն, դուք դատեցէք: Որովհետեւ մենք չենք կրնար այն, որ տեսանք եւ լսեցինք, չխօսիլ» (Գործք 4.19,20):

Երբ Պետրոսը կեցած էր խորհուրդին առջեւ, միայն Յովհաննէսը անոր հետ էր: Չկար մէկը, որուն վրայ տպաւորութիւն ձգելու կամ ազդելու պէտք ըլլար: Հիմա Պետրոսն այլ համարձակութիւն ունէր:

Այդ համարձակությունը բոցավառած էր Յիսուսին նկատմամբ ունեցած սէրէն: Ան էի Յովհաննէսը ազատ արձակուեցան ու նորէն միացան աշակերտներուն՝ պատմելով, թէ ինչ տեղի ունեցած էր եւ այն սպառնալիքներուն մասին, որ տեղի ունեցան: Հիմա տես, թէ այս մարդիկ ինչ կը խնդրեն Աստուծմէ, որ ընէ.

*«Եւ հիմա, Տէր, նայիր անոնց սպառնալիքին եւ փորձու ծառաներուն բոլոր համարձակութիւնով Քու խօսքը խօսիլ, որ Քու ձեռքը մեկնես, որ բժշկութիւն եւ նշաններ եւ հրաշքներ կատարուին, Քու սուրբ Որդի Յիսուսի անունով» (Գործք 4.29,30):*

Այս մարդիկ Աստուծմէ անելին կը խնդրէին, քան խնդիրներու մէջ չլինալը: Անոնք գիտէին, որ Աւետարանը քարոզելով՝ իրենց կեանքերը վտանգի տակ կը դնեն: Բայց կը շարունակէին քարոզել, իսկ Աստուած հաւատարիմ էր հզօր հրաշքներ կատարելու համար: Աշակերտները թոյլ չտուին, որ երկչոտութեան պատճառով Աստուծոյ պարգեւը հանգչի իրենց մէջ: Փաստօրէն, Աստուծոյ զօրութիւնն այնքան ուժեղ էր, որ հիւանդներուն դուրս կը հանէին Երուսաղէմի փողոցներուն վրայ, եւ մարդիկ կը բժշկուէին, երբ Պետրոսին շուքն անոնց վրայ կ'իյնար (Գործք 5.15):

Քահանայապետը եւ խորհուրդը իրականացուցին իրենց սպառնալիքները: Անոնք աշակերտներուն ձեռքակալեցին եւ բանտ նետեցին: Քահանայապետն ըսաւ. «Չէ որ պատուիրելով պատուիրեցինք ձեզի, որ չստրվեցնէք այդ անունով, եւ ահա Երուսաղէմը լեցուցիք ձեր ուսմունքով եւ կը կամենաք այն մարդուն արիւնը մեր վրայ բերել» (Գործք 5.28):

Պետրոսը նորէն համարձակօրէն պատասխանեց.

*«Աստուծոյ պէտք է անելի հնազանդի, քան թէ մարդոց: Մեր հայրերու Աստուածը յարութիւն փուրաւ Յիսուսին՝ Որուն դուք փայտէն կախած սպաննեցիք: Աստուած Անոր Առաջնորդ է և Փրկիչ բարձրացուց Իր աջով, որ Իսրայէլին ապաշխարութիւն եւ մեղքերու*

### *Յանկութիւնը բաական չէ*

*թողութիւն տայ: Եւ մենք Անոր վկաներն ենք այս բաներուն համար, եւ Սուրբ Հոգին ալ, որ Աստուած Իրեն հնազանդողներուն տուաւ» (Գործք 5.29-32):*

Ինչպիսի խիզախութիւն եւ համարձակութիւն: Աշակերտները վախցած չէին: Պետրոսը արդէն երկար ժամանակ էր, որ չէր ձգտեր իր կեանքը պահպանել: Ան ազատ էր եսասիրութենէն եւ լեցուած էր Աստուծոյ Սուրբ Հոգիով: Աստուծոյ սէրը առատութեամբ լեցուած էր անոր սրտին մէջ: Ինչպէս Հռովմայեցիներու 5.5-ն կ'ըսէ. «Որովհետեւ Աստուծոյ սէրը փռուած է մեր սրտերուն մէջ Սուրբ Հոգիին ձեռքով, որ տրուեցաւ մեզի»:

Հասկնալի է, որ Սուրբ Հոգին կը բերէ Աստուծոյ սէրը մեր կեանքերուն մէջ: Բայց Պետրոսի օրինակէն նաեւ հասկնալի է, որ Սուրբ Հոգին կը տրուի անոնց, որոնք կը *հնազանդին*. Շատ-շատ քրիստոնեաներ կ'ուզեն սէրն ունենալ առանց հնազանդութեան:

Լեզուներով խօսիլը երաշխիք չէ, որ Աստուծոյ սէրը կը մնայ քու սրտին մէջ: Սուրբ Հոգիով լեցուած ըլլալը մէկ անգամուան փորձառութիւն չէ: Նշանակութիւն չունի, թէ որքան լաւ գիտես Սուրբ գիրքը եւ թէ որքան լաւ կը խօսիս լեզուներով: Եթէ դուն Աստուծոյ առջեւ հնազանդ կեանքով չես ապրիր, քու սէրը կը սկսի սառիլ: Իւրաքանչիւր անհնազանդութիւն կրնայ պակսեցնել այդ սէրը:

Յիսուան ըսաւ, որ վերջին օրերու նշաններէն մէկն այն է, որ քրիստոնեաներու սրտերուն մէջ Աստուծոյ սէրը կը կը սկսի սառիլ անօրէնութեան կամ անհնազանդութեան պատճառով (Մատթ. 24.12): Յիսուսին ըսած սէրը *ակափէ* սէրն է: Անոնք, որոնք ընդունած են Յիսուսին, միայն անոնք կը կրեն այս սէրը: Հնարաւոր է, որ լեցուած ըլլաս Հոգիով, բայց Հոգիի իսկական սէրը բացակայի:

Պետրոսին ու Յովհաննէսին հնազանդութիւնը անոնց համարձակութիւն բերաւ եւ սրտերը լեցուց սիրով:

*«Եւ առաքեալներուն կանչեցին՝ ծեծեցին, ու պատուէր տրուին, որ չխօսին Յիսուսին անունով, եւ արձակեցին*

*անոնց: Իսկ անոնք ուրախանալով գացին արեանի երեսէն, որովհետքեւ արժանի եղան Անոր անունին համար անարգուիլ» (Գործք 5.40,41):*

Պետրոսն ու Յովհաննէսը չէին վախցած առաջնորդներէն, անոնք լեցուած էին ուրախութեամբ: Ասոնք շատ կը տարբերէին այն աշակերտներէն, որոնք քնացած էին պարտէզին մէջ: Անոնք կ'ուրախանային, որ հալածուեցան եւ առիթ ունեցան ցոյց տալու իրենց սէրն ու հաւատարմութիւնը: Պետրոսը հիմա ոչ միայն զգացմունքային ձեւով կը սիրէր, այլեւ իր ողջ էութեամբ:

*Տոքոսի «Աշխարհի քրիստոնեայ նահապակները»* գիրքին մէջ կը պատմուի, որ Պետրոսը նահատակուեցաւ այնպէս, ինչպէս որ Յիսուսն ըսած էր: Երբ Պետրոսին կը պատրաստուէին խաչել, ան ըսաւ. «Ես արժանի չեմ մեռնելու այնպէս, ինչպէս որ իմ Տէրը մահացաւ»: Ատոր համար ալ անոր խաչեցին գլխիվայր: Պետրոսը հեռացաւ այս աշխարհէն որպէս յաղթող: Հալելուիս:



**Որմէ, որ կը վախնաս, անոր  
կը ծառայես:**



## ԱՍՏՈՒԾՈՅ ԵՐԿԻՒՂ, ԹԷ ՄԱՐԴՈՒ ՎԱԽ

Այն ամենը, ինչ որ մենք կարդացինք և ուսումնասիրեցինք մինչևե հիմա, կ'առաջնորդէ մեզ երկչոտութեան դէմ պայքարի ամենավճռական պահուն: Ասիկա կարելոր է ոչ միայն այն ժամանակ, երբ դէմ առ դէմ կը հանդիպինք երկչոտութեանը, այլեւ կեանքի իւրաքանչիւր ոլորտի համար: Ես պիտի խօսիմ Տիրոջ երկիւղի մասին:

Եկեղեցին չի հասկնար Տիրոջ երկիւղը: Ասիկա դժբախտութիւն է, որովհետեւ ատիկա յաղթական քրիստոնէական կեանքի համար կարելոր նախապայման է: Եսայիան մարգարէացաւ Յիսուսին մասին. «Եւ Անոր ախորժանքը Տիրոջ երկիւղն է» (Եսայիա 11.3): Անոր նոյն հաճութիւնը (ախորժանքը) պէտք է նաեւ մենք ունենանք:

Այն մարդը, որ երկիւղ ունի Տիրոջմէն, կ'առաջնորդուի

Աստուծոյ ճանապարհներով (Սաղմ. 25.12): Այդպիսի մարդուն «անձը բարութեան մէջ պիտի բնակի, եւ անոր սերունդը երկիրը պիտի ժառանգէ» (Սաղմ. 25.13):

Մեզի ըսուած է, որ Տիրոջ երկիւղը իմաստութեան եւ Անոր ճանչնալու սկիզբն է (Առակ. 9.10, 1.7, 2.5): Տիրոջ երկիւղը կ'երկնցնէ մեր օրերը (Առակ. 10.27): Մեզ զգուշացուած է, որ առանց սրբութեան ոչ ոք կը տեսնէ Տիրոջը, քանի որ սրբութիւնը կը կատարելագործուի Տիրոջ երկիւղով (Եբր. 12.14, Բ. Կորնթ. 7.1): Եւ ասոնք օրինակներէն քանի մը հատն են, ինչ որ Աստուածաշունչը կ'ըսէ Տիրոջ երկիւղին մասին:

Երկչոտութենէն ամբողջապէս ազատ ապրելու միակ ճանապարհը Տիրոջ երկիւղի մէջ քալելն է: Աստուածաշունչը կ'ըսէ. «Տիրոջ վախին մէջ զօրաւոր վստահութիւն կայ, եւ Անոր որդիներուն համար ապաւէն պիտի ըլլայ» (Առակ. 14.26): Զօրաւոր վստահութիւնը առաջ կը բերէ համարձակութիւն, որ մեզի անհրաժեշտ է, որպէսզի կարենանք քալել Աստուծոյ ճանապարհներով, այլ ոչ թէ մարդկային:

Եկնոր քննենք Աստուծոյ երկիւղին եւ մարդու վախին միջեւ եղած տարբերութիւնները:

## **Աստուծոյ երկիւղին եւ մարդու վախին տարբերութիւնները**

Նախ քննենք, թէ ո՞րն է Աստուծոյ երկիւղը: Այն կը ներառէ Անոր նկատմամբ յարգանքը, բայց անելին է քան ատիկա: Աստուծմէ երկիւղ ունենալը կը նշանակէ Անոր տալ այն պատիւը, փառքը, յարգանքը, գոհութիւնը, փառաբանութիւնը եւ լաւագոյնը, որուն Ան արժանի է: (Ուշադիր եղի՛ր, որ ատիկա այն է, ինչին Ան արժանի է, այլ ոչ թէ, որ մենք կը կարծենք, թէ Ան արժանի է): Աստուած այս դիրքը կ'ունենայ մեր կեանքին մէջ, երբ մենք կը յարգենք Անոր եւ Անոր ցանկութիւնները վեր կը դասենք մեր սեփականէն: Այդ պարագային մենք կ'ատենք այն, ինչ որ Աստուած կ'ատէ եւ կը սիրենք այն, ինչ որ Ան կը սիրէ, ակնածանք կ'ունենանք Անոր

## *Աստուծոյ երկինդ, թէ՛ մարդու վախ*

ներկայութեան եւ Խօսքին հանդէպ:

Երկրորդ՝ եկրոր քննենք մարդուն վախը: Երբ կը վախնաս մարդէն, միշտ կ'ըլլաս խուճապի, անհանգստութեան, սոսկումի եւ կասկածի մէջ՝ վախնալով մահկանացու մարդէն:

Երբ կ'իյնանք վախի այս ծուղակին մէջ, կ'ապրինք փախուստի մէջ, կը պահուրտինք վնասէն ու մեղադրանքէն, մշտապէս կը խուսափինք մերժուածութենէն եւ հակամարտութենէն: Մենք զբաղած կ'ըլլանք մեզ պաշտպանելով եւ մարդոց ծառայելով, Աստուծոյ ծառայելու մէջ կը դառնանք անարդինաւէտ: Վախնալով այն բանէն, թէ ինչ կրնայ ընել մեզի մարդը, մենք չենք տար Աստուծոյ այն, ինչին, որ Ան արժանի է:

Աստուածաշունչը կ'ըսէ մեզի. «Մարդուն վախը որոգայթի մէջ կը նետէ» (Առակ. 29.25): Որոգայթը ծուղակ է: Մարդուն նկատմամբ վախը կը գողանայ քեզի տրուած Աստուծոյ իշխանութիւնը: Այնուհետեւ քու մէջ կը մարի Աստուծոյ պարգեւը: Դուն քեզի անզօր կը զգաս ճիշդ գործելու համար, որովհետեւ Աստուծոյ զօրութիւնը չի գործեր քու մէջ: Եսայիա 51.7-13-ը կը խրատէ. «Լսեցէք Ինծի, ով արդարութիւն ճանչցողներ, ով անզգ, որ Իմ օրէնքն ունիս սրտիդ մէջ, մի՛ վախնաք մարդոց նախատինքն եւ անոնց բամբասանքն մի՛ զարհուրիք... դուն ի՞նչ ես, որ կը վախնաս մահկանացու մարդէն եւ մարդու որդիէն, որ խոտի պէս շինուած է, եւ կը մոռնաս քեզ ստեղծող Տիրոջը»:

Երբ մենք կը հաճեցնենք մարդոց՝ խուսափելով անոնց հակառակելէն, ատորմով կը մոռնանք Տիրոջը: Մենք կը հեռանանք Անոր ծառայութենէն: «Եթէ տակաւին մարդոց հաճոյ ըլլայի, Քրիստոսի ծառայ չէի ըլլար» (Գաղատ. 1.10):

Դուն կը ծառայես եւ կը հնազանդիս անոր, որմէ որ կը վախնաս: Եթէ դուն վախնաս մարդէն, դուն կը ծառայես անոր: Եթէ դուն վախնաս Աստուծմէ, դուն կը ծառայես Անոր: Դուն չես կրնար Աստուծոյ երկինդն ունենալ, եթէ մարդէն կը վախնաս, որովհետեւ դուն չես կրնար ծառայել երկու տէրերու (Մաթ. 6.24): Միւս կողմէն՝ դուն չես վախնար մարդէն, եթէ ունիս Աստուծոյ երկինդը:

## **Արդեօք պէտք է, որ Նոր կտակարանի հաւատացեալները Աստուծմէ վախնան՝ Անոր երկիւղն ունենան**

Աստուծոյ երկիւղը մեռած, Հին կտակարանի ուսմունք չէ: Այն ապրելածն է: Եթէ դուն կը սիրես Աստուծոյ, դուն կը վախնաս միայն Անորմէ: Աստուծոյ նկատմամբ եղած քու երկիւղը «կը կլլէ» բոլոր մանր վախերը:

Ես կը վշտանամ, երբ կը լսեմ մարդոց, որոնք Աստուծոյ մասին կը խօսին այնպէս, կարծես Ան այդ մարդոց յանձնարարութիւնը կատարող պատանի մըն է: Եթէ անձնաւորութիւն մը Անոր մասին այս կարծիքն ունի, կը նշանակէ ան ճշմարտապէս չի ճանչնար Տիրոջը: Նոյնիսկ Յիսուսի ամենամտերիմ աշակերտները Անոր Տէր եւ Վարդապետ կ'անուանէին (Յովհ. 20.28): Եթէ մենք Տիրոջ հետ սովորականի պէս կը վարուինք, կը կորսնցնենք Անոր իրական դիրքին նկատմամբ ողջախոհութիւնը:

Այսպիսի վերաբերմունքը պատճառ կը դառնայ, որ մենք անարգալից վարուինք: Այս երեւոյթը կը տեսնենք եւ եկեղեցոյ, եւ «հաւատացեալներու» անձնական կեանքերուն մէջ: Անոնք իրենց կ'անուանեն «հաւատացեալներ», բայց արդեօք անոնց ապրելաճըր ատիկա ցոյց կու տայ: Յաճախ ես կը վշտանամ, երբ կը տեսնեմ, թէ մարդիկ ինչպէս կը գործեն եկեղեցոյ մէջ: Մինչեւ ծառայութիւնը անոնք, մէկը միւսէ առաջ իյնալով, տեղ կը գրաւեն եւ կը վրդովին, եթէ ինչ որ մէկը նստած կ'ըլլայ իրենց տեղը: Անոնք անդադար կը զրուցեն ծառայութեան ընթացքին: Յետոյ ոտքի կը կենան ու կը հեռանան, եթէ կը մտածեն, որ ծառայութիւնը շատ երկարեցաւ, կամ ալ, եթէ անոնց հաճելի չի թուիր լսածը:

Տազնապեցնող է իրենց հովիներու նկատմամբ անոնց յարգանքի բացայայտ պակասը տեսնելը: Անոնք Աստուծոյ ծառայողներուն մասին կը խօսին այնպէս, ինչպէս լրատուամիջոցները՝ քաղաքական գործիչներուն մասին: Հաւանաբար շատ ծառայողներ աւելի քաղաքական գործիչներու պէս գործած են, քան Աստուծոյ մարդոց:

### *Աստուծոյ երկինք, թէ՛ մարդու վախ*

Բայց, միեւնոյնն է, Անոնք Աստուծոյ ծառաներն են, եւ Անորն է դատաստանը: Երբ մենք կը վախնանք Աստուծմէ, յարգանք կ'ունենանք նաեւ Անոր տան, ինչպէս նաեւ Անոր նշանակած ծառաներուն նկատմամբ: Դաւիթը ձեռք չբարձրացուց Աստուծոյ օծուած թագաւորին՝ Սաւուղին վրայ նոյնիսկ այն բանէն ետք, երբ Սաւուղը սպաննած էր Տիրոջ ութսունհինգ քահանաներուն (Ա. Թագ. 22.11-23): Դաւիթն ունէր Աստուծոյ երկիւղը:

Ես վշտացած եմ շատ բաներէն, ինչ հաւատացեալները կը լսեն, կը դիտեն եւ կը կարդան: Ոմանց տուները այցելելու ժամանակ ինծի համար հետաքրքրական եղած է, թէ արդե՞ծք կայ որեւէ տարբերութիւն անոնց ապրելաձեւին եւ աշխարհիկ մարդուն ապրած կեանքին միջեւ: Հաւասարակշռուած, սովորական եւ ճանչցուած ըլլալու իրենց որոնման մէջ անոնք մոռցած են, որ Աստուած «սովորական - նորմալ» չ'անուաներ այն, ինչ որ աշխարհը «սովորական - նորմալ» կը համարէ: Երբ դուն ճշմարտապէս կը սիրես Աստուծոյ ու միայն Անորմէ կ'երկիւղիս, կ'ապրիս սուրբ եւ ոչ աշխարհիկ կեանքով:

Պետրոսը կը յորդորէր.

*«Ձեզ կանչող Սուրբին պէս դուք ալ սուրբ եղէք ձեր բոլոր վարքերուն մէջ, որովհետեւ գրուած է՝ սուրբ եղէք, որովհետեւ Ես Սուրբ եմ: Եւ եթէ Հայր կը կանչէք Անոր, որ առանց աջառութեան դատաստան կ'ընէ ամէն մէկուն գործին պէս, ապա ձեր պանդխտութեան ժամանակը վախով վարուեցէք» (Ա. Պետր. 1.15-17):*

Աստուծոյ երկիւղը մեծ դրդապատճառ է մեզի անաստուածութենէն պահպանելու համար:

## **Եկեղեցին կը վախնայ**

Գործք առաքելոց 2-րդ գլուխին մէջ աշակերտները լեցուեցան Սուրբ Հոգիով եւ կը խօսէին լեզուներով ու կը մարգարեանային: Անոնք այնքան լեցուած էին, որ կարծես գինովցած ըլլային: Ծիծաղն

ու ուրախութիւնը կը յորդէր այս նոր հաւատացեալներէն: Աստուած կը զօրացնէր ու կը թարմացնէր անոնց: Ասիկա Աստուծոյ հաճոյք կը պատճառէր: Ան վրէժխնդիր Աստուած չէ, որ հաճոյք ստանայ վիատութենէն. Ան հաճոյք կը ստանայ սիրոյ, ողորմութեան, արդարութեան, խաղաղութեան եւ ուրախութեան մէջ:

Աշակերտները տեսան շատ մարդոց, որոնք փրկուեցան յաջորդ քանի մը օրերուն ընթացքին: Բայց այս նորադարձներէն ոմանք Աստուծոյ եկած էին աւելի շատ օրհնութիւններ ստանալու, քան յատկապէս Անոր համար: Այդ պատճառով ալ անոնք Աստուծոյ չտուին արժանի յարգանքը: Աստիճանաբար անոնք սկսան շատ «սովորական» վարուիլ Տիրոջ հետ: Ասիկա ալ պատճառ դարձաւ, որ Աստուծոյ վերաբերող բաները սովորական դարձան: Անոնք ակնածանք չունէին Տիրոջ ներկայութեան եւ Խօսքին նկատմամբ: Մենք ասոր վկայութիւնը կը տեսնենք Գործք առաքելոց 5-րդ գլուխին մէջ:

Մարդ ու կին մը իրենց վաճառած հողամասէն զոհաբերութիւն բերին: Ատիկա վաճառքէն ստացած ամբողջ գումարը չէր: Բայց ատորմով ամուսինները կ'ուզէին լաւ երեւիլ միւս հաւատացեալներուն աչքին: Անոնք աւելի պատուեցին աչքի երեւոյթը, քան ճշմարտութիւնը, եւ աւելի վախցան մարդէն, քան թէ Աստուծմէ:

Ամուսինները բերին զոհաբերութիւնը, խաբեցին (շատերը ասիկա կը համարէին արդարացուած սուտ) եւ ինկան մահացած:

Անոնք մահացան, որովհետեւ սուտ խօսեցան Աստուծոյ փառքին ներկայութեան մէջ: Ես կը մտածէի այսպէս (վստահ եմ, որ դուն ալ մտածած ես). «Շատերն այս օրերուն նոյնը ըրած են քարոզիչներու ներկայութեամբ եւ չեն մահացած: Ինչի՞նչ»:

Ես կը կարծեմ, որ ատոր պատճառն այն է, որ Գործք առաքելոց գիրքի ժամանակաշրջանին մէջ Աստուծոյ ներկայութիւնն աւելի զօրաւոր էր, քան այսօր: Օրինակ, Գործք առաքելոց գիրքը կը պատմէ, որ հիւանդները կը բժշկուէին, երբ Պետրոսին շուքը կ'իյնար անոնց վրայ (Գործք 5.15): Այսօր մենք այս կարգի հրաշքներ չենք տեսներ:

### *Աստուծոյ երկինդ, թէ՛ մարդու վախ*

Ես կը կարծեմ, որ երբ Տիրոջ ներկայութիւնն ու փառքը շատնայ, տեղի կ'ունենան այն նոյն հրաշքները, որոնցմէ մէկն ալ կը նկարագրուի Գործք առաքելոց գիրքի 5-րդ գլուխին մէջ: Ուշադրութիւն դարձուր, թէ ինչ տեղի ունեցաւ անոնց մահէն ետք.

*«Եւ մեծ ահ եղաւ բոլոր եկեղեցւոյ վրայ, որ այս լսեցին» (Գործք 5.11):*

Վերականգնուեցաւ Տիրոջ նկատմամբ ակնածանքն ու յարգանքը: Անոնք հասկցան, որ կարիք ունէին վերանայելու Աստուծոյ ներկայութեան եւ օծութեան նկատմամբ իրենց վերաբերմունքը: Յիշէ՛, թէ Աստուած ինչ ըսած է.

*«Ինծի մօտեցողներով պիտի սրբուիմ, եւ բոլոր ժողովուրդին առջեւ պիտի փառաւորուիմ» (Ղեւրացիս 10.3):*

## **Երբ Աստուած լուռ է, կը բացայայտուին մեր սրտերը**

Աստուած պահած է Իր փառքը մեզի փորձելու եւ պատրաստելու համար: Արդե՞ծք մենք յարգալից կ'ըլլանք նոյնիսկ այն ժամանակ, երբ Անոր ներկայութիւնը չի դրսեւորուիր: Յաճախ շատ հարցերու մէջ ժամանակակից եկեղեցին կը վարուի Իսրայէլի որդիներուն պէս: Փաստօրէն Պօղոսն ըսաւ, որ անոնց փորձառութիւնները գրուեցան որպէս օրինակներ մեզի համար (Ա. Կորնթ. 10.6):

Իսրայէլցիները կ'ոգեւորուէին, երբ Աստուած կ'օրհնէր անոնց եւ հրաշքներ կ'ընէր: Երբ Աստուած բացաւ Կարմիր ծովը, անցուց անոնց չոր գետնի վրայէն եւ յետոյ խորտակեց իսրայէլցիներուն հետապնդող թշնամիներուն, անոնք կ'երգէին, կը պարէին եւ կ'աղաղակէին յաղթանակի համար (Ելից 15.1-21): Այնուամենայնիւ, քանի մը օր ետք, երբ Աստուծոյ ամենակարող զօրութիւնը բացայայտ չէր, իսկ սնունդի պաշարները կը վերջանային, անոնք տրտնջացին Աստուծոյ դէմ (Ելից 15.22):

Աւելի ուշ Մովսէսը ժողովուրդին բերաւ Սինա լեռան քով, որպէսզի սրբացնէր անոնց՝ Աստուծոյ ներկայանալու համար: Աստուած Իր բոլոր ժողովուրդին աչքին առջեւ իջաւ լեռան վրայ: Ատիկա բաւականին սարսուեցնող էր. ամպրոպ ու կայծակ, լեռան վրայ ամպի խիտ շերտ մը: Յետոյ Մովսէսը ժողովուրդին դուրս բերաւ ճամբարէն Աստուծոյ հանդիպելու համար, բայց «ժողովուրդը տեսաւ եւ ետ քաշուեցաւ ու հեռու կանգնեցաւ» (Ելից 20.10-18): Անոնք ահաբեկուած ետ քաշուեցան ոչ թէ Աստուծմէ վախնալով, այլ իրենց կեանքին համար եղած վախին պատճառով: Երբ Աստուած իջաւ, բացայայտուեցաւ, որ անոնք իրենց կեանքերն աւելի շատ կը սիրէին, քան Աստուծոյ:

Ժողովուրդն ըսաւ Մովսէսին. «Դուն խօսիր մեզի հետ, եւ մենք կը լսենք, բայց Աստուած թող չխօսի մեզի հետ, որ չմեռնինք: Եւ Մովսէսն ըսաւ ժողովուրդին. «Մի՛ վախնաք, որովհետեւ Աստուած ձեզի փորձելու համար եկած է, այնպէս որ Անոր վախը ձեր առջեւ ըլլայ, որ չմեղանչէք» (Ելից 20.19,20):

Ուշադրութիւն դարձուր, որ Աստուծոյ երկիւղը քեզի զօրութիւն կու տայ մեղքի մէջ չիյնալու համար: Առակաց 16.6-ն կ'ըսէ. «Տիրոջ վախով մարդ կը հեռանայ չարէն»:

Ելից 20.21-ը կը շարունակէ պատմութիւնը. «Եւ ժողովուրդը հեռու կեցաւ, եւ Մովսէսը մօտեցաւ այն թանձր խաւարին, ուր որ Աստուած է: Մովսէսն ըսաւ Աստուծոյ, թէ անոնք ինչ ըսած էին եւ թէ ինչպէս վախցած էին: Աստուած պատասխանեց. «Այս ժողովուրդին՝ Քեզի ըսած խօսքերուն ձայնը լսեցի: Անոնց ամէն մէկ խօսքը լաւ է: Երանի թէ անոնց սիրտն ալ այնպէս ըլլար, որ Ինձմէ վախնալով Իմ բոլոր պատուիրանները պահէին ամէն ժամանակ, որպէսզի իրենց համար բարի ըլլար եւ իրենց որդիներուն ալ՝ յաւիտեան»» (Երկր. օր. 5.28,29):

Ուշադրութիւն դարձուր, որ ժողովուրդը ետ քաշուեցաւ, մինչդեռ Մովսէսն աւելի մօտեցաւ: Ասիկա ցոյց կու տայ տարբերութիւնը Մովսէսին եւ Իսրայելի միջեւ: Մովսէսը երկիւղ ունէր Աստուծմէ, այդ պատճառով ալ ան անվախ էր: Մարդիկ երկիւղ չունէին Աստուծմէ,



### *Աստուծոյ երկինք, թէ՛ մարդու վախ*

ատոր համար ալ անոնք վախցան: Աստուծոյ երկիւղը քեզի ոչ թէ կը հեռացնէ, այլ կը քաջէ, կը տանի Աստուծոյ ներկայութեան մէջ: Այնուամենայնիւ, մարդու նկատմամբ եղող վախը պատճառ կը դառնայ, որ դուն ետ քաշուիս Աստուծմէ եւ Անոր փառքէն:

Երբ մենք կապուած ենք մարդու վախով, աւելի յարմարաւէտ կը զգանք մարդոց ներկայութեան մէջ, քան թէ Աստուծոյ (նոյնիսկ եկեղեցիին մէջ): Պատճառն այն է, որ Աստուծոյ ներկայութիւնը կը բանայ մեր սրտերը եւ յանդիմանութիւն կը բերէ:

## **Ոչ թէ Սինան, այլ՝ Սիօնը**

Որպէսզի ապացուցենք, որ Աստուծոյ երկիւղը Նոր կտակարանի իրականութիւն է, դառնանք Եբրայեցիներու գիրքի այս ուղերձին.

*«Որովհետեւ դուք չէք մօտեցած շօշափելի լեռան, որ կրակով վառած էր, եւ այն մէզին, եւ խաւարին, եւ մրրիկին, եւ փողի հնչիւնին, եւ խօսքերու ձայնին, որմէ հրաժարեցան խողները, որ խօսքը չշարունակուի անոնց, որովհետեւ չէին դիմանար այն հրամանին, եթէ անասուն մըն ալ մօտենայ լեռան, քարկոծուի կամ նետով սպաննուի: Եւ այնպէս ահաւոր էր տեսիլքը, որ Մովսէսը կ'ըսէր, թէ կը զարհուրիմ եւ կը դողամ: Այլ մօտեցած էք Սիօն լեռան...» (Եբր. 12.18– 22):*

Առաջինը մեզի կը յիշեցնէ, թէ ինչ տեղի ունեցաւ Սինա լեռան քով: Այնուհետեւ մեզի կ'ըսուի Սիօն լեռան մասին, որուն մենք մօտեցած ենք: Երկրի վրա Աստուած խօսեցաւ Սինա լեռան մասին: Այժմ նոյն Աստուած կը խօսի երկինքէն նոր լեռան՝ Սիօնի մասին:

*«Զգոյշ եղէք, որ չմերժէք Անոր, որ խօսեցաւ, որովհետեւ եթէ չկրցան պրծիլ երկրի վրայ պատգամ Տուողին մեղմողները, ապա որքան աւելի մենք, եթէ երկինքէն խօսողին մերժենք» (Եբր. 12.25):*

Ուշադրութիւն դարձուր «որքան աւելի» բառերուն: Մեր դատաստանը շատ աւելի դաժան կ'ըլլայ, երբ մենք չենք լսեր եւ

չենք հնազանդիր Աստուծոյ ձայնին: Այն շնորհքը, որ մեզի տրուած է Նոր ուխտի շնորհիւ, անոր համար չէ, որ այն օգտագործենք մեր ուզած ձեւով ապրելու համար: Ինչո՞ւ խորայելցիներն ուշադրութիւն չդարձուցին Անոր ձայնին, անոնք Աստուծմէ երկիւղ չունէին: Մինչ կը շարունակես կարդալ, ասիկա պահէ քու մտքին մէջ եւ յստակ պիտի տեսնես, որ Նոր կտակարանին մէջ մարդիկ չէին լսեր այս նոյն պատճառով:

*«Ուստի անշարժ թագաւորութիւն ընդունած ըլլալով՝ պինդ բռնենք այն շնորհքը, որուն միջոցով հաճութեամբ կը պաշտենք Աստուծոյ, ահով եւ երկիւղածութեամբ, որովհետեւ մեր Աստուած մաշող կրակ է» (Եբր. 12.28):*

Ուշադրութիւն դարձուր, որ կ'ըսուի «ահով եւ երկիւղածութեամբ» (անգլերէնին մէջ՝ «յարգանքով եւ Աստուածային երկիւղով»): Եթէ Աստուծոյ երկիւղը սահմանափակուէր միայն յարգանքով (ահով), հեղինակը չէր առանձնացներ Աստուածային երկիւղը (երկիւղածութիւնը): Ուշադրութիւն դարձուր նաեւ, որ հեղինակը չէր եզրակացներ, թէ «Աստուած սիրող Աստուած է», այլ արեւին՝ «Աստուած մաշող կրակ է»: Աստուծոյ մասին այս յայտարարութիւնը կը բացատրէ, թէ ինչու Իսրայէլի որդիները ետ քաշուեցան Անոր ներկայութենէն: «Այս մեծ կրակը մեզ պիտի սպառէ, եթէ մենք մեր Եհովա Աստուծոյ ձայնը կրկին լսելու ըլլանք, կը մեռնինք» (Երկր. օր. 5.25):

Այո՛, Աստուած սէր է, բայց Ան նաեւ մաշեցնող կրակ է: Մեր եկեղեցիներուն մէջ մենք շեշտած ենք Աստուծոյ սէրը եւ շատ քիչ լսած ենք Աստուծոյ երկիւղի մասին, մեզի չէ քարոզուած Աստուծոյ ամբողջական խորհուրդը, մեր պատկերացումը սիրոյ մասին աղաւաղուած է:

Մեր քարոզած սէրը թոյլ սէր է: Այն չի կրնար մեզի առաջնորդել սուրբ կեանքի: Այն ջուր կը լեցնէ մեր կրակին վրայ եւ մեզի գաղջ

*Աստուծոյ երկինք, թէ՛ մարդու վախ*

կը դարձնէ: Մենք դարձած ենք երես առած երեխաներու պէս, որոնք յարգանք չունին իրենց հօր նկատմամբ: Եթէ մենք չենք աճիր Աստուծոյ երկիւղի մէջ, վտանգ կայ, որ Աստուած եւ այն բաները, որոնք Ան սուրբ կը համարէ, սովորական կը դառնան մեզի համար:

Ուշադրութիւն դարձուր նաեւ այս խօսքին. «Պինդ բռնենք այն շնորհքը, որուն միջոցով հաճութեամբ կը պաշտենք Աստուծոյ, ահով եւ երկիւղածութեամբ» (Եբր. 12.28): Շնորհքը մեզի տրուած չէ պարզապէս Աստուծոյ նկատմամբ մեր անարգանքն ու մեղքը ծածկելու համար: Այն մեզի կարողութիւն կու տայ Աստուծոյ արժանի ձեւով ծառայելու համար: Արժանի ձեւով ծառայել կը նշանակէ ծառայել սիրով, յարգանքով եւ երկիւղով:

Պօղոսը նաեւ կ'աւելցնէ. «Ահով եւ դողալով գործեցէք ձեր անձերուն փրկութիւնը» (Փիլիպ. 2.12): Ո՞ր է մեր ահն ու դողը: Մենք մոռցած ենք, որ Ան արդար Դատաւոր է: Մենք մոռցած ենք Անոր դատաստանը: Ուշադրութեամբ կարդա՛ հետեւեալ յորդորը.

*«Ամբարտաւան մի՛ դառնար (մի՛ հպարտանար),  
այլ վախցիր: Որովհետեւ եթէ Աստուած քնական  
ճիւղերուն չխնայեց, թերեւս քեզի ալ չխնայէ: Արդ  
դեռ Աստուծոյ քաղցրութիւնն ու սաստկութիւնը,  
կործանուածներուն վրայ սաստկութիւնը եւ քու վրայ  
քաղցրութիւնը, եթէ այն քաղցրութիւնով կենաս,  
ապա թէ ոչ, դուն ալ կը կտրուիս (կը կորսուիս)»  
(Հռովմ. 11.20բ-22):*

Մենք լաւ գիտենք Աստուծոյ բարութեան մասին, այնուամենայնիւ մենք պէտք չէ հաշուի առնենք միայն Անոր բարութիւնը: Մենք պէտք է հասկնանք նաեւ Աստուծոյ խստութիւնը: Աստուծոյ բարութիւնը կը մօտեցնէ մեզի Անոր սրտին, իսկ Անոր խստութիւնը մեզ կը պահպանէ հպարտութենէն եւ բոլոր տեսակի մեղքերէն: Եթէ մարդը հաշուի կ'առնէ միայն բարութիւնը, ասոր միջոցով կը մերժէ երկիւղը, որ կը պահպանէ հպարտութենէն եւ աշխարհիկ ըլլալէն: Նմանապէս, եթէ մարդը միայն հաշուի կ'առնէ

Աստուծոյ խստութիւնը, դիւրութեամբ կ'իյնայ օրինապահութեան ծուղակի մէջ: Երկուքն ալ՝ եւ Աստուծոյ սէրը, եւ Աստուծոյ երկիւղը կը պահեն մեզ այս կեանքի նեղ արահետին մէջ:

Յոյսով եմ, որ կը հասկնաս, որ ես մտածուած կը շեշտեմ Աստուծոյ երկիւղը, որն այնքան անտեսուած է մեր ժամանակակից եկեղեցւոյ մէջ: Ես անսահման սիրով կը սիրեմ Աստուծոյ եւ ուրախ եմ Անոր զաւակը ըլլալու ու Անոր ծառայելու արտօնութեան համար: Ես գիտեմ, որ ճիշդ Աստուծոյ բարութիւնը մեզի կը տանի ապաշխարութեան (Հռովմ. 2.4): Ես գիտեմ նաեւ, որ յատկապէս Աստուծոյ երկիւղն ու Անոր դատաստանը մեզ կը պահէ գիտակցուած մեղք գործելէն:

*«Որովհետեւ եթէ մենք ճշմարտութեան գիտութիւնն ընդունելէն յետոյ յօժար կամքով մեղք գործենք, այլեւ անկէ յետոյ մեղքերու համար զոհ չի մնար, այլ դատաստանի ահաւոր սպասելը եւ կրակի զայրոյթը, որ հակառակողներուն կը լափէ: Մէկը, որ Մովսէսի օրէնքը կ'անարգէր առանց ողորմութեան, երկու կամ երեք վկայի խօսքով, կը մեռնէր: Ալ որքան անելի, կը կարծէք, սաստիկ պատիժի կ'արժանանայ ան, որ Աստուծոյ Որդիին ոտքի տակ կոխեց, եւ ուխտի արիւնը պիղծհամարեց, որուն միջոցով ան սրբուեցաւ, եւ շնորհքի Հոգիին նախապեց: Որովհետեւ գիտենք Անոր, որ ըսաւ՝ Իմն է վրէժխնդրութիւնը, ես հատուցումը կու տամ,– կ'ըսէ Տէրը, եւ դարձեալ, թէ Տէրը կը դատէ Իր ժողովուրդին: Սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքն իյնալը» (Եբր. 10.26-31):*

Մարդը մեղքի մէջ կ'իյնայ, երբ ան հասարակ կամ սովորական կը համարէ այն, ինչ որ Աստուած կը համարէ սուրբ: Շատ յաճախ թեթեամիտ կը վարուինք այն բաներուն հետ, որոնց Աստուած լրջօրէն կը վերաբերի, եւ, հակառակը, լրջօրէն կը վերաբերինք այն բաներուն, որոնց Աստուած բնաւ կարելորութիւն չի տար: Մեզի համար կարելորն այն է, որ մարդոց հանդէպ յարգալից

## *Աստուծոյ երկինդ, թէ՛ մարդու վախ*

երեւնանք, մինչդեռ աստիկա այդքան կարեւոր չէ Աստուծոյ համար, որքան մեր սրտին շարժառիթները:

Ես ճանչցած եմ մարդոց, որոնք կը գտնուէին մեղքի ծուղակին մէջ եւ ամէն յարմար առիթի կ'ըսէին, թէ կը սիրեն Յիսուսին: Անոնք իրենց հոգեւոր վիճակը կը չափէին անորմով, թէ ինչ կը զգային Յիսուսին հանդէպ: Բայց արդե՞օք անոնք Յիսուսին կը սիրէին այն աստիճան, որ պատրաստ էին մեռնելու իրենց գերի դարձնող մեղքին համար: Ո՛չ, անոնք չունէին Աստուծոյ երկիւղը:

Անգամ մը բանտ գացի ծառայողի մը այցելելու, որ ինկած էր կաշառակերութեան, սեռական անբարոյականութեան մէջ: Ան ըսաւ ինծի. «Ճոն, ես միշտ կը սիրէի Յիսուսին, նոյնիսկ այն ժամանակ, երբ խաբուած էի: Յիսուսն իմ Փրկիչն էր, բայց ոչ իմ Տէրը»: Ան որոշումներ կայացուցած էր մարդու վախէն դրդուած: Ան կ'ուզէր մարդոց հաճեցնել: Այդ ծառայողը փափաքած էր փառաւորուիլ մարդոցմէ: Ասիկա բերած էր անոր չարաշահումներուն: Բանտին մէջ Աստուած ցոյց տուաւ անոր Իր սէրն ու ողորմութիւնը եւ սորվեցուց Տիրոջ երկիւղը: Հիմա ան ունի Տիրոջ երկիւղը եւ վերականգնուած է:

## **Մերժելով Աստուծոյ հրաւերը**

Վերադառնալով Սինա լեռան օրինակին՝ ես կ'ուզեմ ցոյց տալ բան մը, որ շատ մարդիկ չեն նկատեր: Աստուած էն Մովսէսին, էն Ահարոնին ըսաւ լեռը բարձրանալ (Ելից 19.24): Մովսէսը բարձրացաւ, բայց որոշ պատճառներով մենք Ահարոնին կրկին կը տեսնենք վարը (Ելից 32.1): Ես կը կարծեմ, որ Ահարոնը վերադարձաւ ժողովուրդին քով, որովհետեւ ան իրեն ւաւելի յարմարաւէտ կը զգար միւս «հաւատացեալներուն» հետ, քան Աստուծոյ ներկայութեան մէջ: Արդե՞օք մենք այսօր այսպիսին չենք մեր եկեղեցիներուն մէջ: Մեզի համար եկեղեցի յաճախելը, ուրիշ քրիստոնեաներուն հետ ընկերութիւնը, ծառայողական պարտականութիւններուն մէջ զբաղած ըլլալը ւաւելի յարմարաւէտ են, քան Տիրոջ հետ ըլլալը: Մենք կը խուսափինք Տիրոջ հետ առանձին ըլլալէն, փոխարէնը

մեզ կը շրջապատենք մարդոցմով եւ գործերով՝ յոյս ունենալով, որ ասիկա պիտի ծածկէ մեր դատարկութիւնը:

Միւս կողմէն, Յեսուն Աստուծոյ ուզած սիրտն ունէր: Ան կ'ուզէր որքան կարելի է շատ ըլլալ Աստուծոյ ներկայութեան մէջ: Մինչ Մովսէսն Աստուծոյ հետ էր, Յեսուն քառասուն օր մնաց լերան ստորոտը (Ելից 32.17): Ան մօտեցաւ Աստուծոյ այնքան, որքան կրնար, բայց չգնաց հոն, ուր միայն Մովսէսն ու Ահարոնը հրաւիրուած էին: Յեսուն իր մէջ այնքան երկիւղ ունէր Աստուծմէ, որ մեծամիտ չէր կրնար ըլլալ:

Մինչ Յեսուն կը սպասէր լերան ստորոտը, ժողովուրդը երթալով անհանգիստ կը դառնար: Անոնք արտասովոր վայրի մէջ էին. անոնց առջնորդը մէկ ամիսէն աւելի է գացած էր, իսկ Աստուած մինչեւ հիմա Իրեն չէր յայտնած: Մարդիկ սկսան կասկածիլ Աստուծոյ եւ Մովսէսին.

*«Եւ մարդիկ տեսան, որ Մովսէսը ուշացաւ լեռնէն իջնելու, Ահարոնին քով հաւաքուեցան եւ ըսին անոր. «Ուրքի կեցիր, մեզի համար աստուածներ շինէ, որ մեր առջեւէն երթան, որովհետեւ այդ Մովսէս մարդը, որ մեզի Եգիպտոսի երկիրէն հանեց, չենք գիտեր, թէ ինչ եղաւ անոր»» (Ելից 32.1):*

Անոնք ցոյց կու տային, թէ կը յարգեն Աստուծոյ եւ կը վախնան Անորմէ: Մարդիկ կը դժգոհէին. «Օ՛ , Մովսէս: Ան շատ ահեղ է: Դուն Անոր հետ խօսիր եւ յայտնէ մեզի, թէ Ան ինչ ըսաւ: Մենք կը լսենք ու կը հնազանդինք»: Անոնք հազիւ նոր տեսած էին, թէ որքան զօրաւոր էր Աստուած, մինչդեռ երկիւղ չունէին Անորմէ, քանի որ իրենց համար կուռքեր շինած էին: Այժմ, երբ Աստուած լռեց, անոնց իրական բնոյթը յայտնի դարձաւ:

Երբ Աստուած հրաշքներ կ'ընէր եւ ցոյց կու տար Իր զօրութիւնը, այդ ժամանակ դիւրին էր վախնալ Աստուծմէ: Բայց Աստուած կը փնտռէ անոնց, որոնք կը յարգեն եւ կը վախնան Իրմէ նաեւ այն պարագային, երբ չեն զգար Անոր ներկայութիւնը կամ զօրութիւնը,

*Աստուծոյ երկինդ, թէ՛ մարդու վախ*

կը փնտռէ անոնց, որոնք նման են այն երեխաներուն, որոնք հնազանդ են նոյնիսկ այն ժամանակ, երբ հայրը չի հետեւիր անոնց: Ճշմարիտ հնազանդութիւնը ցուցադրելու համար չէ:

Աստուած ըսաւ Իսրայէլին. «Չէ՛ որ ես լռած եմ եւ այն ալ շատոնց, եւ դուն Ինձմէ՛ չես վախնար» (Եսայիա 57.11): Անոր համար կարելոր էր այս հարցումը. «Ինչո՞ւ Իմ ժողովուրդը չի վախնար Ինձմէ՛»: Յետոյ Ան պատասխանեց Իր տուած հարցումին՝ բացատրելով, որ ժողովուրդը չէր վախնար Իրմէ, որովհետեւ Ան որոշ ժամանակ չէր յայտնած Իրեն ահեղ զօրութեամբ: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ երբ մարդիկ չէին տեսներ Անոր հզօր գործերը, իրենց կը պահէին այնպէս, կարծես Ան հոն չէր: Աստուծոյ լռութիւնը կը բացայայտէ մարդոց սրտերու իրական շարժառիթները:

Ճշմարիտ հաւատացեալը կ'երեւի անապատին մէջ՝ փորձութիւններու ժամանակ, այլ ոչ թէ օծուած զօրաւոր ծառայութիւններուն ժամանակ: Ինչպէս որ մարդը կը դրսեւորէ իրեն «ճնշումի» ժամանակ, այդպիսին ալ ան իրականութեան մէջ: Տես, թէ Ահարոնը ինչ ըրաւ ճնշումին տակ.

*«Եւ Ահարոնն ըսաւ անոնց. «Ձեր կիներուն, ձեր որդիներուն ձեր աղջիկներուն ականջներուն եղած ոսկի օղերը հանեցէք եւ քովս բերէք»: Բոլոր ժողովուրդը իրենց ականջներուն եղած ոսկի օղերը հանեցին եւ Ահարոնին քով բերին: Եւ ան առաւ անոնց ձեռքէն եւ քանդակագործելով ձեւակերպեց անոր եւ շինեց ձուլածոյ հորթ: Եւ ըսին. «Ասոնք են քու աստուածները, ով Իսրայէլ, որ քեզ Եգիպտոսի երկրէն հանեցին»» (Ելից 32.2-4):*

Անոնք Աստուծոյ օրհնութենէն՝ Եգիպտոսի աւարէն կուռք մը շինեցին: Բայց անելի շատ ահաւորն այն էր, որ Ահարոնը, որ պէտք չէ բարձրանար լեռը, կուռք շինեց: Ան եղած էր Մովսէսին խօսնակը: Ահարոնը կեցած էր անոր կողքին եւ տեսած էր բոլոր մեծ հրաշքները եւ աղէտները: Բայց հիմա ան վախցաւ մարդոցմէ եւ տուաւ անոնց այն, ինչ որ կ'ուզէին: Ահարոնը մարդէն անելի շատ

կը վախնար, քան Աստուծմէ, ատոր համար ալ ան դիւրութեամբ վախցաւ մարդոցմէ: Ահարոնին մէջ ոչ մէկ համարձակութիւն կար. Աստուծոյ պարգեւը հանգած էր: Ասիկա ալ անոր դարձուց թոյլ առաջնորդ: Երբ Մովսէսը յանդիմանեց Ահարոնին, վերջինս մեղադրեց ժողովուրդին, որմէ վախցած էր:

*«Եւ Ահարոնն ալ ըսաւ. «Թող իմ տիրոջ բարկութիւնը չբորբոքի, դուն գիտես այս ժողովուրդին, որ չարամիտ է: Եւ ինձի ալ ըսին, թէ մեզի համար աստուածներ չինէ՛, որ մեր առջեւէն երթան, որովհետեւ այս Մովսէս մարդը՝ մեզ Եգիպտոսի երկրէն հանողը, չենք գիտեր, թէ անոր ինչ եղաւ: Եւ ես ըսի անոնց. «Ով որ ոսկի ունի, թող հանեն եւ բերեն քովս, եւ ես կրակը նետրեցի այն, եւ դուրս եկաւ այս հորթը»» (Ելից 32.22-24):*

Ահարոնը պատասխանատուութիւն չվերցուց իր ըրածին համար: Այո՛ր, անոր գնահատականը ժողովուրդին համար ճիշդ էր: Ասիկա անոնց գաղափարն էր եւ ոչ թէ Ահարոնին: Բայց քանի որ Ահարոնը կը վախնար անոնցմէ, ան այնքան զօրաւոր չէր, որ կոտրէր ամբոխէն եկող վախը եւ ճիշդ ձեւով առաջնորդէր անոնց: Ահարոնը գայթակղեցաւ մարդոց վախէն:

Այն առաջնորդները, որոնք մարդոցմէ կը վախնան, կը նահանջեն եւ մարդոց կու տան ոչ թէ այն, ինչին կարիքը, որ անոնք ունին, այլ այն, ինչ որ անոնք կ'ուզեն: Անոնք դիւրութեամբ կը դառնան երկչոտութեան զոհը: Նշանակութիւն չունի, թէ առաջնորդին խօսքերով որքան ինքը կը սիրէ Աստուծոյ եւ Անոր ժողովուրդին: Քանի տակաւին առաջնորդը կը վախնայ մարդէն, ան չի տեսներ իրական առաջընթաց ո՛չ իր եւ ոչ ալ իր առաջնորդած ժողովուրդին մէջ:

Այն մարդը, որ երկիւղ ունի Աստուծմէ, անոր կը մտահոգէ միայն այն, թէ Աստուած ինչ կ'ըսէ Իր մասին: Այն մարդը, որ կը վախնայ մարդոցմէ, աւելի մտահոգուած է, թէ ինչ կարծիք ունին մարդիկ իր մասին, քան թէ Աստուած: Մարդոց չանարգելու համար, ան



կ'անարգէ Աստուծոյ:

Ես տեսած եմ առաջնորդներ, որոնք որոշած են մարդոց տալ այն, ինչ որ անոնք կ'ուզեն: Անոնց շարժառիթը մարդոց մէջ հանրայայտ մնալն է: Անշուշտ, անոնք բնաւ չեն ընդունիր ասիկա: Անոնք կ'արդարացնէին իրենց որոշումները՝ բերելով հետեւեալ պատճառաբանութիւնները. «Մենք չենք ուզեր վիրաւորել մարդոց», «Ասիկա լաւագոյն միջոցն է, որ կը բաւարարէ բոլորին», «Այսպէս վարուելով շատ մարդոց կրնանք ծառայել»: Աստուծոյ Արքայութիւնը ժողովրդավարութիւն չէ. այն Թագաւորութիւն է: Հանրայայտ ըլլալը կարեւոր չէ: Անոնք չէին պատկերացներ, որ իրենք վախէն եւ երկչոտութենէն դրդուած կը գործէին: Անոնց գործողութիւնները արմատաւորուած էին ոչ թէ մարդոց հանդէպ ունեցած սիրոյ մէջ, այլ իրենց անձնասիրութեան:

## **Ինչ տեղի կ'ունենայ, երբ մենք չենք վախնար Աստուծմէ**

Աստուած ըսաւ Մովսէսին. «Երանի թէ անոնց սիրտն ալ այնպէս ըլլար, որ Ինձմէ վախնալով Իմ բոլոր պատուիրանները պահէին» (Երկր. Օր. 5.29): Բայց մարդիկ չվախցան, եւ տեսէք, թէ ինչ տեղի ունեցաւ: Տէրն ըսաւ Մովսէսին. «Մարդիկ ուղարկէ՛, որ լրտեսեն Քանանի երկիրը, որ Ես Իսրայէլի որդիներուն պիտի տամ» (Թուոց 13.3): Ուշադիր եղիր, որ Աստուած ըսաւ. «Ես... պիտի տամ»: Ան չըսաւ՝ լրտեսեն երկիրը եւ տեսնեն, թէ կրնան այն վերցնել:

Այսպիսով, Մովսէսը ուղարկեց անոնց: Քառասուն օր անոնք հետախուզեցին երկիրը եւ յայտնաբերեցին, որ բնակիչները հաստատուած էին այս երկրին մէջ, իսկ քաղաքները շատ մեծ էին եւ լաւ պաշտպանուած:

Բոլոր տասներկու լրտեսները նոյն մարդոց տեսան, միեւնոյն բանակները, նոյն ամուր քաղաքները եւ նոյն հսկաները: Յետոն եւ Քաղէբը պատրաստ էին մէկ անգամէն երթալու եւ վերցնելու այն, ինչ որ Աստուած խոստացած էր: Սակայն միւս տասը

լրտեսները վախցած էին իրենց տեսածէն: Անոնք տեսան միայն մեծ բանակներն ու հսկաներուն, մինչդեռ Յեսուն ու Քաղէրը տեսան, թէ որքան բարի եւ հաւատարիմ էր Աստուած:

Տասը լրտեսները պատմեցին ժողովուրդին, որ անկարելի է վերցնել այդ երկիրը: Անոնք անելի քան չորս հազար տարի ստրուկ եղած էին եւ պատերազմի մէջ հմուտ չէին այդ երկրին մէջ իրենց տեսած բանակներուն պէս: Ժողովուրդն անմիջապէս վախցաւ եւ սկսաւ դժգոհիլ:

*«Եւ ինչո՞ւ համար Եհովան մեզ այս երկիրը բերաւ, որ սուրով իյնանք եւ մեր կիներն ու մեր որդիները յափշտակուին, լաւ չէ՞ մեզի համար, որ Եգիպտոս դառնանք» (Թուոց 14.3):*

Այս խօսքին մէջ մենք կը տեսնենք մարդոց վախին արմատը. «Ինչ է, այդ երկիրին մէջ անելի լաւ պիտի չըլլայ մեզի համար»: Այս մարդիկ վախցած էին, որովհետեւ կը մտածէին միայն իրենց մասին: Անոնք չըսին՝ Աստուծոյ ըսածն ամենալաւն է: Փոխարէնը անոնք կը հարցնէին. «Ինչն է մեզի համար լաւագոյնը»:

Ինչպէ՞ս ասիկա հասկնալ: Մարդու վախին արմատը եսասիրութիւնն է: Երբ դուն կը սիրես քու կեանքը, կը ջանաս փրկել այն: Դուն կը վախնաս այն ամէնէն, ինչ որ կը սպառնայ կեանքիդ: Աստուած այս մարդոց բերաւ տեղ մը, ուր անոնք ոչ մէկ ընտրութիւն ունէին, այլ պէտք է վստահէին Իրեն: Մարդոց կը թուէր, թէ այս նոր երկրի բնակիչները պիտի կոտորեն իրենց: Աստուծոյ վստահելու փոխարէն անոնք այնպէս կը վարուէին, կարծես Աստուած անոնց եգիպտացիներէն փրկած էր միայն այն բանին համար, որ քանանացիներէն սպաննուէին: Անշուշտ ասիկա անհեթեթ կը հնչէ, բայց երբեմն մեզմէ կը պահանջուի հետեւելով Տիրոջը մտնել այնպիսի իրավիճակներու մէջ, որոնք մեր կեանքին համար վտանգաւոր եւ վսասակար կը թուին:

Այդպիսի պայմաններու մէջ մենք Տիրոջ կրնանք հետեւիլ միայն այն պարագային, երբ մեր սրտերուն մէջ համոզուած ենք,

### *Աստուծոյ երկինդ, թէ՛ մարդու վախ*

որ Աստուած բարի է: Անոր մէջ ամէն բան բարի է: Ան երբեք որեւէ բան չ'ըներ միայն Իր օգուտին համար, որ կը վսասէ մեզի: Մենք պէտք է յիշենք, որ Աստուած ամէն ինչ կը դատէ յաւիտենութեան տեսանկիւնէն, իսկ մարդը՝ եօթանասուն կամ ութսուն տարիներու:

### **Աստուծոյ մերժումը, թէ՛ մարդու**

Քաղէբն ու Յեսուն ընտրեցին դժուար ուղին: Աստուած ըսաւ, որ անոնք իրենց մէջ ուրիշ հոգի ունէին եւ Իրեն ամբողջութեամբ կը հետեւէին: Մնացած բոլորը չէին ուզեր իրենց բարեկեցութիւնը վտանգի ենթարկել Աստուծոյ հնազանդելով: Աստուած հաւատարիմ էր Քաղէբին ու Յեսուին: Անոնք այդ սերունդին միակ մարդիկն էին, որոնք մտան խոստացուած երկիրը (տես Թուոց 14.24.30):

Անոնք, որոնք ձգտեցան իրենց կեանքը փրկել, կորսնցուցին այն: Աստուած խօսեցաւ անոնց ապագային մասին՝ ըսելով. «Բայց ձեր դիակներն այս անապատին մէջ պիտի իյնան... եւ պիտի ճանչնաք Իմ մերժումը» (Թուոց 14.32,34): Երբ կը հասկնաս, որ շատերը կը մերժուին Աստուծմէ, որովհետեւ անոնք կը վախնան մարդէն մերժուելէ, կը սթափեցնէ քեզ:

Ես կ'աղօթեմ, որ մենք բոլորս սորվինք հաճոյք ստանալ Տիրոջ երկիւղէն, քանի որ «Տիրոջ երկիւղը կենաց աղբիւր է մահուան որոգայթներէն խոյս տալու համար» (Առակ. 14.27):

Յաջորդ գլուխին մէջ դուն պիտի տեսնես, թէ ինչպէս Տիրոջ երկիւղը պիտի օգնէ քեզի երկչոտութեան ժամանակ ընթանալու Աստուծոյ կամքին մէջ:

***Տիրոջ երկիւղը կը բերէ Եւ վստահութիւն Եւ  
համարձակութիւն:***

## ԳՈՐԾԵՆ, Թ՛Է ԱՐՁԱԳԱՆԳԵԼ

**Ե**րկչոտութիւնը կրնայ գալ հանգամանքներու, մտքերու կամ մարդոց միջոցով: Շատ մարդիկ կը պայքարին այն երկչոտութեան դէմ, որ կու գայ ուրիշ մարդոց միջոցով: Մարդու վախն այս տեսակի ճնշումի ճշգրիտ նկարագրութիւնն է:

Մարդու նկատմամբ վախը կը ստիպէ, որ մենք խուսափինք մարդէ մերժուած, վիրաւորուած եւ յանդիմանուած ըլլալէն՝ հաշուի չառնելով, որ ատորմով իսկ կը մերժենք Աստուծոյ: Եթէ անձնաւորութիւն մը կը վախնայ մարդէն, ան ատորմով կը վիրաւորէ (կ'անարգէ) այն Մէկուն, Որուն չի կրնար տեսնել, որպէսզի չվիրաւորէ անոր, որուն կրնայ տեսնել:

Յիսուսը կը յորդորէ մեզի. «Բայց կ'ըսեմ ձեզի՝ Իմ բարեկամներուն, մի վախնաք անոնցմէ, որ մարմինը կը սպաննեն, եւ անոնցմէ յետոյ անելի բան չունին, որ ընեն: Բայց

ցոյց տամ ձեզի, թէ Որմէ պէտք է վախնաք, որ սպաննելէն ետք իշխանութիւն ունի գեհեհնի մէջ նետելու, այո՛ր, կ'ըսես ձեզի, Անորմէ վախցէ՞ք» (Ղուկ. 12.4,5):

Եթէ դուն կը վախնաս մարդոցմէ, երբ Աստուած քեզ կ'առաջնորդէ դժուարութեան կամ նեղութեան մէջ, դուն կը փորձես պաշտպանել ու պահպանել դուն քեզի, Աստուծոյ կամքը փնտռելու փոխարէն, դուն կը փորձես ընել քուկդ: Սակայն եթէ դուն երկիւղ ունիս Աստուծմէ, կրնաս անցնիլ որեւէ դժուարութեան մէջէն եւ ատորմով պատուել Աստուծոյ:

Այդ պարագային դուն կը հասկնաս, որ միայն Ան կրնայ պահպանել քեզ: Դուն վստահ կ'ըլլաս, որ Աստուած գիտէ, թէ ինչն է լաւագոյնը յաւիտենական արժէքներու համակարգին մէջ:

Տիրոջ երկիւղին մասին զօրաւոր խոստում մը կայ Առակաց գիրքին մէջ.

*«Տիրոջ վախի մէջ զօրաւոր վստահութիւն կայ, եւ Անոր որդիներուն համար ապաւէն պիտի ըլլայ: Տիրոջ երկիւղը կենաց աղբիւր է մահուան որոգայթներէն խոյս տալու համար» (Առակ. 14. 26,27):*

Միւս կողմէն՝ Սուրբ գիրքը պարզ կ'ըսէ.

*«Մարդուն վախը որոգայթին մէջ կը նետէ» (Առակ. 29.25):*

Երկչոտութիւնը որոգայթ է կամ ծուղակ, բայց Տիրոջ երկիւղը կը բերէ վստահութիւն եւ համարձակութիւն: Ասոնք ճիշդ այն միջոցներն են, որոնցմով կ'ազատինք երկչոտութեան ծուղակէն:

## **Ճնշումը կը բացայայտէ**

Ես կ'ուզեմ համեմատել երկու թագաւորներու: Անոնք երկուքն ալ կը կառավարէին նոյն թագաւորութիւնը, երկուքն ալ կը պաշտէին նոյն Աստուծոյ: Անոնցմէ մէկը մերժուեցաւ Աստուծմէ,

իսկ միսին Աստուած կը յարգէր որպէս Իր սրտին համեմատ մարդու: Համեմատելով այս մարդոց կեանքերը՝ մեզի համար պարզ եւ հասկնալի կը դառնայ Աստուծոյ երկիրդին եւ մարդու վախին միջեւ տարբերութիւնը: Եկնոր նայինք Սաւուղի կեանքին ամենատրամաթիք եւ ամենաքիչ ուսումնասիրուած դէպքերէն մէկը: Պատմութիւնն ասիկա է:

Սաւուղն արդէն կը թագաւորէր երկու տարի: Ինչպէս շատ պարագաներու ալ տեղի կ'ունենայ, այս «մեղրամիսի» ընթացքին չբացայայտուեցաւ անոր իրական բնաւորութիւնը: Որոշ ժամանակ ետք անոր շարժառիթներն ի յայտ եկան:

Մինչ Սաւուղն իր ամենալաւ մարտիկներուն հետ կը գտնուէր Մաքմասի մէջ, փղշտացիները միսսին հաւաքուեցան անոր դէմ պատերազմելու (Ա. Թագ. 13.5-15): Ասիկա ամենազօրաւոր բանակն էր, որուն հանդիպեցաւ Սաւուղը: Թշնամին ունէր երեսուն հազար կառք եւ վեց հազար ձիաւոր, իսկ զինուորներուն բազմութիւնը կը համեմատուէր ծովեզերքի աւազին հետ: Անկասկած ասիկա վիթխարի բանակ մըն էր: Երեսուն հազար կառքի դէմ կենալը նոյնն է, ինչ որ երեսուն հազար հրասայլի, զրահամեքենայի դէմ կենալը: Ատոր հետ մէկտեղ բանակն այնքան մեծ էր, որ կարելի չէր հաշուել: Իսրայէլի բանակին համար ասիկա շատ սարսափեցնող տեսարան էր:

Սաւուղի ահաբեկուած զինուորները պահուրտեցան թուփերու, փոսերու, քարանձաւներու մէջ եւ ժայռերուն ետեւը: Անոնք ընկճուած էին: Ոմանք փախան քալելով, անցան Յորդանանը, մտան Գադի եւ Գաղաադի երկիր, մինչդեռ միւսները, որոնք կը շարունակէին հետեւիլ Սաւուղին, կը դողային վախէն:

Ճակատամարտէն առաջ Իսրայէլը պէտք է ողջակէզ ընէր Տիրոջ առջեւ: Սամուէլը Տիրոջ կողմէն պատուիրած էր Սաւուղին՝ ըսելով, որ որոշուած ժամանակին ինքը պիտի ներկայանայ՝ Տիրոջը ողջակէզ մատուցելու համար: Սաւուղը «Սամուէլին որոշած ժամանակին չափ եօթը օր սպասեց, բայց Սամուէլը Գաղգաղա չեկաւ, եւ ժողովուրդը անոր քովէն ցրուեցաւ» (Ա. Թագ. 13.8):

Ճնշումին տակ Սաուլն ըսաւ. «Ողջակէզը եւ խաղաղութեան զոհը քովս բերէք»: Ան ողջակէզ ըրաւ եւ հազիւ նոր վերջացուցած էր այն, երբ Սամուէլը եկաւ:

Սամուէլը հարցուց Սաուլին, թէ ինչ ըրած է: Ուշադրութիւն դարձուր Սաուլի պատասխանին.

*«Տեսայ, որ ժողովուրդն իմ քովէն կը ցրուի, եւ դուն քու որոշած օրերուդ չեկար, եւ փղշտացիները հաւաքուած են Մաքմասի մէջ: Այն ժամանակ ըսի. «Փղշտացիները հիմա իմ վրայ կ'իջնեն Գաղգաղա, եւ ես տակաւին Տիրոջ առջեւ աղօթք չեմ ըրած, եւ ես ինծի ստիպելով ողջակէզ մատուցեցի»» (Ա. Թագ. 13.11,12):*

Սամուէլը յանդիմանեց Սաուլին՝ ըսելով, որ ան յիմարութիւն ըրած է՝ չպահելով Տիրոջ պատուիրանը:

Այսպիսով, քանի որ մենք տեսանք, թէ ինչ տեղի ունեցաւ, պատկերացուր քեզ Սաուլին փոխարէն: Դու առաջնորդ ես: Դուն եւ քու մարդիկ եօթը օր է, որ հանդիպած էք մեծ բանակի մը: Թշնամին թիւով կը գերազանցէ, եւ օրըստօրէ թշնամիին շարքերն ատելի կը մեծնան, իսկ քու բանակը կը նուազի: Քու մարդիկ կը վախնան թշնամիէն եւ ինքնակամ կը լքեն բանակը: Եւ քանիներ, որ մնացած են, ահաբեկուած են: Դուն կը շարունակես սպասել Աստուծոյ մարգարէին, իսկ ան ժամանակին չի յայտնուիր ողջակէզ ընելու համար:

Վիթխարի ճնշում կայ քու վրայ: Ասիկա «ձիթհանի» մը իրավիճակ է: Քու շուրջ գտնուողները կը շտապեցնեն քեզ. «Բան մը ըրէ, թէ չէ բոլորս կը մեռնինք»: Դուն կը սպասես, ինչպէս Տէրը պատուիրած է, թէ՛ քայլ կ'ընես քեզ փրկելու համար:

Ահա այս էր այն իրավիճակը, որուն հանդիպած էր Սաուլը թագաւորը (տես Ա. Թագ. 13.1-8): Դժբախտաբար ան ճնշումի տակ կոտորուեցաւ: Չհնազանդելով՝ ան ինքը զոհաբերութիւն ըսաւ: Տես Սաուլին արդարացումը. «Փղշտացիները հիմա իմ վրայ պիտի



իջնեն... Ես ինձի ստիպելով (անգլերէնի մէջ՝ ստիպուած) ողջակէզ մատուցեցի» (Ա. Թագ. 13.12): Ան գոհաբերութիւն ըրաւ մարդոց աչքին լաւ երեւնալու համար, իսկ յետոյ փորձեց հոգեւոր երեւնալ Սամուէլի աչքին՝ ըսելով. «Ես ինձի ստիպեցի»: Իրականութեան մէջ ան ինչաւ մարդոց ազդեցութեան տակ եւ յայտնուեցաւ երկչոտութեան ծուղակին մէջ:

## Ինչ որ բան մը ըրէ

Շատերը յաճախ կը հանդիպին այսպիսի իրավիճակի: Դուն երբեք մտածամձ ես այսպէս. «Ես գիտեմ, որ Աստուած ինձի կ'ըսէ, որ սպասեմ, բայց ես ստիպուած քայլ պիտի ընեմ՝ փոխելու համար այն իրավիճակը, որուն մէջ կամ»:

Ես եղած եմ այնպիսի իրավիճակներու մէջ, երբ ընկերներս կամ անոնք, որոնք իմ իշխանութեան տակ եղած են, խնդրած են ինձմէ՝ համոզելով. «Ճո՛ն, դուն պէտք է ինչ որ բան մը ընես»: Մինչդեռ իմ սրտին մէջ ես գիտցած եմ, որ Աստուած նոյնը չ'ըսեր: Ան լուռ եղած է:

Ամենաճանր բաներէն մէկը, որ պէտք է ընես, Աստուծոյ սպասելն է, յատկապէս այն ժամանակ, երբ Ան ոչինչ կ'ըսէ: Այդպէս պէտք է ընել նաեւ այսօր: Ամերիկայի մէջ մեր հսկայական միջոցներուն եւ դրամին հետ մէկտեղ, մենք սովորաբար կրնանք ինչ որ բան մը ընել նոյնիսկ այն պարագաներուն, երբ Աստուած չի շարժիր: Մեր ձիրքերով եւ կարողութեամբ, բայց առանց Աստուծոյ, մենք կրնանք ինչ որ բան ստեղծել՝ ցոյց տալով, թէ ատիկա Աստուծմէ է:

Երբ կու գայ որոշումներ կայացնելու պահը, մենք յաճախ չենք կրնար գտնել Աստուածաշունչէն գլուխ մը կամ խօսք, որ մեզ ուղղէ ինչ ընել: Մենք պարտաւոր ենք գիտնալ, թէ Աստուած ինչ կ'ըսէ մեզի իրաքանչիւր վայրկեան: Բայց երբ կը թուի, թէ Աստուած չի խօսիր, Ան իրականութեան մէջ կը խօսի: Ան կ'ըսէ. «Ճշգրտօրէն շարունակէ ընել այն, ինչ որ քեզի ըսած եմ, որ ընես: Ոչինչ փոխուած է»: Ասիկա յատկապէս ատելի դժուար կը դառնայ,

երբ մենք կը գտնուինք երկչոտութեան ազդեցութեան տակ:

Ես կ'ուզեմ բաժնեկցիլ խօսքով մը, որ Տէրը տուաւ ինծի Նոր տարուան օրերուն: Ես արտասահման էի: Խորունկ քնացած էի. ուժասպառ եղած էի քառասունվեց ժամ տեսած ճամբորդութենէն եւ օրը երկու անգամ անցուցած ծառայութիւններէն:

Գիշերուան ժամը երկուքին յանկարծ արթնցայ խորունկ քունէն: Ես գիտէի, որ միայն Տէրը կրնար ինծի արթնցնել այս ձեւով, որովհետեւ ընդամէնը երեք ժամ քնանալէն ետք բաւականին առոյգ էի: Տէրն ինծի խօսք մը տուաւ, որուն մասին սովորաբար ես չէի խօսեր, որովհետեւ այն անձնական էր: Բայց ես կը հաւատամ, որ Տէրը թոյլ կու տայ ինծի խօսիլ ատոր մասին, որպէսզի լուսաբանեմ այս կէտը: Ես կը հաւատամ, որ ձեզմէ շատերուն, որոնք նմանատիպ իրավիճակներու մէջ են, այն կը զօրացնէ: Ահա հատուած մը այդ խօսքէն.

*«Դուն եղած ես անորոշ վիճակի մէջ՝ առանց կեդրոնացման, եւ արորմով դուն սփուգուած ես: Ես քեզի թոյլ չեմ փուսած կեդրոնանալ, որպէսզի սփուգեմ քեզ, թէ արդե՞ծք դուն քայլեր կը ձեռնարկես առանց Իմ առաջնորդութեան: Ինծի շարք հաճեցուցած է այն, որ դուն ոչինչ ձեռնարկած ես Իմ լուծութեան ընթացքին: Քանի որ դուն ոչինչ ըրած ես, որովհետեւ ես չեմ ըսած, եւ քանի որ դուն չես կատարած քու սեփական ծրագիրները՝ յուսալով, որ արդե՞ք Իմս եմ, հիմա դուն կ'ունենաս մեծ կեդրոնացում: Ես քեզի եւ քու կնոջ պիտի տամ մեծ եւ իւրայայտուկ ծրագիրներ, որոնք երկուքիդ ալ մեծ ուրախութիւն պիտի բերեն»:*

Տէրը խօսեցաւ հետս այն ժամանակ, երբ ես ու կինս մեր կեանքին մէջ լճացում կը զգայինք: Մենք ցանկութիւններ եւ անձնական կարիքներ ունէինք, որոնք չէին իրականանար: Մենք երկուքս ալ քանի մը տարի կ'ապրէինք ծայրայեղ ճնշումի տակ: Մեզի համար անկեղծօրէն հոգ տանող մեր ընկերները խորհուրդ կու տային մեզի որոշ քայլեր ընել, բայց մենք չէինք զգար, որ

ատիկա Տիրոջ խօսքն է: Անոնք սխալ չէին, երբ մեզ այս բաները կ'ըսեին: Անոնք ընդամենը կ'արձագանգեին այն իրավիճակին, որուն մէջ մեզ կը տեսնէին: Աստուած կը ստուգէր մեզ:

Կային փոփոխութիւններ, որոնք մենք կրնայինք ընել՝ թեթեւեղութեամբ համար այն ճշումը, որուն տակ կը գտնուէինք: Մենք կրնայինք կռուիլ մեր կասկածներուն դէմ, բայց հետաքրքրական էր՝ արդե՞՞մք մենք չէինք անտեսել Աստուծոյ: Մինչդեռ մեր սրտին խորքը մենք երկուքս ալ գիտէինք, որ Աստուած չէր ըսած մեզի որեւէ քայլ ընել:

Նախքան այդ Նոր տարուան առաջին ամսուան աւարտը, մենք տեսանք, որ Աստուած մեր բոլոր սպասումներէն վեր բաներ կ'ընէ: Ես չեմ գիտեր, թէ երբեք ալ կը տեսնեմ այդքան շատ բան, որ եղան այդ մէկ ամսուան ընթացքին: Կ'երեւէր, որ Աստուած այդ ամսուան մէջ անելի շատ բան ըրաւ, քան անցեալ հինգ տարիներուն ընթացքին:

Կարելորն այն է, որ մենք ազդեցութեան տակ չիյնանք ճշումներու ժամանակ: Մենք պարտաւոր ենք գործել Տիրոջ խօսքին համաձայն:

## Աստուծոյ սրտին համեմատ մարդ

Սաւուղը վախճած էր: Անոր համբաւը, կեանքն ու թագաւորութիւնը վտանգուած էին, ատոր համար ալ ան շարժեցաւ, երբ Աստուած պատուիրած էր սպասել: Սամուէլը յանդիմանեց Սաւուղին եւ հրապարակեց անոր դատաւճիռը.

«Բայց հիմա քու թագաւորութիւնը հաստատ պիտի չըլլայ:

*Տէրն Իրեն համար Իր սրտին համեմատ մարդ մը կ'ուզէ, որուն իշխան պիտի նշանակէ Իր ժողովուրդին վրայ, որովհետեւ դուն չպահեցիր ինչ որ Տէրը քեզի պատուիրած էր» (Ա. Թագ. 13.14):*

Սաւուղը միայն մէկ անգամ չէ որ տեղ առիթ տուած էր

երկչոտութեանը: Անոր կեանքին մէջ շարք մը այլ դէպքեր տեղի ունեցած էին, երբ զօրաւոր ճնշումներու ազդեցութեան տակ անհնազանդ եղած էր Տիրոջը: Անգամ մը ան ենթարկուած էր մարդոց ցանկութեանը՝ վերցնելով ասարը այն քաղաքէն, որ Աստուած ըսած էր ամբողջովին կործանել: Ան չէր ուզեր կորսնցնել մարդոց բարեհաճութիւնը: Երբ յանդիմանուեցաւ Սամուէլին կողմէն, Սաւուղը խոստովանեցաւ. «Մեղք գործեցի, որ Տիրոջ հրամանները եւ քու խօսքերը զանց ըրի, որովհետեւ ժողովուրդէն վախցայ եւ անոնց խօսքերը լսեցի» (Ա. Թագ. 15.24):

Սաւուղին յաջորդ յայտարարութիւնը ցոյց կու տայ, որ ան անլի մտահոգուած էր իր համբաւին, քան իր հնազանդութեան համար: Սամուէլին ըսած խօսքերը բացայայտեցին անոր սրտին մէջ եղածը. «Մեղք գործեցի: Կ’աղաչեմ, հիմա ժողովուրդին ձերերուն առջեւ ու Իսրայէլին առջեւ ինձի պատուէ» (Ա. Թագ. 15.30):

Սաւուղը շարունակ կը մեղանչէր, որովհետեւ կը վախնար մարդէն: Որքան շատ կը վախնար ան, այնքան դաժան կը դառնար: Ասիկա յաճախ կը պատահի այն առաջնորդներուն հետ, որոնք իրենց անվստահ կը զգան: Անոնք դաժան կը վարուին ժողովուրդին հետ, որպէսզի ատորմով ցոյց տան, որ իրենք կը հսկեն իրավիճակը, մինչդեռ իրականութեան մէջ ատորմով կը փորձեն ծածկել իրենց սեփական երկչոտութիւնն ու վախը:

Սամուէլը Սաւուղին ըսաւ, որ Աստուած թագաւորութիւնը պիտի տայ մարդու մը, որ պիտի պահէ Իր պատուիրանները (Ա. Թագ. 13.14): Այդ մարդը Դաւիթն էր: Ես լսած եմ, թէ ինչպէս որոշ մարդիկ կ’ըսեն, որ իրենք Աստուծոյ սրտի համեմատ մարդ են, բայց ես կ’ուզեմ լսել Աստուծոյ, Որ կ’ըսէ այն, ինչ որ ըսաւ Դաւիթին. «Դուն Իմ սրտին համեմատ մարդ ես»: Ես գիտեմ, որ ասիկա Աստուծոյ սիրող իւրաքանչիւր հաւատացեալի ցանկութիւնն է: Ես ուշադրութեամբ ուսումնասիրած եմ Դաւիթին կեանքը՝ ցանկալով գիտնալ, թէ ինչն էր պատճառը, որ Տէրը Իրեն Դաւիթին հետ հաւասար դասած էր:

Ես նկատեցի, որ Դաւիթը ուշադիր էր հետեւեալի մէջ. ան որեւէ պարագայի ոչինչ կ’ընէր, մինչեւ չլսէր Աստուծոյ: Շատ

յաճախ, մեծ ճնշումներու մէջ Դաւիթը կը դիմէր Աստուծոյ խորհուրդին (Ա. Թագ. 20.31): Եկրոր նայինք չափազանց դաժան իրավիճակի մը:

## Կրնայ անելի վատ ըլլալ

Սաւուդի թագաւորելու վերջին տարուան ընթացքին Դաւիթն ու իր մարդիկ ապաստան գտած էին փղշտացիներուն երկիրին մէջ: Հանգամանքներու բերումով Դաւիթն ու իր մարդիկ գացին միանալու փղշտացիներուն, երբ անոնց բանակը կը հաւաքուէր իսրայէլցիներուն դէմ: Այնուամենայնիւ, փղշտացի զօրապետները բարկացան, երբ տեսան, որ հրեայ տղամարդիկ կը պատրաստուին պատերազմելու իրենց հետ: Ատոր համար ալ զօրապետներն ալ մերժեցին Դաւիթին ու անոր մարդոց եւ թոյլ չտուին, որ կռուին իրենց հետ:

Յաջորդ առաւօտ Դաւիթին զօրքը հեռացաւ՝ վերադառնալով իրենց կիներուն ու երեխաներուն քով, որոնք կը գտնուէին Սիկելակ քաղաքը: Կարճատեւ ճամբորդութիւնը դէպի մարտադաշտ ձախողած էր, եւ Դաւիթն ու անոր մարդիկ իրենց ոչ պիտանի կը զգային: Անոնք մերժուած էին ոչ միայն իրենց սեփական թագաւորէն ու երկրէն, այլ նաեւ այն ազգէն, որուն մէջ ապաստան գտած էին: Դաւիթը կրնար իրեն շատ միայնակ զգալ: Բայց ասիկա ոչինչ էր համեմատած այն բանին հետ, ինչին որ ան հանդիպեցաւ: Ուշադիր կարդա՛, թէ ինչ տեղի ունեցած էր, երբ ան վերադարձաւ իր ընտանիքին քով, եւ պատկերացուր, թէ ինչպէս ան կը զգար իրեն.

*«Եւ երբ որ Դաւիթը եւ իր մարդիկ երրորդ օրը մտան Սիկելակ, ահա ամաղեկացիները յարձակած էին հարաւային երկիրի եւ Սիկելակի վրայ եւ Սիկելակը զարնելով՝ անոր կրակով այրած էին: Եւ հոն եղած կիները գերի առած էին՝ փոքրէն մինչեւ մեծը, մէկ մարդ չէին մտցուցած, այլ իրենց ետ տանելով՝ գացած էին իրենց ճանապարհը: Եւ երբ որ Դաւիթը*

*Եւ իր մարդիկ քաղաք հասան, ահա կրակով այրած էր ան, եւ իրենց կիները, տղաքն ու աղջիկները գերի տարուած էին: Եւ Դաւիթը եւ իրեն հետ տղոջ ժողովուրդն իրենց ձայները բարձրացուցին եւ լացին, մինչեւ որ անոնց վրայ ուժ չմնաց լալու: Եւ Դաւիթին երկու կիները՝ Յեզրայելացի Աքինոամն ու Կարմելացի Նաբադի կինը՝ Աբիգեան ալ գերի տարուած էին» (Ա. Թագ. 30.1-5):*

Կրնամս պատկերացնել այն ցաւը, որ կը զգար Դաւիթը: Անոր ընտանիքը գերութեան մէջ էր, յափշտակած էին թանկարժէք ամէն բան, իսկ մնացածն այրած էր: Ան ոչ միայն անհանգստացած էր իր ընտանիքին, այլեւ իր մարդոց ընտանիքներուն համար: Անոնք մնացած էին առանց երկրի, յետոյ ալ վերադարձան եւ իրենց տուները գտան ծովսի մէջ, իսկ բոլոր սիրելիները չկային: Ասիկա տակաւին ամէնը չէր.

*«Եւ Դաւիթը մեծ տագնապի մէջ էր, որովհետեւ ժողովուրդը անոր կ'ուզէր քարկոծել անոր համար, որ բոլոր ժողովուրդէն ամէն մէկուն սիրտը կը կսկծար իր տղոց ու աղջիկներուն համար» (Ա. Թագ. 30.6):*

Այժմ այն մարդիկ, որոնք գացած էին անոր հետ պատերազմելու, պատրաստ էին քարկոծելու Դաւիթին՝ իրենց կիներուն ու երեխաներուն անպաշտպան ձգելու համար: Ասկէ վատ չէր կրնար ըլլալ: Ասիկա նոյնիսկ ատլի դժուար է, քան այն, ինչին հանդիպած էր Սաուլը: Սաուլը գոնէ ունէր վախկոտ բանակ եւ ընտանիք, եւ անոր մարդիկ չսպառնացին քարկոծել:

Շատ հաւատացեալներ իրենց կեանքին մէջ կ'ունենան այնպիսի պահեր, երբ իրենց բոլորովին միայնակ կը զգան: Ես կը կարծեմ, որ Աստուած թոյլ կու տայ, որ ատիկա պատահի: Աստուած չէ ատոր պատճառը, քանի որ Ան չէ չարին հեղինակը: Բայց Աստուած չի միջամտեր, որովհետեւ այդ յուսահատած ժամանակներուն համար Ան ունի Իր նպատակը: Դաւիթը կրնայ յանձնուիլ, եթէ սկսէր հետապնդել թշնամիին կամ մէկ այլ ուղի

Գործել, թ՞է արձագանգել

փնտռէր իր մարդոց հանգստացնելու համար: Բայց տես, թէ փոխարէնը ինչ ըրաւ ան.

*«Բայց Դաւիթը զօրացաւ իր Տէր Աստուծոմով: Եւ Դաւիթը Աքիմելէքի որդի Արիաթար քահանային ըսաւ. «Եփուր մօտեցուր ինձի»: Եւ Արիաթարը եփուրը Դաւիթին մօտեցուց: Եւ Դաւիթը Տիրոջը հարցուց եւ ըսաւ. «Այս գունդին ետելէն հալածեմ, անոնց կը հասնիմ»: Եւ Ան ըսաւ. «Հալածէ՛, որովհետեւ անպարճառ պիտի հասնիս եւ բոլորին պիտի ազատես»» (Ա. Թագ. 30.6-8):*

Նոյնիսկ վիթխարի ճնշումին տակ Դաւիթը քայլ չըրաւ, Տիրոջ խորհուրդը չստանալէն առաջ: Ան զօրացաւ, երբ դիմեց Տիրոջը: Դաւիթն ինքն իրեն յիշեցուց Աստուծոյ հաւատարմութիւնն ու ուխտը: Ատորմէ յետոյ ան գիտցաւ, թէ ինչ պէտք է ընէր: Աստուած ըսաւ. «Հալածէ՛»:

Դաւիթը հետապնդեց թշնամիին: «Եւ Դաւիթն ամաղելկացիներուն ըրած բոլոր բաները ազատեց եւ Դաւիթն իր երկու կիներուն ալ ազատեց: Եւ իրենց մէկ բանը պակաս չէր՝ փոքրէն մինչեւ մեծը, թէ տղայ, թէ աղջիկ եւ թէ ասար, ինչ որ անոնք առած-տարած էին, Դաւիթն ամէնն ալ ետ բերաւ» (Ա. Թագ. 30.18,19):

Ինչը որ անյոյս կը թուէր, վերածուեցաւ մեծ յաղթանակի: Ոչ մէկ բան դժուար է մեր Աստուծոյն համար: Դաւիթն աւելի շատ կը վախնար Աստուծմէ, քան մարդոցմէ: Եւ միայն ասիկա էր, որ անոր վստահութիւն տուաւ առաջինը դիմելու Աստուծոյ: Ասիկա շատ կը տարբերէր ճնշումի ժամանակ Սաուլի արձագանգէն:

Դաւիթը գործեց, մինչդեռ Սաուլը միայն արձագանգեց իրավիճակի պահանջներուն: Դաւիթը կրցաւ գործել եւ ոչ թէ արձագանգել իրավիճակի թելադրանքին, որովհետեւ գիտցաւ, թէ Աստուած ինչ կ'ընէ: Երբ մենք կ'ունենանք Քրիստոսի միտքը, կը համարձակինք գործել, այլ ոչ թէ արձագանգել:

## Զգաստութիւն

Նախորդ գլուխներէն մէկուն մէջ մենք յայտնաբերեցինք, որ երկչոտութիւնը կոտրելու համար համարձակութիւն պէտք է: Ասիկա բնական համարձակութիւն չէ, այլ այնպիսի համարձակութիւն, որ կու գայ Աստուածային զօրութեան, սիրոյ եւ առողջ բանականութեան շնորհիւ: Ասիկա է մեր բանալի խօսքը.

*«Այդ պատճառով միտքդ կը բերեմ, որ արծարծես  
Աստուծոյ այն շնորհքը, որ քու մէջ է՝ իմ ձեռքերը քու  
վրայ դնելով:»*

*Որովհետեւ Աստուած չտուաւ մեզի երկչոտութեան  
Հոգի, այլ զօրութեան եւ սիրոյ եւ զգաստութեան՝»  
(Բ. Տիմոթ. 1.6,7):*

Տեսնենք, թէ ինչպէս այս երեք բաները Դաւիթին մէջ համարձակութիւն յառաջացուցին, որուն միջոցով ան հակառակեցաւ երկչոտութեանը:

1. Զօրութիւն: Դաւիթը կը ճանչնար Աստուծոյ եւ ան գիտէր, որ Աստուած անլի մեծ եւ անլի զօրաւոր է, քան իրեն հանդիպած որեւէ բան:
2. Սէր: Դաւիթն Աստուծոյ անլի կը սիրէր, քան իրեն:
3. Զգաստութիւն: Դաւիթը քայլ չըրաւ, Տիրոջ խօսքը կամ միտքը չունենալէ առաջ: Կարեւորութիւն չտուաւ, թէ որքան մեծ էր ճնշումը:

Երբ մեր հոգիները լեցուած են Տիրոջ զօրութեամբ, սիրով եւ խօսքով, մենք չենք դառնար երկչոտութեան զոհ: Ոչ թէ այս երեք առաքինութիւններէն մէկը, այլ այս երեքի համակեցութիւնը պէտք մեզի: Եթէ այդ ամբողջը պէտք չըլլար, Պօղոսը կը յիշատակէր

---

<sup>1</sup> Յունարէն բնագրին մէջ զգաստութիւն բառին փոխարէն կ'օգտագործուի *sofronismos* բառը, որ ունի հետեւեալ իմաստները, զգաստութիւն, զգօնութիւն, առողջ միտք, ինքնակառավարում, ինքնահսկողութիւն (հայերէն հրատարակչին կողմէն):



*Գործնի, թ՞է արձագանգել*

միայն մէկը: Աստուածային համարձակութան մէջ քալելու համար երեքն ալ անհրաժեշտ են:

Մենք արդէն մանրամասնութեամբ ուսումնասիրեցինք զօրութիւնն ու սէրը: Եկ՛ուր շարունակենք առջեւ երթալ եւ հասկնանք Տիրոջ միտքը:

**Ջգաստութիւնն այն է, որ գիտնաս, թէ ճիշդ  
հիմա Աստուած ինչ կ'ըսէ եւ կ'ընէ**

## ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

**Ո**չ մէկ բան այնքան շատ վախցնող է, որքան տգիտութիւնը: Տգիտութիւնը գիտութեան պակասն է: Գիտութեան արժէքի մասին յաճախ կը խօսուի Աստուածաշունչին մէջ: Առակաց 24.5 կ'ըսէ. «Իմաստուն մարդը զօրաւոր կ'ըլլայ, եւ գիտուն մարդը իր ուժը կ'աւելցնէ»: Իսկ Առակաց 11.9-ը մեզի կը յիշեցնէ, որ «արդարները կ'ազատին գիտութիւնով»: Գիտութիւնը քեզի ուժ կու տայ երկչոտութեան թակարդէն խուսափելու համար:

Հասկցիր, որ կայ բնական գիտութիւն եւ հոգեւոր գիտութիւն: Հոգեւոր գիտութիւնն ու իմաստութիւնն անելի բարձր են բնական գիտութենէն եւ իմաստութենէն: Ահա թէ ինչու մենք այն կը կոչենք «գերբնական», այն գերադաս է բնականէն:

Տիմոթէոսի երկրորդ թուղթի 1.6,7-ին մէջ Պօղոսը Տիմոթէոսին կը յիշեցնէ այն երեք կարեւոր հիմունքները, որոնք անհրաժեշտ են վախին (երկչոտութեանը) յաղթելու համար: Ատոնք են՝ սէրը, զօրութիւնը եւ զգաստութիւնը: Այս գլուխին մէջ կը խօսինք վերջին հիմունքի՝ զգաստութեան հոգիի մասին:

Ի՞նչ է զգաստութիւնը: Արդե՞ծք այն Սուրբ գիրքի իմացութիւնն է: Աշակերտները կը համարուէին տգէտ ձկնորսներ, մինչդեռ Իսրայէլի ամենակիրթ մարդոց խումբը՝ Սինետրիոնը (հրեաներու բարձրագոյն ժողովը), շփոթած էր անոնց իմաստութենէն եւ համարձակութենէն:

*«Եւ Պետրոսի եւ Յովհաննէսի համարձակութիւնը  
տեսնելով եւ գիտնալով, որ առանց ուսմունքի եւ տգէտ  
մարդիկ են՝ կը զարմանային, միայն կը ճանչնային  
անոնց, որ Յիսուսին հետ էին» (Գործք 4.13):*

Ստեփանոս անունով մարդ մը, որ որբեայրիներու սեղանի սպասատր էր, փակեց ժողովարանի կրթուած առաջնորդներուն բերանը: Աստուածաշունչը կը պատմէ. «Եւ չէին կրնար դէմ կենալ այն իմաստութեանը եւ այն հոգիին, որուն միջոցով ան կը խօսէր» (Գործք 6.10):

Անմիջապէս կը տեսնենք, որ զգաստութեան հոգին չի ծնիր բնական իմաստութենէն կամ Սուրբ գիրքի յատուկ դասընթացքներէն: Այսպիսով, ուրկէ՞ կու գայ զգաստութեան հոգին:

## Ունենալ յայտնութիւն

Զգաստութիւնը կու գայ Քրիստոսի միտքը գիտնալէն: Միայն գրուածքը գիտնալը չի նշանակեր գիտնալ Քրիստոսի միտքը: Մեզի ըսուած է, որ «Գիրը կը սպաննէ, Հոգին կը կենդանացնէ» (Բ. Կորնթ. 3.6):

Փարիսեցիները Գիրքերու իմացութեան հարցին մէջ տգէտ չէին, անոնք չէին գիտեր ատոնց հոգին, այդ պատճառով ալ անոնց ծառայութիւնը մահ կը բերէր: Այն ատիլի կը հեռացնէր մարդոց Աստուծոյ սրտէն, քան կը մօտեցնէր Անոր: Անոնք մարդոց կը բաժնէին Աստուծմէ իրենց օրինապահ գիտութեամբ, կը ներկայացնէին Աստուծոյ այնպէս, ինչպէս իրենք կը հասկնային՝ գլուխով եւ ոչ թէ սրտով: Յիսուսը յայտարարեց. «Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, այլ ամէն խօսքով, որ դուրս կու գայ Աստուծոյ բերանէն» (Մատթ. 4.4): Ուշադրութիւն դարձուր, որ Յիսուսը չըսաւ՝ դուրս եկաւ: Ատիկա կ'ըլլար ոչ թէ անցեալ ժամանակով, այլ միայն գրուած խօսքով: Միայն Աստուածաշունչն է, որ դուրս եկած է Աստուծոյ բերանէն:

Յիսուան ըսաւ, «դուրս կու գայ», որ ներկայ ժամանակով է: Մենք պէտք է ճանչնանք այս գրութեան Տիրոջը, որպէսզի գիտնանք, թէ այսօր ինչ դուրս կ'ելլէ Անոր բերանէն:

Յիսուայը Յովհաննէս 16.13,14-ին մէջ ըսաւ. «Բայց երբ որ Ան՝ ճշմարտութեան Հոգին կու գայ, Ան կ'առաջնորդէ ձեզ ամէն ճշմարտութեան մէջ, որովհետեւ Իր անձէն չի խօսիր, այլ ինչ որ կը լսէ՝ կը խօսի, եւ գալու բաները կը պատմէ ձեզի: Ան Ինծի կը փառաւորէ, որովհետեւ Ինձմէ կ'առնէ եւ կը պատմէ ձեզի»: Ուշադրութիւն դարձուր, որ Յիսուան ըսաւ՝ ինչ որ լսէ, այլ ոչ թէ՝ ինչ որ լսեց: Սուրբ Հոգիին օգնութեամբ մենք կրնանք գիտնալ, թէ ինչ կ'ըսէ Յիսուայը հիմա:

Այդ պարագային դուն կրնաս հարցնել. «Ինչ օգուտ Սուրբ գիրքէն»: Ատիկա մեզի օգնելու եւ առաջնորդելու ուղեցոյց է: Ատիկա Աստուծմէ ներշնչուած է: Երբ Սուրբ Հոգին կը կենդանացնէ այն, խօսքերը կենդանի կը դառնան մեր սրտերուն մէջ եւ ոչ թէ միայն մեր գլուխներուն մէջ: Աստուածաշունչն այն չափանիշն է, որ մենք կ'օգտագործենք հաստատելու համար այն, ինչ որ լսած ենք Աստուծոյ Հոգիէն: Սուրբ Հոգին երբեք Աստուածաշունչին հակառակ չի խօսիր: Բայց մենք կրնանք մենք մեզ խանգարել: Մենք կրնանք մեր հասկացողութեամբ սահմանափակել այն, ինչ որ կրնայ ըսել կամ ընել Սուրբ Հոգին: Ատիկա էր փարիսեցիներու սխալը:

## **Աստուածաշունչի գլուխներուն եւ խօսքերուն տեղը գիտնալը բաւարար չէ**

Փարիսեցիները շատ գիտելիքներ ունէին: Փաստօրէն անոնք զոգ գիտէին Հին կտակարանի առաջին հինգ գիրքերը: Անոնք կը հետազօտէին գրուածքը եւ անհամբեր կը սպասէին Մեսայիին: Մինչդեռ փարիսեցիները Անոր կը սպասէին գրուածքի մասին եղած իրենց հասկացողութեամբ: Անոնք գիտէին, որ Եսայիան այսպէս մարգարէացաւ.

*«Որովհետեւ մեզի համար Մանուկ մը ծնաւ, մեզի Որդի մը տրուեցաւ, եւ իշխանութիւնը պիտի ըլլայ Անոր ուսին վրայ, եւ Անոր անունը պիտի կոչուի Սքանչելի, Խորհրդական, Հզօր Աստուած, Յաւիտենութեան Հայր, Խաղաղութեան Իշխան: Իշխանութիւնը*

*շարժանելուն եւ խաղաղութեան վերջ չկայ Դաւիթի  
աթոռին վրայ եւ Անոր Թագաւորութեան վրայ, որ  
Անոր հաստատելու եւ անդացնելու Անոր իրաւունքով եւ  
արդարութիւնով այսօրուրնէ մինչեւ յաւիտեան: Զօրաց  
Տիրոջ նախանձը պիտի ընէ այս» (Եսայիա 9.6,7):*

Ըստ փարիսեցիներուն՝ Մեսիան պիտի հաստատէր Իր երկրային Թագաւորութիւնը, պիտի ազատագրէր անոնց Հռոմի լուծէն եւ պիտի նստէր Դաւիթի գահին վրայ: Ատոր համար ալ, երբ Յիսուսը եկաւ որպէս հիւան՝ Գալիլիոյ Նազարէթ քաղաքէն, իսկ Անոր ուղեկցող աշակերտները անուս ձկնորսներ եւ մաքսաւորներ էին, փարիսեցիները զայթակղեցան:

Այս փարիսեցիները մշտապէս կը հակառակէին Յիսուսին այնպիսի թեմաներով, որոնք իրենք հնարած էին՝ մեկնելով Սուրբ գիրքի իրենց հասկացողութենէն: Անոնք որոշած էին, որ Մեսիան պիտի ըլլայ հզօր ազգային առաջնորդ: Ատոր համար ալ հակառակելով Յիսուսին՝ անոնք այսպիսի հարցումներ կը հարցնէին. «Եթէ Դու եւ Մեսիան, ո՞ր է Քու Թագաւորութիւնը, որ կ'ենթադրես հաստատել: Ինչո՞ւ չես նստիր Դաւիթի գահին»:

Յիսուսը կը պատասխանէր. «Աստուծոյ Արքայութիւնը դուրսի նշանով չի գար: Ոչ ալ կ'ըսեն, թէ ահա հոս է, կամ ահա հոն է, որովհետեւ ահա Աստուծոյ Արքայութիւնը ճիշդ ձեր ներսն է» (Դուկ. 17.20,21): Այսօր մենք կրնանք ասիկա հասկնալ, որովհետեւ արտօնութիւն ունինք գիտնալու, որ Յիսուսը մահացաւ եւ յարութիւն առաւ, բայց այդ մարդիկ վստահ էին, որ իրենք ճիշդ են: Այնուամենայնիւ, փարիսեցիներու վստահութիւնը կու գար Սուրբ գիրքի իրենց հասկացողութենէն: Անոնք չունէին Հոգիին հասկացողութիւնը:

## **Հոգիէն ստացած յայտնութիւն**

Սիմէոն անունով մարդ մը նոյնպէս կը սպասէր Մեսիային: Ան այնքան գիտելիքներ չունէր, որքան փարիսեցիները: Բայց տես, թէ Աստուածաշունչն ինչ կ'ըսէ անոր մասին.

*«Եւ այս մարդը արդար եւ Աստուածավախ էր եւ  
կը սպասէր Իսրայէլի մխիթարութեանը, եւ Սուրբ*

Ձգաստութեան հոգին

Հոգի կար անոր վրայ: Եւ անոր պատգամ եղած էր Սուրբ Հոգիէն, որ մահ չտեսնէ, մինչեւ որ Տիրոջը՝ Քրիստոսին տեսնէ: Եւ Հոգիով եկաւ փաճար, եւ երբ որ ծնողները Յիսուս երեխային բերին, որ օրէնքի սովորութեան պէս Անոր համար ընեն, ան ալ առաւ Անոր, ընդունեց իր գիրկը եւ Աստուծոյ օրհնեց եւ ըսաւ. «Հիմա կ'արձակես Քու ծառային, ով Տէր, Քու խօսքին պէս խաղաղութիւնով: Որովհետեւ իմ աչքերը տեսան Քու փրկութիւնը... Եւ Յովսէփը եւ Անոր մայրը զարմացած էին այն բաներուն վրայ, որ Անոր համար կը խօսուէին» (Ղուկ. 2.25-30, 33):

Երբ Յիսուսին բերին Տիրոջը նուիրելու, Ան մօտաւորապէս վեց ամսականէն մինչեւ երկու տարեկան էր: Տաճարը հսկայական էր, անոր տարածքին մէջ կը մտնէին քանի մը շինութիւններ: Հոն սովորաբար կ'ըլլային հարիւրաւոր, նոյնիսկ հազարաւոր մարդիկ:

Փորձենք մտովի տեսնել այդ տեսարանը: Գալիլիայէն կու գայ հիւան մը իր կնոջ հետ, որուն գիրկը շուրջ վեց ամսական մանուկ մըն է: Անոնք տաճարին մէջ ամբոխի մէջ են, երբ այս մարդը՝ Սիմէոնը, կը վազէ վերցնելու մանուկը եւ կը մարգարէանայ. «Ահա, Մեսիան»: Հիմա կրնամք հասկնալ, թէ ինչու Յովսէփն ու Մարիամը զարմացած էին:

Ուշադրութիւն դարձնուր, որ Սիմէոնը չբացայայտեց Մեսիային գալը՝ կարդալով գիրք մը, ըսենք՝ «101 պատճառներ, թէ ինչու Մեսիան պիտի գայ Ք. ա. 4թ-ին» վերնագիրով: Ան այս տեղեկութիւնը չստացաւ Սուրբ գիրքերը ուսումնասիրելով: Սուրբ Հոգիի յայտնութեամբ Սիմէոնը գիտցաւ, որ Մեսիան կու գար: Ան տաճար եկաւ Սուրբ Հոգիի ցուցմունքով եւ առաջնորդութեամբ:

Ահա ապշեցուցիչ փաստ մը, որ մտածել կու տայ: Այս մարդը, որ օրէնքի փորձագէտ չէր, ընդունեց Յիսուսին որպէս Մեսիայի, երբ Ան շուրջ վեց ամսական էր, մինչդեռ երեսուն տարի ետք փարիսեցիները չճանչցան Մեսիային, երբ Ան դեւեր կը հանէր, կը բժշկէր հիւանդներուն, կը բանար կոյրին աչքերը եւ յարութիւն կու տար մեռելներուն: Ահա տարբերութիւնը Տիրոջ միտքն ունենալու եւ Գրուածքը մտքով հասկնալու միջեւ:

Կրնայ պատահիլ, որ մենք Նոր կտակարանին հետ վարուինք այնպէս, ինչպէս փարիսեցիները կը վարուէին Հին կտակարանին հետ: Արդե՞՞ծ սահմանափակած ենք Աստուծոյ մասին մեր գիտութիւնը մեր վարդապետութեամբ եւ գիրքերու մեր իմացութեամբ: Վարդապետութիւնն Աստուծոյ հետ փոխյարաբերութիւն չի ստեղծեր, այն միայն կը բացատրէ ատիկա: Երբ ես ըսի՝ այո՛ իմ ամուսնութեան ժամանակ, ատորմով ամուսնութեան մասին ձեռնարկ չստացայ: Ես սկսայ անձնական փոխյարաբերութիւններ ձեւաւորել իմ կնոջ հետ:

Ուրեմն պէտք է, որ մենք դադրի՞նք մեր Աստուածաշունչը կարդալէ: Անշուշտ՝ ոչ: Մենք պէտք է այն կարդանք ուրիշ ձեով: Երբ ես իմ Աստուածաշունչը ձեռքս կը վերցնեմ, միշտ կ'աղօթեմ՝ խնդրելով Սուրբ Հոգիէն, որ յայտնէ ինձի Տիրոջ խօսքը: Երբ ես կը կարդամ, ճշմարտութիւնները կը պողական իմ սրտին մէջ: Այդ ճշմարտութիւններն այն խօսքերն են, որոնցմով ես պէտք է ապրիմ:

Զգաստութիւնն այն է, որ գիտնաս, թէ ճիշդ հիմա Աստուած ինչ կ'ըսէ եւ կ'ընէ: Միայն Աստուծոյ Հոգին կրնայ բացայայտել ասիկա: Ան կրնայ հաղորդակցիլ Աստուածաշունչի միջոցով, կամ խօսիլ իմ սրտին հետ Իր մեղմ, հանդարտ ձայնով:

Երբ մենք գիտենք, թէ Աստուած ինչ կ'ըսէ, մենք կը հաստատուինք անսասան ժայռի վրայ:

## **Յիսուսն իշխանութեամբ կը խօսի**

Աւետարանները շարունակ կը պատմեն, թէ ինչպէս Յիսուսն իշխանութեամբ կը խօսէր: Նայիր այդպիսի դէպքի մը:

*«Եւ եղաւ, երբ որ Յիսուսն այս խօսքերը վերջացուց, ժողովուրդները կը զարմանային Անոր վարդապետութեան վրայ, որովհետեւ իշխանութիւն ունեցողի պէս կը սորվեցնէր անոնց եւ ոչ թէ դպիրներու պէս» (Մատթ. 7.28,29):*

Ան ոչ միայն կը խօսէր իշխանութեամբ, այլեւ կը շարժէր իշխանութեամբ: Տես մէկ ուրիշ դէպք մը.



## Ձգաստութեան հոգին

*«Եւ զարմանք եղաւ ամէնուն վրայ, եւ իրար հետք  
կը խօսէին եւ կ'ըսէին. «Ասիկա ինչ բան է, որ  
իշխանութիւնով եւ զօրութիւնով պիղծ հոգիները կը  
սասսրէ, եւ անոնք դուրս կու գան»» (Ղուկ. 4.36):*

Յիսուսը կ'ապրէր եւ կը շարժէր այնպիսի իշխանութեամբ, որ ճանչցաւ հռովմայեցի հարիւրապետ մը: Ան Յիսուսին ըսաւ, որ եթէ Ան խօսք մը ըսէ, իր ծառան կը բժշկուի (Մատթ. 8.5-10): Այս հռովմայեցին հասկցած էր Յիսուսի իշխանութեան աղբիւրը: Յիսուսի իշխանութիւնը չէր սահմանափակուած Իրմով, այլ ատիկա Աստուած կը մատակարարէր: Ատիկա այդպէս էր, որովհետեւ Յիսուսն ամբողջութեամբ կը հնազանդէր Սուրբ Հոգիին, Որ կը յայտնէր Հօր կամքն Իրեն:

Հարիւրապետն ըսաւ. «Քանի որ ես նոյնպէս մարդ մըն եմ, որ իշխանութեան տակ է, եւ իմ իշխանութեան տակ ալ զինուորներ ունիմ»: Յիսուսը զարմացաւ, երբ լսեց ասիկա: Այս հրամանատարը հասկցած էր, որ իշխանութիւն ունենալու միակ ճանապարհը իշխանութեան տակ ըլլալն է: Յիսուսը կը գործէր իշխանութեամբ, որովհետեւ Ան իշխանութեան տակ էր: Ան ամբողջութեամբ կը հնազանդէր Սուրբ Հոգիին, Որ կը յայտնէր Հօր կամքը: Ան ըսաւ.

*«Որովհետեւ ես Իմ անձէն չխօսեցայ, բայց Ինձ ուղարկող Հայրը, Ան պատուէր տուաւ Ինձի, թէ ինչ պիտի ըսեմ եւ ինչ պիտի խօսիմ» (Յովհ. 12.49):*

Եւ նորէն.

*«Ես Ինձմէ չեմ կրնար ոչինչ ընել, ինչպէս կը լսեմ, այնպէս կը դատեմ, եւ Իմ դատաստանն արդար է, որովհետեւ Իմ կամքը չեմ փնտրեր, այլ՝ Ինձ ուղարկող Հօր կամքը» (Յովհ. 5.30):*

Յիսուսը յստակ բացատրեց, որ Իր իշխանութիւնը Հօրմէն կու գայ.

*«Չե՛ն հաւատարար, որ ես Հօր մէջ եմ, եւ Հայրն Իմ մէջ է. այն բանը, որ ես կը խօսիմ ձեզի հետք, Իմ անձէն չեմ խօսիր, բայց Հայրը, որ Իմ մէջ բնակուած է, Ան կը գործէ այդ գործերը» (Յովհ. 14.10):*

*«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թե Որդին Իրմէ չի կրնար ոչինչ ընել, թէ որ չտեսնէ այն, ինչ որ Հայրը կ'ընէ, որովհետեւ ինչ որ Ան կ'ընէ, Որդին ալ ճիշդ այն բանը Անոր պէս կ'ընէ» (Յովհ. 5.19):*

Յիշէ՛, նոյնիսկ չնայած որ Ան Աստուծոյ Որդին է, Ան ապրեցաւ որպէս Սուրբ Հոգիով լեցուած մարդ մը: Ան Իրեն ազատեց Աստուածային բոլոր արտօնութիւններէն, մինչդեռ կը հրամայէր այնպիսի իշխանութեամբ, որ կ'ապշեցնէր մարդոց: Ատիկա անորմէ էր, որ Ան կը խօսէր եւ կը գործէր միայն այնպէս, ինչպէս որ Աստուծոյ Հոգին կ'առաջնորդէր: Յիսուսը երբեք չվախցաւ, որովհետեւ Աստուած երբեք չի վախնար կամ սարսափիր: Աստուծմէ բացի չկայ մէկը անելի զօրաւոր, ամենակարող եւ իմաստութեամբ լեցուն:

Յիսուսը կը մնար Իր իշխանութեան մէջ նոյնիսկ այն ժամանակ, երբ փարիսեցիները կը փորձէին վախցնել Անոր իրենց կրօնական եւ խորամանկ հարցերով: Անոնք կը ջանային Յիսուսին թակարդը նետել Իր իսկ խօսքերով՝ փորձելով վարկաբեկել Անոր: Բայց նշանակութիւն չունէր, թէ որքան հմտօրէն լարած էր անոնց ծուղակը. Յիսուսը միշտ կը պատասխանէր Սուրբ Հոգիով՝ կոտրելով անոնցմէ եկող երկչոտութիւնը: Ան կը շփոթեցնէր փարիսեցիներուն իմաստութեամբ, մինչեւ որ վերջիններս յուսախաբուած կը հրաժարէին Յիսուսին վախցնելու իրենց փորձէն.

*«Եւ ոչ որ կրնար բան մը պատասխան տալ Անոր, եւ այն օրէն յետոյ ալ մէկը չէր համարձակեր Անոր բան մը հարցնելու» (Մատթ. 22.46):*

## **Ինչպէս որ Հայրը ուղարկեց Ինծի...**

Այժմ հիասքանչ լուրը. «Ինչպէս Իմ Հայրը Ինծի ուղարկեց, Ես ալ ձեզի կ'ուղարկեմ» (Յովհ. 20.21): Մենք պէտք է ապրինք, խօսինք եւ շարժինք այնպէս, ինչպէս Ան կ'ընէր: Ահա թէ ինչու Ան կը քաջալերէր մեզի.

*«Արդ ձեր սրտին մէջ դրէք, որ առաջուրնէ հոգ չընէք պատասխանելու համար: Որովհետեւ Ես բերան եւ իմաստութիւն կու տամ ձեզի, որուն չեն կրնար*

## Ջգասարութեան հոգին

*հակառակ խօսիլ եւ ոչ ալ ընդդիմանալ ձեր բոլոր  
հակառակորդները» (Ղուկ. 21.14,15):*

Պատճառը, թէ ինչու ոմանք կը խօսին, կը սորվեցնեն կամ կը քարոզեն առանց իշխանութեան, այն է, որ անոնք Աստուածաշունչէն ուղերձ մը կ'ուսումնասիրեն, յետոյ այդ սուրբգրային խօսքերուն կը խառնեն իրենց հասկացողութիւնը: Անոնք կը խօսին այն մասին, թէ Աստուած ինչ ըսաւ եւ ըրաւ անցեալին, այլ ոչ թէ ինչ կ'ըսէ եւ կ'ընէ հիմա: Միայն Աստուծոյ Հոգիով խօսելու պարագային մենք կը խօսինք իշխանութեամբ:

*«Որովհետեւ Ինքն ըսաւ, թէ չեմ թողիր քեզ եւ երեսէ  
չեմ ձգեր: Այնպէս որ համարձակ ենք ըսելու՝ Տէրն է  
իմ Օգնականը, եւ ես չեմ վախնար, ինչ պիտի ընէ  
ինծի մարդը» (Եբր. 13.5,6):*

Ուշադրութեամբ մէկ անգամ ես նայիր այս խօսքերուն: Մենք կրնանք խօսիլ համարձակութեամբ եւ իշխանութեամբ, երբ գիտենք, թէ ինչ կ'ըսէ ան: Աստուծոյ Խօսքին նկատմամբ եղած համոզուածութիւնը կու տայ մեզի համարձակութիւն: Աստուած կը հաւաստիացնէ մեզի, որ երբ մենք գիտենք, թէ ինչ կ'ըսէ ան, եւ երբ մենք կը հաւատանք, որ Ան միշտ մեզի հետ է, կրնանք համարձակօրէն յայտարարել՝ ինչ կրնայ ընել ինծի մարդը: Երբ մենք կ'ապրինք այս վստահութեամբ, մեզի չեն կրնար վախցնել:

## Ժամանակակից փարիսեցիները

Ես ադիթ ունեցած եմ հանդիպելու մարդոց, որոնց ես կ'անուանեմ ժամանակակից փարիսեցիներ, որոնք չունին Հոգին (անոնք կրնան պնդել, որ լեզուներով կը խօսին, բայց տակալին չունին Աստուծոյ Հոգին): Անոնք անլի արագ մէջբերումներ կ'ընեն Աստուածաշունչի որեւէ գլուխէն կամ խօսքէն, քան շատերը:

Այս մարդիկ կը հակառակէին ինծի հարցումներով, որոնք կը վերաբերէին իմ քարոզածին կամ ալ, հաւանաբար, ինչ որ բանի, որ գրած էի:

Ես նկատի չունիմ, որ մարդիկ հարցումներ կը հարցնէին սորվելու համար կամ որովհետեւ չէին հասկնար: Ո՛չ, ես կը խօսիմ

անոնց մասին, որոնք ամեն ինչ կ'անցնեն իրենց կրօնական չափանիշներուն մէջէն՝ մերժելով ռեւէ մէկուն կամ որեւէ բան, որ չի համապատասխաներ իրենց վարդապետական «արկղի» պարունակութեանը:

Ես ուշադրութիւն դարձուցած եմ, որ զրոյցը կրնայ ընթանալ երկու ուղղութեամբ: Առաջինն այն է, որ ես կրնամ մտնել անոնց հետ Սուրբ գիրքին վերաբերող բանավէճի մէջ եւ դուրս գալ պարտուած յատկապէս այն պարագային, երբ անոնք շատ լաւ գիտեն այդ թեմային վերաբերեալ Աստուածաշնչեան համարները, որուն խնդիրին մէջ կը փորձեն համոզել: Անոնք կը յաղթեն, իսկ ես շփոթած կը մնամ: Ես վարժուած եմ չիյնալ ասոր մէջ:

Միւս ճանապարհն այն է, որ նայիմ Սուրբ Հոգիին եւ խօսիմ այն, ինչ որ ես կը լսեմ իմ սրտին մէջ: Այդ ժամանակ կու գայ Աստուծոյ իմաստութիւնը եւ անոնց փաստարկներէն հետք անգամ չի մնար: Աստուծոյ իմաստութիւնը միշտ կու գայ Աստուածաշունչէն, բայց Սուրբ Հոգին կենդանութեան շունչ կու տայ:

Տարիներ առաջ ես ծառայողի մը հետ օդանաւի մէջ էի: Մենք ծանօթացանք հրեայ կնոջ մը հետ, որ շատ խելացի էր եւ հաղորդակցող: Անոր հետ թէժ զրոյց ունեցանք Տէր Յիսուսին մասին: Մենք բորբոքած, մէկս միւսին կարգ չտալով կը փորձէինք ապացուցել, որ Յիսուսն է Մեսիան: Ամբողջ զրոյցին ընթացքին կինը փորձեց ապացուցել, որ Յիսուսին ըսածները սուտ են:

Յետոյ յանկարծ ես հասկցայ, թէ ինչ կ'ընէի: Ես գիտէի, որ այս բանավէճը ոչ մէկ բանի կը հասցնէ: Այնպէս որ ես այդ ընթացքին փնտռեցի Սուրբ Հոգիի առաջնորդութիւնը, եւ Ան յայտնեց, թէ ինչ պիտի խօսէի: Ես նայեցայ կնոջը եւ բաժնեկցեցայ այն խօսքերով, որոնք Սուրբ Հոգին տուած էր ինծի: Անկէ ետք իմ ծայնը փոխուեցաւ, եւ ես խօսեցայ իշխանութեամբ: Երբ կինը լսեց այդ խօսքերը, անոր բիրբերը լայնցան, եւ ան լռեց: Մեր ողջ վիճաբանութիւնը չօգնեց անոր: Բայց երբ Տիրոջ խօսքը եկաւ, այն անմիջապէս ազդեց այդ կնոջ վրայ:

Օդանաւէն դուրս գալէն ետք ծառայողը, որուն հետ կը ճամբորդէի, ըսաւ. «Ճո՛ն, ես զգացի Տիրոջ ներկայութիւնը, երբ դուն կը խօսէիր այդ խօսքերը: Դուն նկատեցի՛ր, որ ան այլեւս ոչինչ կրցաւ ըսել»: Մի՛ յանձնուիր անպտուղ բանավէճերուն, որոնք

## Ջգաստութեան հոգին

հիմնուած են Աստուածաշունչի մտային հասկացողութեան վրայ: Ատոր փոխարէն թոյլ տուր Սուրբ Հոգիին, որ առաջնորդէ քեզ հոգեւոր իմաստութեան մէջ:

*«Որն ալ կը խօսինք ոչ թէ մարդկային իմաստութեան սորված խօսքերով, այլ Սուրբ Հոգիին սորվեցուցածներով՝ հոգեւորները հոգեւորներու հետ համեմատելով... Բայց հոգեւոր մարդն ամէն բան կը քննէ եւ ինքը ոչ ոքէն կը քննուի: Որովհետեւ իմ գիտէ Տիրոջ միտքը, որ բան մը սորվեցնէ Անոր, բայց մենք Քրիստոսի միտքն ունինք» (Ա. Կորնթ. 2.13,15,16):*

Ոչ ոք կրնայ քննել (անգլերէնին մէջ՝ դատապարտել) կամ վախցնել անոր, որ ունի Քրիստոսի միտքը: Ես կրնամ պատմել բազմաթիւ դէպքեր, որոնց ժամանակ վախցած կ'ըլլայի, եթէ չդիմէի Աստուծոյ Հոգիին:

Մեզի խորհուրդ կը տրուի ապրիլ այնպէս, ինչպէս Յիսուսը կ'ապրէր (Ա. Յովհ. 2.6): Յիսուսը կ'ընէր միայն այն, ինչ որ կը տեսնէր Սուրբ Հոգին ընելու ժամանակ: Եթէ մենք այդպէս ընենք, կ'ունենանք զգաստութիւն եւ համարձակութիւն ձեռք կը ձգենք երկչոտութիւնն ու վերահսկողութիւնը յաղթելու համար:

## Տէր, ես ինչ պէտք է ընեմ

Յաճախ մենք դէմ առ դէմ կը հանդիպինք իրավիճակներու, որոնք կրնան անդամալոյծ ընել մեզի: Ատոր պատճառով չենք կրնար ամբողջութեամբ ընել այն, ինչ որ Աստուած դրած է մեր առջեւ: Ատիկա կը պատահի այն պարագային, երբ չունինք Քրիստոսի միտքը: Ես այսպիսի խնդիրի մը առջեւ կեցայ Մեքսիքոյի մէջ:

Մեծ ատեարանչական ծառայութեան համար հրաւիրուած էի Մեքսիքոյի Մոնթերէի քաղաքը: Ես հրաւիրուած էի միայն մէկ ծառայութիւն անցընելու համար եւ հոգացած էի իմ ծախսերը: Օրուան առաջին կէտը անցուցի աղօթքի մէջ: Երբ կ'աղօթէի, տեսայ սեւ ամպ մը, որ կախուած էր այն շէնքին վրայ, ուր մենք պէտք է հաւաքուէինք: Ես հարցուցի Տիրոջը, թէ ատիկա ինչ էր:

Ան բացատրեց. «Ճո՛ն, ատիկա այն խաւարն է, որ կը կռուի այս ծառայութեան դէմ: Շարունակէ աղօթել»:

Շատ ուժեղ օծութիւն եկաւ՝ զօրացնելով ինծի աղօթքի մէջ: Երեսուն վայրկեանի ընթացքին ես նորէն ինչ որ բան մը տեսայ: Լոյսի ճառագայթ մը երկինքէն ուղիղ կ'իջնէր շէնքի տանիքին վրայ: Կրկին ես հարցուցի Տիրոջը, թէ ատիկա ի՞նչ էր: Ան ըսաւ իմ հոգիին. «Ատիկա Իմ անխոչընդոտ փառքն է, որ այս երեկոյ պիտի գայ ծառայութեան ժամանակ»: Ես այնքան յուզուած էի:

Ծառայութիւնը պէտք է սկսէր ժամը 18:00-ին: Մենք քիչ մը շուտ հասանք: Մեզի ըսին, որ պաշտօնեայ մը կ'ուզէ տեսնել ծառայութիւնը կազմակերպող հովիւին: Այդ պաշտօնեային կ'ուղեկցէին համազգեստ հագած երկու սպաներ:

Հովին ու ես գացինք հանդիպելու անոր: Պաշտօնեան հովիւին հետ խօսեցաւ սպաներէնով, յետոյ դարձաւ եւ հարցուց ինծի անգլերէնով. «Դուք կը խօսի՞ք սպաներէն»: «Ո՛չ, պարո՛ն», – պատասխանեցի ես:

Յետոյ ան պատուիրեց ինծի՝ ըսելով. «Այս երեկոյ դուք ոչինչ պէտք է խօսիք ժողովուրդին հետ, բացի թուրիզմի (շրջագայութեան) հետ կապուած խնդիրներու մասին»:

Յետոյ ան դարձաւ դէպի հովիւը եւ խօսեցաւ անոր հետ: Ես կը նայէի հովիւին: Ան ուրախ չէր: Փաստօրէն հովիւը բաւականին վախցած էր:

Երբ պաշտօնեան վերջացուց, ան եւ երկու զինուորականները հեռացան: Հովին ինծի մէկ կողմ քաշեց եւ ըսաւ. «Ճո՛ն, այս մարդը կառավարական պաշտօնեայ է, եւ ան կ'ըսէ, որ դուն չես կրնար քարոզել: Մեքսիքոյի մէջ օրէնք մը կայ, ըստ որուն դուն չես կրնար քարոզել առանց թոյլտուութեան, եթէ քաղաքացի չես»: Ան շարունակեց՝ ըսելով. «Ատիկա օրէնք մըն է, որ սովորաբար հարկադրող չէ, բայց ակնյայտ է, որ այս մարդը չ'ուզեր քեզ հոս տեսնել, եւ ան կ'ուզէ կիրառել այդ օրէնքը: Ան նաեւ ըսաւ, որ կ'ուզէ տեսնել քեզ իր գրասենեակին մէջ, երկուշաբթի օրը՝ առաւօտեան ժամը իննին»:

Ես չէի կրնար հաւատալ իմ լսածին: Անմիջապէս ըսի հովիւին. «Լսէ՛, ես ամբողջ ճանապարհը չկտրեցի-անցայ, որ հոս չքարոզեմ:

## Ջգասարութեան հոգին

Եթէ դուն միայն ինծի համար մտահոգուած ես, ապա թոյլ տուր ինծի քարոզել»:

Հովին ըսաւ. «Ճո՛ն, ատիկա կրնայ նաեւ իմ եկեղեցւոյ վրայ ազդեցութիւն ձգել, ան կրնայ շատ խնդիրներ յառաջացնել: Ան բարձր դիրք ունեցող պաշտօնեայ է: Լաւ կ'ըլլայ, որ չքարոզես»: Այս հովիւը վախցած էր, եւ ես ոչինչ կրցայ ընել, բացի աղօթելէն, որովհետեւ ան ունէր իշխանութիւն այդ ծառայութեան վրայ:

Ես դուրս ելայ շէնքէն: Ատիկա Մոնթերէի կեդրոնը գտնուող մարզադահլիճ մըն էր: Դահլիճին դիմաց դրօշակի մը ձող կար, եւ ես սկսայ քալել ատոր շուրջ: Ես գիտէի, որ Աստուած ցոյց տուած էր ինծի աղօթքի մէջ, որ Իր փառքը պիտի յայտնուի այս ծառայութեան ժամանակ, բայց չէի գիտեր, թէ ինչ պէտք է ընէի այդ պահուն: Միտքս անհանգիստ էր. «Միթէ՛ այս վախցնող պաշտօնեան ետ պիտի պահէ ինծի այն բանէն, որ Աստուած ուղարկած է ինծի ընելու»: Յետոյ ես հասայ այն եզրակացութեանը, որ այս մարդը չի կրնար կեցնել այն, ինչ որ Աստուած ցոյց տուած է ինծի աղօթքի մէջ: Առջեւ եւ ետեւ երթալով՝ ես կը պայքարէի. «Ի՛նչ ընեմ»: Յետոյ ըսի. «Հայր, ես չեմ գիտեր ինչ ընել, բայց Դուն անակնկալի չեկար ասկէ: Դուն արդէն գիտէիր, որ ասիկա պիտի պատահի: Այնպէս որ, այս իրավիճակին համար ես կարիք ունիմ Քու իմաստութեանն ու խորհուրդին»: Սկսայ Հոգիով աղօթել: Ես խօսք ստացայ.

*«Խոր ջուրեր է մարդու սրտին խորհուրդը, բայց խելօք մարդը երեւան կը հանէ» (Առակ. 20.5):*

Յիսուան ըսաւ, որ Իրեն հաւատացողներուն փորէն կենդանի ջուրերու գետեր պիտի բխին (Յով. 7.38): Ես Աստուծոյ խորհուրդի գետի կարիքն ունէի: Ես Քրիստոսի մտքի կարիքն ունէի: Լեզուներով աղօթելը կ'օգնէ այդ խնդիրին մէջ:

Աղօթքէն ետք, միտքս բաւականին հանդարտեցաւ ւաւելին լսելու համար: Եւ յանկարծ սրտիս մէջ այս միտքը ծագեցաւ. «Մարդոց պատմէ՛ Մեքսիքօ եկած ամենամեծ զբօսաշրջիկին մասին»: Ես բարձրաձայն պոռացի. «Գտա՛: Այդ մարդն ըսաւ, որ ես կրնամ խօսիլ թորիզմի մասին: Ես ալ կը պատմեմ Մեքսիքօ երբեք այցելած ամենամեծ զբօսաշրջիկի՝ Յիսուս Քրիստոսի մասին»:

Ուրախությունը պայթեցաւ իմ ներսը, եւ ես սկսայ ծիծաղիլ:

Վազելով վերադարձայ շէնք: Ես զարմացայ. Աստուած արդէն աշխատանք տարած էր հովիւին հետ: Ան ըսաւ. «Աստուած խօսեցաւ հետս եւ ըսաւ, որպէսզի ըսեմ քեզի, որ ընես այն, ինչ որ Ան կ'ըսէ»:

Ես սկսայ ծառայութիւնը՝ ըսելով. «Ինձի ըսած են, որ ձեզի հետ խօսիմ միայն զքօսաշրջութեան հետ կապուած թեմաներով: Այնպէս որ, այս երեկոյ ես ձեզի պիտի պատմեմ ամենամեծ զքօսաշրջիկին մասին, որ երբեք եկած է Մեքսիքօ»:

Մէկ ժամ քարոզեցի Յիսուսի մասին՝ որպէս Տէր եւ Փրկիչ: Շատերն արձագանգեցին Յիսուս Բրիստոսին որպէս Տէր ընդունելու կոչին: Այս խումբին մէջ հաշմանդամ մարդ մը կար: Այն բանէն ետք, երբ ես աղօթեցի մարդոց համար, որ ընդունին Յիսուսին, Տէրը խօսեցաւ հետս. «Ես կ'ուզեմ բժշկել այդ մարդուն»:

Ես նայեցայ այդ մարդուն եւ ըսի. «Պարոն, Աստուծոյ Հոգին ըսաւ, որ կ'ուզէ Ձեզ բժշկել»: Ես ձեռքերս դրի անոր վրայ եւ աղօթեցի: Յետոյ բռնեցի անոր ձեռքէն, եւ մենք սկսանք քալել: Ան սկիզբէն շատ զգոյշ կը քալէր: Յետոյ ան շարժեցաւ անելի ու անելի արագ: Շուտով այդ մարդն ազատ կը քալէր, իսկ յետոյ մենք միասին վազեցինք: Վերջաւորութեան ես ձգեցի անոր ձեռքը, եւ ան ինքնուրոյն վազեց:

Բազմութիւնը բռնկեցաւ: Բոլոր տեսակի տկարութիւններով եւ հիւանդութիւններով մարդիկ վազեցին առջեւ:

Խառնաշփոթի մէջ ես կորսնցուցի թարգմանիչիս: Շուրջ երկու հարիւր մարդ փոթորիկի պէս մօտեցան բեմին: Շատերը բժշկուեցան, որոնց մէջ կար կին մը, որուն մէկ ականջը ծնած օրէն ամբողջովին խուլ էր, իսկ միւս ականջով հազիւ կը լսէր: Այդ կինն այնքան լացած էր, որ վերնաշապիկն արցունքներէն ամբողջովին թրջուած էր: Ատիկա հրաշալի էր:

Ես տեղեակ չէի, որ այդ կառավարական պաշտօնեան իր երկու մարդոց ուղարկած էր ծառայութեան, որպէսզի ձերբակալէին ինձի, եթէ քարոզեմ: Անոնք հասած էին այն ժամանակ, երբ ես կ'աղօթէի հաշմանդամ մարդուն համար: Կարգուկանոնի ծառայողներէն մէկը նկատած էր անոնց եւ լսած էր, թէ ինչ ըսած էին. «Նախքան



## *Ձգաստութեան հոգին*

անոր ձերբակալելը՝ եկուր տեսնենք, թէ ինչ կ'ընէ ան»:

Երբ անոնք տեսած էին, որ հաշմանդամ մարդը բժշկուած է, մէկը հարցուցած էր միասին. «Դուն կը կարծես, որ ասիկա իրական է»: Անոնք ատելի մօտեցած էին բեմին եւ շարունակած էին հետեւիլ, թէ Աստուած ինչ կ'ընէր:

Երբ անոնք տեսան, թէ ինչպէս բժշկուեցաւ խուլ կինը եւ ինչպէս կու լար, անոնցմէ մէկն ըսաւ. «Ես կը կարծեմ, որ ասիկա իրական է»: Յետոյ Աստուծոյ զօրութենէն հինգ տարեկան տղայ մը ինկած էր գետին: Տեսնելով այս ամէնը՝ անոնք համոզուեցան. «Ասիկա իրական է»: Եւ այս երկու մարդիկ, որոնք ուղարկուած էին ինծի ձերբակալելու, եկան առջեւ աղօթքի համար: Հալելուիմ:

Յաջորդ օրը ես ձգեցի Մեքսիքօն: Չէի անհանգստար, որ պաշտօնեային հետ չհանդիպեցայ: Յաջորդ շաբաթ Մեքսիքոյի հովիւը եկաւ Միացեալ Նահանգներ՝ իրեն հետ բերելով Մոնթերէի ամսագիրի օրինակ մը: Ան առաջին էջէն կարդաց յօդուած մը մեր ծառայութեան մասին:

Ամսագիրը կը տեղեկացներ, որ կառավարական պաշտօնեան ըսած է, թէ ես խաբեբայ եմ, ու այն ամէնը, ինչ որ կ'ուզէի, դրամն էր: Ես առաջնորդուած էի, որ փեննի մը նոյնիսկ չառնեմ այդ երկրէն, եւ ես հոգացած էի իմ ծախսերը: Ասիկա լսելէն ետք ես հասկցայ, թէ ինչու: Բայց եւ այնպէս ամսագիրը կը շարունակէր՝ հաստատելով, որ իրենց լրագրողները տեսած էին, որ մարդիկ իսկապէս կը բժշկուէին: Փառք Աստուծոյ:

Կառավարական պաշտօնեան փորձեց կեցնել ինծի իր սպառնալիքներով: Եթէ հովիւը եւ ես իյնայինք այդ սպառնալիքներուն ազդեցութեան տակ, Աստուծոյ պարգեւը մեր կեանքին մէջ հանգած պիտի ըլլար: Ոչ ոք պիտի փրկուէր, ու ոչ մէկուն համար ալ ծառայութիւն պիտի ըլլար այդ երեկոյ: Այն խօսքը, որ Ան խօսեցաւ ինծի Իր Հոգիով, ինծի համարձակութիւն տուած էր՝ կոտրելու երկչոտութիւնը, որ արձակուած էր իմ դէմ: Ահա ատիկա է զգաստութեան զօրութիւնը:

**Այն, ինչ որ մարդը աննշան  
կը համարէ, Աստուած  
կ'օգտագործէ անկարելին ընելու համար**

## ՁԳՏԻՐ ԱՌԱՋ

Ն էմիան հրեայ մըն էր, որ կ'ապրէր այն ժամանակ, երբ Իսրայէլը գերութեան մէջ էր: Քանի մը տարի առաջ բաբելոնցիները եկած եւ ամբողջութեամբ կործանած էին Երուսաղէմը: Անոնք սպաննած կամ գերի վերցուցած էին քաղաքի բնակիչներէն շատերուն: Պարիսպներն այրած ու փլած էին, քաղաքը ձգած էին աներակներու մէջ:

Աստուած Նէեմիային սրտին մէջ դրած էր Երուսաղէմ վերադառնալ եւ վերակառուցել պարիսպներն ու քաղաքը: Նէեմիան օտար թագաւորին ծառայած էր հաւատարմօրէն եւ արժանացած էր անոր բարեհաճութեանը: Թագաւորը անոր թոյլ տուաւ երթալ եւ իրականացնել այն ամէնը, ինչ որ Աստուած դրած էր անոր սրտին մէջ: Նէեմիան անմիջապէս գնաց Երուսաղէմ եւ հաւաքեց ողջ մնացածները՝ քաջալերելով անոնց վերականգնել այն ամէնը, ինչ որ թշնամին կործանած էր: Անոնք հանդիպեցան վիթխարի դիմադրութեան: Տեղացի

երեք պաշտօնեաներ՝ Սանաբաղատը, Տուբիան եւ Գեսամը չէին ցանկար, որ պարիսպները վերակառուցուին: Անոնք դէմ էին Իսրայէլի բարգաւաճմանը եւ վճռած էին կեցնել Նէեմիային ու Աստուծոյ ժողովուրդին մնացորդին եւ ամէն տեսակի դաւեր կը հիւսէին անոնց վախցնելու համար:

Երբ այս առաջնորդները գիտցան Նէեմիայի ծրագիրներուն մասին, ինչպէս Նէեմիան կը պատմէ, ծաղր ըրին եւ արհամարհեցին (Նէեմիա 2.19): Անոնք ոչ միայն կը փորձէին յուսահատեցնել Նէեմիային եւ անոր մարդոց, այլեւ կը փորձէին յիմարացնել անոնց ժողովուրդի աչքերուն մէջ, կը ծաղրէին ստորացնող խօսքերով. «Եթէ անոնց շինածին վրայ աղուէս մըն ալ վեր ելլէ, անոնց քարի պարիսպը կը քանդէ» (Նէեմիա 4.3):

Յաճախ մարդիկ կը փորձեն վախցնել քեզ՝ ծիծաղելով քու վրայ կամ ալ մատնացոյց ընելով այն, ինչ որ կ'ընես: Անոնք կրնան ծաղրել քեզ կամ կասկածիլ քու կարողութեան վրայ, որուն միջոցով կը կատարես այն ամէնը, ինչ որ Աստուած դրած է քու սրտին մէջ: Այս ամէնը կրնան ընել առերես կամ ալ կասկածներ եւ ծաղրանք սերմանելով ուրիշներու մէջ: Հնարաւոր է նաեւ, որ մարդիկ չեն հակառակիր քեզի, այլ դուն կը կոռուս քու սեփական մտքի հետ, քանի որ այն կը ռմբակոծուի այնպիսի մտքերով, ինչպիսին են՝ ինչ կը մտածեն մարդիկ, անոնք կը ծիծաղեն իմ վրայ, իսկ եթէ ձախողիմ:

Այսպիսի իրավիճակներու մէջ կարելի է, որ մենք իմանանք, թէ Աստուած ինչ կը պատուիրէ մեզի ընել: Յիշենք, որ Ան «աշխարհի տկարներուն ընտրեց, որ ամչցնէ զօրաւորներուն» (Ա. Կորնթ. 1.27): Այն, ինչ որ մարդը աննշան կը համարէ, Աստուած կ'օգտագործէ անհնարինն ընելու համար: Անկէ ետք Ան պիտի առնէ ողջ փառքը:

Նէեմիան ծոմ պահեց եւ աղօթեց այնքան, մինչեւ որ ունեցաւ Տիրոջ միտքը: Անկէ ետք ան կրցաւ համարձակօրէն հակառակիլ իր թշնամիներուն:

## Ձգարիտ առաջ

*«Երկինքի Աստուածն Ինքը մեզի յաջողութիւն պիտի տայ, եւ մենք՝ Անոր ծառաներս, վեր պիտի կենանք, որ շինենք, իսկ դուք բաժին, իրաւունք եւ յիշատակ չունիք Երուսաղէմի մէջ» (Նէեմիա 2.20):*

Երբ անոնք հասկցան, որ չէին կրնար կեցնել Նէեմիային, իսկ իսրայելցիները առաջընթաց ունէին իրենց գործի մէջ, շատ բարկացան: Այլեւս չէին ծիծաղեր, քանի որ իրավիճակը ծիծաղելի չէր: Անոնք դաւ հիւսեցին եւ կը կարծէին, որ քաղաքի վրայ յարձակելով՝ կրնային խառնաշփոթութեան մէջ նետել ամբողջ ծրագիրը (Նէեմիա 4.7,8):

Բարկութիւնը երկչոտութեան մէկ այլ զէնք է: Այն կ'օգտագործուի քու դէմ, որպէսզի քեզ կեցնէ կամ յուսահատեցնէ: Բարկութենէն կրնան գալ թէ՛ ակնյայտ, թէ՛ աննկատ սպառնալիքներ: Այս յարձակումն արդիւնաւէտ միջոց է քեզ վախցնելու համար: Ես յաճախ տեսած եմ, թէ ինչպէս մարդիկ ուրիշներու զայրոյթէն խուսափելու համար հրաժարած են ընել այն, ինչ որ գիտեն, որ ճիշդ է: Անոնք յատուկ զիջումներ կ'ընեն՝ կեղծ խաղաղութիւն պահպանելու համար:

## Ճնշում դուրսէն եւ ներսէն

Նէեմիան ոչ միայն յարձակման հանդիպեցաւ անաստուածներու կողմէն, այլեւ խնդիրներ ունէր իր մարդոց հետ, որոնք անհանգստացած էին ստեղծուած իրավիճակէն: Յաճախ, երբ Աստուած մեզի ինչ որ բան մը կը յանձնարարէ, մենք դիմադրութեան ու հակառակութեան կը հանդիպինք եւ դուրսէն, եւ ներսէն:

Նէեմիայի մարդիկ ծանձրացած էին: Աղբն այնքան շատ էր, որ գործը առջեւ չէր երթար (Նէեմիա 4.10): Ուրիշ խնդիր մըն ալ կար: Անոր հարուստ աշխատողները ֆինանսական ճնշում կը գործադրէին այն ընտանիքներուն վրայ, որոնք պարտքի մէջ էին. անոնցմէ մեծ եկամտահարկ կը պահանջէին մշակած դաշտերու համար (Նէեմիա 5.1-8): Ասիկա կը յուսահատեցնէր այն մարդոց,

որոնց ընտանիքները նեղութեան մէջ էին: Այս ներքին խնդիրներն աւելի կը դժուարացնէին թշնամիի կողմէն եկող ճնշումն ու յուսահատութեան դիմադրելը:

## Վախ ամէն կողմէն

Ես եղած եմ այսպիսի իրավիճակներու մէջ: Երբ առաջին անգամ սկսայ ճամբորդել, ինձմէ խնդրած էին օգնել եկեղեցւոյ մը, որ կորսնցուցած էր իր հովիւին: Եկեղեցին փոքր քաղաքի մը մէջ էր, ուր կ'ապրէր ութը հարիւր մարդ: Երկու ծառայութենէն յետոյ եկեղեցւոյ բոլոր պատանիներն ու մեծերը ապաշխարեցին եւ վերապրեցան Աստուծոյ զօրութիւնը: Աստուծոյ շարժի հետեանքով եկեղեցւոյ անդամներուն թիւը հասաւ հարիւրի: Իմ կինը եւ ես այնքան շատ կարեկցանք ունէինք այդ մարդոց հանդէպ, որ հետաձգեցինք յաջորդ վեց շաբաթներուն մեր ծառայութիւնները: Մենք որոշեցինք մնալ, որպէսզի զօրաւոր հիմք դնենք այս եկեղեցւոյ մէջ եւ պատրաստենք այն նոր հովիւին համար:

Աւագներէն շատերուն հաճելի չէր թուեր այն, ինչ որ ես կը քարոզէի: Մարդ մը վրդովեցաւ, որովհետեւ, երբ մտաւ երրորդ ծառայութեանը, բոլոր պատանիները եկեղեցիին մէջ նստած էին առաջին երկու շարքերը, ուր սովորաբար ինքն ու իր կինը կը նստէին (Այս եկեղեցւոյ տղաներն ու աղջիկները միշտ վերջին շարքերը կը նստէին):

Ուրիշներն ալ կ'ըսէին, որ ես չափը կ'անցընեմ: Պատճառն այն էր, որ անոնք կ'ուզէին վերահսկել ինձի եւ եկեղեցին առջեւ տանիլ իրենց ուզած ձեւով: Անոնց հետ քանի մը հաւաքոյթ անցընելէն ետք վերջապէս ըսի. «Ես հոս իշխանութիւն ունիմ վեց շաբաթ, անկէ ետք ձեր նոր հովիւը կը ծառայէ: Միայն այսպէս պիտի ըլլայ: Դուք որոշեցէք»:

Այն օրը, երբ անոնք պէտք է տեղեկացնէին ինձի իրենց որոշումին մասին, հեռաձայնեց տեղացի թմրամոլ մը, որուն կինը կու գար ծառայութիւններուն: Կինն ամուսինին խոստովանած էր,

## Ձգվիր առաջ

որ շնութիւն գործած էր անոր լաւագոյն ընկերոջ հետ: Այդ մարդը որոշած էր իր բարկութիւնը թափել իմ եւ եկեղեցւոյ վրայ: Ան ըսաւ, որ այդ երեկոյ ես խնդիրներ պիտի ունենամ:

Ես ուշադրութիւն չդարձուցի անոր սպառնալիքին վրայ: Քանի մը ժամ ետք աւագներէն մէկը, որ կ'օգնէր մեզի, տեղեկացուց ինծի, որ այդ մարդը հեռաձայնած էր իրեն եւ սպառնացած, որ պիտի պայթեցնէ դահլիճը:

Ես յանձնարարեցի անոր հեռաձայնել ոստիկանութիւն եւ խնդրել, որ հետեւին այդ տղամարդուն:

Քանի մը ժամ յետոյ ես զանգ ստացայ ոստիկանութենէն: Սպայ մը ըսաւ. «Պարոն Պիվիր, կը խնդրեմ եկէք ոստիկանութեան բաժին եւ ստորագրեցէք փաստաթուղթ մը, որ համաձայն էք այս մարդու ձերբակալութեան հետ»:

Պարոն սպայ, ես չեմ ցանկար այդ մարդուն ձերբակալուած տեսնել: Ան կոտորուած է: Միակ բանը, որ կը խնդրեմ, այն է, որ այս երեկոյ ապահովէք շէնքին պաշտպանութիւնը:

Իմ հերթապահութիւնը կ'աւարտի չորս ժամէն, իսկ ոստիկանութեան մօտակայ բաժինը երեսունհինգ մղոնի վրայ է (մօտ յիսունեօթ քիլոմետր):

Այս երեկոյ անոնք չեն հասցներ ոեւէ մէկուն ուղարկել,– ըսաւ ան:

Ես չեմ ցանկար այդ մարդուն ձերբակալումը,– պատասխանեցի ես:

Պարոն Պիվիր, որքան ժամանակ է կ'ապրիք հոս:

Ես ըսի անոր, որ այդ քաղաքէն չեմ:

Պարոն Պիվիր, ես կը ճանչնամ այդ մարդը: Ան հոս «հեղինակութիւն» է: Ան թմրամոլ է: Եթէ ան քիչ մըն ալ զարեջուր խմէ, ես ալ ոչինչ կրնամ ընել:

Ես չէի հաւատար լսածիս: Ոստիկանն ըսաւ, որ այդ մարդը վտանգատու էր, այնպէս որ համոզուեցայ, որ իրականութեան մէջ ան այդպիսին էր: Բայց տակաւին կը զգայի, որ պէտք

չէ ստորագրեմ փաստաթուղթը: Ես անոր մերժեցի եւ շնորհակալութիւն յայտնեցի:

Ես ոչ միայն գործ ունէի այդ մարդու սպառնալիքներուն հետ, այլեւ խնդիրներ ունէի աւագներուն հետ: Մտածեցի. «Ասիկա անհեթեթ է: Աւագներն ինծի համար դժուարութիւններ կը ստեղծեն, չեն ուզեր, որ ես հոս ըլլամ: Հիմա ալ ինծի եւ իմ ընտանիքին կը սպառնայ մոլագար մը»:

Իմ ներսը ծայն մը կ'ըսէր, որ ես թափ տամ ոտքերուս փոշին եւ մինչեւ մայրամուտ ընտանիքս դուրս բերեմ այդ քաղաքէն: Եթէ ես չիմանայի, որ Աստուած ուղարկած էր ինծի, կը հեռանայի յանուն իմ ընտանիքին: Այնուամենայնիւ իմ սիրտը թոյլ չէր տար ինծի երթալ երեք պատճառով: Առաջինն այն էր, որ Աստուած ուղարկած էր ինծի, եւ ես Անորմէ չէի լսած, որ կրնամ հեռանալ: Երկրորդը՝ ես չէի ուզեր հրաժարիլ այն մարդոցմէ, որոնք Տիրոջ հպումը զգացած էին, եւ երրորդը՝ եթէ դուն անգամ մը փախչիս վախի պատճառով, ատիլի դիրին կ'ըլլայ փախչիլ յաջորդ անգամ:

Ես ունէի Տիրոջ միտքը եւ որոշեցի մնալ, եթէ ատիկա կը համապատասխանէր աւագներու կայացուցած որոշումին: Քանի մը ժամ անցուցի աղօթքի մէջ: Ատիկա աղօթքի ամենաուժեղ ժամանակներէն մէկն էր, որ ես երբեք ունեցած էի: Աստուծոյ պարգեւն իմ մէջ զօրացաւ: Ես պատրաստ էի երեկոյեան ծառայութեանը:

Երբ հասայ եկեղեցի, գիտցայ, որ պէտք չէ մնայի, աւագները ծառայութենէն առաջ հաւաքուած էին: Երէցներէն մէկը տեղեկացուց, որ քուէարկած եւ որոշած են, որ ես պէտք է հեռանամ: Այդ երեկոյ իմ վերջին ծառայութիւնն էր:

Ես վշտացայ, բայց որոշեցի պարզապէս կեդրոնանալ այն բանին վրայ, թէ այդ երեկոյ Աստուած ինչ կ'ուզէր ընել ժողովուրդին համար: Ես զօրաւոր ուղերձ մը քարոզեցի, եւ Աստուծոյ զօրութիւնն այնքան ուժեղ էր, որ բոլոր մարդիկ գետին ինկած էին:

Շատերը, որոնք հեռացած էին Աստուծմէ, իրենց կեանքերը



## Ձգարհր առաջ

յանձնեցին Տիրոջը: Այն մարդը, որ կը սպառնար, նոյնիսկ չերեցաւ: Ծառայութեան վերջաւորութեան եւ ստիպուած էի յայտարարել, որ աւագները չեն ցանկար, որ եւ մնամ: Ժողովուրդը դժգոհութեան ծայն բարձրացուց: Քանի որ եւ չէի եկած բաժանութիւն բերելու, ատոր համար ալ կը հեռանայի խաղաղ:

Անցաւ մէկ շաբաթ: Այդ նոյն աւագներն ընտրեցին հովի մը, որ, ինչպէս յետոյ բացայայտուեցաւ, համասեռամու էր: Յաջորդ տարուան ընթացքին անոնք չորս հովի փոխեցին:

Երկչոտութեան հոգին, որ կը գործէր այդ եկեղեցւոյ աւագներուն մէջ, լուրջ վնաս հասցուց այդ համայնքին:

## Մնա՛ ուժեղ եւ կեդրոնացած

Հազիւ նոր Նէեմիան լուծած էր իր եւ իր մարդոց միջեւ ծագած ներքին խնդիրները, երբ վախցնելու ուրիշ ալիք մը եկաւ:

*«Այն ժամանակ Սանաբաղատն ու Գեսամը մարդ ուղարկեցին քովս եւ ըսին՝ եկոր միասին տեսակցինք Ովնովի դաշտին մէջ՝ գիւղերուն մէջ, բայց անոնք կը մրտաժէին, որ ինծի չարութիւն ընեն: Եւ ես անոնց քով պարզամտորներ ուղարկեցի՝ ըսելով. «Ես մեծ գործով զբաղած եմ եւ չեմ կրնար իջնել: Ինչո՞ւ գործը դադրի, երբ որ ես ձգեմ անոր եւ իջնեմ ձեր քով»: Բայց անոնք այս բանով չորս անգամ քովս ուղարկեցին, եւ ես անոնց նոյն խօսքը պատասխանեցի» (Նէեմիա 6.2-4):*

Սանաբաղատն ու Գեսամը կը համառէին՝ փորձելով շեղել Նէեմիայի ուշադրութիւնը: Բայց Նէեմիան զօրաւոր մնաց՝ կեդրոնանալով այն բանին վրայ, որ Աստուած պատուիրած էր անոր ընել: Նէեմիան չէր ցանկար, որ իրեն խանգարեն կատարելու յանձնարարութիւնը:

Թշնամին միշտ կը ցանկայ շեղել մեր ուշադրութիւնը, որպէսզի մեզ անարդիւնաւէտ դարձնէ մեր գործին մէջ: Սատանան միայն մէկ անգամ չէ, որ կը փորձէ այդպէս ընել, սատանան յամառ է:

Մենք աւելի զօրաւոր պէտք է ըլլանք մեր որոշումին մէջ, քան ան: Ահա թէ ինչու Աստուածաշունչը կ'ըսէ. «Որուն հակառակ կեցէք հաւատքով հաստատուած...» (Ա. Պետր. 5.9): «Հաստատուած» բառը կը նշանակէ «զօրաւոր, հաստատակամ եւ անշարժ»: Շատ մարդիկ կը յանձնուին թշնամիին քանի մը հարուածէն ետք, այնինչ պէտք է աւելի անշարժ մնան այնքան, մինչեւ որ յաղթանակն ամբողջական ըլլայ:

Սանաբաղատն իր ծառային հինգերորդ անգամ ուղարկեց Նէեմիային քով, այս անգամ՝ նամակով մը, որուն մէջ կը մեղադրէր անոր ապստամբ ըլլալու եւ ինքն իրեն Յուդայի մէջ թագաւոր դնելու համար (Նէեմիա 6.5-7): Սուտ մեղադրանք:

Նէեմիան կը շարունակէր աշխատանքը: Ան շատ կեդրոնացած էր եւ ուշադրութիւնը չէր շեղէր զրպարտութեան պատճառով: Շատ յաճախ մենք մեր ընթացքէն կ'իյնանք՝ փորձելով լուծել թշնամիին հետ կապուած հարցերը, թշնամիին, որ կը փորձէ վախցնել մեզի:

Ես նայած եմ շատերու աչքերուն եւ ըսած եմ. «Ինչո՞ւ թոյլ կու տաք, որ մարդոց սուտերը ազդեն այն բանին վրայ, ինչին համար Աստուած կանչած է ձեզի: Յատկապէս այն, որ ինչ որ մէկը կը մեղադրէ ձեզի, ատիկա չի նշանակէր, որ ան ճիշդ է կամ ալ ճշմարտութիւնը կը ցանկայ: Դուք պէտք է գիտնաք այն, ինչ որ Աստուած կ'ըսէ ձեր մասին եւ որն է Անոր ծրագիրը ձեզի համար:

Ինչո՞ւ ուշադրութիւն կը դարձնէք յիմարութեան վրայ: Աստուածաշունչը կ'ըսէ. «Մի՛ պատասխանէր յիմարին անոր տխմարութեան համեմատ, թերեւս դուն ալ անոր նմանիս» (Առակ. 26.4):

Վերջին մարդը, որ կը փորձէր կեցնել Նէեմիային, եկաւ ու մարգարէացաւ, թէ Նէեմիան պէտք է պահուըտի տաճարին մէջ, որովհետեւ թշնամին կու գայ, որ սպաննէ անոր (Նէեմիա 6.10 ): Բայց եթէ Նէեմիան գործը ձգէր, ատիկա պիտի թուցնէր մարդոց, եւ գործը ամարտին պիտի չհասնէր:

Նէեմիան արձագանգեց. «Արդե՞՞ք ինձի պէս մարդը կը փախչի եւ ինձի պէս ո՞վ կ'երթայ տաճարը, որ ողջ մնայ. ես չեմ

## Ձգարհր առաջ

երթար» (Նէեմիա 6.11): Նէեմիան յետոյ հասկցաւ, որ բոլորովին ալ Աստուած չէր ուղարկած այդ մարդուն: Ան մարգարէացաւ Նէեմիայի դէմ, որովհետեւ Տուբիան եւ Սանաբաղատը վարձած էին անոր: Այժմ տես, թէ Նէեմիան ինչ ըսաւ ասկէ յետոյ.

*«Անոր համար ան վարձած էր, որպէսզի ես վախնամ եւ այնպէս ընեմ ու յանցաւոր ըլլամ, եւ ասիկա անոնց համար առիթ ըլլայ իմ անունը վատարբանելու, որ ինծի նախատեսն» (Նէեմիա 6.13):*

Թշնամին կը վատարբանէ քու անունը, որ վախնաս ու պաշտպանես դուն քեզի: Նէեմիան ունէր Տիրոջ միտքը, ասոր համար ալ ան կրնար զանազանել մաքուրն ու ճիշդը չարութենէն եւ խաբէութենէն:

Սանաբաղատի, Գեսեմի եւ Տուբիայի պատրաստած խարդաւանքները Նէեմիան գնահատեց այսպէս.

*«Որովհետեւ անոնք ամէնքը մեզ կը վախցնէին ըսելով՝ անոնց ձեռքերը կը թուլնայ այդ գործէն եւ չի կատարուիր: Բայց Դինն, ով Աստուած, զօրացուր իմ ձեռքերը» (Նէեմիա 6.9):*

Նորէն մենք կը տեսնենք վախցնելու նպատակը, այսինքն՝ թուցնել մեզ, որ չկարենանք իրագործել Աստուծոյ կամքը եւ այլեւս չդիմադրել մեզ վախցնողին: Եթէ մենք ասոր դէմ հաստատակամ չկենանք, կը պարտուինք:

Մեր թշնամին՝ սատանան, կը ձեռնարկէ վախցնելու շատ ուղիներ, երբ մենք կը մտնենք անոր տարածք: Սատանան նոյնիսկ մէկ անգամ չէ, որ կը փորձէ ու յետոյ ետ կը քաշուի: Եթէ ան կարենայ ստիպել, որ դանդաղինք, կենանք, կամ թուլնանք, անկէ ետք կը խանգարէ Աստուծոյ Արքայութեան առաջընթացին:

Նէեմիան եւ իր մարդիկ աւարտեցին պարիսպի վերականգնումը: Այժմ պաշտպանուած քաղաքը կրնար վերականգնուիլ: Ատիկա դիւրին չէր: Ամէն քայլափոխի անոնք վիթխարի դիմադրութեան

ու հակառակութեան կը հանդիպէին: Բայց մարդիկ գիտէին, որ Աստուած խօսած էր, եւ անոնք կը մերժէին նահանջելը:

## Կոտրել վախը՝ ճեղքելով դիմադրութիւնը

Նէեմիայի վճռականութիւնը դասական օրինակ մըն է հաւատացեալներուն համար.

*«Ոչ իբր արդէն բռնած ըլլամ, կամ թէ արդէն կատարեալ եղած ըլլամ, բայց կը հեպտիմ (կը ձգտիմ), որ թերեւս հասնիմ Անոր, ինչպէս որ ալ յարկապէս Քրիստոս Յիսուսէն բռնուած եմ» (Փիլիպ. 3.12):*

Հոս բանալին «ձգտիլ» բառն է: Պօղոսը Սուրբ Հոգիով ըսաւ՝ ես կը ձգտիմ: Նէեմիան նոյնպէս կը ձգտէր՝ յաճախ անցնելով դիմադրութեան մէջէն: Մենք չենք կրնար ուղղակի շրջանցել: Մենք պէտք է վճռականօրէն գործենք եւ ճեղքելով անցնինք ատոր մէջէն:

Պօղոսը կը շարունակէր՝ ըսելով.

*«Կը հեպտիմ (կը ձգտիմ) դէպի նպատակը՝ Աստուծոյ վերին կոչումի մրցանակին Քրիստոս Յիսուսին մէջ» (Փիլիպ. 3.14):*

Գոյութիւն ունի վերին (բարձր) կոչում եւ ցած կոչում: Վերին կոչումը կեանք մըն է, որ կ'ապրին երկրի վրայ՝ երկնքի չափանիշներով: Այդ կեանքի մէջ Աստուծոյ Թագաւորութիւնը կը դրսեւորուի անհատի կեանքով: Մարդիկ, որոնք կ'ապրին վերին կոչումի մէջ, կ'ազդեն իենց շրջապատին վրայ: Մնալով իրենց իշխանութեան մէջ՝ անոնք կը փոխեն հոգեւոր մթնոլորտը եւ ազատութիւն կը բերեն ճշումներէն:

Խաւարը չի կրնար յաղթել լոյսին, լոյսը կը քշէ խաւարը: Որքան պայծառ է լոյսը, այնքան շատ խաւար կը ցրէ: Ահա թէ ինչպէս մենք կը քալենք Աստուծոյ Արքայութեան իշխանութեան մէջ: Այդպէս մեր շրջապատի մարդոց կը բերենք Աստուծոյ Արքայութեան ղեկավարման տակ:

## Ձգարհր առաջ

Յիսուսը կրնար հաց կիսել մեղաւորներուն հետ, քանի որ կրնար վերահսկել մթնոլորտը: Եթէ դուն Աստուծոյ մէջ անլի զօրաւոր ես, քան անհաւատը սատանային մէջ, դուն կրնաս վերահսկել մթնոլորտը: Եթէ մեղաւորը չարի մէջ անլի գերիշխող է, քան հաւատացեալը արդարութեան մէջ, ապա անհաւատը կը վերահսկէ հոգեւոր մթնոլորտը:

Եթէ դուն որոշած ես ապրիլ վերին կոչումին մէջ, կը հանդիպիս դիմադրութեան եւ հակառակութեան: «Եւ ամէնը, որ կը կամենան Աստուածապաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսին մէջ, հալածանք պիտի կրեն» (Բ. Տիմոթ. 3.12): Նորէն մեզի կ'ըսուի. «Շատ նեղութիւններով պէտք է ձեզի մտնել Աստուծոյ Արքայութիւնը» (Գործք 14.21):

Մինչդեռ շատ քրիստոնեաներ կ'որոշեն եւ կ'ապրին ցած կոչումի մէջ: Ինչո՞ւ: Անոնք չեն ցանկար հանդիպիլ այն դիմադրութեանը, որուն միջոցով վճռականօրէն կը գործեն դէպի վերին կոչումը: Անոնք կը գերադասեն յարմարուիլ իրենց շրջապատի մարդոց, քան թէ Աստուծային դիմադրութեամբ փոխել անոնց: Աւելի դիւրին է համակերպուիլ, քան դէմ կենալ: Ոմանք, երբ կը հանդիպին հակառակութեան, կ'որոշեն փոխզիջման երթալ եւ կը փնտռեն ամենամեղմ դիմադրութեան ուղին:

Ես կը կարծեմ, որ երբեմն դիւրին ու յարմարաւէտ կեանք կառուցելու մեր ցանկութիւնը կ'ըլլայ պատճառը, որ մենք չենք ցանկար հակառակիլ: Մենք զգուշօրէն կը կառուցենք մեր կեանքը՝ խուսափելով որեւէ դժուարութենէն: Ես ոչ թէ կ'արդարացնեմ կեանքի դժուարութիւնները, այլ, իսկապէս, կը կարծեմ, որ մենք անլի շատ կը վստահինք մեր նախագիծերուն ու ծրագիրներուն, քան Աստուծոյ:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ մենք ունինք բժշկական ապահովագրութիւն: Եթէ հիւանդանանք, անմիջապէս կը վազենք բժիշկին քով, բայց չենք մտածեր նախ՝ աղօթելու մասին, որովհետեւ գիտենք, որ մեր ունեցած ապահովագրութիւնը կը ծածկէ ծախսերը: Մեր աշխատանքին դիմաց իւրաքանչիւր մէկ կամ երկու շաբաթն անգամ մը մեզի կը տրամադրեն

աշխատավարձի կտրօն: Եթէ կորսնցնենք մեր աշխատանքը, կը ստանանք գործազուրկի կարգավիճակ, որ ֆինանսական որոշակի աջակցութիւն կ'ապահովէ: Եթէ ատիկա ալ սպառի, գոյութիւն ունի նպաստ: Եթէ նպաստն ալ չտրուի, մենք կրնանք գտնել ուրիշ ծրագիր մը, որ հոգ կը տանի մեր մասին: Հնարաւոր է, որ նոյնիսկ ծուլութեան համար մեզի վճարեն:

Հեռուատատեսութիւնը նոյնպէս կը քաջալերէ մեզի ապրիլ անգործուն կեանքով: Սովորական ամերիկացին շաբթուան ընթացքին մօտ քսանչորս ժամ կ'անցընէ հեռատեսիլին առջեւ: Մենք առիթ կու տանք, որ համացանցային կայքերն ու Հոլիուոյը մտածեն մեր փոխարէն: Մեր սկզբունքները կը ձեւաւորուին անոնց ծրագիրներէն:

Միքրօալիքային վառարանները եւ արագ պատրաստուող սնունդի վայրերը կ'առաջարկեն մեզի պատրաստ կերակուր՝ առանց ջանք գործադրելու: Ոմանք ալ նոյնիսկ կ'երաշխատեն անվճար ճաշ, եթէ պատուիրած ուտելիքը չհասցնեն պատրաստել տասնհինգ վայրկեանի ընթացքին: Մենք ունինք արագ փոստ, հագուստի մէկժամեայ չոր քիմիական մաքրում, լուսանկարներու արագ տպագրութիւն, մեքենաներու իւղի արագ փոխում, շուրջօրեայ միջազգային լուրերու ստացում, եւ ասոնք մեր մատչելի յարմարութիւններէն ընդամէնը քանի մը հատն են:

Ասոնցմէ շատերը հիանալի են: Ասոնցմով մենք կը խնայենք մեր ժամանակն աւելի կարեւոր բաներու համար: Բայց եւ այնպէս, յաճախ մենք չենք կրնար ընտրել կարեւորը: Շատ մարդիկ այսօր գործեր չեն ձեռնարկեր, եթէ առոր համար շատ պէտք է աշխատին:

Դժբախտաբար, այս մտածելակերպը ներթափանցած է արեւմուտքի եկեղեցի: Քիչ քրիստոնէաներ ունին կայուն եւ վճռական բնաւորութիւն, որն անհրաժեշտ է Աստուծոյ վերին կոչումին հասնելու համար: Երբ անոնք կը հանդիպին դիմադրութեան, իրենց քայլերը կը փոխեն դէպի նուազագոյն դիմադրութեան ուղին: Սկիզբը փախուստի այս ուղին կը թուի, թէ լաւ ընտրութիւն է, որ կը խոստանայ դիւրին ձեռք բերուած յաջողութիւն: Բայց այս ճանապարհին բնորոշ են

## Ձգարհր առաջ

գաղջ վիճակի յատկանիշները՝ փոխզիջում, անտարբերություն եւ ինքնապահպանում: Յիսուսը սորվեցուց մեզի դէմ կենալ թշնամական լեռներուն, որմէ ետք ատոնք տեղահան կ'ըլլան: Այլ խօսքերով՝ ոչնչացնուր լեռը, նոյնիսկ եթէ դուն ստիպուած ես քար առ քար ոչնչացնել: Նէեմիայի նման Քրիստոսի ճշմարիտ պատերազմողները վճռականօրէն ճեղքելով կ'անցնին լեռներու մէջէն՝ վստահ ըլլալով, որ անկարելի ոչինչ կայ անոնց համար, որոնք որ կը հաւատան (Մատթ. 17.20): Ասոր հակառակ, անոնք, որոնք կ'երթան դիւրութեան ճանապարհով, կը շրջանցեն իրենց լեռները՝ խուսափելով հակառակութենէն:

Այս աշխարհի համակարգը հիմնուած է օդի իշխանի կողմէն (Եփես. 2.2): Երկինքը բացայայտ հակառակութեան մէջ է այս համակարգին հետ: Երթալ երկինքի ճանապարհով կը նշանակէ մշտապէս հանդիպիլ դիմադրութեան այս աշխարհի համակարգի կողմէն: Դժբախտաբար այս աշխարհի համակարգը գերիշխող է նաեւ եկեղեցիներէն շատերու մէջ:

Ես այս դիմադրութիւնը կը նմանցնեմ նաակի մը, որ կը լողայ արագահոս գետի հոսանքին հակառակ: Դուն շարունակաբար եւ վճռականօրէն պէտք է թիավարես ջուրի հոսանքին հակառակ: Քու թիակները պէտք է միշտ ջուրի մէջ ըլլան, եւ դուն պէտք է անդադար թիավարես: Դուն չես կրնար նոյնիսկ մէկ վայրկեան դադրեցնել թիավարելը: Եթէ դադրեցնես, թերեւս որոշ ժամանակ ինքնամղումով երթաս, բայց ստիկա երկար չի տեսեր, եւ հոսանքը քեզ կը տանի իր ուղղութեամբ: Թերեւս նաակիդ քիթը դէպի վեր պարզած է, սակայն դուն կ'երթաս դէպի վար: Այսպէս կ'ըլլայ այն հաւատացեալներուն հետ, որոնք յամառօրէն չեն ձգտիր առջեւ երթալու: Անոնք կը շարունակեն ցոյց տալ, որ քրիստոնէութեան ուղղութեամբ կ'երթան, բայց հիմա անոնք աշխարհի հետ ետ կ'երթան:

Այդպիսիները կը դառնան կրօնաւոր: Անոնք կորսնցուցած են իրենց զօրութիւնը եւ անարդիւնաւէտ են: Յիսուսին խօսքերը մէջբերելով՝ կրնանք ըսել, որ անոնք «այլեւ ոչինչի պէտք են» (Մատթ. 5.13):

## Զօրացիր

Այն բանէն ետք, երբ Պօղոսը յորդորեց Տիմոթէոսին բորբոքել Աստուծոյ պարգելը, ան շտապեց անելոյնքով. «Արդ դ՛հն, իմ որդեանկ, զօրացիր այն շնորհքով, որ Քրիստոս Յիսուսի մէջ է» (Բ. Տիմոթ. 2.1): Վճռականօրէն առջեւ երթալու եւ երկչոտութիւնը յաղթահարելու համար մենք պէտք է զօրանանք:

Պօղոսը այսպէս կը խրատէ Կորնթոսի եկեղեցիին. «Արթուն եղէք, հաստատ կեցէք հաւատքի մէջ, քաջացէք եւ զօրացէք» (Ա. Կորնթ. 16.13):

Եսիզաբաբի հաւատացեալը դէմ առ դէմ կը կանգնի դժուար իրավիճակներուն՝ առանց ատկէ ետ քաշուելու:

Աստուած Յետուին ոչ թէ մէկ, այլ եօթը անգամ քաջալերեց, որ զօրանայ եւ շատ քաջութիւն ունենայ:

*«Միայն թէ զօրացիր եւ շարք քայլ եղիր, որ պահես եւ ընես այն օրէնքին պէս, որ Իմ ծառայ Մովսէսը քեզ պատրուիրած է: Անորմէ չխոսորդիս՝ աջ կամ ձախ, որ ամէնուն մէջ ալ խելամուտ ըլլաս, ուր որ երթաս» (Յետու 1.7):*

*Ուշադրութիւն դարձուր, Աստուած ըսաւ, որ զօրանայ եւ շարք քայլ ըլլայ: Ո՛րն էր նպատակը՝ պարտերազմներուն մէջ յաղթելու համար, թէ մեծ առաջնորդ ըլլալու: Ո՛չ, Տիրոջ Խօսքը պահելու համար: Յարկապէս ասով Յետուն պիտի ըլլար մեծ առաջնորդ եւ պիտի յաղթէր որեւէ պարտերազմի մէջ: Երկչոտութիւնը կը փորձէ զրկելքեզ այն ազատութենէն, որուն միջոցով կը հնազանդիս Աստուծոյ Խօսքին կամ կամքին: Արոր համար ալ մենք պէտք է ամէն անգամ զօրաւոր եւ քաջ ըլլանք, այլ ոչ թէ փախչինք անորմէ, ինչ որ գիտենք, որ ճիշդ է:*

Եկէք սահմանենք «քաջութիւն» բառի նշանակութիւնը.



## Ձգարի առաջ

*Քաջութիւնը մեզի համար դժուարութիւն, վրանգ ներկայացնող կամ ցաւոյ հանդիսացող ամէն ինչին դէմ առ դէմ կենալու եւ պրոնք լուծելու պատրաստակամութիւնն է, դժուարութիւններէն չխուսափելու վերաբերմունքը կամ արձագանգը:*

Իսկ դրն է քաջութեան հակառակը: Դուն կրնաս տրամաբանօրէն ենթադրել, որ հակառակը վախն է կամ ալ թուլութիւնը: Եւ ասիկա ինչ որ չափով ճիշդ է: Բայց եւ այնպէս, եկուր առնենք վիատութիւն բառը (անգլերէնին մէջ՝ courage-խիզախութիւն եւ discourage-վիատութիւն բառերը հականիշներ են): Այնպէս որ, Աստուած կը պատուիրէր Յեսուին եւ մեզի զօրանալ, քաջ ըլլալ՝ թոյլ չտալով, որ վիատութիւնը մտնէ մեր սրտին մէջ: Վիատութիւնը մեզի ետ կը պահէ Աստուծոյ կամքը իրագործելէն:

Եկէք սահմանենք «վիատիլ» բառի նշանակութիւնը.

*վիատիլ կը նշանակէ զրկուիլ քաջութենէն, դառնալ քիչ վստահող կամ յուսահատ, ունենալ վստահութեան կամ յոյսի պակաս, ըլլալ յուսալքուած:*

Յիշէ՛, թէ ինչպէս Եղիան ընկճուած էր Յեզաբէլի վախին պատճառով եկած յուսահատութենէն: Ան խոյս տուաւ եւ փախաւ: Եղիան այնքան յուսահատած էր, որ դուրս ելած էր իր ունեցած իշխանութենէն: Մենք պէտք է վիատութեանը վերաբերինք որպէս թշնամի: Մենք պէտք է չթերագնահատենք ատոր զօրութիւնը, ստիկա կը խանգարէ մեզ հասնելու Աստուծոյ վերին կոչումին: Վիատութիւնը կը սպաննէ: Եթէ ատոր չհակառակինք, այն պիտի ստիպէ մեզ նահանջել:

*«Բայց արդարը հաւատքէն կ'ապրի, եւ եթէ մէկը երբաշուի, Իմ անձը անոր չի հաւնիր» (Եբր. 10.38):*

Շատ կարեւոր է հասկնալ, որ Աստուած չի հաւնիր վախկոտներուն: Մեզի ըսուած է. «Ով որ յաղթէ, ամէնը պիտի ժառանգէ, եւ Ես պիտի ըլլամ անոր Աստուած, եւ ան պիտի ըլլայ

Ինձի որդի: Իսկ *վախկոտներուն* եւ անհաւատներուն, եւ պիղծերուն, եւ մարդասպաններուն, եւ պոռնիկներուն, եւ կախարդներուն, եւ կռապաշտներուն եւ ամէն տեսակ ստախօսներու բաժինը այս լիճին մէջ պիտի ըլլայ, որ կրակով ու ծծումբով վառած է: Ասիկա է երկրորդ մահը» (Յայտն. 21.7,8):

«*Վախկոտ*» բառը կը բնորոշէ մէկուն, որ վտանգի կամ ցալի հանդիպելու ժամանակ կը դրսեւորէ ամօթալի վախ»: Արդե՞ծք սթափեցնող չէ, որ Աստուած վախկոտներուն մարդասպաններուն եւ անբարոյականներուն շարքին դասած է, իսկ մենք կ'արդարացնենք մեզ՝ պնդելով, թէ վախկոտութիւնը թուլութիւն է:

Ո՛չ, վախկոտութիւնը կու գայ անհաւատութենէն, իսկ անհաւատութեան համար Իսրայէլի զաւակները վճարեցին իրենց կեանքով: Անոնք երբեք չմտան խոստացուած երկիրը: «Եւ կը տեսնենք, որ չկրցան մտնել անհաւատութեան պատճառով» (Եբր. 3.19):

Ատիկա ճիշդ է նաեւ այսօր, վախկոտը չի յաղթեր: Ան չի ստանար այն, ինչ որ խոստացուած է իրեն: Պօղոս առաքեալին միջոցով Տէրը զօրաւոր ձեւով կը յորդորէ մեզի.

*«Միայն թէ Քրիստոսի Աւերարանին վայելող ձեւով գացէք, որ թէ գամ եւ տեսնեմ ձեզ, եւ թէ հեռու ըլլամ եւ լսեմ ձեր մասին, որ հաստատուէք... Եւ ոչ մէկ բանով զարհուրեցէք հակառակորդներէն»* (Փիլիպ. 1.27,28):

Հաստատուն կեցիք եւ թոյլ մի տար քու հակառակորդներուն վախցնել քեզ: Եղի՛ր քաջ, զօրաւոր ու խիզախ, պատրաստ հանդիպելու եւ գործ ունենալու որեւէ հակառակութեան հետ՝ չխուսափելով ատկէ: Յաջորդ խօսքին մէջ Պօղոսը կը շարունակէ.

*«Եւ ձեզ Աստուծմէ այդ շնորհք եղաւ, ոչ միայն հաւատալ Անոր, այլ Անոր համար չարչարուիլ ալ»* (Փիլիպ. 1.29):

Ինչ չարչարանք է ասիկա, որ մենք պէտք է ունենանք: Պետրոսը կը պատասխանէ.

## Ձգարհր առաջ

*«Արդ Քրիստոսը, որ մարմինով մեզ համար  
չարչարուեցաւ, դուք ալ նոյն մտքով զինուեցէք,  
որ մարմինով չարչարուողը մեղքէն դադրեցաւ:  
Որ այլեւս ոչ թէ մարդոց ցանկութիւններու պէս,  
այլ Աստուծոյ կամքին պէս ապրիք մարմինին մէջ  
մնացած ժամանակը» (Ա. Պետր. 4.1,2):*

Չարչարանքն այն է, ինչին մենք կը հանդիպինք կամ ինչին  
կը համբերենք, երբ մեր սեփական մարմինը կամ ուրիշներուն  
ազդեցութիւնը կը ճնշէ մեզ, որպէսզի երթանք ուղղութեամբ մը,  
այն ինչ Աստուծոյ կամքը մեզի համար հակառակ ուղղութեամբ  
երթալն է: Մեզի հրամայուած է զօրանալ եւ քաջ ըլլալ, որպէսզի  
կարենանք պահել Տիրոջ խօսքը:

Պետրոսը կ'ըսէ, որ մենք պէտք է մեզ զինենք ասոր համար:  
Եթէ քրիստոնեան չի զինուիր կամ չի նախապատրաստուիր  
չարչարուելու համար, նման է զինուորի մը, որ պատերազմի  
կ'երթայ առանց սպառազինութեան: Այս զինուորը կամ գերի  
կ'իյնայ կամ կը սպաննուի: Այն քրիստոնեաները, որոնք զինուած  
չեն չարչարուելու համար, դիւրութեամբ գերի կ'իյնան, կը  
բանտարկուին մարդոցմէ վախնալու պատճառով:

Մենք պէտք է պատրաստ ըլլանք անսպասելի դիմադրութեանը,  
որ պիտի ուղեկցի մեզի վերին կոչումին ձգտելու ընթացքին:  
Բայց եւ այնպէս, Պողոսը կը շտապէր վստահութեամբ ըսելու.  
«Եւ պիտի փրկէ ինծի Տէրն ամէն չար բանէն եւ պիտի ազատէ,  
պիտի հասցնէ Իր Երկնային Արքայութեան, Որուն ըլլայ փառքը  
յաւիտեանս յաւիտենից» (Բ. Տիմոթ. 4.18): Աստուած միշտ ալ մեզ  
կ'ազատագրէ, որ հասնինք Իր փառքին: Հալելուիմ:

Ուշադրութեամբ կարդա՛ Աստուծոյ խօսքէն հետեւեալ  
յորդորները: Կարդա՛ այնպէս, կարծես դուն այն երբեք չես  
կարդացած: Կեցի՛ր եւ ժամանակ յատկացուր իրաքանջիւր  
Խօսքին վրայ խորհելու համար՝ թոյլ տալով, որ Սուրբ Հոգին  
լուսաւորէ ատոնք:

ԿՈՏՐԵԼ ԵՐԿՉՈՏՈՒԹԻՒՆԸ

«Եթէ Աստուած մեր (իմ) կողմն է, ո՞վ է մեզի (ինձի) հակառակ» (Հռովմ. 8.31):

«Ապա ո՞վ կը բաժնէ մեզ Քրիստոսի սէրէն՝  
տառապանք, թէ՛ նեղութիւն, թէ՛ հալածանք, թէ՛ սով,  
թէ՛ մերկրութիւն, թէ՛ վրանգ, թէ՛ սուր... Բայց այս  
ամէն բաներուն մէջ առաւել եւս կը յաղթենք Անոր  
միջոցով, որ մեզ սիրեց» (Հռովմ. 8.35,37):

«Դուք Աստուծո՞ւմ էք, որդեակներ, եւ յաղթեցիք անոր,  
որովհետեւ ւելի մեծ է Ան, որ ձեր մէջ է, քան թէ ան,  
որ աշխարհի մէջ է» (Ա. Յովհ. 4.4):

Պահպանէ՛ քու սրտի մաքրութիւնը եւ մնա՛ իշխանութեան  
քու դիրքին մէջ որպէս Աստուծոյ զաւակ եւ ծառայ: Միայն այդ  
պարագային դուն կրնաս համարձակօրէն յայտարարել.

Ա արտելով գիրքը՝ ես կը յորդորեմ ձեզի երբեք թոյլ չտալ, որ նախկին ձախողութիւններէն որեւէ մէկը ձեզ ետ քաշէ: Մի՛ գնահատեր քու ապագան քու անցեալով: Եթէ դուն այդպէս ընես, երբեք քու անցեալէն առջեւ չես երթար: Կարեւոր չէ, թէ որքան յաճախ ինկած ես, միեւնոյնն է, կայ հաստատուն յոյս մը. Աստուած վախկոտներուն յաղթող դարձնելու մասնագէտ է: Հալելուիմ: Անոր զօրութիւնը կը գործէ տկարութեան մէջ:

Որպէս քաջալերանքի օրինակ մը՝ քննենք Սիմոն Պետրոսի եղբօր՝ Անդրէասի կեանքը: Այն գիշեր, երբ Յիսուսին ձերբակալեցին, բոլոր աշակերտները Անոր ձգեցին-փախան (Մատթ. 26:56): Պետրոսը միակը չէր, որ վախցաւ. Անդրէասը ես իր կեանքը փրկելու համար փախաւ: Մինչդեռ վախկոտութեան այս քայլը չի նշանակեր, որ Անդրէասը վախկոտ պիտի մնար:

Յիսուսի յարութենէն ետք Անդրէասը քարոզեց Եթովպիոյ մէջ, որ կը գտնուէր Հռոմի տիրապետութեան տակ: Ահա պատմական գրառում, թէ ինչպէս Անդրէասը փառաւորեց Յիսուսին (Ֆոքսի «Աշխարհի քրիստոնեայ նահատակները» գիրքէն):

Երբ Անդրէասն իր ջանասէր քարոզչութեան միջոցով շարժերուն բերաւ Քրիստոսի հաւատքին, կառավարիչ Էգէասը թոյլտուութիւն խնդրեց Հռոմի սենատէն բոլոր քրիստոնեաներուն բռնի ուժով զոհաբերել ի պատիւ հռոմէական կուռքերուն: Անդրէասը մտածեց, որ ան պէտք է դիմադրէ Էգէասին, երթայ եւ ըսէ անոր, որ մարդոց դատարարը նախ պէտք է ճանչնայ եւ երկրպագէ իր երկնային Դատարորին: Անդրէասն ըսաւ, որ երկրպագելով ճշմարիտ Աստուծոյն, Էգէասը պէտք է հեռացնէ բոլոր կեղծ աստուածներուն եւ վերացնէ կուռքերուն իր մտքէն: Էգէասը, Անդրէասի վրայ բարկացած կը պահանջէր գիտնալ, թէ արդեօք անիկամ էր այն մարդը, որ վերջերս խառնաշփոթ ստեղծած էր աստուածներու փաճարին մէջ եւ մարդոց կը համոզէր քրիստոնեայ դառնալ, իսկ քրիստոնէութիւնը «սնահաւատ աղանդ» էր, որը Հռոմի մէջ ճանչցուած էր անօրինական: Անդրէասը պատասխանեց, որ Հռոմի կառավարիչները չէին հասկնար ճշմարտութիւնը: Աստուծոյ Որդին, Որ եկաւ աշխարհի մարդոց համար, սորվեցուց, որ հռոմէական աստուածները դեւեր են, մարդկութեան թշնամիներ, որոնք կը սորվեցնեն մարդոց վիրաւորել Աստուծոյ, եւ պտոնց պատճառով Աստուած կը հեռանայ մարդոցմէ: Ծառայելով դեւին՝ մարդիկ կ'իյնան ամէն տեսակի չարութեան մէջ, կ'ըսէր Անդրէասը, եւ մահանալէն ետք բացի չար արարքներէն ուրիշ ալ ոչինչ կը յիշուի: Կուսակալը հրամայեց Անդրէասին երբեք չքարոզել այս բաները, հակառակ պարագային ան անմիջապէս կը խաչուէր: Ասկէ ետք Անդրէասը պատասխանեց. «Ես պիտի չքարոզէի, որ խաչը պատիւ եւ փառք է, եթէ վախնայի խաչի մահէն»: Ան դատապարտուեցաւ խաչելութեան՝ նոր աղանդի ուսուցման եւ հռոմէական աստուածներու կրօնը մերժելուն համար: Անդրէասը գնաց մահապարտիժի վայրը եւ տեսնելով իրեն սպասող խաչը՝ չփոխեց իր դէմքի արտայայտութիւնը եւ ոչ ալ հրաժարեցաւ

## Վերջաբան

*իր ըսածներէն: Մահապատիժի երթալու ժամանակ Անդրէասը չկորսնցուց գիտակցութիւնը, ինչպէս արիկա կը պատահի մահուան գացող մարդոց հետ: Ան ըսաւ. «Օ՛, երկար սպասուած եւ ցանկալի խաչ: Մըքով պատրաստ, ուրախութեամբ լեցուած եւ մեծ ցանկութեամբ ես կու գամ քովդ: Ես Անոր աշակերտն եմ, Որուն գամեցին խաչի վրայ: Ես միշտ սիրած եմ Քեզ եւ փափաքած եմ փաթթուիլ քեզի»:*

Ասիկա այն նոյն մարդը չէր, որ իր կեանքը փրկելու համար փախաւ, երբ Յիսուսին ձերբակալեցին: Ան փոխուած էր:

Փաստօրէն, բոլոր աշակերտներն ալ, որոնք փախան, վերջաւորութեամբ սպաննուեցան Յիսուս Քրիստոսի վկայութեան համար: Աստուած անոնց արտօնութիւն շնորհեց հանդիպելու ճիշդ այն բանին, ինչէն փախան: Վտանգելով իրենց կեանքերը՝ աշակերտները կոտրեցին երկչոտութեան զօրութիւնը:

Մենք կը մխիթարուինք այն բանի գիտակցումէն, որ «Ան, որ ձեր մէջ սկսաւ այս բարի գործը, կը կատարէ ալ մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը» (Փիլիպ. 1.6):

Աշակերտներուն կեանքը մեզի կը վկայէ այն մասին, թէ ինչպէս Աստուած մեր ձախողումները կը վերածէ յաղթանակներու: Մի նահանջեր, այլ խիզախի՛ր հաւատալու այն Մէկուն, Որ սիրեց քեզ եւ Իր անձը տուաւ քեզի համար:

Եկնի՛ր միասին աղօթենք.

*«Հայր, Յիսուսի անունով ես կը խնդրեմ Քեզի, զօրացնի՛ր ինձի Քու սիրոյ եւ իմաստութեան միջոցով: Ներէ՛ ինձի, որ նահանջած եմ դժուարութեան պահերուն՝ իմ սեփական յարմարաւէտութիւնն ու ապահովութիւնը պահպանելու համար: Տէր Յիսուս, այսօր ես կ'ընկրեմ մերժել իմ անձը, վերցնել իմ խաչը եւ հետեւիլ Քեզի: Ես Քու ծառան եմ, ես կ'ընդունիմ Քու շնորհքը, որ կը զօրացնէ ինձի, որպէսզի ես կարենամ խօսիլ Քու խօսքը եւ կատարել Քու կամքը ամենայն համարձակութեամբ ու սիրով»:*

Այժմ ըսէ՛ վախի եւ վերահսկողութեան հոգիին.

*«Ես կը քանդեմ վախի եւ վերահսկողութեան խօսքերը, որոնք իմ կամ ուրիշներուն կողմէն հոչակուած են իմ կեանքին վրայ: Ես կը քանդեմ մարդու վախի կապանքները իմ կեանքին մէջ: Խաւարի պիղծ հոգիներ, ես կը հակառակիմ ձեզի եւ իմ անձը կը հնազանդեցնեմ Աստուծոյ: Իմ կեանքին մէջ դուք տեղ չունիք, հեռացէ՛ք իմ Տէր Յիսուս Քրիստոսի անունով: Ամէն»:*

*«Եւ Անոր, որ կրնայ անարապ պահել  
ձեզ եւ անկեղծ կեցնել Իր Փառքի առջեւ  
անբիծ ցնծութիւնով: Այն մէկ իմաստուն  
Աստուծոյ եւ մեր Փրկիչին (մեր Տէր Յիսուս  
Քրիստոսով) Փառք եւ մեծութիւն, զօրութեան  
եւ իշխանութիւն (բոլոր դարերէն առաջ)  
եւ հիմա ու բոլոր դարերուն մէջ: Ամէն»  
(Յուդա 24,25):*



# ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

*Դուք գիտեք Անոր մասին. բայց դուք  
կը ճանչնա՞ք Անոր*



Աշակերտներն անցուցին երեք տարի Յիսուսին հետ՝ քալելով Անոր հետ եւ լսելով այն ամէնը, ինչ որ Ան կը ցանկար ըսել: Սակայն Յիսուսն ըսաւ Իր ամենամօտ ընկերներուն, որ պէտք է ձգէր անոնց, որպէսզի Սուրբ Հոգին գար, եւ որ ատիկա անելի լաւ պիտի ըլլար անոնց համար (Յովհաննէս 16.7,13,14): Եթէ ասիկա ճշմարիտ էր աշակերտներու համար, որոնք ամէն օր Յիսուսին հետ էին, ապա որքա՞ն անելի մենք կարիք ունինք, որ այսօր Սուրբ Հոգին գործուն մասնակցութիւն ունենայ մեր կեանքերուն մէջ:

Յաւօք, յաճախ Հոգին սխալ հասկցուած է. շատերը նոյնիսկ գաղափար չունին, թէ ով է Ան եւ ինչպէս կը յայտնուի մեզի: Սուրբ Հոգիին յաճախ կը պատկերեն շատ տարօրինակ կերպով: Բայց Աստուածաշունչը պարզ կ'ըսէ, որ Հոգին ինչ որ երեւոյթ չէ: Ան Անձ է, Որ խոստացած է երբեք չլքել ձեզ: Այս փոխգործուն գիրքին մէջ ճոն Պիվիրը կը հրաւիրէ անձամբ բացայայտել ամէնէն անտեսուած եւ սխալ հասկցուած Անձնաւորութեան Եկեղեցոյ մէջ՝ Սուրբ Հոգիին:

Բաց մի՛ ձգէք այս զարմանալի հնարաւորութիւնը:

# Բարի, թե՛ Աստուած

Ինչո՞ւ բարին առանց Աստուծոյ բաւարար չէ:



Մեր օրերուն մէջ «բարի» եւ «Աստուած» բառերը կարծես հոմանիշներ դարձած են: Մենք կը հաւատանք, որ այն, ինչ որ ընդհանուր առմամբ բարի կը համարուի, պէտք է որ համապատասխանէ Աստուծոյ կամքին: Առատաձեռնութիւնը, խոնարհութիւնը, արդարութիւնը բարի են: Եսասիրութիւնը, ամբարտաւանութիւնը, դաժանութիւնը չար են: Կը թուի՝ այս ստրբերակումը շատ պարզ է:

Բայց արդե՞ծք ամէն ինչ այդքան պարզ է: Եթէ բարին այդ աստիճան ակնյայտ է, ինչո՞ւ Աստուածաշունչը կ'ըսէ, որ մեզի զանազանութիւն անհրաժեշտ է՝ այն ճանչնալու համար:

«Բարի, թե՛ Աստուած» գիրքը՝ սովորական ուղերձ մը չէ այն մասին, թէ ինչպէս դուք ձեզի լուծէք ձեր խնդիրները: Այս գիրքը պարզապէս չի խնդրեր ձեզմէ, որ փոխէք ձեր վարքը. այն պիտի ընէ աւելին: Այն պիտի տայ ձեզի կարողութիւն, որուն միջոցով դուք պիտի կարենաք հաղորդակցիլ Աստուծոյ հետ այնպիսի մակարդակի վրայ, որ պիտի փոխէ ձեր կեանքի իրաքանջիւր քնազաւարը:

# ՅԱԻՏԵՆՈՒԹԵԱՄԲ ՇԱՐԺՈՂՆԵՐԸ

## Կեանք, որ նշանակություն ունի այսօր և յափտեան



Կեանքն այս երկրի վրայ՝ ընդամենը շոգի է, սակայն շատերն այնպես կ'ապրին, կարծես ատկէ ետք ոչինչ կրնայ պատահիլ: Բայց այն, թէ ինչպես կ'ապրինք այս կեանքը, կ'որոշէ, թէ ինչպես պիտի անցընենք յափտենությունը: Սուրբ Գիրքը կը յայտնէ մեզի, որ վարձատրության տարբեր աստիճաններ կան հաւատացեալներուն համար. ոմանց յաջողութիւններն ու ձեռքբերումներն ամբողջովին պիտի այրին դատաստանի ժամանակ, իսկ միւսներուն պիտի շնորհուի Քրիստոսի հետ թագաւորելու արտօնութիւն:

Ճոն Պիվիրը կը յիշեցնէ մեզի, համաձայն Բ. Կորնթացիներու 5.9-ի սկզբունքներուն, որ բոլոր հաւատացեալները պիտի կանգնին Քրիստոսի առջեւ՝ ընդունելու համար այն, ինչին որ արժանացած են իրենց կեանքին ընթացքին: Մեզմէ շատերը պիտի ցնցուին, երբ գիտնան, որ մեր ժամանակի մեծ մասը ծախսուած է այնպիսի բաներու վրայ, որոնք պիտի չարժանանան յափտենական վարձատրության:

Այդ պարագային, ինչպէս կրնանք արդիւնաւէտ կեանք ունենալ: «Յափտենութեամբ շարժողները» գիրքը կը սորվեցնէ բացայայտել ձեր կոչումը, եւ բազմապատկել այն, ինչ որ Աստուած տուած է ձեզի: Նայելով կեանքին յափտենութեան տեսանկիւնէն՝ դուք զօրութիւն պիտի ստանաք, որպէսզի գործէք մնայուն նպատակներու համար:

# ԿՈՐԾԱՆԵԼ ՔՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

Կործանէ՛ այն, ինչ որ քու  
ուժը կը խլէ



Ինչպէս Սուփըրհերոսը, որ կրնայ ցատկել որեւէ արգելքի վրայէն եւ կրնայ յաղթել բոլոր թշնամիներուն՝ Քրիստոսի հետետորդները նոյնպէս կեանքի դժուարութիւնները յաղթահարելու գերբնական կարողութիւն ունին: Այնուամենայնիւ, եւ Սուփըրհերոսը, եւ մենք խնդիր մը ունինք. գոյութիւն ունի քրիպտոնաքար, որ կը խլէ մեր ուժը:

Անշուշտ, Սուփըրհերոսը եւ քրիպտոնաքարը յօրինուած են: Բայց հոգեւոր քրիպտոնաքարը՝ ոչ:

Այս գիրքը կը պատասխանէ այն հարցումին, թէ ինչու մեզմէ շատերը չեն կրնար վերապրիլ այն Աստուածային զօրութիւնը, որ ակնյայտօրէն կը դրսեւորուէր առաջին դարուն ապրող քրիստոնեաներու կեանքին մէջ:

«Կործանել քրիպտոնաքարը» գիրքին մէջ Ճոն Պիվիը ցոյց կու տայ, թէ ինչ է քրիպտոնաքարը, ինչու այն կը խլէ մարդոց ուժերը մեր եկեղեցիներուն մէջ, եւ ինչպէս կարելի է ազատիլ ատոր կապանքներէն:

«Կործանել քրիպտոնաքարը» գիրքը հոգեւոր թմրեցուցիչ չէ՝ նախատեսուած թուլասիրտներու համար: Այս լուրջ ճշմարտութիւնը նախատեսուած է Քրիստոսի այն հետետորդներուն համար, որոնք կը փափաքին անցնիլ անձի վերափոխման դժուար, բայց պտղաբեր ընթացքը:

# ԱՍՏՈՒԱ՛Շ, Ո՞ՒՐ ԵՍ

**Գտիր զօրություն եւ նպատակ քու  
անապատին մէջ**



Թերեւս անցեալին Աստուած կը խօսէր ձեզի հետ, բայց այժմ Ան կը լռէ: Թերեւս անցեալին դուք առջեւ կը շարժէիք հաւատքի մէջ, բայց այժմ չէք գտներ Անոր ներկայութիւնը: Բարի գալուստ անապատ՝ այն վայրը, որ Աստուծմէ խոստում ստանալու եւ ատիկա իրականացնելու միջեւ է:

Այնուամենայնիւ, բարի լուր մը կայ. անապատը պարզապէս ամալի եւ աննպատակ վայր չէ: Աստուած կ'օգտագործէ անապատը, որպէսզի պատրաստէ եւ սպառազինէ ձեզ ձեր կոչման համար, այն պարագային, եթէ դուք ճիշդ անցնիք այն: Հակառակ ընդունուած կարծիքին, դուք չէք անցնիր ձեր կեանքի այս փուլը՝ պարզապէս Աստուծոյ սպասելով: Դուք պէտք է կատարէք ձեր բաժին աշխատանքը, որպէսզի անցնիք այն, եւ ձեր աշխատանքը շատ մեծ է: Եթէ չէք ցանկար ժամանակ վատնել՝ շարունակ նոյն տեղը մնալով, կարեւոր է գիտնալ, թէ ինչ է անապատը:

Այս բացայայտումներով լեցուն գիրքին մէջ հանրաճանաչ հեղինակ Ճոն Պիվիրը կը կը սորվեցնէ ձեզի՝ օգտագործելով կարեւոր Աստուածաշնչեան յայտնութիւններ եւ խորիմաստ պատմութիւններ, որոնք պիտի օգնեն ձեզի անցնելու կեանքի ամալի եւ դժուար փուլերը եւ ստանալու այն, ինչ որ Աստուած պատրաստած է ձեզի համար:

# ԲԱԶՄԱՊԱՏԿԷ՛ ԱՍՏՈՒԾՄԷ ՔԵԶԻ ՏՐՈՒԱԾ ՆԵՐՈՒԺԸ




Երբեք զգացած էք դուք ձեզ որպես դիտորդ Աստուծոյ Թագաւորութեան մէջ: Թերեւս գիտէք, որ ինչ որ բան մը կայ, որ դուք պէտք է ընէք, բայց չէք կրնար վերջնականօրէն որոշել, թէ ինչ է ատիկա: Մեզմէ շատերը կը ցանկան մեծ ազդեցութիւն ձգել, բայց թերեւս ձեր ներսը չպատասխանուած հարցումներ կան, օրինակ՝

- Ինչպէ՛ս համոզուած ըլլամ, որ չեմ կորսնցուցած Աստուծոյ կամքը իմ կեանքին մէջ:
- Ի՞նչ դեր կը կատարեն իմ եզակի պարգեւները Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցելու մէջ:
- Ինչպէ՛ս վստահ ըլլամ, որ կ'օգտագործեմ Աստուծմէ՛ ինձի տրուած ներուժը:
- Իմ կոչումը նուա՞գ կարեւոր է, եթէ ես «ծառայութեան» մէջ չեմ:
- Ինչպէ՛ս հաւասարակշռութիւն պահպանել Աստուծոյ շնորհքին մէջ հանգստանալու եւ Անոր Թագաւորութեան համար գործելու միջեւ:
- Ինչպէ՛ս վանել վախը եւ առջեւ երթալ՝ նոյնիսկ անորոշութեան եւ վտանգի պարագային:

Այս խորհմաստ գիրքին մէջ հանրաճանաչ հեղինակ Ճոն Պիվիրը կը հիմնուի Սուրբ Գիրքի մանրակրկիտ ուսումնասիրութեան վրայ եւ կ'օգտագործէ ազդեցիկ պատմութիւններ, որպէսզի օգնէ ձեզի ուրիշ ձեւ մտածելու ձեր կոչման մասին եւ հասկնալու, թէ ինչու այն կարեւոր է Աստուծոյ համար: Ընթերցելով այս գիրքի էջերը՝ դուք պիտի սորվիք, թէ ինչպէ՛ս կարելի է բազմապատկել Աստուծմէ՛ ձեզի տրուած պարգեւները եւ օգտագործել ձեր ներուժը:

# X MessengerX

Աշակերտական ընթացք իւրաքանչիւրի համար, ամենուր




- Անվճար աւելի, քան 110 լեզուով
- Հասանելի որպէս յաւելուած եւ առցանց
- Նիւթեր՝ նախատեսուած ձեր աճին համար: Հետեւեցէ՛ք ձեր (կամ մեր) դիտումներուն եւ
- աշակերտական ուղիին



Ստացէ՛ք «Messenger»-ի աշակերտական նիւթերու ամբողջական դարանը՝ էլեկտրոնային գիրքեր, օտիօ գիրքեր, կարճաժամկետ ֆիլմեր, վիտէօ ուսուցումներ, Աստուածաշունչներ եւ աւելին. դիտեցէ՛ք, կարդացէ՛ք և լսեցէ՛ք ձեր բոլոր սարքերով:

**MessengerX.com**



Հասանելի է աշխարհի տարածքին «App Store»-ի եւ «Google Play»-ի մէջ

# ԻՆՉՊԷՍ ՅԱՂԹԱՅԱՐԵԼ ՎԱՆԸ ԵՒ ԱՉԱՏՕՐԷՆ ԳՈՐԾԱԾԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՐԳԵԼՆԵՐԸ ԶԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԵՋ

ԴՈՒՔ ԿԸ ԴԺՈՒՄԱՐԱՆԱ՞Ք «ՈՉ» ԸՍԵԼՈՒ  
ԴՈՒՔ ԿԸ ՎԱՆՆԱ՞Ք ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵՆԵՆ

ԴՈՒՔ ՓՈՒՆԶԻՉՄԱՆ ԿԵՐԹԱՔ ՊԱՅՔԱՐԷՆ ԽՈՒՄԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԴՈՒՔ ԿԸ ՁԳՏԻ՞Ք ՀԱՃԵՑՆԵԼ ՄԱՐԴՈՑ ԶԵՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ  
ԶԵՐ ԿԵԱՆՔԸ ԿԸ ՎԵՐԱՀՍԿՈՒԻ ԱՅԼ ՄԱՐԴՈՑ ԿՈՐՄԵՆ

Եթե դուք դրական պատասխան տուիք այս հարցումներն որեւէ մեկուն, «Կոտրել երկչոտութիւնը» գիրքը ձեզի համար է: Այս գիրքը կը բացայայտէ երկչոտութեան արմատը, կը քանդէ ատոր մահացու կապանքը եւ ցոյց կու տայ, թէ ինչպէս ազատօրէն գործածել Աստուծոյ պարգեւները եւ վարուիլ Անոր իշխանութեամբ: Ժամանակն է ազատութիւն ստանալ այս ծուղակէն եւ յաղթել երկչոտութեան հետեւեանքները՝ ընկճուածութիւնը, յուսալքութիւնը եւ շփոթմունքը: Թոյլ մի՛ տար վախին, որ ձեզ ետ պահէ:



ՃՈՆ ՊԻՎԻՐԸ միջազգային ճանաչում ունեցող քարոզիչ եւ հանրաճանաչ հեղինակ է, որ համարձակ եւ առանց փոխզիջման կը քարոզէ Աստուծոյ խօսքը: Ծննդը եւ անոր կինը՝ Լիզան, հիմնադրած են «Մեսիսնըր Ինթերնեշնլ» ծառայութիւնը, որուն նպատակն է՝ պատրաստել քրիստոսի հետեւորդներուն, որոնք փոխզիջման չեն երթար եւ կը վերափոխեն այս աշխարհը: Երբ ճոնը տունն է՝ Զոլորատօ, ան սեղանի քարտային խաղեր կը խաղայ իր չորս որդիներուն հետ կամ կը փորձէ համոզել Լիզային կոլֆ խաղալու իրեն հետ:



Անվճար ներբեռնումներու եւ տեսանիկներ ղիտելու համար այցելեցէ՛ք [MessengerX.com](http://MessengerX.com) կայքը:

**MessengerX**



Կ'ընթացեա՞ք անոր մասին:  
Տեսե՛ք ինչպէ՞ս վարուիլ:

Այս գիրքը նուէր է հեղինակէն  
Եւ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱՅ ՉԷ



**MESSENGER**  
INTERNATIONAL  
[MessengerInternational.org](http://MessengerInternational.org)